

321
Թ-83

Խ. ՌՈՓՈՒԳՅԱՆ

ՆԱՅԵՐԻ

ՍԱՍՆԱԿՅՈՒԹՅՈՒՆԸ

ՍԻՐԻԱՅԻ ԵՎ ԼԻԲԱՆԱՆԻ

ԱԶԳԱՅԻՆ - ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ

ՇԱԲՈՒՍՆԵՐԻՆ



168

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
СЕКТОР ВОСТОКОВЕДЕНИЯ

О. Х. ТОПУЗЯН

УЧАСТИЕ АРМЯН
В НАЦИОНАЛЬНО-
ОСВОБОДИТЕЛЬНОМ И
ДЕМОКРАТИЧЕСКОМ
ДВИЖЕНИИ СИРИИ
И ЛИВАНА

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1968


ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՍԵԿՏՈՐ

324
Բ-83

Հ. Խ. ԹՈՓՈՒԶՅԱՆ

ՀԱՅԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ՍԻՐԻԱՅԻ ԵՎ ԼԻԲԱՆԱՆԻ
ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ
ԵՎ ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ
ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՍԵԿՏՈՐ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՍԵԿՏՈՐ
1968



Հայկական, արարական, օտարերկրյա և այլ աղբյուրների հիման վրա աշխատությունում ցույց է տրվում արաբների և հայերի համատեղ պայքարը ֆրանսիական զաղութարարների դեմ՝ մանդատի վերացման, Սիրիայի և Լիբանանի անկախության համար։ Ուսումնասիրությունում զգալի տեղ է հատկացված հուպատերազմյան ժամանակաշրջանում անգլո-ամերիկյան իմպերիալիստների և ներքին ռեակցիայի դեմ հայ և արաբ աշխատավորների մղած պայքարին։

Ա Ռ Ա Ջ Ա Ք Ա Ն

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակը լուսավորեց Արևմուտքի պրոլետարիատի և Արևելքի ճնշված ժողովուրդների դեպի սոցիալիզմ առաջնորդող ուղին: Ընդգծելով Հոկտեմբերյան հեղափոխության փորձի միջազգային նշանակությունը, Վ. Ի. Լենինը գրել է, որ այն «...մտավ պատմության մեջ իբրև սոցիալիզմի նվաճում և ապագա միջազգային ռևոլուցիան այդ փորձի վրա է կառուցելու իր սոցիալիստական շենքը»¹:

Սոցիալիզմի համաշխարհային սխտեմի ստեղծումն ու ամրապնդումը գաղութային ու կախյալ երկրների ժողովուրդների առաջ բացեցին ազգային վերածննդի, դարավոր հետամնացության ու աղքատության վերացման հասնելու հեռանկար: Իմպերիալիզմը անդոր է այլևս փակելու ազգային-ազատագրական շարժումների ճանապարհը: Հասել է իմպերիալիստական դարաշրջանի մայրամուտը: ՍՄԿԿ ծրագրում ասված է. «Արդի դարաշրջանը, որի հիմնական բովանդակությունն անցումն է կապիտալիզմից սոցիալիզմին, երկու հակադիր հասարակական սխտեմների պայքարի դարաշրջանն է, սոցիալիստական և ազգային-ազատագրական ռեվոլուցիաների դարաշրջանը, իմպերիալիզմի կործանման, գաղութային սխտեմի վերացման դարաշրջանը, նորանոր ժողովուրդների սոցիալիզմի ուղին անցնելու, համաշխարհային մասշտաբով սոցիալիզմի և կոմունիզմի հաղթանակի դարաշրջանը»²:

Երկու հակադիր հասարակական սխտեմների պայքարի պայմաններում, ազգային-ազատագրական շարժումները, բռնակալական ռեժիմների դեմ ժողովրդա-դեմոկրատական ելույթները, ազգային ճնշման դեմ ուղղված համադեմոկրատական պայքարը, այդ բոլորը խորացնում են կա-

1 Վ. Ի. Լենին, Ծրկեր, հ. 27, էջ 513:

2 ՍՄԿԿ ծրագիրը, Երևան, 1961, էջ 5:

պիտալիտական սիստեմի ընդհանուր ճգնաժամը, արագացնում իմպերիալիզմի անկման և քայքայման պրոցեսը, նպաստելով սոցիալիզմի և կոմունիզմի հաղթանակին: Այդ տեսանկյունից էլ պետք է դիտել և գնահատել արաբական երկրներում ծավալված ազգային-ազատագրական շարժումները և հայերի մասնակցությունը այդ շարժումներին:

Մինչև առաջին համաշխարհային պատերազմը արաբական ազգային-ազատագրական շարժումները ուղղված էին օսմանյան բռնակալության, իսկ 1920-ական թվականներից անգլո-ֆրանսիական իմպերիալիզմի տիրուպետության դեմ: Այսօր, այդ երկրների ժողովուրդները թեև կոխել են ազգային-ազատագրական պայքարի նոր էտապ, գաղութատիրության մնացորդները ոչնչացնելու, օտարերկրյա մոնոպոլիաները դուրս մղելու, ազգային արդյունաբերությունը զարգացնելու, ազգաբային արմատական ռեֆորմ կենսագործելու, հասարակական կյանքը դեմոկրատացնելու և համազգային այլ խնդիրների լուծման համար մղվող պայքարի էտապը: Ուշագրավ երևույթ է, որ այդ երկրների ժողովուրդների մոտ որոշակի ձգտում է նկատվում գնալու զարգացման ոչ կապիտալիստական ուղիով և մանավանդ ավելի ու ավելի է խորանում նրանց համոզմունքն այն մասին, թե սոցիալիստական վերակառուցումը լավագույն ուղին է հետամնացությունը հաղթահարելու և արտադրողական ուժերի լիակատար ծաղկումն իրագործելու համար:

Այդ խնդիրների լուծման գործում աշխույժ մասնակցություն է ցուցաբերում նաև արաբական երկրների հոծ հայությունը: Մերձավոր արևելքի արաբական երկրներում ապրում են ավելի քան 300.000 հայեր, այդ թվում 140.000 Լիբանանում, 110.000 Սիրիայում, 25.000 Եգիպտոսում, 20.000 Իրաքում և 15.000 Հորդանանում: Այդ հայությունը անցյալում չի ապրել, այսօր էլ չի ապրում արաբ հասարակայնությունից մեկուսացված ինքնամիտի համայնքի կյանքով: Հայերը գործուն մասնակցություն են բերում արաբական մշակույթի, հասարակական և տնտեսական կյանքի զարգացմանը, զգալի դեր են կատարում արհեստների ծաղկման, արդյունաբերության ստեղծման և առևտրական կապերի ընդլայնման գործում: Պատկառելի շափերի են հասնում հայ բուրժուաների կապիտալ ներդրումները սև և գունավոր մետալուրգիայի, հյուսվածքեղենի, կաշեգործության, օճառագործության, ձիթահանման, կահույքագործության, սննդի և այլ արդյունաբերական ձեռնարկություններում, ինչպես նաև առևտրի տարբեր ճյուղերում: Լիբանանում հայ կապիտալիստներին է՝ պատկանում ազգային արդյունաբերության մանր կապիտալների 43, միջին կապիտալների 18 և առևտրական խոշոր կապիտալների 10 տոկոսը³: Հայերը զգալի կապիտալներ են ներդրել նաև Սիրիայի, մասամբ էլ Եգիպտոսի, Իրաքի և

³ «Մեր նշանաբանն է Հառաչ», Բեյրութ, 31 օգոստոսի 1960 (այսուհետև «Մ. Ն. Հառաչ»),

Հորդանանի տնտեսության տարբեր բնագավառներում: Սիրիայի պետական գործիչներից Ռյուշտի Քեհյան հայտարարել է. «Հայ տարրը եղած է մեր ամենասիրելի փոքրամասնությունը, որը իր ազատամտությամբ, աշխատասիրությամբ և ուշիմությամբ մեծ ծառայություններ մատուցած է այս երկրին»⁴:

Արաբական հասարակայնության հետ այդպիսի սերտ կապերով ընդհուլոված հայ հասարակության ծոցում գործող քաղաքական կազմակերպությունները, ունենալով հանդերձ իրենց ազգային որոշակի առանձնահատկությունները, կոնկրետ խնդիրներն ու նպատակները, հիմնականում շնչում են արաբական «օդով»: Բացի արաբական կոմունիստական կուսակցությունների շարքերում ընդգրկված հայ աշխատավորներից, արաբական երկրներում գործում են նաև Սոցիալ-դեմոկրատ հնչակյան, Ռամկավար ազատական և Դաշնակցություն կուսակցությունները, որոնցից յուրաքանչյուրն ունի բավական թվով անդամներ, կենտրոնական և շրջանային մարմիններ, ակումբներ, մամուլի օրգաններ: Նրանք վերահսկում են դպրոցներ, մշակութային, երիտասարդական և այլ միություններ: Նրանք առանձնապես լայն հասարակական-քաղաքական գործունեություն են ծավալում Սիրիայում և Լիբանանում, մասնակցելով քաղաքական հակադիր ճակատների պայքարին:

Ինչպիսի քաղաքականություն են վարում այդ կազմակերպությունները: Հայ կոմունիստները, գործելով արաբական կոմունիստական կուսակցությունների շարքերում և արտահայտելով բանվոր դասակարգի և աշխատավոր ժողովրդի ձգտումները, վարում են ամբողջ աշխարհին հայտնի հակաիմպերիալիստական քաղաքականություն, պայքարում ազգային լրիվ անկախության, լայն դեմոկրատիայի համար, հակաիմպերիալիստական-հակաֆեոդալական հեղափոխությունը մինչև վերջ հասցնելու համար: Ինչ վերաբերում է ազգային կուսակցությունների քաղաքականությանը, ապա պետք է նշել հետևյալը: Ընչակյանները հանդես են գալիս օեակցիայի, իմպերիալիզմի և պատերազմի դեմ, խաղաղության, խաղաղ զոյակցության, սպառազինությունների կրճատման, միջուկային զենքի կիրառումն ու փորձարկումներն արգելելու օգտին: Մոտավորապես այդ-

4 «Արաբատ», 6 նոյեմբերի 1946: Ներգաղթի օրերին, եգիպտական «Լ-Կուբլա» թերթի թղթակիցը Լիբանանի պրեմյեր Ռիադ Սուհին հարց է տվել. «Հայկական գաղութը մեծ տեղ կգրավի Լիբանանի տնտեսության մեջ: Անոնց ներգաղթը պիտի չլնասե՞ այդ տնտեսության»: Սուհը պատասխանել է. «Ատիկա ճիշտ է: Հայերու մեկնումով շատ լավ տարրեր պիտի կորսնցնենք» («Ժողովուրդի ձայն», 8 հունվարի 1947): Իսկ Սիրիայի հանրապետության նախագահ Շյուքրի Քուվաթլին հայտարարել է, որ հայերը նպաստել են միրիական արդյունաբերության և արհեստների զարգացմանը («Հուսարբեր», 22 հոկտեմբերի 1957):

պիսի քաղաքականություն են վարում նաև ուսմավարները: Հայաստանի կոմունիստական կուսակցության XXII համագումարը ընդգծեց, որ այդ կուսակցությունները այժմ վարում են Սովետական Հայաստանին աշակ-ցելու գիծ, պրոպագանդում մեր հանրապետության նվաճումները, պայքարում իմպերիալիզմի և Դաշնակցության դեմ: Այդ վերաբերմունքը, ինչպես նշվեց XXIII համագումարի հաշվետու ղեկուցման մեջ՝ «մեծ դեր խաղաց, ուժեղացնելով մեր հերայրների և քույրերի համակրանքը դեպի իրենց սոցիալիստական հայրենիքը, ամրապնդելով սփյուռքահայ առաջադիմական կազմակերպությունների դիրքերը և համախմբելով նրանց ուժերը խաղաղության և իրենց ժողովրդի երջանկության համար դաշնակների ռեակցիոն, բուրժուա-նացիոնալիստական պարտիայի դեմ մղվող պայքարում»:



Գաղութային ու կախյալ երկրներում ծավալված ազգային-ազատագրական և դեմոկրատական շարժումների գիտական ուսումնասիրությունը ունի արդիական քաղաքական նշանակություն: Սովետական գիտնականները զնահատելի աշխատանք են կատարել և կատարում այդ բնագավառում: Սակալն, ուսումնասիրելով արաբական ազգային-ազատագրական շարժումները, նրանք համարյա չեն բարձրացնում այդ շարժումներին հայերի մասնակցության հարցը, այնինչ հայերը պատվավոր դեր են կատարում Սիրիայում, Լիբանանում և մյուս արաբական երկրներում ծավալված հակաֆաշիստական-հակաֆեոդալական պայքարում: Ջ. Կիրակոսյանի և Ն. Հակոբյանի⁵, Լ. Խուրշուդյանի⁷, Կ. Դալլաքյանի⁸ և ուրիշների աշխատություններում այդ շարժումներին հայերի մասնակցության մասին խոսվում է հարևանցիորեն, որովհետև հիշյալ հեղինակները նպատակ չեն ունեցել այդ հարցի համակողմանի լուսարանումը:

Մեր ուսումնասիրած հարցին նվիրված առանձին աշխատություն չկա

5 ԼԿԿ ԿԿ-ի հաշվետու ղեկուցումը ԼԿԿ XXIII համագումարին, 1964 թ., էջ 108:

6 Ջ. Կիրակոսյան և Ն. Հակոբյան, Դաշնակները իմպերիալիզմի գործակալներն են Մերձավոր արևելքի երկրներում, Երևան, 1960:

7 Լ. Խուրշուդյան, Սփյուռքահայ կուսակցությունները ժամանակակից էտապում, Երևան, 1964:

8 Կ. Դալլաքյան, Սփյուռքահայ առաջադիմական կազմակերպությունները խաղաղության և դեմոկրատիայի համար մղվող պայքարում, Երևան, 1962, Լիբանանահայ դեմոկրատական մամուլի պատմությունից, Երևան, 1964:

նաև սփյուռքում: Միհրան Աղազարյանի⁹, Արտավազ Սյուրմեյանի¹⁰, Հովհ. Աղբաշյանի¹¹ և մի շարք ուրիշների աշխատություններում քննարկվում են Սիրիայի և Լիբանանի հայկական գաղութների տարբեր հարցերը: Սակայն, այդ հեղինակները կամ շրջանցում են, կամ էլ այս կամ այն չափով միայն շոշափում այդ երկրների ազգային-ազատագրական և դեմոկրատական շարժումներին հայերի մասնակցության հետ կապված հարցերը:

Միհրան Աղազարյանի աշխատությունը հիմնականում նվիրված է դաշնակիների «անհայրենիք պետության» քաղաքականության քննադատությանը: Նա Սիրիայի և Լիբանանի հայկական գաղութի մի շարք հարցերի ընդհանրացումով հանդես է ճիշտ եզրակացությունների Դաշնակցության հակասովետական քաղաքականության նպատակների մասին: Սակայն նա չի տեսնում, որ դաշնակիները արտասահմանի հայությունը Սովետական Հայաստանին հակադրելու միջոցով ձգտում են, նախ և առաջ, յուրաքանչյուր երկրում, տվյալ դեպքում Սիրիայում և Լիբանանում, հայությունը ծառայեցնել իմպերիալիզմի նպատակներին: Բացի այդ, անտեսելով սոցիալ-տնտեսական գործոնների որոշիչ դերը քաղաքական-հասարակական կյանքում, նա չի կարողանում կապ գտնել հայկական և արաբական միջավայրում զարգացող երեուստական իրարից տարբեր ժողովրդական շարժումների միջև:

Ա. Սյուրմեյանի աշխատությունը պարունակում է զգալի թվով փաստական տվյալներ Սիրիայի առաջին և երկրորդ համաշխարհային պատերազմների միջև ընկած ժամանակաշրջանի սոցիալ-տնտեսական դրության մասին: Ցույց տալով հանդերձ Սիրիայի գյուղացիության թշվառ վիճակը, նա չի տեսնում դրա իրական պատճառները և, պարզամտորեն, հույսեր է կապում մանդատային իշխանության ազդարային խարուսիկ ռեֆորմների հետ: Ավելին. նա ոչ մի կապ չի գտնում գյուղացիության կեղեքվածության և Սիրիայում բռնկված գյուղացիական ապստամբությունների միջև, մինչև անգամ Ջերբել Դրուզի գյուղացիական ապստամբությունը համարում է ոչ թե ելույթ ֆրանսիական իմպերիալիզմի տիրապետության դեմ, այլ «քաղաքական շփոթություն»¹²:

Հովհ. Աղբաշյանի աշխատությունը հանդիսանում է համառոտ ուրվագիծ արաբական ազգային-ազատագրական շարժումների պատմության: Վերջին գլխում նա անդրադարձել է հայերի մասնակցությանը Սիրիայի

9 Մ. Աղազարյան, Սիսի վերջին աթոռակալը և իր մեղապարտ գավառականը, Բեյրութ, 1926:

10 Ա. Սյուրմեյան, Սուրիա, Հալեպ, 1940:

11 Հ. Աղբաշյան, Արաբական ազգային-ազատագրական զարթոնքը, Բեյրութ, 1959:

12 Ա. Սյուրմեյան, Սուրիա, էջ 348, 405 և 430:

և Լիբանանի ազգային-ազատագրական շարժումներին: Սակայն այդ գլխի հիմնական թիրությունն այն է, որ հեղինակը հանգամանորեն կանգ չի առնում պատմական փաստերի վրա, այլ բավականանում է շարադրելով արար գործիչներին և մամուլի արդյունքների գնահատականները՝ Սիրիայի և Լիբանանի ժողովուրդների հակաիմպերիալիստական պայքարին հայերի ցուցաբերած մասնակցության մասին:

Իսկ գոյություն օրհասական պայքար մղող դասակարգի գաղափարախոսները, քաղաքագետները, պատմաբանները գիտակցաբար աղավաղում և կեղծում են պատմական ճշմարտությունները: Նրանք արարական ազգային-ազատագրական շարժումները համարում են «դրսից» հրահրված շարժումներ: Նրանց ասելով Ջերել Դրուզի 1925—1927 թվականների ապստամբությունը ֆրանսիական զերագույն կոմիսարի կոպիտ վերաբերմունքի և անզլիական միջամտության հետևանքն էր¹³: Իսկ հետագա տարիներին, նրանք Սիրիայի և Լիբանանի ազգային անկախության պայքարում տեսնում էին «կարմիր պրոպագանդայի» ուրվականը¹⁴: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, շարունակելով այդ սխալ տեսակետը զարգացնել, նրանք Սիրիայի և Լիբանանի ժողովուրդների հակա-իմպերիալիստական պայքարի հղոր վերնջըը վերագրում էին Սովետական Միության... գործակալների՝ կոմունիստների շղթավազրությունը»: Վ. Ի. Լենինը գրել է. «Երբ բուրժուազիայի գաղափարային ազդեցությունը բանվորների վրա ընկնում է, խարխվում, թուլանում է, բուրժուազիան ամենուրեք և մշտապես դիմել է և դիմելու է ամենակատաղի կեղծիքի և զրպարտություն»¹⁵:

Բուրժուական ուսակցիոն հեղինակները և հատկապես մամուլը Սիրիայի և Լիբանանի ազգային-ազատագրական շարժումներին հայերի մասնակցությունը ներկայացնում են ոչ ճիշտ և հաճախ խեղաթյուրված ձևով: Նրանք հիմնականում հետապնդում են մի նպատակ՝ թշնամանք սերմանել արարների և հայերի միջև: Նրանք մինչև օրս էլ կրկնում են, որ իբր հայերը «կամավորական գեղերով» աշակցել են ֆրանսիական իմպերիալիստներին՝ Ջերել Դրուզի ապստամբությունը ճնշելու գործում, այն ինչ այդպիսի գեղերում հավաքագրված էին ոչ թե հայեր, այլ շերքեզներ... Նենգափոխելով Հոկտեմբերյան հեղափոխության գաղափարների և Սովետական Հայաստանի նվաճումների դերն ու նշանակությունը սփյուռքահայ զանգվածների քաղաքական գիտակցության ձևավորման գործում, նրանք մինչև անգամ աշխարհայացքով և սոցիալական դավանանքով պրոլետարիատի հեղափոխական պայքարից հեռու կանգնած ռամկավարներին և հեղակյաններին հուշակում են կոմունիստների «ուղեկիցներ», Սովետական

¹³ Catroux, Deux Missions en Moyen-Orient, Paris, 1958, pp. 50—51.

¹⁴ „La Syrie“, Beyrouth, 6 Septembre, 1930.

¹⁵ Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 20, էջ 612:

Միութեան «նվաճողական» քաղաքականութեան առաջապահներ: Լոնդոնի «Թայմսը» գրում էր, որ Լիբանանում ավելի խոշոր թվով կոմունիստներ կան, քան մյուս արաբական երկրներում, «այն բանի հետեանքով, որ հայերը ենթակա են սովետական պրոպագանդայի»¹⁶: Այդպես վարվելով բուրժուական ռեակցիոն հեղինակները փորձում են արաբներին զրգռել հայերի դեմ, իբր «գրսից» ներմուծված «խոռվարարական» այդ շարժումների որո՞ւմ սերմանողների դեմ:

Իմպերիալիզմի գաղափարական զինանոցից զենքեր փոխ առնելով, հակակոմունիզմի սփյուռքահայ տեսարանները հայերի մասնակցութիւնը սովյալ երկրի հակաիմպերիալիստական պայքարին համարում են միջամտութիւն «օտարի գործերում»¹⁷: Տակավի՛ն 1920-ական թվականներին բուրժուական ռեակցիոն հեղինակները գրել են. «Ծիթն շարունակենք մեզ հյուրընկալող երկրների գործերին միջամտել, եթե շարունակենք գոռալ ու բղավել, որ մենք որոշ օրինետացիա ունենք, որ մեզ հյուրընկալող երկրի օրինետացիան չէ, մենք կընկնենք քաղցի ժանիքների մեջ և կոշնջանանք: Օրինետացիան մեզ չի փրկի, ինչպես մինչև հիմա չի փրկել»¹⁸: Այսօր էլ նույն հանգերգը կրկնելով, դաշնակցական գործիչները հայտարարում են. «Այդ (արաբական, Ն. Թ.) երկրներու քաղաքական ներքին պայքարներուն չինք միջամտեր, այդ պայքարներուն մեջ կողմ չենք և այդ պայքարներուն մեջ տեղ չունինք: Մենք երկրի իշխանութեան հետ ենք»¹⁹: Այդ դրոշի ներքո նրանք ծառայում են իմպերիալիզմի և ռեակցիայի շահերին, ամենազազրելի պայքար մղում ազգային-ազատագրական շարժումների դեմ:

* * *

Մեր աշխատութիւնը հիմնականում նվիրված է հայ աշխատավորական զանգվածների մասնակցութեանը Միրիայի և Լիբանանի ժողովուրդների հակաիմպերիալիստական պայքարին: Դրա հետ միասին ցույց ենք տալիս նաև հայ քաղաքական տարբեր կազմակերպութիւնների տեղն ու դերը այդ պայքարում: Սակայն մեր խնդրի մեջ չի մտել ինչպես Հնչակյան և Ռամկավար կուսակցութիւնների, այնպես էլ Դաշնակցութեան դասակարգային էութեան, ծրագրային դրուժներին և այդ կարգի ուրիշ հարցերի:

¹⁶ „The Times“, London, 8 January 1949.

¹⁷ Վ. Ն ա վ ա ս ա ր դ յ ա ն, Դաշնակցութեան քաղաքական ուղիք, Կահիրե, 1925, էջ 82:

¹⁸ «Արձազանք Փարիզի», Փարիզ, 8 ապրիլի 1921:

¹⁹ «Հուսաբեր», Կահիրե, 26 հոկտեմբերի 1954: Միրիայում դաշնակները «երկրի իշխանութեան հետ» էին, երբ այդ իշխանութիւնը ֆրանսիական իմպերիալիզմի կամակատարն էր: Լիբանանում երկրի իշխանութեան հետ լինելու լուռնզողմ նրանք պաշտպանեցին անգլո-ամերիկյան իմպե-

համակողմանի վերլուծումը, թեև անհրաժեշտության դեպքում անդրադարձել ենք այդ հարցերին այս կամ այն լսփով:

Ժամանակագրական առումով աշխատությունը ընդգրկում է առաջին համաշխարհային պատերազմին հաջորդող տարիներից մինչև 1958 թ. ընկած ժամանակաշրջանը, երբ Արաբական միացյալ հանրապետության կազմությամբ Սիրիայում և քաղաքացիական կռիվների հետևանքով Լիբանանում զարգացման նոր էտապ սկսվեց այդ երկրների ժողովուրդների հակամպերիալիստական պայքարում:

Աշխատության համար հիմնական աղբյուր է հանդիսացել Սիրիայի և Լիբանանի ղեմնկրատական մամուլը: Առանձնապես պետք է հիշատակել «Ժողովուրդի ձայն», «Սաութ ալ-Շաար» և «Մեր նշանաբանն է Հառաջ» (ղեմնկրատական), ինչպես նաև «Արարատ» (հնչական) և «Զարթոնք» (ոսմկավար) օրգանները, որոնք (առաջինները սիստեմատիկաբար, վերջինները պարբերաբար) քննարկել են Սիրիայի և Լիբանանի ազգային ազատագրական և ղեմնկրատական շարժումների և դրանց հայերի մասնակցության հարցերը: Օգտագործել ենք նաև Սիրիայի և Լիբանանի կոմունիստական կուսակցության ընդհատակի օրգան՝ «Ժողովուրդի պայքար» պարբերականի որոշ համարները, մի շարք թուրքիկներ և այլն: Որոշ հարցերի լուսարանման գործում նշանակություն են ունեցել Սիրիայի և Լիբանանի ազգային-ազատագրական շարժումների մասնակիցներ՝ Հայկազուն Բոյաշյանի, Ծահե Տատուրյանի, Հակոբ Տեր-Պետրոսյանի և ուրիշների վկայությունները:

Հեղինակը անհրաժեշտ է համարում նշել, որ ներկա աշխատությունը չի հանդիսանում Սիրիայի և Լիբանանի ազգային-ազատագրական և ղեմնկրատական շարժումներին հայերի մասնակցության ամբողջական պատմությունը: Աշխատությունում տրվում է այդ պատմության մի շարք դրվագների համառոտ շարադրանքը:

Բիալիզմի դրածո Շամունին: Իրաքում նրանք այլևս երկրի իշխանության հետ չէին, երբ այնտեղ չկար տխրահռչակ Նուրի Սաիդը: Եգիպտոսում նրանք երկրի իշխանության հետ էին, երբ այնտեղ տիրում էին Ֆարուկը և բրիտանական իմպերիալիզմը:

ՀԱՅԵՐԻ ՄԱՍՆԱԿՅՈՒԹՅՈՒՆԸ ՍԻՐԻԱՅԻ ԵՎ ԼԻԲԱՆԱՆԻ
ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻՆ
(1925—1946 ԹԹ.)

/ Առաջին համաշխարհային պատերազմի ավարտին Մեր-
ձավոր արևելքի արաբական երկրներում թուրքական նվա-
ճողներին փոխարինեցին անգլո-ֆրանսիական իմպերիա-
լիստները: 1919—1920 թթ. Ազգերի լիգայի անունից ղեկա-
վարման մանդատի (խնամակալության) պիտակի ներքո
Լրաքը, Պաղեստինը և Անդրհորդանանը փաստորեն դարձան
բրիտանական, իսկ Սիրիան և Լիբանանը՝ ֆրանսիական գա-
ղութներ: Գաղութակալության այդ նոր վարիանտը կապիտա-
լիստական ընդհանուր սիստեմի ճգնաժամի ծնունդն էր: Իմ-
պերիալիստները, ի վիճակի չլինելով այլևս գործադրել գա-
ղութատիրության հին մեթոդները, փորձում էին հումանիս-
տական գործի կերպարանք տալ իրենց տիրապետությանը:
Խնամակալ պետությունները իբր պետք է ղեկավարվեին Ազ-
գերի լիգայի ուխտի 22-րդ հոդվածով, որպես «քաղաքա-
կրթության նվիրական ավանդ» հոգալով Օսմանյան կայս-
րությունից անջատված «ժողովուրդների բարօրության և
բարգավաճման» մասին, նպաստելով նրանց ազգային ան-
կախության երազանքների իրականացմանը: Արևելքի ժողո-

վուրդների կոմունիստական կազմակերպությունների համա-
ռուսաստանյան երկրորդ համագումարում (1919 թ.) վ. Ի. Լե-
նինը նշել է. «Նրբ խոսում են գաղութների մանդատներ բա-
ժանելու մասին, մենք հիանալի գիտենք, որ դա մանդատ-
ների բաժանումն է հափշտակման, կողոպուտի համար»¹:

2 Սիրիայում և Լիբանանում խնամակալության բարձրա-
գույն իշխանությունը հանդիսանում էր ֆրանսիական գերա-
զույն կոմիսարությունը: Գերագույն կոմիսարը ամենազոր
իշխանավորն էր, որի ձեռքում էին այդ երկրների արտաքին
և ներքին բոլոր գործերը: Նրան էր պատկանում տարբեր
երկրների հետ քաղաքական, տնտեսական, առևտրական և
այլ կարգի հարաբերություններ մշակելու իրավունքը, նրան
էին ենթարկված բանակը, ոստիկանությունը, ժանդարմե-
րիան, անվտանգության սպասարկությունը և դատարաննե-
րը: Նրա նշանակած «խորհրդականները» վճռող ձայն ունեին
ֆինանսների, արդյունաբերության, գյուղատնտեսության,
մաքսային, լուսավորության և այլ բնագավառներում²:

Պրանսիական իմպերիալիստները շփորձեցին լուծել,
չէին էլ կարող լուծել Սիրիայի և Լիբանանի սոցիալ-տնտե-
սական հրատապ հարցերը: Նրանք միավորվեցին տեղական
տիրապետող խավերի՝ ֆեոդալ-կալվածատերերի և առևտրա-
վաշխառուական բուրժուազիայի հետ ընդդեմ ժողովրդական
զանգվածների: Բնութագրելով ֆրանսիական իմպերիալիզմի
տիրապետությունը, «Ժամանակ» թերթը գրել է. «Բարձր
կոմիսարության քաղաքականությունը հիմնված է սուրի և
կեղեքումի վրա: Այս վարչության մեջ շտեմնված կաշառա-
կերությունը և անպատիվ ընթացքը ամեն պարագայի մեջ շեն
կրնար ծառայել ավելցնելու ֆրանսական ազդեցությունը»³:

Ելնելով Պրանսիայի իմպերիալիստական շահերից, գե-
րագույն կոմիսար գեներալ Գուրոն Սիրիան մասնատեց,

1 վ. Ի. Լենին, Երկեր, հ. 30, էջ 186:

2 Ա. Սյուրմեյան, Սուրիա, էջ 336:

3 «Ժամանակ», Պոլիս, 21 նոյեմբերի 1925:

արհեստականորեն ստեղծելով Դամասկոսի, Հալեպի, Ալա-վիտի, Ջեբել Դրուզի և Ալեքսանդրեստի սանջակի «պետու-թյունները», որոնց գլուխ նշանակվեցին ֆրանսիական կա-ռավարիչներ: Իրենց տիրապետութանը օրինական ձև տա-լու նպատակով, ֆրանսիական իմպերիալիստները այդ «պե-տություններից» յուրաքանչյուրի հետ կապվեցին հատուկ պայմանագրով: Այդ պայմանագրերը ձեռք բերվեցին ճընշ-ման և կաշառքի միջոցով: Անդրադառնալով Ջեբել Դրուզի հետ Ֆրանսիայի պայմանագրին, գեներալ Կատրոն գրել է. «Այդ պայմանագրի վերաբերյալ բանակցությունները ին-ձանից պահանջեցին բազում ջանք և աշխատանք: Դրանք ինձ վրա արժեցին նաև մի քանի հարյուր հազար ոսկի ֆրանկ»⁴:

Սակայն բաժանելով տիրելու այդ քաղաքականությունը շտվեց ակնկալված արդյունքը: 1922 թ. կեսերին, տեսնելով որ այդ քաղաքականությունից դժգոհ են մինչև անգամ ֆեո-դալ-կալվածատերերը, ֆրանսիական իմպերիալիստները հանդես եկան Սիրիայի միասնության օգտին: Նրանք նախ հինգի փոխարեն երեք «պետության» վերածեցին Սիրիան, ապա դրանցից յուրաքանչյուրի ներկայացուցիչներից կազ-մեցին դաշնակցային մի խորհուրդ և նրան տվեցին կալվա-ծական, շինարարական և այդ կարգի ուրիշ բնագավառներ վերահսկելու իրավունք:

Սիրիայի և Լիբանանի տնտեսության համարյա բոլոր բնագավառներում գերիշխող դիրք գրավեց օտարերկրյա, հիմնականում ֆրանսիական կապիտալը: «Սիրիայի և մեծ Լիբանանի բանկը», որը պետական բանկի ֆունկցիաներ էր կատարում, մի ֆրանսիական մասնավոր ձեռնարկ էր: Երկ-րագործական բանկերը, որոնք պատկանում էին ֆրանսիա-կան կապիտալին, վերահսկում էին գյուղատնտեսությունը: Ֆրանսիական կապիտալիստների ձեռք անցավ Սիրիայի էլեկտրաէներգիայի ընկերությունը, ֆրանսա-բելգիական կա-

⁴ Catroux, Deux Missions en Moyen-Orient, p. 48.

պիտալիստների՝ Դամասկոսի և Բեյրութի էլեկտրաբարձն ու էլեկտրական ձեռնարկությունները: Երկաթուղիները հիմնականում գտնվում էին ֆրանսիական, իսկ ավտոմոբիլային տրանսպորտը անգլո-ֆրանսիական կապիտալիստների ձեռքում: Լիբանա-սիրիական ժխտախոսագործական մոնոպոլիան՝ Ռեթին ենթակա էր ֆրանսիական երկրագործական բանկին: Ֆրանսիական ֆիրմաները խոշոր դեր էին խաղում նաև Սիրիայի և Լիբանանի համարյա մենաշնորհի վերածված բրդի, բամբակի և մետաքսի առևտրում:

6. 3 Սիրիան և Լիբանանը համարելով հումքի աղբյուր և վաճառահանման շուկա, ֆրանսիական իմպերիալիստները³ բոլոր միջոցներով արգելակում էին տեղական արդյունաբերության զարգացումը: Բրիտանական տնտեսագետ Ա. Բոնը գրել է. «Մանդատային տերիտորիաների օտարերկրյա կառավարողների շրջանում կար որոշակի ժխտական վերաբերմունք դեպի տեղական արդյունաբերության զարգացումը: Արևմտյան տերությունները չէին կարող հաշտվել այն բանի հետ, որ այդ տերիտորիաներում ծաղկեն ազգային (անկախ Ա. Բ.) արդյունաբերական ձեռնարկություններ, որոնք ի վերջո պետք է ձգտեին իրենց շուկան վերապահել սեփական արտադրանքի համար»⁵: [Օգտագործելով իրենց ձեռքում եղած մաքսային արտոնությունները, նրանք խափանում էին տեղական գործարանների անհրաժեշտ մեքենաների, սարքերի ներմուծումը, բարձի թողի էին անում արդյունաբերական ամենահուսալի ծրագրերի կենսագործումը, կազմակերպում էին ֆրանսիական ապրանքների կոնկուրենցիա տեղական արտադրությունների դեմ և այլն⁶:] Մ. Մուսալին նշում է, որ Սիրիայի և Լիբանանի առանձնապես տեքստիլ արդյունա-

⁵ AL. Bonne, States and Economics in the Middle East, London, 1948, p. 284.

⁶ N. A. Farès and M. I. Hussayn, The Crescent in Crisis. N. Y., 1955, p. 93.

բերութիւն տարբեր ճշուղները «շատ վնասվեցին ներմուծված ապրանքների մրցակցութիւնից»⁷:


Գյուղում ֆրանսիական իմպերիալիստներն ամեն կերպ աշխատում էին պահպանել և հավերժացնել շահագործման այն բոլոր մինչևկապիտալիստական ձևերը, որոնք կազմում էին իրենց ունակցիոն դաշնակիցների՝ ֆեոդալ-կալվածատերերի գոյութիւն հիմքը: Ուարիները գրում է, որ մանդատային իշխանութիւնները խրախուսում էին խոշոր կալվածատիրութիւնը, ակտիվորեն աջակցում ֆեոդալական տիրութիւնների ընդարձակմանը⁸: Տարբեր շրջաններում ամբողջ հողերի 60—80 տոկոսը պատկանում էր խոշոր կալվածատերերին: Ֆեոդալական յոթը գերդաստաններ տիրում էին Սիրիայի ամենաընդարձակ և ամենաբարեբեր հողային տարածութիւններին: Դրանցից Բարազիները ունեին 49, Ազմները՝ 25, Քիլանիները՝ 24 գյուղերի հողային ֆոնդը⁹: Գյուղացիների ճնշող մեծամասնութիւնը հողազուրկ էր կամ էլ ունեին երկու-երեք հեկտար հողային տարածութիւն, որն անբավարար էր գյուղացիական ընտանիքի մինիմում ապրուստն ապահովելու: Հող վարձակալելու և արհեստական ոռոգման սիստեմներից վարձով օգտվելու դրութիւնը, որը լայն տարածում էր գտել Սիրիայում և Լիբանանում, ծառայում էր գյուղացիական զանգվածները կալվածատերերից ճորտատիրական կախման մեջ դնելուն:

Պակաս անմխիթար չէր Սիրիայի և Լիբանանի առևտրի վիճակը: Արաբական արևելքի վերաբաժանումից հետո խզվեց Բեյրութի, Դամասկոսի և Հալեպի կապը Թուրքիայի, Արաբիայի, Իրաքի և Պաղեստինի շուկաների հետ: Ֆրանսիան հանդիսանում էր Սիրիայի և Լիբանանի շուկաների համարյա միակ հայթայթիչը և հումքի գնորդը: Իմպերիալիստները շնչին

⁷ M. Moussali, Etudes Economiques sur la Syrie et le Liban, Harissa, 1934, p. 163.

⁸ D. Warriner, Land and Poverty in the Middle East, London, 1948, p. 94.

⁹ „L'Asie Française“, 1933, № 309, p. 132.



գնով արտահանում էին տեղական հումքը, իսկ իրենց արտադրութիւնները պարտադրում չափազանցված արժեքներով: Այդ պատճառով էլ, Սիրիայի ներմուծումները դրամական արժեքով զգալի չափով բարձր էին քան արտահանումները: 1925—1926 թթ. Սիրիան արտահանումներից ստացել էր 544.818 հազար և ներմուծումների համար վճարել էր 1.267.140 հազար ֆրանսիական ֆրանկ¹⁰: Համաշխարհային տնտեսական ճգնաժամի տարիներին, ընդհուպ մինչև 1935 թվականը Սիրիայի և Լիբանանի արտաքին առևտուրը կրճատվեց 75 տոկոսով¹¹:

Ֆրանսիական իմպերիալիստները բառի իսկական առումով թալանում էին իրենց «խնամակալութեան» հանձնված Սիրիան և Լիբանանը: Չնայած որ այլևս Օսմանյան կայսրութիւնը չկար, նրանք 1881 թվականի սուլթանական ֆերմանի համաձայն շարունակում էին այդ երկրներից գանձել օսմանյան հանրային պարտքը՝ տարեկան 20.000 թուրքական հընչուն ոսկի մասնավճարով¹²: Նրանք Սիրիայի և Լիբանանի շահագործումից ստացած հսկայական շահույթներից մինչև անգամ փշրանքներ չէին ծախսում այդ երկրների ժողովուրդների բարեկեցութեան վրա: Այդ իրողութիւնը խոստովանում էին մինչև իսկ ֆրանսիական իմպերիալիզմի առանձին գործիչներ: Սֆորզան գրել է. «Ներկայումս (1935 թ.) Սիրիայի և Լիբանանի դաշտերը, որոնք գտնվում են Բեյրութի և Դամասկոսի, Տրիպոլիի և Հոմսի միջև, ինչպես նաև Համայի շրջանում, նույն վիճակում են, ինչ վիճակում էին 1920 թվականին», իսկ Բեյրութի նավահանգստում ապրանքների և ճանապարհորդների ափհանումը կատարվում էր թրաց ծովում կանգնած նավերից՝ մակուկների միջոցով, ինչպես թուրքերի ժամանակ¹³: Անտեսված էր նաև ճանապարհների, հիվանդանոցների, դպրոցների շինարարութիւնը:

10 Ա. Սյուրմեյան, Սուրիա, էջ 303:

11 „L'Orient“, Beyrouth, 3 Juin 1935.

12 Ա. Սյուրմեյան, Սուրիա, էջ 353:

13 „L'Orient“, 3 Juin 1935.

Իր հերթին, Թալանով զբաղված էր նաև Ֆեոդալ-կալվածատերերի օլիգարխիան: Կային շուրջ տաս տեսակ ուղղակի և նույնքան էլ անուղղակի հարկեր, սակայն, ամենից ավելի ճնշողը հարկերը գանձելու կապալային ձևն էր: Տասանորդ գանձելու կապալը ձեռք բերելով, Ֆեոդալ-կալվածատերերը հնարավորություն էին ստանում գյուղացիներին առավել վայրագություններ կեղեքելու, նրանց ունեցվածքը հափշտակելու: Անգամ բուրժուական պատմաբաններից ոմանք խոստովանում են, որ կապալառուները զբաղված էին «ամեն տեսակ զեղծումներով՝ պաշտպանութենե զուրկ եղող խեղճ հողագործները կեղեքելով»¹⁴: Իսկ «էբո դ'Ալեքսանդրեստ» թերթը գրել է. «Հարկային հարցը այդ կերպ (կապալային ձևով, Շ. Թ.) լուծելով, մենք գնում էինք վատթարից վատթարագույնին, պարզապես հատում էինք, ոչ թե լուծում գորդյան հանգույցը»¹⁵:

Չնայած որ քաղաքների աշխատավորության լայն խավերը անգործության էին մատնվել, այնուամենայնիվ, առանձնապես անտանելի էր Սիրիայի և Լիբանանի հասարակայնության ամենաբազմամարդ դասակարգի՝ գյուղացիության տնտեսական դրությունը: Վելերսը նշում է, որ գյուղացիներն անասունների հետ ապրում էին միևնույն հարկի ներքո, շունեին ոչ մի կահույք, ուտում, հանգստանում և քնում էին գետնի վրա: Միսը հազվագյուտ դեպքում էր երևում գյուղացիական ընտանիքում, իսկ թեյը համարվում էր պերճանք...

Ավելի ծանր դրություն էր մատնված Սիրիայի և Լիբանանի հայ գաղթականությունը:

Մինչև առաջին համաշխարհային պատերազմը Սիրիայում և Լիբանանում ապրում էին շուրջ երկու տասնյակ հազար հայեր: Պատերազմի տարիներին և հետագայում Կիլիկյան լեռնաշխարհից, մասամբ էլ Արևմտյան Հայաստանից եկած գաղթականները նրանց թիվը բարձրացրին ավելի

¹⁴ Ա. Սյուրմեյան, Սուրիա, էջ 357.

¹⁵ „Echo d'Alexandrette“, 31 Décembre 1926.

քան 150.000-ի¹⁶, Հալեպում ապաստան էին գտել 48.000, Բեյրութում 30.000, Դամասկոսում 12.000 հայեր:} Ջգալի 5
թվով հայեր բնակվում էին Ջերիկ Մուսայում, Քեսարում, Ալեքսանդրիտում, Զահլեում, Տրիպոլիում, Հոմսում, Համայում, ինչպես նաև Ջունիում, Ղազիրում, Սալիդայում, Ջարաբլուտում, Ազեզում, Ռակկայում, Բարում, Մեմրիչում, Դեյր էլ-Ջորում և այլ վայրերում: Բացի այդ, Բեյրութի և Հալեպի ինը որբանոցներում պատասպարված էին շուրջ 10.000 հայ որբեր:

Գաղթականության ճնշող մեծամասնությունը համախմբված էր գաղթականներում կամ քեմփերում: Բեյրութի շորս գաղթականների մոտավոր թվով 22.000 հայերը ապրում էին «սոսկալի» պայմաններում, ինչպես վկայում է ականատես Ջ. Բըրտը¹⁷: Նրանք գիշերում էին «բացօթյա, ցուրտին ու անձրևին տակ»¹⁸, Հալեպի քեմփերը հաշվում էին

16 Սիրիայի և Լիբանանի հայ գաղթականության թվի վերաբերյալ բավական մանրամասն տվյալներ բերում է «Սուրիահայ տարեցույցը» (1924 թ., էջ 235—238): Թուրքիայից խուճապահար փախչող հայերի հոսանքը հիմնականում ուղղվեց դեպի Սիրիա և Լիբանան այն բանի հետևելանքով, որ բրիտանական իմպերիալիստները նրանց առաջ փակեցին Եգիպտոսի, Իրաքի և Պաղեստինի դռները: Այդ տեսակետից ուշագրավ իրողություն է «Բոնոմ» շոգենավի 217 հայ գաղթականների նկատմամբ Եգիպտոսի բրիտանական իշխանությունների տմարդի վերաբերմունքը: Եգիպտահայերի դիմումը գեներալ Ալլենբրիի «մարդասիրական զգացմանցը» մնաց անհետևանք և... շոգենավը շարաթներ Ալեքսանդրիայի նավահանգստում սպասելուց հետո մեկնեց այլուր... («Արև», 18 նոյեմբերի 1921): Նույնպեսի «մարդասիրական» վերաբերմունք ցուցաբերեցին նաև Իրաքի և Պաղեստինի բրիտանական իշխանությունները: 30 նոյեմբերի 1921 թվակիր արխիվային մի վավերագրում ասված է. «...Կիլիկիո կողմերեն եկող հայերու Պաղեստին մուտքը արտոնվելու համար կատարված դիմումները բաղձացված արդյունքը ըստին դժբախտաբար, կառավարական նոր օրենքի մը բացորոշ տրամադրության համաձայն նոր գաղթականներու Պաղեստին մուտքը թույլատրված չլլալով» (ՀՍՍՀ ԳԱ Արևելագիտության սեկտորի արխիվ, ֆ. 5, բ. 1, վ. 4: Այսուհետև ԳԱ ԱՍ արխիվ):

¹⁷ Joseph Burt, The People of Ararat, p. 106.

¹⁸ «Արև», 19 դեկտեմբերի 1922:

12—15.000, իսկ Դամասկոսինը՝ 8—10.000 գաղթականներ, որոնք իրենց գոյությունը գերազանցապես քարշ էին տալիս «սովի ու մերկության ճիրաններուն տակ»¹⁹: 1922 թվակիր արխիվային մի վավերագրում Դամասկոսի գաղթականների մասին ասված է. «Գաղթական հայերը, ինչպես ամեն տեղ, հոս ալ նախանձելի վիճակ մը շունին. գործ չկա. բացի ճամբա շինելեն. անկից ալ շատ քիչեր կօգտվին օրական իրենց և իրենցիններուն հացի գին մը ձեռք բերելու շարժ: Անոնք որ ընտանիք ունին, ընտանիքնին քաղաքը կամնան ու իրենք՝ օրերով հեռու տեղեր քար կկրեն ու քար կկոտրեն: Շատ քիչեր կարողացած են տուն գտնել և վարձել. հազարավորներ վրաններու տակ կամ ընդարձակ գովուշներու մեջ իրարու վրա թխմված են»²⁰:

Պետք է նշել, որ այդ գաղթականները նախ «վրանաքաղաքի», ապա «հյուղավանի» վերածվելով պահպանվեցին մինչև վերջերս:

ՍԻՐԻԱՅԻ ԵՎ ԼԻԲԱՆԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ
ՍԿՋՔՆԱՎՈՐՈՒՄԸ, ՀԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Օսմանյան տիրապետության ժամանակաշրջանում Սիրիայի և Լիբանանի ամբողջ ժողովուրդը բաժանված էր շուրջ երկու տասնյակ կրոնական համայնքների, որոնցից յուրաքանչյուրը ղեկավարվում էր Բարձրագույն դուան կողմից հաստատված կանոնադրությամբ: Ֆրանսիական իմպերիալիստները Սևրի պայմանագրի համաձայն անփոփոխ պահպանեցին համայնքային կարգը, նրանց գոյության հիմք ընդունելով նախապատերազմյան իրավական դրությունը: Այդ համաձայնքն էլ հայ գաղթականներին իրավունք տվեց Սիրիայի

19 ԳԱ ԱՍ արխիվ, ֆ. 5, բ. 1, վ. 2:

20 ՀՍՍՀ կուլտուրայի մինիստրության գրականության և արվեստի թանգարանի արխիվ, ֆ. Ա. Զոպանյան, բ. 1, վ. 3031 (այսուհետև ԳԱԹ արխիվ):

կամ Լիբանանի պետութեան քաղաքացի նկատվելու²¹, ինչպես նաև իրենց համայնքային կազմակերպութեան հիմք ընդունելու Ազգային սահմանադրութիւնը:

Կազմակերպվելով Ազգային սահմանադրութեան հիմունքներով, Սիրիայի և Լիբանանի հայ գաղթականութիւնը Անթիլիաս տեղափոխեց Տանն Կիլիկիո կաթողիկոսութիւնը, որը և պաշտոնապես ճանաչվեց որպես այդ երկրների հայութեան ազգային գերագույն իշխանութիւնը: Ստեղծվեցին Բեյրութի, Հալեպի և Դամասկոսի թեմական իշխանութիւնները: Նշանակվեցին թեմակալ առաջնորդներ, որոնք սահմանադրական ժողովների և խորհուրդների միջոցով վարում էին համապատասխան թեմի հայութեան հասարակական և մշակութային գործերը, տնօրինում անձնական իրավունքի վերաբերյալ խնդիրները: Այդպես, հայ գաղթականութիւնը վերականգնելով իր իրավական դրութիւնը և պատշաճ տեղ գրավելով արաբական համայնքների ընտանիքում, աստիճանաբար բուժեց վերքերը, անցավ շինարար աշխատանքի:

Հայերը գնալով ամուր կովաններ ստեղծեցին Սիրիայի և Լիբանանի տնտեսութեան տարբեր բնագավառներում: Առաջին հերթին նրանք զգալի տեղ գրավեցին արհեստագործութեան մեջ: Մի շարք արհեստներ, ինչպիսիք են՝ ասեղնագործութիւնը, ոսկերչութիւնը, կոշկակարութիւնը, դերձակութիւնը, որմնադրութիւնը համարվում էին գերազանցապես «հայկական արհեստներ»²²: Հայերը հիմնեցին նաև

21 «Արև», 30 սեպտեմբերի 1924, նշելով Լոզանի պայմանագրից, գերագույն կոմիսարութիւնը 1 օգոստոսի և 30 օգոստոսի 1924 թվակիր հրամանագրերով Սիրիայի կամ Լիբանանի քաղաքացի ճանաչեց այդ երկրներում հաստատված նախկինում օսմանյան հպատակ հայերին:

22 Հալեպի գաղթականութեան շրջանում կային 1500 որմնադիրներ, 850 շուհակներ, 650 կոշկակարներ, 300 դերձակներ, 300 երկաթագործներ, 150 թիթեղագործներ, 60 մասնագետ մեքենագործներ, 50 ոսկերիչներ, 2500—3000 կանայք էլ զբաղված էին Ամերիկայից ներմուծվող օգտագործված զգեստների մաքրման և վերանորոգման գործով («Արև», 26 օգոստոսի 1925): Հալեպում հազարավոր հայ կանայք տնային պայմաններում պատրաստում էին ժանյակներ, ասեղնագործում կանաչի

մի շարք մանուֆակտուրաներ, որոնք զբաղված էին գորգի, ալաշայի, մետաքսաթելի, մետաքսյա գործվածքների, կաշվի, մորթու, սպիրտի և այլ ապրանքների մեծաքանակ արտադրությամբ²³: Դրանցից առանձնապես պետք է հիշատակել Դարադյանի կաշեգործարանը, Աշրգյանի գորգագործարանը, «Նշարթվա» ընկերության մետաքսագործարանը, «Ոստան» անանուն ընկերության հյուսվածքեղենի գործարանը: Միաժամանակ բարձրանում էր հայերի դերը ներքին և արտաքին առևտրում, ինչպես և ազատ ասպարեզներում²⁴:

Աշխուժացավ նաև հասարակական և մշակութային կյանքը: Բեյրութում, Հալեպում, Դամասկոսում և հայաշատ այլ վայրերում հանդես եկան ազգային կուսակցությունները, առաջացան կոմունիստական առաջին հայ խմբակները, ինչպես նաև բազմաթիվ մշակութային, բարեգործական, մարզական և այլ միություններ: Բացվեցին դպրոցներ, ակումբներ և տպարաններ, սկսվեց գրքերի, թերթերի և հանդեսների հրատարակությունը: Մինչև երկրորդ համաշխարհային պատերազմի տարիները լույս են տեսել ավելի քան 40 անուն

ներքին զգեստների, թաշկինակների, սեղանի ծածկոցներ և այլն, որոնք արտահանվում էին Ամերիկա և Օվրոպայի տարբեր երկրներ («Արև», 21 հուլիսի 1924): Հայ կոշկակարները և պղնձագործները զգալի թիվ էին կազմում Դամասկոսում («Արև», 6 փետրվարի 1924):

23 Ալաշա կոշված գործվածքեղենի արտադրությունը, որը համարյա ամբողջությամբ գտնվում էր հայ գաղթականների ձեռքում, միայն Հալեպում ընդգրկում էր ժամկետ քան շորս հազար հոգի» («Արև», 14 մարտի 1924): Հայերի ձեռքում էր նաև գորգի արտադրությունը: 1926 թ. Հալեպում գործում էին հայերին պատկանող մի շարք գորգաշինական մանուֆակտուրաներ, որոնցում աշխատողները գրեթե ամբողջությամբ հայեր էին («Արև», 22 հոկտեմբերի 1926):

24 Դրվատելով առևտրի ասպարեզում հայ գաղթականների ցուցաբերած ձեռներեցությունը, Թ. Ֆ. Ջոնսոնը գրել է, որ նրանք «արվեստի մը աստիճանին հասցուցած են» առևտուրը («Արև», 28 մայիսի 1927): 1927 թ. Հալեպում գործում էին 30 հայ բժիշկներ, 16 դեղագործներ, 20 ատամնարույժներ, 18 բուժքույրեր, 8 ճարտարապետներ, ինչպես նաև ավելի քան 100 հայեր ծառայում էին երկաթուղու վարչությունում, բանկերում և այլ հիմնարկներում («Արև», 23 հունվարի 1928):

հայ պարբերականներ: Անհամեմատ ավելի աշխուժություն էր տիրում մատաղ սերնդի ուսումնադաստիարակչական գործի ասպարեզում: Զկար մի քաղաք, գյուղ կամ ավան, որի հայ բնակիչները դպրոց չունենային: Հալեպում և ենթաշրջաններում գործում էին 24, Դամասկոսում՝ 8, Բեյրութում և ենթաշրջաններում՝ 16 հայկական դպրոցներ, որոնցում սովորում էին մոտավոր թվով 10.000 երեխաներ²⁵: Հայ գաղթականութունը իր սուղ միջոցներից պատկառելի գումարներ էր հատկացնում կրթական գործի համար: Բավական է նշել, որ Հալեպի 18 դպրոցների բյուջեն հասնում էր 13.500 օսմ. ոսկու, որը մեծ մասամբ գոյանում էր ուսման վճարից և նվերներից: Բացի այդ, զգալի թվով հայեր սովորում էին օտար դպրոցներում: Հալեպի ամբրիկյան միջնակարգ դրպրոցներում ընդգրկված էին շուրջ 200²⁶, իսկ Բեյրութի ամբրիկյան համալսարանի միջնակարգ և մասնագիտական ուսման բաժիններում՝ 140 հայեր²⁷:

Սակայն, հայ գաղթականության խաղաղ բարգավաճմանը խանգարում էր ֆրանսիական իմպերիալիստների գաղութային քաղաքականութունը: Ներքին հենարաններ որոնելով, նրանք մի կողմից ազգամիջյան թշնամանքի որոմ էին սերմանում հայերի և արաբների միջև, մյուս կողմից փորձում էին «ղաշնակիցներ» հավաքագրել ազգային-ազատագրական շարժումների դեմ: Ռուալլահ բեդելիներին ցեղապետը՝ Նուրի Շաալանը, որի ցեղախումբը հաշվում էր շուրջ 60.000 մարդ, տարեկան 24.000 թուրքական ոսկի էր ստանում մանդատի դեմ չգործելու համար²⁸: Լիաբուռն վարձատրվում էին նաև Զբբել Դրուզի Աթրաշ ֆեոդալական գերդաստանի բազմաթիվ անդամներ, մասնավորապես Սելիմ,

²⁵ Սիրիայի և Լիբանանի հայկական դպրոցների վերաբերյալ ավելի մանրամասն տվյալների համար տե՛ս «Արևի» 1 մայիսի, 27 և 28 օգոստոսի 1925, 26 նոյեմբերի 1927, 22 մայիսի 1928 թվակիր համարները:

²⁶ «Արև», 28 օգոստոսի և 1 սեպտեմբերի 1926:

²⁷ Նույնը, 14 հոկտեմբերի 1927:

²⁸ Catroux, Deux Missions en Moyen-Orient, pp. 42—43.

Աբդուլղաֆար և Նեսիբ Աթրաշները, որոնք, Կատրուի պատմելով, «փառասեր և փողասեր մարդիկ» էին²⁹։ Դրամական օգնություն էին ստանում նաև մի շարք կրոնապետեր։ Սիրիայի ուղղափառ համայնքի կրոնապետ Գրիգորիոս Հաղադը վարձատրության փոխարեն հանձն էր առել զորավիգ հանդիսանալ ֆրանսիական մանդատին³⁰։

Ֆրանսիական իմպերիալիզմի հետ այդ կարգի գործարքի մեջ էր մտել նաև Դաշնակցությունը։ 1924 թ. վերջերին Ալ. Խատիսյանը Բեյրութի դաշնակ շեֆերին գրել է. «Սիրիոնոր բարձր կոմիսար Սառայի հետ... ունեցա... շատ մանրամասն խոսակցություն Սիրիո և Սիրիո հայ ժողովրդի մասին։ Գեներալն այն կարծիքն ունի, որ հայերը գլխավորապես պիտի կենտրոնանան Բեյրութի և Դամասկոսի շրջաններում... չմտնեն բանակի մեջ և ծառայեն ոստիկանության մեջ»³¹։ Պարզ էր գեներալի ռազմավարության հետին միտքը։ Այդ քաղաքներում հայերի զանգվածային բնակեցումով գեներալը ձգտում էր ի հեճուկս մուսուլմանների զորացնել քրիստոնյաների դիրքերը։ Հայերին ծառայության մղելով ոչ թե բանակի, այլ ոստիկանության մեջ, գեներալը ցանկանում էր քրիստոնյաներով համալրել այն շոկատները, որոնք մանդատի 2-րդ հոդվածի համաձայն նախատեսվում էին ներքին կարգի պահպանման համար։ Գեներալն աշխատում էր այնպես տեղաբաշխել հայերին, որ անհրաժեշտության դեպքում հնարավոր լիներ քրիստոնյա-մուսուլմանական կամ հայ-արաբական բախման գույն տալ յուրաքանչյուր ազգային-ազատագրական շարժմանը և այն ճնշել անդորրությունը վերահաստատելու պատրվակով։

Ֆրանսիական իմպերիալիստների այդ կարգի փորձերը կասկածանքի մթնոլորտ էին ստեղծում հայ գաղթականության շուրջը, բացասաբար անդրադառնում հայ-արաբական

²⁹ Catroux, Deux Missions en Moyen-Orient, p. 44.

³⁰ Նույն տեղում, էջ 73—74։

³¹ ԳԱ ԱՍ արխիվ, ֆ. 5, բ. 1, Վ. 3։

հարաբերությունների վրա³²։ Բայց ազգամիջյան թշնամանքի գննքը գնալով հնացավ, անզոր դարձավ, շնայած այն բանի, որ իմպերիալիստները համառորեն կառչած մնացին նրան՝ մինչև իրենց Սիրիայից և Լիբանանից վտարվելը։

1920-ական թվականների վերջերից, իրազեկ դառնալով հայ գաղթականության հիմնական զանգվածի ազգային-ազատագրական շարժումների նկատմամբ ունեցած իսկական վերաբերմունքին, արաբ առաջադեմ գործիչները սկսեցին պաշտպանել հայերի և արաբների համագործակցության անհրաժեշտությունը։ 1929 թ. Բեյրութի «ալ-Յակզաթ» թերթը գրել է. «Մենք ամենամեծ հակառակորդն էինք գաղթականների և հատկապես չքավոր հայերի առաջ մեր երկրի դռները բացելուն։ Վեց տարի շարունակ մենք և նրանք վիճեցինք...։ Այսօր, սակայն, անհրաժեշտ է մեր երբեմնի հյուրերի հետ համագործակցել, որովհետև նրանք դառնալով այս երկրի զավակները մեզ հետ միասին մասնակցում են հայրենիքի վերելքին»³³։

32 Ֆրանսիական իմպերիալիստները ցրեցին Հալեպում գործող «Շայ-արաբ բարեկամության կոմիտեն», որը կազմվել էր 1919 թ. անգլիական իմպերիալիստների կողմից հրահրված հայ-արաբական արյունալի իրադարձություններից հետո։ Միք. Նաթանյանը պատմում է. «...դեպքին առաջին շվարումը անցնելին ետք, տեղվույն արաբ և հայ վերին շրջանակները պատահածին հուզված, անկեղծորեն փափագեցան միանգամընդմիջ առաջը առնել նմանօրինակ ցավառիթ պատահարներու։ Արդարև, երբ մեկ կողմեն՝ զինվորական կուսակալին և մյուսֆթիին սկսյալ կառավարության վերին պաշտոնյաները հանրության աչքին երևնալու ձեռով մը սկսան հայոց առաջնորդարանը այցելել և պարբերաբար զիրար հյուրասիրել, անդին միևնույն ազնիվ ներշնչումով կազմվեցավ անմիջապես «Շայ-արաբ բարեկամության կոմիտե» մը, որ միակ նպատակ ընտրած էր այդ երկու ժողովուրդներուն միջ կկամա գոյացած թյուրիմացությունները փարատել և գործուն պրոպագանդալով մը հայ-արաբ դարավոր բարեկամությունը ամրապնդել։ Ֆրանսացիներու տեղավորվելին ետքն էր, որ ...այդ ընկերակցությունը ակամա վերջ գտավ» («Արև», 4 ապրիլի 1924)։

³³ البقطة، بيروت، ١٩٢٩ ٥-٦ ص ٨

Սակայն կային այնպիսի գործիչներ, որոնք գտնվելով ֆրանսիական իմպերիալիստների կամ Թուրքիայի կառավարող շրջանների ազդեցության ներքո, շարունակում էին թշնամություն սերմանել հայերի դեմ: Այդպիսիներին հակահարված էին տալիս առաջադեմ մամուլի օրգանները: «Ալ-Ումմալ» թերթը գրել է. «Մի շարք ազգային ղեկավարներ կամ ղեկավարութայն հավակնող անձինք խիստ հարձակումներ են գործում հայերի դեմ և արաբներին մղում թշնամաբար վարվել նրանց հետ... Մենք չենք պաշտպանում դաշնակների պրոիմպերիալիստական քաղաքականությունը, բայց միաժամանակ չենք կարող հանդուրժել, որ արաբ աշխատավորներին գրգռեն հայ աշխատավորների դեմ: Աշխատավորները եղբայրներ են, որոնք միմյանց հետ կապված են միևնույն տնտեսական և քաղաքական շահերով: Այդ հանգամանքը նրանց պարտավորեցնում է միավորվել, լինել միասնական՝ հանուն հափշտակված իրավունքների մղվող պայքարում»³⁴:

* * *

Հոկտեմբերյան հեղափոխության աշխարհով մեկ ծավալած գաղափարները արմատական բեկում առաջացրին նաև հայ ժողովրդի նշանակալից մի հատվածը ներկայացնող սփյուռքի հայութայն մեջ: Հայ ժողովրդի կենսական հարցերի լուծումը միջազգային հեղափոխությանը կապելով, սփյուռքահայ աշխատավորների և ինտելիգենցիայի առաջավոր խավերը հանդես եկան ինտերնացիոնալիզմի դրոշի ներքո: Նշելով որ սփյուռքահայ բանվորը «չնչում է ամերիկական, ֆրանսիական և այլ պրոլետարիատի օդով»³⁵, Ալ. Մյասնիկյանը գրել է. «(հայ աշխատավորները) ապրում են եվրո-

³⁴ العمال، بيروت، ۱ كانون اول ۱۹۳۰

³⁵ Ալ. Մյասնիկյան. Կուսակցությունները գաղութահայության մեջ, Թիֆլիս, 1924, էջ 126:

պական զանազան երկրների և Ամերիկայի բանվորների հետ կողք-կողքի: Բուրժուական երկրների պրոլետարիատն ու աշխատավորութունը իրերի ընթացքով գնում են դեպի միջազգային հեղափոխություն: Եվ այդ տեղերի հայ աշխատավորութունը չէ, որ հեռու պիտի մնա հեղափոխությունից»³⁶:

Հայ աշխատավորները զգալի ավանդ մուծեցին Սիրիայում և Լիբանանում ծավալված կոմունիստական և բանվորական շարժումների զարգացման գործում:

Արաբական արևելքի երկրներում կոմունիստական շարժման ձևավորմանը նպաստեց միջազգային բանվորական հեղափոխական շարժումների այն վիթխարի վերելքը, որն առաջացավ 1919—1923 թթ. Հոկտեմբերյան հեղափոխության անմիջական ազդեցության ներքո: 1920 թ. սեպտեմբերի 1-ին, արձագանքելով Կոմինտերնի կոչին, Արաբիայի, Եգիպտոսի, Իրաքի, Պաղեստինի նման՝ նաև Սիրիայի աշխատավորության առաջավոր խավերը ներկայացուցիչներ ուղարկեցին Բաքվի՝ Արևելքի ժողովուրդների առաջին համագումարին: Այդ համագումարի մանիֆեստում ասված է. «Կոմունիստական ինտերնացիոնալը բանվորների և գյուղացիների, ամբողջ աշխարհի կոմունիստների դաշինքն է, որը նպատակ է դրել ոչնչացնել հարուստների իշխանութունը և հասնել բոլոր մարդկանց լիակատար հավասարության... Ոչնչացնել ոչ միայն հարուստների իշխանութունը շքավորների նկատմամբ, այլև մի որոշ ժողովրդի իշխանութունը մյուսների նկատմամբ... Մենք, Արևելքի բոլոր երկրների... աշխատավոր մասսաների ներկայացուցիչներս, անխախտելի դաշինքով միավորված լինելով միմյանց և Արևմուտքի ուսուցիչին բանվորների հետ, մեր ժողովուրդներին սրբազան պատերազմի կոչ ենք անում...»:

1922—1924 թթ. Սիրիայում և Լիբանանում գործում էին

³⁶ Ա. Մ. Մյասնիկյան, Կուսակցությունները գաղութահայության մեջ, էջ 6:

առաջին կոմունիստական խմբակները: Արխիվային մի վա-
վերագրում ասված է. «Սիրիայում և Լիբանանում կոմունիս-
տական շարժումը սկիզբ առավ արաբների և հայերի մեջ
իրարից անջատարար»³⁷: 1922 թ. Բեյրութում կազմվեց «Սո-
ցիալ-դեմոկրատ հնչակյան ուսանողների միությունը», որի
բարտուղարն էր Հարություն Մադեյանը: Չնայած այդպես
կոչվելուն, այդ միությունը «ճնշող մեծամասնությամբ»
բաղկացած էր բանվորներից և համարվում էր կոմունիստա-
կան ինտերնացիոնալի կողմնակից³⁸: 1923 թ. այդ միու-
թյունը կազմալուծվեց, ծնունդ տալով կոմունիստական
«Սպարտակ» կազմակերպությանը, որը բացի Բեյրութից ճյու-
ղավորվեց նաև Զահլեում, Հալեպում և Զեբել Մուսայում³⁹:

Սիրիայի և Լիբանանի արաբական առաջին կոմունիստա-
կան խմբակը, որն ընդգրկում էր հինգ մարդ՝ Ֆուադ Շեմա-
լին, Յուսուֆ Յազբեկը, Ֆարիդ Տեհմեն, էլիաս Կաշամին և

37 Գև ԱՍ արխիվ, ֆ. 7, բ. 3, վ. 2: Տեղյակ չլինելով հայկական
կյանքի իրադարձություններին, արաբ հեղինակներից ոմանք Սիրիայի և
Լիբանանի կոմունիստական շարժման սկիզբը դնում են 1924—1925
թվականները, երբ առաջացան արաբական առաջին կոմունիստական
խմբակները: Սլեյման էլ-Ադիլը գրում է. «1925 թ. մի խումբ բանվոր-
ներ և ուսանողներ, որոնք ժանոթացել էին սոցիալիստական գաղափար-
ներին, հիմնեցին առաջին կոմունիստական խմբակները Լիբանանում»

(1973 *دسمبر* 15 *بيروت*, *الاخبار*): Դա իհարկե, ճիշտ չէ:

38 Նույն տեղում, Մի շարք հեղինակներ «Սոցիալ-դեմոկրատ հնչակյան
ուսանողների միությունը» անվանում են «Հայ երիտասարդ բանվորների
միություն», նկատի ունենալով նրա շարքերում գործող բանվորների ճնշող
մեծամասնությունը:

39 Նույն տեղում: «Սպարտակը» նամակագրական կապ է պահպանել
Ֆրանսիայի կոմունիստական կուսակցության և Հայաստանի ԼԿԵՄ-ի հետ:
«Սպարտակի» պատասխանատու աշխատողների թվում էին. Բեյրութում՝
Հարություն Մադեյանը, Ավետիս Գնդունին, Միքայել Անանիկյանը, Պետ-
րոս Պարտիզպանյանը, Ոսկան Հովհաննիսյանը, Խաչիկ Փափազյանը, Արամ
Նրիցյանը, Իսկենդեր Կերյանը, Ավետիս Կեոշերյանը, Շավարշ Միհրան-
յանը և ուրիշներ, Զահլեում՝ Հայկազուն Բոյաջյանը, Հալեպում՝ Մասիս
Փանոսյանը, Սեդրակ Հայկազյանը, Ստեփան Գավաֆյանը և ուրիշներ,
Զեբել Մուսայում՝ Փանոս Արամայիսյանը, Հակոբ Տեր-Պետրոսյանը և
ուրիշներ (նույն տեղում):

Քուղրոս Հաշեյմին, կազմվել է 1924 թ. հոկտեմբերի 27-ին, Բեյրութում⁴⁰։ Այդ խմբակի նախաձեռնությամբ ստեղծվեց «Լիբանանի ժողովրդական կուսակցությունը», որն ունեւր ժողովրդա-դեմոկրատական ծրագիր և որի շարքերում կոմունիստների կողքին կային նաև ոչ կոմունիստներ։ 1925 թ. մայիսի 1-ին, Լիբանանի ժողովրդի կուսակցության գլխավորությամբ Բեյրութում տեղի ունեցավ Սիրիայի և Լիբանանի պատմության առաջին զանգվածային ելույթը, որին մասնակցեցին նաև հայեր⁴¹։ Կարմիր դրոշներ պարզած տողանցելուց հետո, ցուցարարները միտինգ գումարեցին կինո «Կրիստալի» սրահում։ Միտինգում արտասանվեցին ճառեր և քվեարկվեց բանաձև, որով իշխանությունից պահանջվում էր՝ աշխատանքային ութժամյա օր, սոցիալական ապահովություն և այլն։ Այդ միտինգի շնորհիվ կապ հաստատվեց արաբ և հայ կոմունիստների միջև, կապ, որը նպաստեց Սիրիայի և Լիբանանի կոմունիստական կուսակցության ստեղծմանը⁴²։

Խալեդ Բեկդաշը Սիրիայի և Լիբանանի կոմունիստական կուսակցության սկիզբը համարում է 1924 թվականի հոկտեմբերի 28-ը⁴³, ակնբրևորեն հիմք ընդունելով արաբական առաջին կոմունիստական խմբակի կազմությունը։ Այդ տեսակետը չի կարող ընդունելի լինել։ 1925 թ. մայիսի 1-ից հետո միայն հնարավոր եղավ «միավորել» Սիրիայում և Լիբանանում իրարից անշատ գործող հայ և արաբ կոմունիստական կազմակերպությունները։ Նշված վավերագրում ասված է. «Միտինգից (1925 թ. մայիսի 1-ի, Ն. Թ.) անմիջապես հետո կայացած խորհրդակցությունում արաբ և հայ կոմունիստները որոշեցին միավորել Սիրիայի և Լիբանանի բոլոր արաբական և հայկական կազմակերպությունները»։ Իսկ մի ուրիշ խորհրդակցության ընթացքում կազմվել է

40 الاخبار، بيروت، 15 سبتمبر 1963

41 Նույն տեղում։

42 Նույն տեղում։

43 „Правда“, 28 октября 1964.

Կենտրոնական կոմիտե, որը և «կոչվեց Սիրիայի և Լիբանանի կոմունիստական կուսակցութեան Կենտրոնական կոմիտե»⁴⁴: Դա այդ երկրների կոմկուսի առաջին ԿԿ-ն էր: Նրա կազմում էին Հարություն Մադեյանը, Յուսուֆ Յազբեկը, Յուսուֆ Շեմալին, Հայկազուն Բոյաջյանը և Իլիաս Աբու Նադերը⁴⁵: Այդպիսով, Սիրիայի և Լիբանանի կոմունիստական կուսակցութեան հիմնադրման սկիզբը պետք է համարել 1925 թվականը, հավանաբար ամռանից⁴⁶:

Մինչև 1941 թվականը, շահավելով 1938—1939 թթ. լեզալ գործունեության կարճ ժամանակաշրջանը, Սիրիայի և Լիբանանի կոմունիստական կուսակցությունը գործել է ընդհատակում, ոստիկանական հալածանքի, բանտի ու աքսորի պայմաններում: Այդ պատճառով էլ ստույգ տվյալներ չկան նրա անդամների թվի վերաբերյալ: Սակայն վիճելի չէ, որ նրա շարքերում և ղեկավար օրգաններում արաբներից հետո հայերը կազմում էին մեծամասնությունը⁴⁷: Դրանով բա-

44 ԳԱ ԱՍ արխիվ, ֆ. 7, ք. 3, վ. 2:

45 Նույն տեղում:

46 Մի շարք հեղինակներ և այնպիսի հեղինակավոր հրատարակություն, ինչպիսին է Սովետական մեծ հանրագիտարանը Սիրիայի և Լիբանանի կոմունիստական կուսակցության ստեղծումը հաշվում են 1930 թվականից, հավանաբար ելնելով Խալեդ Բեկդաշի 1946 թ. հուլիսի 26-ին Դամասկոսում արտասանած ճառից, որտեղ ասված է. «Տասնյոթ տարի առաջ հիմնադրվեց կուսակցության առաջին բջիշը» (Большая Советская энциклопедия, т. 22, стр. 256): Հազիվ թե կարիք զգացվի վիճելու... Այնուամենայնիվ նշենք, որ 1925 թ. ղեկտեմբերին Բեյրութում տեղի է ունեցել Սիրիայի և Լիբանանի կոմունիստական կուսակցության առաջին կոնֆերանսը, որին մասնակցել են Բեյրութի, Բիկֆայայի, Զահլեի և Հալեպի կազմակերպությունների պատգամավորները: 1928 թ. Սիրիայի և Լիբանանի կոմունիստական կուսակցության անունից Յուսուֆ Շեմալին մասնակցել է Կոմիտեերնի 6-րդ կոնգրեսին: Բացի այդ, պահպանվել են 1925—1930 թթ. հրատարակված բազմաթիվ կոչեր, հայտարարություններ, նամակներ և այլ փաստաթղթեր, որոնք ստորագրված են «Սիրիայի և Լիբանանի կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեի» կողմից:

47 Ա. Մ. Հուրանին (իբ «Սիրիա և Լիբանան» աշխատությունում) և ուրիշ հեղինակներ պնդում են թե իբր Սիրիայի և Լիբանանի կոմունիստա-

ցատրվում է այն, որ կուսակցութեան տպագիր խոսքը որպէս կանոն լույս էր տեսնում երկու լեզվով: Սիրիայի և Լիբանանի կոմունիստները բացի արաբերենից ստեղծել են նաև հայերեն լեզվով մամուլի օրգաններ «Նոր Փարոսը» (1925 թ. մայիսին, Բեյրութում) «Սպարտակը» (1927 թ. հունվարին, Ռակկայում) և ուրիշներ: 1930—1931 թթ. Սիրիայի և Լիբանանի կոմունիստական կուսակցութեան օրգան «ալ-Ֆաշրը ալ-ահմարը» («Կարմիր արշալույսը») հրատարակվում էր նաև հայերեն լեզվով: 1938 թ. փետրվարի 6-ից Բեյրութում սկսեց լույս տեսնել «Ժողովուրդի ձայնը», որպէս հավելված կոմունիստական «Սաուս ալ-Շաար» թերթի, որը հրատարակվում էր 1935 թվականից, սկզբում անլեզու, իսկ 1937 թվականից՝ լեզու:

Կոմունիստները նշանակալից դեր կատարեցին Սիրիայի և Լիբանանի ժողովրդական զանգվածներին՝ հանուն դասակարգային և ազգային շահերի պաշտպանութեան պայքարում: 1925—1927 թթ. նրանք զգալի օգնություն ցուցաբերեցին Զեբել Դրուզի գյուղացիական ապստամբությանը, 1928—1936 թթ. զորավիգ հանդիսացան ալ-Կուբլա ալ-Վաթանիյա կուսակցությանը, որը գլխավորում էր Սիրիայի ազգային անկախության պայքարը, 1938—1939 թթ. պաշտպանեցին Սիրիայի հողային ամբողջականությունը՝ Ալեքսանդրետի սանջակի հարցում, իսկ 1943—1946 թթ. նրանք այն գլխավոր ուժերից էին, որոնք նվաճեցին Սիրիայի և Լիբանանի անկախությունը: Նրանք ավելի խոշոր դեր են կատարել աշխատավոր ժողովրդի տնտեսական պայքարում:

կան կուսակցութեան շարքերում հայերը կազմել են մեծամասնությունը: Այդ տեղեկությունը չի կարող լուրջ համարվել, քանի որ վերջին հաշվով դրա աղբյուրը ոչ թե կուսակցութեան, այլ մանդատային ոստիկանութեան արխիվն է: «Դա, — գրում է «Մուսայեն-Օրիան» թերթը, — եթե կարող է ինչ-որ շփով ճիշտ լինել անցյալի, կուսակցութեան ընդհատակի կազմավորման ժամանակաշրջանի համար, երբ հայերը որոշակի դեր խաղացած են, ապա այսօր այդ պնդումը ամբողջովին սխալ է» („Moyen-Orient“, Paris, № 14—15, p. 9).

Այդ բնագավառում նրանց խոշորագույն ծառայությունը կայանում է նրանում, որ նրանք տարբեր ազգության պատկանող աշխատավորներին միավորեցին արհեստակցական միություններում:

Սիրիայում և Լիբանանում կոմունիստական շարժման նման՝ արհմիութենական շարժումն էլ սկիզբ է առել արարների և հայերի մեջ անջատաբար: 1920-ական թվականներին Բեյրութում, Հալեպում և Դամասկոսում գործող արհմիությունները սահմանազատված էին ազգային պատկանելիության պատվարով: Համախմբելով միևնույն արհեստի հետ կապված ազգակից շահագործողներին և շահագործվողներին, այդ «ազգային» արհմիությունները պայքարում էին ոչ թե կապիտալիստի, այլ հենց իրար դեմ: Մրցության մտնելով արարների հետ, հայերը իջեցնում էին իրենց արտադրանքի գինը, իսկ արարները բոյկոտ էին հրահրում նրանց դեմ: Դամասկոսից «Արևին» գրել են. «Երկու ամիսս իվեր հայ արհեստավորներու և առևտրականներու դեմ բոյկոտի շարժում մը սկսած է, որ հետզհետե կսաստկանա: Վերջերս մզկիթներու պատերուն վրա և շուկայի մեջ տեղ-տեղ հայոցմե առևտուր չընելու իմաստով հայտարարություններ ալ փակցված են»⁴⁸: Այնուհետև թղթակիցը պատմում է, թե ինչպես Դամասկոսի հայ կոշկակարների և պղնձագործների արհմիությունները միջոցներ են ձեռք առել, նպատակ ունենալով «չեզոքացնել իրենց դեմ ուղղված այդ անարդար բոյկոտը»⁴⁹: Արհմիությունների ազգային պատկանելիության պատվարով սահմանազատումը համապատասխանում էր ոչ թե աշխատավորների, այլ տիրապետող դասակարգի շահերին.

կոմունիստները առաջնահերթ խնդիր էին համարում տարբեր ազգության և կրոնի պատկանող աշխատավորներին իսկական արհմիություններում միավորելը: 1925—1927 թթ. այդ ուղղությամբ գործադրված ջանքերը, շնորհիվ Ջեբել Դրուզի ապստամբության կապակցությամբ առաջացած հայ-

⁴⁸ «Արև», 6 փետրվարի 1924:

⁴⁹ Նույն տեղում:

արաբական փոխադարձ անվստահությանը, շպսակվեցին հաշոդությամբ: Կոմիտեերնի 6-րդ կոնգրեսից հետո, 1928 թ. Բեյրութում կյանքի կոչվեց «Արհմիությունների կազմակերպիչ հանձնաժողովը», որը բաղկացած էր արաբներից և հայերից և որի հիմնական խնդիրն էր՝ հայ և արաբ աշխատավորներին համախմբել «իսկական արհմիություններում»⁵⁰: Այդ հանձնաժողովը ձեռք բերեց որոշակի արդյունքներ, նպաստելով հայ և արաբ աշխատավորների մերձեցմանը: Ստեղծվեցին մի շարք միացյալ արհմիություններ, շնայած իմպերիալիստների և տեղական ռեակցիայի հարուցած դժվարություններին:

Այդ բեկումով նոր էջ բացվեց արաբ և հայ աշխատավորների դասակարգային պայքարում: 1930 թ. սկզբում, երբ կառավարությունը ցրեց արհմիություններին, նրանց մեղադրելով քաղաքականությամբ զբաղվելու մեջ, արաբ և հայ աշխատավորները հանդես եկան բողոքի համատեղ ելույթներով: Զահլեում երեք արաբ և մի հայ աշխատավոր, որոնք ռեակցիայի այդ քայլի դեմ բողոքող թուրքիկ էին բաժանում, ձերբակալվեցին և դատարան հանձնվեցին⁵¹: Տարբեր քաղաքների զգալի թվով արաբ և հայ աշխատավորներ մասնակցեցին արգելափակվածների օգտին կազմակերպված հանգանակությանը: 800 ղրուշ հանգանակվեց նաև Կարանտինայի հայ աշխատավորների շրջանում⁵²: Արաբ և հայ աշխատավորների դասակարգային համատեղ պայքարի ցուցանիշ էր նաև այն, որ Գամասկոսի տեքստիլի ձեռնարկությունների Գործադուլավոր բանվորների օգնության կոմիտեի կազմում ընդգրկված էին երեք արաբ և երկու հայ՝ Միքայել Քիշիշյանը և Գեորգ Կարախանյանը⁵³:

⁵⁰ العمال، ١ كانون اول ١٩٣٠

⁵¹ صوت العمال، ١٧ اذار ١٩٣٠

⁵² Նույնը, 31 մարտի 1930,

⁵³ العمال، ٢٦ تشرين الثاني ١٩٣٠ Այդ կոմիտեն կազմվեց 1930 թ. նոյեմբերին կիբանանի արհմիութենական շարժման արաբ և հայ

Դատելով արաբական մամուլի նյութերից, արաբ և հայ աշխատավորների հիմնական զանգվածի միասնությանը խոչընդոտում էր առաջին հերթին այն, որ հայերը կարիքից դրդված խախտում էին աշխատավարձի ընդունված նորմաները: Այդ հանգամանքը իմպերիալիզմի և ռեակցիայի գործակալների կողմից օգտագործվում էր արաբ և հայ աշխատավորներին իրարից հեռացնելու համար: Իսկ արաբական մամուլի առաջադեմ օրգանները, ընդգծելով աշխատավորների միասնության նշանակությունը դասակարգային պայքարում, կոչ էին անում արաբներին՝ «եղբայրական ձեռք մեկնելու» հայ աշխատավորներին: «Բոլոր բանվորները, առանց հայի և արաբի խտրության, եղբայրներ են» խորագրի ներքո «ալ-Ումմալ» թերթը գրել է. «Հայ բանվորը ամենևին էլ զուրկ չէ արժանապատվության զգացումից: Նա իր մի պատառ հացը շահում է ոչ թե մուրացկանությամբ, այլ ճակտի դառն քրտինքով: Նա համաձայնվում է ցածր վարձով աշխատել, որպեսզի սովամահ չլինի...: Երբ հայ և արաբ աշխատավորները միավորվեն արհեստակցական միություններում, ապա ոչ միայն վերջ կգտնի մրցակցությունը աշխատավարձի շուրջը, այլև հնարավոր կդառնա համատեղ

դեկլարաների խորհրդակցությունում: Նրա՝ «բոլոր բանվորներին և արհմիություններին» ուղղված կոչում ասված էր. «Եղբայրներ, ահա հինգ ամիսն է վեր Դամասկոսի տեքստիլագործ եղբայրները գործադուլի մեջ են հանուն իրենց ոտնակոխված իրավունքների պաշտպանության: Զեռնարկատերերը որոշել են իջեցնել աշխատավարձերը, իսկ բանվորները մերժում են ենթարկվել նրանց կամքին: Չնայած իրենց աղքատ ու սովյալ վիճակին, նրանք հաստատակամ կերպով շարունակում են գործադուլը... 800 բանվորական ընտանիքներ զալարվում են սովի ճիրաններում..., պետք է օգնության հասնել նրանց... Բանվորներ, կատարեցե՛ք ձեր պարտականությունը: Բանվորը բանվորից բացի չունի ուրիշ պաշտպան...»: Կոչը ստորագրած էին Մուհիդդին Քուսան (նախագահ), Նասիֆ Մաժդելենին (քարտուղար), Միքայել Քեշիշյանը (զանձապահ), Միշել Քֆուրին և Գեորգ Կարախանյանը

(العمال، ۱ كانون اول ۱۹۳۰): Այդ կոմիտեի շանքերով տարբեր ձեռնարկություններում ստեղծվեցին հանգանակիչ հանձնաժողովներ, որոնցում ընդգրկված էին նաև հայեր:

պայքարը աշխատավարձի բարձրացման, աշխատանքային ժամերի կրճատման, մի խոսքով, աշխատավորների վիճակի բարելավման համար: Արար բանվորները, եթե կասկածի չենթարկեն հայ եղբայրների հետ միության հնարավորությունը և եղբայրական ձեռք մեկնեն նրանց, ապա կտեսնեն թե նրանք ինչպիսի մեծ կարիք են զգում իրենց արար եղբայրների հետ կազմակերպված ձևով միավորվելու»⁵⁴:

Մինչև 1935 թվականը կոմունիզմի դեմ պայքարելու պատրվակով, իմպերիալիստները և տեղական ռեակցիան հաճախ հարվածի տակ են առել արհմիություններին, խափանել նրանց զարգացումը: Նրանք բանտարկում կամ աքսորում էին աչքի ընկնող արհմիութենական ղեկավարներին կամ էլ ասպարեզ իջեցնում ապաքաղաքական «ազատ» արհմիություններ՝ աշխատավորներին պառակտելու համար: 1936—1937 թթ., երբ Ֆրանսիայում իշխանության գլուխ կանգնեց ժողովրդական ճակատի կառավարությունը, բարելավվեց արհմիությունների վիճակը, նախ հանդուրժվեց, ապա պաշտոնապես ճանաչվեց նրանց գոյության և գործունեության իրավունքը: Այդ թվականներից Սիրիայում և Լիբանանում կազմվեցին արհմիությունների ֆեդերացիաները, որոնցից յուրաքանչյուրը գլխավորում էր համապատասխան երկրի աշխատավորության պայքարը աշխատավարձի բարձրացման, աշխատաժամերի կրճատման, կենսաթոշակի դրության հաստատման և այլ պահանջների կենսագործման համար:

* * *

Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակով սփյուռքահայ հասարակական կյանքում սկսված բեկումը ավելի խորացավ Հայաստանում սովետական սոցիալիստական կարգերի հաստատումով:

Հայ ժողովուրդը, դարեր շարունակ զրկված լինելով պետական անկախությունից և մշտապես գտնվելով ֆիզիկական.

⁵⁴ العمال، ۱ كانون اول ۱۹۳۰

րնաշնչման սպառնալիքի ներքո, առանձնահատուկ նշանակութիւնն է տվել ազգային հարցի լուծմանը: Հնչակյան, Դաշնակցութիւնն և Ռամկավար կուսակցութիւնները, ծնվելով հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարից, խնդիր էին դրել լուծել «հայկական հարցը»: Եվրոպական գիվանագիտութիւնը, որի միջնորդութիւնը նրանք կապել էին վառ հույսեր, խաբեց հայ ժողովրդին, պատճառ դառնալով նրա արեւմտյան հատվածի բնաշնչմանը: Բարբարոսութիւն զոհ կգնար նաև հայութիւն արևելյան հատվածը, եթե չկատարվեր Հոկտեմբերյան հեղափոխութիւնը, սովետական իշխանութիւն չհաստատվեր Հայաստանում:

Սովետական Միութիւնը համարելով ժողովուրդների ազատութիւն, խաղաղ ու ստեղծագործ աշխատանքի օրրան, որտեղ ծաղկում և բարգաւաճում է նաև հայ ժողովուրդը, Հնչակյան և Ռամկավար կուսակցութիւնները «հայկական հարցի» լուծման երաշխիքը տեսնում են սոցիալիզմի և դեմոկրատիայի լազերի հաղթանակի մեջ⁵⁵: Օբյեկտիվորեն, այդ քաղաքականութիւնը նրանց պետք է տաներ դեպի հակաիմպերիալիստական ուժերի լազերը: Իսկ Դաշնակցութիւնը, պատրանքներ սնուցելով կորցրած դիրքերը իմպերիալիստների օգնութիւնով հա ստանալու մասին, գնաց դեպի իմպերիալիզմի լազերը, մտավ Սովետական Միութիւն թըշնամիների ծառայութիւն մեջ:

55 Սփյուռքահայ մտավորականութիւն քաղաքական շրջադարձի բնութագրման տեսակետից ուշագրավ է այն բողոք-հայտարարութիւնը, որը հրատարակեցին Շիրվանզադեն, Արշակ Զոպանյանը, Տիգրան Կամսարականը, Լեոն Բաշլայանը, Վահան Մալեղյանը, Ռուբեն Որբերյանը, Հովսէփ Փուշմանը, Հակոբ Գյուրջյանը, Էդգառ Շահինը, Սարգիս Խաչատուրյանը և ուրիշներ: «Մեզի համար,—ասված է բողոքում,—անհրաժեշտ իրողութիւն մըն է, որ Հայաստան մը գոյութիւն ունի այսօր: Մենք համոզված ենք, որ այն իր գոյութիւնը կրնա պահպանել ու զարգանալ միմիայն խորհրդային Միութիւն հետ դաշնակցած: Այսօր քաղաքական, մտավորական ղեկավարներուն և անոնց աշակցող բովանդակ ժողովուրդին շինարարական վաստակը մեր ամենուս համար հրճվեցուցիչ և սրտապնդիչ ճշմարտութիւն մըն է» («Ապագա», Փարիզ, 12 փետրվարի 1926):

1920-ական թվականներից սփյուռքահայ տարբեր գաղթավայրերի նման՝ Սիրիայի և Լիբանանի հայ հասարակական-քաղաքական կյանքում իրար դեմ կանգնած էին երկու ճակատներ՝ հակախմպերիալիստականը և պրոխմպերիալիստականը: Առաջինը գլխավորում էին կոմունիստները, հենչակյանները և ռամկավարները, իսկ երկրորդը՝ դաշնակները: Այդ ճակատները այնպիսի որոշակիությամբ սահմանազատված էին, որ Վ. Նավասարդյանը գրել է. «Անունով մեկից ավելի հոսանքներ և ուժեր կան հայ կյանքում, իսկ փաստորեն իրական ազդակների թիվն երկսից այն կողմը գրեթե չի անցնում...: Սակայն գործակցությունն այս երկսի միջև անհնար է բացարձակապես, որովհետև նրանք հետապնդում են բոլորովին տարբեր նպատակներ...»⁵⁶:

Հակախմպերիալիստական ճակատում տեղ գտնելու նախապայման էր Սովետական Հայաստանի ճանաչումն ու ընդունումը: Այն հաստատ համոզմունքով, որ հայ ժողովրդի ինքնուրույն և ազատ զարգացման միակ ուղին այն ուղին է, որը բացվեց Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակով, հենչակյանները հարեցին «Խորհրդային Հայաստանի հետ» ուղղությունը: Նրանք գրում են. «Հոկտեմբերյան հեղափոխությունը այն մեծ ակտն է, որ աշխարհի բոլոր ճնշված ու գերի ազգերու, իրավազրկված բազմահարյուրավոր միլիոն աշխատավոր զանգվածներու և անոնց կարգին զարերով տառապած հայ ժողովրդին բերավ հոգեդարձն ու վերահանունումը»⁵⁷: Սովետական «իրավակարգի խորացման և վերելքի» օգտին աշխատելը համարելով «անհրաժեշտություն մը հայ ժողովրդի շահի տեսակետով»⁵⁸, նրանք պայքար են մղում Սովետական Հայաստանի և Սովետական Միության թշնամիների դեմ:

56 Վ. Նավասարդյան, Դաշնակցության քաղաքական ուղին, էջ 166—167:

57 «Արևրատ», 8 նոյեմբերի 1946:

58 Նույնը, 9 հուլիսի 1950:

Անկախ իրենց գաղափարախոսությունից, Սովետական Հայաստանի պաշտպանության դիրքերում կանգնեցին նաև ռամկավարները: 1922 թ. նրանց ընդհանուր ժողովը որոշեց «աշակցիլ հայկական կառավարության, Հայաստանի տընտեսական և բարոյական վերաշինության... Աշխատիլ արգիլել ամեն տեսակ արկածախնդրություն, որ կրնա վտանգել ժողովրդին և պետության գոյությունը»⁵⁹: Իսկ 1924 թ. նրանք պաշտոնապես հայտարարեցին. «Արտասահմանի հայությունը չի հետապնդեր առանձին քաղաքականություն մը և չի կատարեր դիվանագիտական դիմումներ անկախաբար Հայաստանի կառավարության քաղաքականութենեն և դիվանգիտութենեն»⁶⁰: Նրանց այդ ուղեգիծը նվիրագործվեց 1926, 1929, 1931, 1934, 1937 թվականներին, ինչպես նաև հետագա տարիներին գումարված ընդհանուր ժողովներով:

Հայաստանից հեռանալուց հետո Դաշնակցությունը պինվորագրվեց Սովետական Միության դեմ խաչակրության ելած պետությունների բանակում: 1924 թ. Փարիզի ընդհանուր ժողովի որոշումների լույսի ներքո անդրադառնալով Դաշնակցության քաղաքական ուղեգծին, Վ. Նավասարդյանը գրել է. «...եվրոպական պետություններից յուրաքանչյուրը... փորձեր է անում ավելի սեղմ շղթայի մեջ առնելու այն երկիրը, ուր իրավապես ապրում է Հայ դատը և ուր միաժամանակ նրանցից յուրաքանչյուրը ձգտում է իր գոյության տևական կուլանը կերտելու... Իսկ քանի որ այս է իրականությունը, ուստի քաղաքական աններելի հիմարություն պիտի լիներ խզել մեր բոլոր կապերն այդ պետությունների հետ, երբ նրանք չեն խզում իրենց կապերն Հայ դատի հետ: Հայությունը կապված է եղել, կապված է մնում և կապված էլ պիտի մնա այդ պետություններին քանի դեռ նրանք անկախ հայության կամքից ամբողջն մնում են

59 Ա. Դ ա Ր Ր Ի ն յ ա ն, Հայ ազատագրական շարժման օրերեն, Փարիզ, 1947 թ., էջ 546—547:

60 Նույն տեղում, էջ 564:

կապված Հայ դատին»⁶¹։ Դաշնակցութիւնը դարձավ միջազգային իմպերիալիզմի հուսալի գործակալը, փոխնիփոխ և հաճախ միաժամանակ ծառայելով բրիտանական, ֆրանսիական, գերմանական, իտալական և ամերիկյան իմպերիալիզմի շահերին։

Գտնվելով իմպերիալիզմի ծառայութեան մեջ, դաշնակցական գործիչները փորձում էին հայ աշխատավորներին մեկուսացնել տվյալ երկրի ազգային-ազատագրական շարժումներից։ Նրանք քարոզում էին, որ գաղութահայութիւնը «չեզոք ու ձեռնպահ» պիտի մնա «օտարի գործերում»։ «հեռու պիտի մնա միջամտելու այն երկրի քաղաքական գործերին, ուր ինքն ապրում է իբրև եկվոր հյուր»⁶²։ Ավելին, «գաղութներում պայքար պիտի տանել այն բոլոր տարրերի դեմ, որոնք կփորձեն այդ հողի վրա խմբել մեր տարագրութիւնը և այն իբրև քաղաքական զանգված ուղղել այս կամ այն պետութեան դեմ։ Տարագիր հայութեան ծոցում գործող քաղաքական հոսանքները բնավ առնչութիւն չպիտի ունենան տվյալ երկրի քաղաքականութեան հետ...»⁶³։ Դա լիովին համապատասխանում էր շահագործող դասակարգի շահերին։ Ազգային-ազատագրական և դեմոկրատական շարժումներից մեկուսանալով, հայ աշխատավորները կդառնային տնտեսական և քաղաքական անկաշկանդ շահագործման հուսալի զանգված հայ և օտար գործարանատերերի համար⁶⁴։

61 Վ. Նավասարդյան, Դաշնակցութեան քաղաքական ուղին, էջ 151—152։

62 Նույն տեղում, էջ 81—82։

63 Նույն տեղում, էջ 82—83։

64 Բացի այդ, տարագիր հայութեանը տվյալ երկրի ժողովրդից մեկուսացնելով, դաշնակ շեֆները հրահրում էին «անհայրենիք պետութեան» ցնորբը։ Նրանք գրել են. «Անհրաժեշտ է, որ արտասահմանի հայութիւնը, բոլոր գաղութները ստեղծեն բարձրագույն կազմակերպութիւն մը համապատասխան ճշուղակորումներով, կազմվին դավառային, շրջանային մարմիններ, որոնք միացած ըլլան կեդրոնական խորհուրդի մը հատուկ և համապատասխան սահմանադրութեամբ մը։ Տեսակ մը բարոյական պետութիւն, անհայրենիք պետութիւն պետական ստորոգելիներով, ազգային և միջազգային իրավական կարգերով, Այդ մարմինը դերագույն մարմինն է

Հակահիմպերիալիստական ճակատի կազմակերպությունները պայքարում էին իմպերիալիզմի և նրա գործակալ Դաշնակցության դեմ: Ելնելով իր դասակարգային էությունից և գաղափարախոսությունից, Ռամկավար կուսակցությունը պետք է տեղ գրավեր իմպերիալիզմի լագերում և հակադրվեր ազգային-ազատագրական շարժումներին, բայց այդպես չի եղել, որովհետև այդ քաղաքականությունը նրան դուրս կբերեր «հայկական հարցի» լուծման դեմ: Հնչակյան կուսակցությունը, լինելով մանրբուրժուական դեմոկրատական կազմակերպություն, պաշտպանում էր ճնշված ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարը: Հակահիմպերիալիստական ճակատի ամենահամարձակ և ամենաաշխույժ տարրը կազմում էին կոմունիստները:

Սիրիայի և Լիբանանի կոմունիստական կուսակցության ղեկավարության ներքո հայ աշխատավորները անցել են ազգային-ազատագրական հերոսական պայքարի ուղի, կերտել ոգեշնչող, ուսանելի դրվագներ, որոնք միահյուսված են արար ժողովրդի պատմության հետ:

ԶԵՐԵԼ ԴՐՈՒՋԻ 1925—1927 ԹԹ. ԱՊՍՍԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ ՀԱՅԵՐԸ

9 Մանդատային սխտեմը, լինելով գաղութային տիրապետության քողարկված ձևը, ոչնչով չէր համապատասխանում այն հեռանկարներին, որ Սիրիայի և Լիբանանի ժողովուրդները հուսացել էին իրագործել Օսմանյան կայսրության խոր-

սրտասահմանի հայության, իր շուրջ պիտի համախմբե բոլոր ցրված գաղութներու հայությունը, անոնց ազգային, մշակութային, տնտեսական գործունեությունները՝ պետության և քաղաքացիության փոխհարաբերության մը: Մյուս կողմն ամեն գաղութ իր ապրած շրջանակին մեջ պիտի մեկուսանա, չպիտի ըլլա քաղաքացի իր անկրած երկրին, այս անշատու՛մով միանալու համար իր ազգային, իր ազգայնության համապատասխան կազմակերպության, որ պետք է ճանչցվի նաև Ազգերու դաշնակցության կողմն» («Հուսարեք», 22 հունվարի 1924):

տակումով: Ֆրանսիական գեներալ Կատրուն գրել է. «Սիրիան վճռականապես մերժում էր ճանաչել Ֆրանսիայի իրավունքները, ընդունել նրա խնամակալութունը: Սիրիան անկախութուն էր պահանջում»⁶⁵, 1920 թ. հուլիսին գեներալ Գուրոյի զորքերը Դամասկոս ներխուժելով ցրեցին Աղգալին ժողովը, երկրից վտարեցին Ֆայսալ թագավորին և զենքի ուժով պարտադրեցին ֆրանսիական խնամակալութունը:

1920—1921 թթ. ֆրանսիական խնամակալության դեմ զենք բարձրացրին Ալավիտի, Հալեպի շրջանի և Եփրատի հովտի գյուղացիները: 1922—1923 թթ. գյուղացիական ապստամբություններ բռնկվեցին Ջեբել Դրուզում և Բեկա-այում: 1924 թ. սկզբները Ալեքսանդրետի սանջակի Գարաֆակըլար, Հաջըլար և մի շարք ուրիշ գյուղեր զինված դիմադրություն ցույց տվեցին հարկահան պաշտոնյաներին, որոնք ֆրանսիական զինված ջոկատների ուղեկցությամբ պահանջում էին պատերազմական տարիների հետևյալ հարկերը: Այդ շարժումները խեղդվեցին արյան մեջ: 1925 թ. կեսերին Ջեբել Դրուզը նորից բռնկվեց և մինչև 1927 թ. սկզբները հերոսաբար դիմադրեց ֆրանսիական բանակի գրոհներին: Այդ ապստամբությունը, որի ուլորտը ներգրավվեց ամբողջ Հարավային Սիրիան, հանդիսանում է խոշորագույն զինված ելույթը ֆրանսիական խնամակալության դեմ:

Ապստամբության օգտին լայն շարժում ծավալվեց: Հիզբ ալ-Շաբը (ժողովրդական կուսակցությունը), Սիրիա-պաղեստինյան կոմիտեն և ուրիշ կազմակերպություններ բազմակողմանի օգնություն էին ցույց տալիս ապստամբներին, հայթայթելով զենք, դեղորայք և դրամ, պրոպագանդելով ապստամբության արդարացիությունը, պահանջելով մանդատի վերացումը: Այդ օգնությունը նպաստում էր ապստամբության արագ թափով ծավալմանը: Դրավված շրջաններում բնակիչները անցնում էին ապստամբների կողմը, զենք բարձրացնում մինչև անգամ կանայք⁶⁶: Առաջին մի

⁶⁵ Catroux, Deux Missions en Moyent-Orient, p. 21.

⁶⁶ «Революционный Восток», 1928, № 3, стр. 286.

բանի շարաթնների ընթացքում դրուզները ֆրանսիական զորքից մաքրեցին իրենց լեռնաշխարհը:

Դժվար դրուժյունից ելք որոնելով, ֆրանսիական իմպերիալիստները փորձեցին ապստամբների դեմ հանել տեղական բնակիչներից կազմված «կամավորական» զնդեր: Այդպես վարվելով, նրանք ձգտում էին առաջին հերթին Ազգերի լիգայում ստեղծել այն տպավորությունը, որ իբր Սիրիայի ժողովուրդը պաշտպանում է մանդատը՝ «գրսից» հրահրված ապստամբության դեմ և, երկրորդ, ապստամբությունը վերածել ազգամիջյան կռվի, որպեսզի ֆրանսիական բանակը իրավունք ունենար միջամտելու... քրիստոնյաներին կամ հայերին պաշտպանելու պատրվակով:

Ապստամբների առաջին հաջողություններից հետո «կամավորների» հավաքագրման լայն շարժում սկսվեց Սիրիայում, շարժում, որի հետ առանց որևե հիմքի կապվեց նաև հայերի անունը: Գեներալ Սառային հաջողվեց շերքեզներից կազմել այդ կարգի մի վարձկան գունդ, որը, ի վարձատրություն Ջեբել Դրուզի 1925—1927 թթ. զինված ապստամբությունը ճնշելու գործում բերած մասնակցությանը, ֆրանսիական դրոշի ներքո պահվեց նաև հետագայում, ընդհուպ մինչև 1946 թվականը: Բայց ապարդյուն անցան նրա գործադրած ջանքերը հայկական միջավայրում, շնայած այն բանի, որ տասը օսմանյան հնչուն ոսկի ամսավճար էր խոստանում կամավորագրվողներին:

Հայերից «կամավորական գունդ» չկազմվեց, այդպիսին, երբեք գոյություն չի ունեցել ոչ ապստամբության ժամանակաշրջանում, ոչ էլ դրանից հետո... «Արև» թերթի Դամասկոսի թղթակիցը հայտարարում էր. «Աշխարհի չորս կողմը թող իմացվի թե Սուրիո մեջ հայկական հրոսակախմբեր ոչ եղած են, ոչ կան և ոչ ալ պիտի ըլլան որևէ ժամանակ»⁶⁷, Այդ իրողության հակառակ, մի շարք հեղինակներ մի ամբողջ

67 «Արև», 14 հունվարի 1926:

վեպ են հորինել ֆրանսիական դրոշի ներքո գործող «մեծ թվով» հայերից կազմված «օժանդակ ուժերի» կամ «օժանդակ զորքերի» և նրանց գործադրած «վայրագությունների» մասին:

Դրանցից ժամանակագրական կարգով առաջինը (1928 թ.) է. Պ. Մակկալումը գրել է. «Մի գումարտակ (կազմված չերքեզ և հայ կամավորներից), որը 1925 թ. հոկտեմբերի 12-ին կովի դուրս եկավ, հաջորդ օրը վերադարձավ բերելով 115 գերի և 24 սպանվածների դիակները»⁶⁸,

Երկրորդը (1939 թ.) Գ. Անտոնիուսը՝ «Նրանք (ֆրանսիական իմպերիալիստները, Ն. Թ.) մեծ թվով հայերի ու չերքեզների զինեցին և, միառժամանակ, նրանց արստոնեցին առանց խտիր դնելու սպանել, կողոպտել և այրել»⁶⁹,

Երրորդը (1946 թ.) Ա. Հ. Հուրանին՝ «Քիչ էր մնացել ապստամբութունը քաղաքացիական կովի վերածվեր՝ մի կողմից ապստամբների և մյուս կողմից ֆրանսիական իշխանությունների զինած չերքեզական և հայկական օժանդակ ուժերի միջև»⁷⁰:

Չորրորդը (1950 թ.) Գ. Հադդադը՝ «ֆրանսիացիների օգտագործած չերքեզական և հայկական օժանդակ զորքերի գործելակերպը բնակչության ատելութունը բորբոքեց»⁷¹:

Այսքանով չի սպառվում շարքը, սակայն այսքանն էլ բավական է ցույց տալու համար, թե ինչպիսի ծանր ամբաստանության է ենթարկված հայ ազգային փոքրամասնությունը, որը մշտապես հավատարիմ է եղել իր երկրորդ հայրենիքին՝ Սիրիային և Լիբանանին: Դա մի ահավոր դավադրություն էր, որը վտանգում էր այդ երկրների հայության ֆիզիկական գոյությունը:

⁶⁸ E. P. Maccallum, The Nationalist Crusade in Syria, N. Y. 1928, p. 130.

⁶⁹ G. Antonius, The Arab Awakening, N. Y., 1939, p. 378.

⁷⁰ A. H. Hourani, Syria and Lebanon, New York, 1946, p. 188.

⁷¹ G. Haddad, Fifty years of Modern Syria and Lebanon, Beirut, 1950, p. 76.

Կասկածելի դիտավորութիւններ վերագրելով սահմանակից Սիրիայում հյուրընկալվող հայ գաղթականութեանը, Թուրքիայի կառավարող շրջանները միջոցի առաջ կանգ շառան սեպ խրելու համար հայ և արաբ ժողովուրդների բարեկամութեան միջև: Թուրքական ռեակցիոն մամուլի հակահայ պրոպագանդան, որի նկատմամբ վերին աստիճանի զգայուն էին արաբ շովհեն քաղաքական գործիչները (Շահբենդերը, Ադել Արսլանը, Իհսան Ջաբրին և ուրիշներ), ձգտում էր այնպիսի ծանր մթնոլորտ ստեղծել կոտորածներից խուսափած հայերի շուրջը, որ նրանք չկարողանան շնչել և հեռանան Սիրիայից: 1922—1924 թթ. թուրքական մամուլի ներշնչումով Սիրիայի թուրքասեր գործիչները պահանջում էին ղոնները փակել հայ գաղթականների առաջ, իսկ «եղածներն ալ ցրել» ներքին դավառներում⁷²: 1925 թ. հայերի քաղաքացիութեան վերաբերյալ օրենքի հրապարակումից հետո նրանք դրում էին. «Շատ մոտ ատեննն Սուրիան և Լիբանանը Հայաստան պիտի հորջորջվին»⁷³: Այդ անշնորհակալ գործի մի յղակն էր նաև «կամավորական գնդի» առասպելը:

72 «Արև», 20 հունիսի 1924:

Այդ տարիներին մյուս արաբական երկրների թուրքասեր գործիչներն էլ, քնկնելով թուրքական մամուլի հակահայ պրոպագանդայի ջրապտույտի մեջ, առիթ չէին բաց թողնում հայ-արաբական լարվածություն ստեղծելու համար: 1924 թ. հուլիսին Եգիպտոսի ազգային-ազատագրական շարժման ղեկավարներից Սաադ Ջաղլուլի դեմ գործված մահափորձը վերագրվեց հայերին («Արև», 18 հուլիսի 1924 թ.): Եթե ինք Ջաղլուլը և արաբական մի շարք ազդեցիկ թերթեր չհերքեին այն, անկասկած, այդ հերյուրանքը կարող էր ծանր հետևանքներ ունենալ եգիպտահայերի համար: Նույն թվականի նոյեմբերի 19-ին «հայ տեղորիստների» վերագրվեց նաև Սուդանի սիրդար Լի Ստեկի սպանութունը, որը պատրվակ ծառայեց անգլիացիներին՝ արդարացնելու մի շարք իմպերիալիստական կարգադրութիւններ: Ըստ եգիպտոսի թուրքասեր շրջանների, 1925 թ. իբր հայերը բրիտանական իմպերիալիստների օգտին «խոռովութիւններ» են կազմակերպել Սաուդական Արաբիայում, ինչպես նաև մասնակցել Կահիրեում բորբոքված ազգային-ազատագրական շարժումների ճնշմանը, ۱۳ تيسان ۱۹۵۲، الصرخة،

73 «Արև», 6 մարտի 1925:

Պատահական չէ, որ հայ «կամավորական գնդի» վերաբերյալ առաջին հաղորդումը երևաց թուրքական մամուլում: Միք. Նաթանյանը գրել է. «Ջերբել Դրուզի շարժումներին ի վեր թուրք մամուլը սկսած Ադանային, էնկյուրիեն մինչև Պոլիս ու անոնց հայտնի ներշնչումներով արտահայտվող սուրիական մաս մը թերթեր չվարանեցան հրատարակել թե 500-նոց զուտ հայկական զորագունդեր ֆրանսիական հրամանատարներու ձեռքին տակ զիրենք հյուրընկալող այդ երկրի բնիկ ժողովուրդներուն դեմ կռվելու ելած են...»⁷⁴, Պատասխանելով մի ամերիկյան թերթի խմբագրի հարցերին, Շահբենդերը հաստատեց թուրքական մամուլի հերյուրանքները... և թավալվող ձյունագնդի նման՝ այդ կեղծիքը գնալով մեծացավ, լուրջ վնաս հասցրեց հայ-արաբական բարեկամությանը: Դամասկոսից «Արև» թերթին գրում էին. «Սուրիական կարգ մը շրջանակներ, որոնք իրենց կրթությանը և դաստիարակությանը թուրք ճանչցված են, ատելության որոմ կցանեն մեզի դեմ»⁷⁵:

Ֆրանսիական իմպերիալիստները ոչ միայն չէին հակազդում, այլև տարբեր միջոցներով նպաստում էին ազգամիջյան թշնամանքի բորբոքմանը: Դա նրանց հնարավորություն էր տալիս հանդես գալու «քրիստոնյաների պաշտպանի» կամ էլ մուսուլմանների և քրիստոնյաների միջև «հաշտարարի» դերում: «Այդ դերը հաճախ եղել է նրանց կողմը», — գրել է Աբուլզիրը⁷⁶: Հայության շրջանում «կամավորների» հավաքագրման ձեռնարկելով, նրանք իրականում ձգտում էին արաբների «ատելությունը գրգռել գաղթական հայ ժողովուրդին դեմ»⁷⁷: Այդ իրողության դեմ բողոքի ձայն բարձրացրեց սփյուռքահայ մամուլը: «Արև» թերթը նշում էր. «Ֆրանսացիք կշահագործեն մաս մը հայերու անվոր-

⁷⁴ «Արև», 31 հոկտեմբերի 1925:

⁷⁵ Նույնը, 13 մարտի 1926:

⁷⁶ E. E. A b o u c h d i d, 30 years of Lebanon and Syria, p. 49.

⁷⁷ «Արև», 18 փետրվարի 1926:

ծությունն ու անոթությունը... Յրանսիայի համար զո՞րք կպակսի, մա՞րդ կպակսի որ իր աչքը դրած է դժբախտ հայ ժողովուրդի բեկորներուն վրա և զանոնք նոր հրդեհի մը մեջ կնետե...»⁷⁸:

Որ իրոք հայերը դավադրության զոհ դարձան, երևում է նաև մի ուրիշ հանգամանքից: 1925—1926 թթ. հայ և օտար մամուլի հաղորդումները միաձայն վկայում են այն մասին, որ «մի քանի տասնյակ» հայեր միայն ընդգրկված էին հազարավոր մուսուլման շերքեզներ և ուրիշ ազգության պատկանող տարրեր հաշվող «կամավորական» գնդերում⁷⁹: Չնայած դրան համարյա միայն հայերը թիրախ դարձան արյունահեղ հարձակման, 1925 թ. հոկտեմբերի կեսերին մուկեռանդների ամբոխը կոտորած և թալան կատարեց Դամասկոսի հայկական զաղթականներում⁸⁰: Անդրադառնալով այդ տխուր իրադարձությանը, անգլիական «Ինչլի Տելեգրաֆ» թերթը նշել է. «Դրանք թուրքական լայնածավալ պրոպագանդայի հետևանքն են: Հայերը միշտ էլ թուրքական հալածանքների զոհ եղած են...»⁸¹:

78 «Արև», 18 փետրվարի 1926:

79 «Արև» թերթի 1925 թ. հոկտեմբերի 31-ի, 1926 թ. մարտի 13-ի, ապրիլի 1-ի և ուրիշ համարներում առաջ են բերված հայ և օտար ազգություններից բազմաթիվ քաղվածքներ, որոնցում «մի քանի տասնյակ» է գնահատված «կամավորական» գնդերում ընդգրկված հայերի Քիվը:

80 «Նոր Փյունիկ», 19 հոկտեմբերի 1925 թ.: Այդ թերթի հաղորդման համաձայն թալանվել են Գաղեմի, Շարքիեի, Սոֆանիեի զաղթականները, ինչպես նաև Մուսալլայի և Մեյզանի հայերի պատկանող խանութները: Կոտորվել են շուրջ 50 հայեր (նույն տեղում): Յրանսիական իմպերիալիստները խոստացան «վնասուց հատուցում» տալ տուժածներին: Կազմվեց «Բարձր կոմիսարության վնասուց հատուցման հանձնաժողով», որի պատրաստած ցուցակի համաձայն 236 աղետյալներ պետք է ստանային 10.728 օսմ. հնչուն ոսկի... Բայց իրականում հայ զաղթականները «վնասուց հատուցում» չստացան: 1928 թ. գերագույն կոմիսարը հայտարարել է, թե «ի վիճակի չէ... վնասուց հատուցում ընել, միմիայն կրնա համեստ օգնություններ ընձեռնել այրիներու, որբերու և կարոտ ծերերու» («Արև», 15 օգոստոսի 1928):

⁸¹ «The Daily Telegraph», 27 November 1925.

«Կամավորական» զնդերի առիթով Սիրիայի հայ գաղթականության շուրջը հարուցված աղմուկը այնպիսի շարժեր էր ընդունել, որ մինչև անգամ գրավեց միջազգային հասարակայնության ուշադրությունը: Առաջնորդող հոգվածում ցույց տալով հակահայ խաշակրության ակունքները, Լոնդոնի «Թայմսը» գրել է. «Արաբ պրոպագանդիստներուն կողմն ձեռնարկներ եղած են հակահայ շարժում մը քարոզելու թրջական հրահանգներով: Մինչդեռ ֆրանսիական օժանդակ գումարտակներուն մեջ մի քանի հայ կամավորներ հանցապարտ գտնված են ավարառությունով. այն իրողությունը թե այս անկանոն գունդերուն մեծամասնությունը կկազմեն քուրդեր, իսմայիլի հերձվածողներ և ամեննն ավելի իսլամ շերքեզներ, ...կթելադրե խորհիլ որ քննադատության կեդրոնացումը հայերու դեմ միայն ոչ արդար է, ոչ պարկեշտ...»⁸²:

Հայկական և արաբական նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ «կամավորական զնդի» ավանտյուրային դեմ էին Սիրիայի և Լիբանանի հայ աշխատավորական զանգվածները, քաղաքական կազմակերպությունները և ազգային-թեմական իշխանությունները: Այդ ավանտյուրային ջատագով էին հանդիսանում միայն պատերազմի տարիներին ֆրանսիական դրոշի ներքո գործած «Հայկական լեգեոնի» մի շարք դաշնակցական նախկին զինվորականներ, որոնք սակայն, հանդիպելով իրենց կուսակցության արգելքին, ազատ գործելու հնարավորություն չունեցան: Խ. Թյուֆունջյանը գրում է. «Դաշնակցությունը հաջողությամբ զսպած է նախկին լեգեոնական մեկ քանի բախտախնդիրներ, որոնք հետամուտ էին հայկական առանձին կամավորական գունդ կազմել, ֆրանսիական բանակի կողքին մասնակցելու համար ըմբոստներու դեմ ձեռնարկված զինվորական գործողություններուն»⁸³:

⁸² Մեջբերումն ըստ «Արևի», 1 ապրիլի 1926:

⁸³ Խ. Թյուֆունջյան, Բյուրջյական սնանկությունը, էջ 111:

Այդ հանգամանքը իհարկե չի նշանակում, որ դաշնակ շեֆերը հրաժարվել էին ֆրանսիական իմպերիալիզմին ծառայելուց: Ընդհակառակը, նրանք պրոպագանդում էին հայ գաղթականության և ֆրանսիական «հոգատար» իշխանության միջև «սերտ կապ» ստեղծելու անհրաժեշտությունը⁸⁴, դայրույթ առաջացնելով հայ աշխատավորական խավերում: 1926 թ. հուլիսի 18-ին, երբ նրանք ֆրանսիական ոստիկանների բացահայտ աշակցությանը զավթեցին Լիբանանի ազգային-թեմական իշխանությունը, կրքերի բորբոքվածությունը հասավ իր բարձրակետին, որովհետև հավանական էր նկատվում, որ նրանք ֆրանսիական իմպերիալիզմի օգտին կփոխեն նախորդ ազգային իշխանության քաղաքական ուղղությունը: Ազգային ժողովրդական բլոկի (դեմոկրատական ճակատի) գլխավորությանը նույն թվականի սեպտեմբերի 28-ին ժողովուրդը (ըստ Խ. Թյուրունջյանի «բազմատասնյակ անոպաներու զինված խումբը») «հարձակեցավ կաթողիկոսարանի վրա... կտորեց դուռը և ներս մտնելով կրակ բացավ խուճուպի մատնված ժողովականներուն վրա»⁸⁵:

Հանրահայտնի իրողություն է, որ Բեյրութի, Հալեպի և վարչականորեն վերջինիս ենթարկված Դամասկոսի ազգային-թեմական իշխանությունները, հակառակ ֆրանսիական իմպերիալիզմի գործակալների ճնշմանը, հավանություն չտվին հայերից «կամավորական գունդ» կազմելուն: Այդ տեսակետից հետաքրքրական է այն դիրքը, որ հանդես բերեց Դամասկոսի հայոց առաջնորդը: «Ծրևան» թերթը գրել է. «Օգոստոսի 24-ին (1925 թ.), տազնապալի օրերին, երբ կառավարությունը (ֆրանսիական իշխանությունը, Հ. Թ.) զենք

⁸⁴ «Նոր Փյունիկ», 17 հուլիսի 1926:

⁸⁵ Խ. Թյուրունջյան, Բյուրոյական սնանկությունը, էջ 74: Այդ հարձակման ժամանակ մի դաշնակցական ղեկավարի՝ Վահան Վարդապետյանի սպանությունը սկիզբ դարձավ եղբայրասպան ոճիրների, որոնք շարունակվեցին մինչև 1930-ական թվականները, խլելով մի շարք դեմոկրատ գործիչների՝ Սարգիս Տիրունու (1929 թ.), Միհրան Աղազարյանի (1933 թ.) և ուրիշների կյանքը:

էր բաժանում քրիստոնյաներին Դամասկոսի մեջ, հայոց առաջնորդը քաղաքավարութեամբ մերժում է այդ առաջարկը»⁸⁶; Հետագայում, երբ ֆրանսիացիներին հաջողվել էր մի քանի տասնյակ հայ վարձկաններ «կամավորագրել», Սահակ կաթողիկոսը «կոչ արեց զերագույն կոմիսարին՝ բանակից արձակել հայ զինվորներին»⁸⁷; Բացի այդ, նա մուսուլմանների կրոնապետին հատուկ գրութեամբ տեղեկացրեց, որ հայերը «հավանութուն չեն տալիս կամավորական շարժմանը և հնարավոր բոլոր միջոցներով աշխատում են ձախողել այն...»⁸⁸:

Սիրիայի և Լիբանանի հայ աշխատավորները, որոնց մեծագույն մասը կազմում էին դեռևս վերքերը չբուժած գաղթականները, հնարավորութուն չունեին ապստամբութեանը դեն ի ձեռին մասնակցելու: Այնուամենայնիվ, նրանք ստեղծեցին «Ապստամբներուն աջակցող հեղափոխական կոմիտե»⁸⁹, որը ապստամբ գյուղացիության օգտին կատարեց քավական զնահատելի աշխատանք: 1925 թ. հոկտեմբերի 11-ին հրապարակվեց նրա առաջին հայերեն թռուցիկը, որով կոչ էր արվում հայերին՝ օգնելու ապստամբությանը⁹⁰: Նույն թվականի նոյեմբերի 7-ին Աշրաֆիեում կազմակերպվեց ժողովրդական միտինգ, որի մասնակիցները մեծ ոգեվորութեամբ համերաշխութուն հայտնեցին արաբ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարին⁹¹: Իսկ Զեբել Մուսայում, որտեղ իմպերիալիզմի գործակալները փորձում էին

⁸⁶ «Երևան», Փարիզ, 8 նոյեմբերի 1925:

⁸⁷ E. P. Maccallum, The Nationalist Crusade in Syria, p. 152.

⁸⁸ Նույն տեղում: Սահակ կաթողիկոսը «կամավորներին» խնդրով տեսակցել է զերագույն կոմիսար դե Ժուվենելի հետ և նրանից պահանջել թցրել մեկ քանի տասնյակ հայ կամավորները: Կամավոր արձանագրվողներուն նպատակը եղած է միայն հացի խնդիրը: Այնուամենայնիվ լավագույն կհամարիմ մի քանիներուն անոթի մեռնիլը, քան թե կուշտ փորով քնդհանուրին կյանքին դեմ վտանգ ստեղծեն» («Երև», 13 մարտի 1926):

⁸⁹ «Երևան», 3 դեկտեմբերի 1925:

⁹⁰ «Մ. Ն. Հառաջ», 4 հունվարի 1929:

⁹¹ Նույն տեղում:

«կամավորներ» հավաքագրել, «Ապստամբներուն աշակցող հեղափոխական կոմիտեն» թռուցիկներ հրապարակեց, գլուղացիներին թելագրելով՝ շհետևել նրանց, «զենք չբարձրացնել սիրիացի եղբայրների դեմ»⁹²։ Նրանք նույնիմաստ թռուցիկներ հրապարակեցին նաև Բեյրութի, Դամասկոսի, Հալեպի և մյուս քաղաքների հայության շրջանում։

«Ապստամբներուն աշակցող հեղափոխական կոմիտեն» ջանքեր էր գործադրում նաև հայ գաղթականության հետ կապված հարցերում արաբ հասարակայնությունը լուսաբանելու ուղղությամբ։ Դա վերին աստիճանի կարևոր խնդիր էր, մանավանդ այն բանից հետո, երբ Ֆրանսիական իմպերիալիստները «վտանգավոր թյուրիմացություններ» էին ստեղծել «արաբներու մոտ հայերու հանդեպ»⁹³։ Այդ աշխատանքը մեծ մասամբ կատարվում էր արաբերեն լեզվով թռուցիկներ տարածելով։ Բեյրութում Ֆրանսիական զինվորական իշխանությունները ձերբակալել են կոմունիստ Պետրոս Պարտիզպանյանին և հաշիկ Փափազյանին, որոնք տարածում էին այդ կարգի թռուցիկներ⁹⁴։

Ազիտացիոն աշխատանք էր կատարվում նաև ապրստամբների դեմ կովող Ֆրանսիական զորքի շարքերում։ Սլեյման էլ-Ադիլը նշում է. «Կոմունիստները Ֆրանսերեն լեզվով թռուցիկով կոչ արեցին (Ֆրանսիական, Հ. Թ.) զինվորներին չկովել ապստամբների դեմ, որոնք պայքարում էին իրենց հայրենիքի անկախության համար»⁹⁵։ Բանակում քայքայիչ աշխատանք տանելու մեղադրանքով, Ֆրանսիական ոստիկանությունը ձերբակալեց բազմաթիվ կոմունիստների, այդ թվում Հ. Մադեյանին և Հ. Բոյաջյանին։ Զինվորական ատյանը նրանց դատանկարտեց պատժի առավելագույնին, սակայն, Ֆրանսիայի կոմունիստական կուսակցության բողոքի

⁹² صوت الشعب، ۲۲ ايار ۱۹۴۷

⁹³ «Մ. Ն. Հառաջ», 9 հոկտեմբերի 1960:

⁹⁴ «Երևան», 26 մայիսի 1926:

⁹⁵ الاخبار، بيروت، ۱۵ سبتمبر ۱۹۶۳

լայն շարժման շնորհիվ նրանց մահապատիժը վերածվեց ցկայանս արգելափակման⁹⁶։

1927 թ. ֆրանսիական իմպերիալիստները բանակի գերակշիռ ուժերի գրոհի ներքո ճնշեցին Ջերել Դրուզի ապրստամբությունը։ Դրանով սակայն հարցը չլուծվեց։ Իրավացիորեն, գեներալ Կատրուն գրել է. «Դրուզները և սիրիացիները ստիպվեցին վար դնել զենքերը, բայց նրանց դիմադրական կորովը ամենևին չընկճվեց»⁹⁷։ Ֆրանսիական իմպերիալիստները պարզ գիտակցում էին, որ վերահաստատված անգործությունը անցողիկ է, Սիրիայի ժողովուրդը «սպասում է իր ազատագրության ժամին»⁹⁸։

Հետագա շարժումները կանխելու դիտավորությամբ, ֆրանսիական գերագույն կոմիսար Հանրի Պոնսոն ձեռք առավ մի շարք միջոցառումներ, որոնցից մի քանիսն ուղղակի վերաբերում էին հայերին։ Դրանցից ամենակարևորը հայերի վերաբնակեցման խնդիրն էր։

Վերանայելով գեներալ Սառայի կարգադրությունները հայ գաղթականների տեղաբաշխման հարցում, Հանրի Պոնսոն ֆրանսիական իմպերիալիզմի շահերի տեսակետից անցանկալի գտավ հայերի զանգվածային ներկայութունը գրված խավոր քաղաքներում և ծրագիր առաջ քաշեց նրանց Սիրիայի և Լիբանանի ներքին գյուղերում վերաբնակեցնելու մասին։ 1927 թ. մարտ ամսից «Գաղթականաց տեղավորման կեդրոնական հանձնաժողովը», որը գործում էր գերագույն կոմիսարի տեղակալներից մեկի վերահսկողության ներքո,

96 Նույն տեղում, Բացի վերոհիշյալներից ձերբակալված են եղել նաև կոմունիստներ Գրիգոր Տեր-Գրիգորյանը, Միքայել Անանիկյանը, ինչպես և հնչակյան գործիչ Սարգիս Տխրունին։ Սկզբում նրանք արգելափակված են եղել Քարմուռ բերդում, իսկ հետագայում տեղափոխվել են Տարտուսի մերձակա Ռուադ կղզին։ Նրանք ազատ արձակվեցին 1928 թ. հունվարին, երբ այլևս ճնշված էր Ջերել Դրուզի ապստամբությունը («Արև», 4 փետրվարի 1928)։

97 Catroux, Deux Missions en Moyen-Orient, pp. 138—139.

98 Նույն տեղում, էջ 52։

դրադուլեց այդ հարցով: Վերաբնակեցման ծրագրին տրվեց մարդասիրական գործի տեսք, այն ներկայացվեց իբրև թըշվառութիւն մատնված գաղթականներին ապրուստով ապահովելու միակ միջոց: Այդ պրոպագանդան այնպիսի ճարտարութեամբ կատարվեց, որ մինչև անգամ հայկական բարեգործական կազմակերպութիւնները դրամական միջոցներ տրամադրեցին գործի հաշողութեան համար:

Անդրադառնալով հայերի վերաբնակեցմանը, Սահակ կաթողիկոսը գրում էր. «Երկրագործները գյուղերու մեջ տեղավորելու մտադրութիւնը փոքր ինչ մուժ է. եթե նոր գյուղեր պիտի հիմնվին և անոնց մեջ 150—200-ական տնվոր պիտի տեղավորեն, օգտակար կրնա ըլլալ, մանավանդ եթե այդ գյուղերը իրարմէ շատ հեռու չըլլան, իրարու օգնելու և աշխատակցելու մեծ դյուրութիւն կունենան. իսկ եթե այլատարր բնակչաց մեջ ցրվելու նպատակով է, բնավ համամիտ չենք, որովհետև այդ կերպ տեղավորումը օգտակար չկրնար ըլլալ ոչ տնտեսապես և ոչ բարոյապես»⁹⁹. Սահակ կաթողիկոսի կռահումը ճիշտ էր: Երկրագործներին հողամշակութեամբ պարապելու հնարավորութիւն տալու փաստարկը կեղծ էր: Այդ երևում է Հալիպի ազգային իշխանութեան կողմից գաղթականաց տեղավորման հանձնաժողովի նախագահին գրված մի նամակից, որտեղ ասված է. «Հալիպի գաղթականութեան մեջ հողամշակութեան ընդունակ սարբեր գրեթէ չըլլալով, անկարելի է համոզել որևէ գաղթական, որ հոժարի հեռանալ Հալիպից: Զարմանալի է, որ ...Հալիպի ենթահանձնաժողովը կշարունակե այդ ուղղութեամբ աշխատանքներ տանիլ...»¹⁰⁰:

Վերաբնակեցման ծրագրի ներքին ծալքերը բացվեցին, և բնարդեն գործը ավարտվելու մոտ էր: 1931 թ. անձամբ լինելով հյուսիսային Սիրիայի նորահաստատ հայաբնակ գյուղերում, Վահան Թեքեյանը գրել է. «Վերջերս, կարգ մը հայ թերթերու մեջ վիճակագրական և շեմ գիտեր ինչական

99 ԳԱ ԱՍ արխիվ, ֆ. 5 ր. 1, վ. 3:

100 Նույնը, վ. 4:

տեղեկություններ լույս տեսան Սուրիո մեջ հաստատված հայ գյուղերու մասին: Ըստ այդ տեղեկությանց, գրեթե բոլոր հայ նորահաստատ գյուղերու բնակիչները «ինքնաբավ» դարձած էին: Արդ, ի վիճակի եմ ըսելու, որ ատիկա ՍՈՒՏ է և հայ գաղթականները, հեռու ինքնաբավ ըլլալե, թշվառության մեջ են: Անոնց 10-ին 90-ին սնունդն է՝ այս կլիմային տակ, ջերմի բույներու մոտիկ՝ հաց, լոլիկ, կանանչ պղպեղ և ասոր նման բաներ, և հազիվ 10—15 օրը անգամ մը կրնան միսի երես տեսնել: Այս երկրագործական գաղութները, հիմնված այն տեսակ կետերու վրա, որ շատ հեռու են սպառող կեդրոնների, բանի մը շին կրնար օգտագործել իրենց բերքերը, եթե ունենան իսկ: Տնտեսական այս ձախող պայմաններեն զատ կան նաև ուրիշ անպատեհություններ. ատիկա իրենց դիրքն է՝ հարաբերաբար ուրիշ տարրերու: Թրքական և կամ արաբական հոծ բնակչության մը մեջերը հայ գյուղ մը կամ երկուք երբեք հանգիստ չպիտի կրնան ընել: Այդ կետերու ընտրությունը եղած ըլլալու է գաղթականներու հանգիստեն ավելի ուրիշ նկատառումներու անսալով, զոր շեմ ուզեր պարզել ինքնին հասկնալի ըլլալուն»¹⁰¹:

Այդ գյուղերը երկար կյանք չունեցան, վերաբնակեցված գաղթականները վերստին դեպի քաղաք խուժեցին...

ՀԱՅ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՐԻԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՊԱՅՔԱՐԻՆ (1928—1936 ԹԹ.)

1925—1927 թթ. հեղափոխական շարժումների ճնշման ներքո ֆրանսիական իմպերիալիստները համաձայնվեցին, թեև ձեականորեն, հարգել մանդատով ստանձնած պարտավորությունները: Մանդատի առաջին հոդվածում ասված էր. «Խնամակալության ուժի մեջ մտնելու թվականից հաշվելով, երեք տարվա ժամանակաշրջանում, խնամակալը պարտավոր է պատրաստել Սիրիայի և Լիբանանի հիմնական օրենքը,

101 ԳԱԹ արխիվ, ֆ. Ա. Զոպանյան, ք. 1, վ. 2343.

հաշիւի առնելով այդ երկրներում բնակվող ժողովուրդների փրավունքները, շահերը և ցանկութունները: Սիրիան և Լիբանանը պիտի դառնան անկախ պետութիւններ...» և այլն: 1926 թ. մայիսին, երբ Ջեբել Դրուզի շարժումները հասել էին իրենց բարձրակետին, նրանք քաղաքական որոշակի նկատառումներով կյանքի կոչեցին Լիբանանի հանրապետութիւնը: Հաղդադը հեզնանքով նշել է. «Լիբանանի հանրապետութիւնը հանդերձ բոլոր օրգաններով ստեղծվեց տաս օրվա ընթացքում»¹⁰²: Լիբանանը ունեցավ պառլամենտ, սենատ, կառավարութիւն, հանրապետութիւն նախագահ, բայց անկախ և սովերեն պետութիւն չէր: Գերագույն կոմիսարին էր պատկանում վերջին խոսքը արտաքին գործերի, զինվորական խնդիրների և այլ բնագավառներում:

Այդ կարգի հանրապետութիւն ստեղծելու փորձ արվեց նաև Սիրիայում: 1928 թ. ապրիլի 24-ին Հանրի Պոնսոն հրահանգեց Սահմանադիր ժողովի ընտրութիւններ անցկացնել այն լավատեսութամբ, որ այդ ժողովում աթոռ կզբաւեն պրոիմպերիալիստական տարրեր, հնարավոր դարձնելով Ֆրանսիայի համար ձեռնտու սահմանադրութիւն հաստատումը: Բայց նրա հաշիվները ճիշտ դուրս չեկան: Ալկուիլա ալ-Վաթանիյա (Ազգային բլոկ) կուսակցութիւնը, մեծամասնութիւն ձեռք բերելով Սահմանադիր ժողովում, կազմեց Սիրիայի սահմանադրութիւն նախագիծը, ընդ որում նախատեսվում էր ստեղծել ազգային անկախ հանրապետութիւն, որի գերագույն իշխանութիւնը պետք է հանդիսանային հանրապետութիւն նախագահը, կառավարութիւնը և պառլամենտը: Օգոստոսի 8-ին, երբ այլևս պետք է քվեարկութիւն դրվեր այն, Պոնսոն պահանջեց հանել 2, 73, 74, 110 և 112-րդ հոդվածները, առարկելով, որ դրանք հակասում են մանդատին և Ֆրանսիայի միջազգային պարտավորութիւններին: Այդ հոդվածները վերաբերում էին Սիրիայի

¹⁰² G. Haddad, Fifty years of Modern Syria and Lebanon, p. 78.

միասնականության վերահաստատմանը, հանրապետության նախագահի ներում շնորհելու իրավունքին, պայմանագիր կնքելու ազատությանը, արտաքին գործերի մինիստրության ստեղծմանը և ազգային բանակի կազմությանը:

Սահմանադիր ժողովի վրա որպես ճնշման միջոց օգտագործվեց Ալեքսանդրետի սանջակը Սիրիայից անջատելու սպառնալիքը: Ալեքսանդրետի սանջակը, կազմելով Սիրիայի բաղկացուցիչ մասը, Մուղրոսի պայմանագրով (1918 թ.) բաժին ընկավ Ֆրանսիային: Գործելով բաժանիր, որ տիրես սկզբունքով, ֆրանսիական իմպերիալիստները արհեստականորեն ստեղծեցին «Ալեքսանդրետի ավտոնոմ սանջակը», որը դարձավ ֆրանսա-սիրիական և ֆրանսա-թուրքական հարաբերությունների աքիլիսյան գարշապարը: Նրանք մի կողմից հրահրում էին երկրամասի թուրք ազգաբնակչության սեպարատիստական նկրտումները՝ շահելու համար թուրքիայի բարեկամությունը, իսկ մյուս կողմից, երկրամասին «սպառնացող թուրքական վտանգը» օգտագործում էին զրսպելու համար Սիրիայի ժողովրդի ազգային անկախության պայքարը:

1928 թ. օգոստոսի 8-ին, երբ պարզ դարձավ, որ Սահմանադիր ժողովը, ձգտելով Սիրիայի լիիրավ անկախությունը, հակված էր անտեսելու Պոնտոյի պահանջը, իմպերիալիստներին մնում էր... խանգարել նրա աշխատանքները: Մի շարք երեսփոխաններ, այդ թվում դաշնակցական Մովսես Տեր-Գալուստյանը, որոնք Սահմանադիր ժողովում աթոռ էին գրավել ֆրանսիական «սվինների ուժով»¹⁰³, արտահայտվեցին գերագույն կոմիսարի «ուղղումների» օգտին: Իսկ ազգությամբ թուրք երեսփոխան Կարաս Մուրսելզադե Ահմեդը պահանջեց Ալեքսանդրետի ավտոնոմ սանջակի «կատարյալ անկախությունը»¹⁰⁴:... Եվ առանց դրական արդյունքի փակվեց Սահմանադիր ժողովի նստաշրջանը:

¹⁰³ صوت الشعب، ۲۳ ايار ۱۹۲۷

¹⁰⁴ «Արև», 2 հոկտեմբերի 1928.

Դաշնակ երեսփոխանի ելույթը պատրվակ ծառայեց Սիրիայի հետադիմական շրջաններին՝ հակահայ կրթեր բորբոքելու։ Ռեակցիոն գործիչները, Տեր-Գալուստյանին վերադրելով Մուրսելիզադեի պահանջը Սանջակի անկախության մասին, հայերին մեղադրեցին Սիրիայի գերագույն շահերի դեմ գործելու մեջ։ Տեր-Գալուստյանը հանդես եկավ հրապարակային հայտարարությամբ, որտեղ ասված է. «Ըս երբեք չեմ պահանջած Ալեքսանդրեսի սանջակին սուրիական միութենեն բաժանվիլը ու անկախ հռչակվիլը։ Ալեքսանդրեսի սանջակի իրավունքներու մասին Սահմանադիր ժողովի ամբիոնեն արտասանած ճառիս մեջ, որ մաս կկազմե պաշտոնական ատենագրությանց... անկախություն բառն անգամ չեմ գործածած»¹⁰⁵։ Այնուամենայնիվ մութ ամպեր կուտակվեցին սիրիահայ գաղթականության գլխին...։ Խալեդ Բեկդաշը պատմում է, թե ինչպես Դամասկոսի կոմունիստների պատվիրակությունը հանդիպումներ է ունեցել արաբ գործիչների և մամուլի աշխատողների հետ, բացատրություններ տվել Սիրիայի հայության դիրքի մասին և կանխել հակահայ խմորումները¹⁰⁶։

1929 թ. փետրվարի 7-ին Պոնսոն ցրեց Սահմանադիր ժողովը և, օգտագործելով այն հանգամանքը, որ ալ-Կութլա ալ-Վաթանիյա կուսակցությունը ձգտում էր խաղաղ ճանապարհով ձեռք բերել մանդատի վերացումը, ձեռնարկեց անվերջանալի բանակցությունների...։ Բնութագրելով Պոնսոնի գործելակերպը, Կատրոն դիպուկ կերպով նշել է. «Բանակցությունները, որ նա սկսեց, շարունակեց, խզեց և վերսկսեց, նմանվեցին Պենելոպեի առասպելական կտավին...»¹⁰⁷։ Սակայն դա խնդրի մի կողմն էր։ Պոնսոն միաժամանակ ջանքեր էր գործադրում Ազգերի լիգայի անդամ պետություննե-

¹⁰⁵ Նույն տեղում։

¹⁰⁶ صوت الشعب، ۲۳ ايار ۱۹۲۷

¹⁰⁷ Catroux, Deux Missions en Moyen-Orient, pp. 140—141.

րին համոզելու այն բանում, որ տակավին Սիրիան ընդունակ չէ ինքնիշխան դառնալու: Այդ քաղաքականության պտուղներին էր «հայկական օճախի» առասպելը:

Հայտնի է, որ 1928—1930 թթ. ֆրանսիական իմպերիալիստները Եփրատի հովտում հաստատեցին մի շարք հայաբնակ գյուղեր, հետապնդելով քաղաքական որոշակի նպատակներ: Արշակ Չոպանյանին ուղղված իր նամակում, Վ. Թեքեյանը ահազանգում էր, որ այդ գյուղերի տեղաբաշխումը կատարված էր «գաղթականներու հանգիստեն ավելի ուրիշ նկատառումներու անսալով»¹⁰⁸: Նորահաստատ Հայկաշեն գյուղը, որը հաշվում էր մոտավոր թվով 250 հայ գյուղացիական ընտանիք, շրջապատված էր Ռեյհանին, Հարիմ և Ասկեր Չայրը կոչված վայրերի բազմացեղ մուսուլման սղգաբնակչությամբ: Մոտավորապես միևնույն սկզբունքով տեղաբաշխված էին նաև Սոուկ Սուն, Վարդաշենը և մյուս հայաբնակ գյուղերը: Կիսաքոչվոր և հետամնաց բնակչության ծովում մի բուռ հայերին այդպես ցրելով, ֆրանսիական իմպերիալիստները հնարավորություն էին ձեռք բերում հայ-սարաբական ընդհարումներ հրահրելու:

1929 թ. վերջերին, երբ ալ-Կուֆլա ալ-Վաթանիյա կուսակցությունը խզեց բանակցությունները, Պոնսոն միջոցներ ձեռք առավ արդարացնելու համար իր հետագա միակողմանի գործողությունները: Այդ միջոցներից էր «հայկական օճախի» պրովոկացիան, որը սկսեցին ֆրանսիական իմպերիալիստների կողմից կաշառված մի շարք թերթեր: Դրանով իմպերիալիստները երազում էին թշնամանք բորբոքել հայերի դեմ, արյունահեղ հարձակման թիրախ դարձնել մեկուսացված հայաբնակ գյուղերը, որպեսզի Ազգերի լիգան, վաղաժամ համարելով Սիրիայի ազգային անկախության պահանջը, ընդունի մանդատի պահպանման անհրաժեշտությունը:

108 ԳԱԹ արխիվ, ֆ. Ա. Չոպանյան, բ. 1, վ. 2343:

«Հայկական օճախի» մասին առաջինը հանդես եկավ Բեյրութում ֆրանսերեն լեզվով լույս տեսնող «Լ'Օրիան» թերթը: Նրա գրելով ֆրանսիացիները նպատակ էին դրել հայերի համար «օճախ» ստեղծել Եփրատ և Խաբուր գետերի միջև ընկած երկրամասում¹⁰⁹: Այդ հայտարարության հաջորդ օրը, շնայած մի շարք թերթերի բողոքին, վերստին անդրադառնալով «Հայկական օճախի» հարցին, «Լ'Օրիանը» զուգակշիռ անցկացրեց Սիրիայի հայկական «ազգային օճախի» և Պաղեստինի «սիոնական վտանգի» միջև¹¹⁰: Հարցը քննարկվեց նաև արաբատառ մամուլում: Մի շարք թերթեր, հանդես գալով բավական կրքոտ պատասխան-հոդվածներով¹¹¹, նպաստեցին այն բանին, որ «Լ'Օրիանի» հակահայ հերյուրանքը ծավալվի արաբական հասարակայնության ամենալայն խավերում:

«Հայկական օճախի» կրակին յուզ էին ածում նաև Թուրքիայի կառավարող շրջանները: Անդրադառնալով հակահայ

109 «Հուսարեր», 4 փետրվարի 1930:

110 Նույն տեղում:

111 Այդ հոդվածների բնույթի մասին պատկերացում կազմելու համար բերենք մի քանի քաղվածք: Դամասկոսի «ալ-Ֆեթա ալ-Արաբ» թերթը գրել է, ««Լ'Օրիան» թերթը կուզե որ սուրիացիները հոժարին իրենց երկրին մեջ հայ հայրենիքի մը կազմութիւնս... Սուրիացիներս շատ դժգոհ կըլլանք, եթե հայերը մեր արեւելյան սահմաններուն վրա մնան... Եվրոպան հայերուն ամենամեծ բարիք կընե, եթե զանոնք Հայաստան զրկեն...» (մեջբերումն ըստ «Հուսարերի», 4 փետրվարի 1930): Նշելով որ առդեն 200.000 հայեր կան Սիրիայում և իրանանում, Բեյրութի «ալ-Ահ-րաբ» թերթը գրել է. «Յրանսական իշխանութիւնը ամեն դյուրութիւն կընծայե և կուզե տեղավորել զանոնք: Բացի այս 200.000 հայերեն դեմ մեկ միլիոն հայեր ալ պիտի բերվին արտասահմանեն...» (ըստ նույնի, 4 մարտի 1930): Բեյրութի «ալ-Ահդ ալ-Ջադիդ» թերթը գրել է. «Հայկական հայրենիք մը ստեղծելու և հայեր բնակեցնելու աշխատանքները... բոլոր սուրիացիներուն և մասնավորապէս Հալեպի բնակչութեան հուզման և գրգռութեան պատճառ եղած են: Թուրքիան այդ ծրագրին դեմ բուն կերպով բողոքած է...» (ըստ նույնի, 14 ապրիլի 1930): «Հայկական օճախի» հերյուրանքը որպէս իրականութիւն ընդունելով, ուրիշ թերթեր էլ անտեղի հարձակումներ են գործել հայերի դեմ:

պրովոկացիային, Ա. Արշակունին գրել է. «Անհերքելի իրողություն է, որ թուրքական գործակալներով ցանցնված է սուրիական պետությունն ու Լիբանանի հանրապետությունը: Թուրքիան անսպառ դրամներ կվատնե թունավորելու դիտումով հայ-արաբական հարաբերությունները: Արաբ մամուլը անգիտակ հայոց կյանքին ու պատմության հաճախ գործիք կդառնա... և հրատարակության կուտա հակահայ գրություններ...»¹¹²:

Հակահայ աղմկարարության թափը ընկավ, երբ հեղինակավոր «Ալիֆ Բա» թերթը հատուկ առաջնորդող հոդվածով հերքեց «հայկական օճախի» առասպելը: «Ալիֆ Բան» գրել է. «Կերչերս հայկական օճախի մը առասպելական պատմությունը բավական ըսի-ըսավներու տեղի տվավ: Կարգ մը հայ արժանահավատ երևելիներե և վստահելի աղբյուրներեն մեր առած տեղեկությանց համաձայն իրականության հակառակ են այս լուրերը: Նույնիսկ բարձր կոմիսարութենեն ստուգած ենք այս պարագան... Հայ հայրենիք մը հիմնելու լուրը անճիշտ է. մենք հայերու մոտ նման փափաք և ձգտում չենք նշմարեր, բոլոր հայերուն փափաքը և ձգտումները թըշվառութենե ազատելու և կարելի եղածին շափ հողին կապվելու աշխատանքն է, այդ կերպով թե իրենց ապրուստը պիտի հոգան և թե օգտակար պիտի ըլլան մեր երկրին»¹¹³:

Մանր մթնոլորտը փարատելու տեսակետից դրական դեր կատարեց նաև Հնչակյան և Ռամկավար կուսակցությունների համատեղ հայտարարությունը, որտեղ ասված է. «Մենք, Ռամկավար ազատական և Ս.-դ. Հնչակյան կուսակցությանց Սուրիո շրջանային մարմինները, խառն ժողովի մը մեջ խորհրդակցության առարկա ըրինք վերջերս արաբ թերթերու կողմե եղած հրատարակությունները և մենք զմեզ պարտավոր զգացինք վճռապես հայտարարել, թե ա. Սուրիահայ ժողովուրդը հյուրաբար կգտնվի այս երկրին մեջ և

112 «Հուսարեր», 3 ապրիլի 1930.

113 Մեջբերումն ըստ «Հուսարերի», 7 փետրվարի 1930.

երախտապարտ է... արար աղնիվ ազգին:... Անհիմն և երե-
վակայական է Սուրիո մեջ հայկական օճախ մը կազմելու
գաղափարը. Բ. Ուրիշ կազմակերպություններ ալ տարբեր
տեսակետ կամ մտածում շին կրնար ունենալ այս մասին.
դ. Ջերմապես փափաքելի կգտնենք, որ արարահայ սիրալիր
հարաբերությունները պահվին և կասկածներու տեղի տվող
խյուրիմացությունները վերջ գտնեն. դ. Մեկ ազգային օճախ
ունինք, այն ալ Հայաստանն է, իսկ հոս մեր միակ և գլխա-
վոր աշխատանքը կկայանա մեր ընտանիքներուն ապրուստը
և զավակներուն մտավոր և բարոյական զարգացումը ապա-
հովելու մեջ»¹¹⁴:

«Հայկական օճախի» աղմուկը օգտագործելով, Ֆրան-
սիական իմպերիալիստները Ազգերի լիգայում առաջացրին
այն տպավորությունը, որ իբր մանդատը վերացնելու դեպ-
քում քաոս կստեղծվի Սիրիայում: Այդ բանից հետո ճանա-
պարհը բաց էր այլևս նրանց միակողմանի գործողություն-
ների առաջ: Այսպես, 1930 թ. մայիսի 22-ին Պոնսոն փոր-
ձեց դեկրետով պարտադրել այնպիսի մի սահմանադրու-
թյուն, որը հիմնականում ոչնչով չէր տարբերվում ղեկավար-
ման մանդատից: Սիրիայի սահմանադրության այդ իմպեր-
իալիստական վարիանտը չարժանացավ ժողովրդի հավա-
նությունը: Բողոքի ելույթները կանխելու նպատակով, Պոն-
սոն անցավ բիրտ ռեպրեսիայի, նրա հարվածի տակ ընկան
ինչպես արար, այնպես էլ հայ ղեմոկրատական կազմակեր-
պությունները:

Մուկգնող ռեակցիայի գլխավոր թիրախ դարձավ Սիր-
իայի և Լիբանանի կոմունիստական կուսակցությունը: Բեյ-
րութում, Դամասկոսում, Հալեպում և ուրիշ քաղաքներում
կատարվեցին զանգվածային ձերբակալություններ: Կալանքի
վերցվեցին նաև Ֆուադ Շեմալին, Հարություն Մադեյանը և
ուրիշ կոմունիստ ղեկավարներ: Ռեակցիոն թերթերը կոմու-
նիստներին մեղադրում էին Սովետական Միության քաղա-

քական նպատակներին ծառայելու մեջ: «Լա Սիրի» թերթը գրել է. «Սովետական Միութեան օգտին պայքարող հայտնի գործիչներ Մադեյանի և Շեմալիի ձերբակալվելուվը կոմունիզմը նորից օրակարգի հարց դարձավ և զբաղեցնում է բոլոր պետական օրգանները... Պարտավոր ենք ընդունել, որ բուլշևիկյան պրոպագանդան հող վ շահում Արևելքում»¹¹⁵:

Ձերբակալվածների շարքում որոշ թվով հայերի առկայությունը պատրվակ ծառայեց ռեակցիոն մամուլին նորից թունոտ սլաքներ ուղղելու հայ գաղթականության դեմ: Հաշիպում «ալ-Թաքադդում», «ալ-Միսաք» և ուրիշ թերթեր աղմկում էին այն մասին, որ իբր հայերը շարաշահում են Սիրիայի ժողովրդի ասպնջականությունը, մասնակցելով կոմունիստական շարժմանը¹¹⁶: Առավել ագրեսիվություն ցույց տվեց «Լ'Օրիան» թերթը: Նշելով որ հայ գաղթականները «կրակի հետ կխաղան» աշակցելով կոմունիստների «քայքայիչ գործունեությանը», այդ թերթը իշխանություններին առաջարկում էր հայերին հեռացնել քաղաքներից, քշել դեպի գյուղական վայրեր և եթե նրանք այնտեղ էլ «շարունակեն կոմունիստական թուղցիկներ տարածել», ապա նրանց «արտաքսել երկրից»¹¹⁷:

Ռեպրեսիվ միջոցառումները և հակահայ հալածանքը շկարողացան ընկճել ժողովրդի դիմադրությունը և այդպես էլ ուժի մեջ շմտավ սահմանադրության իմպերիալիստական

¹¹⁵ „La Syrie“, Beyrouth, 6 Septembre 1930.

¹¹⁶ Հիմք ընդունելով այն, որ բանտ առաջնորդված հայերը թվով ավելի էին, քան արաբները, այդ թերթերը սպառնալիքներ տեղացին հայերի հասցեին... «Սակայն նրանք մատնվեցին ծիծաղելի դրություն, երբ պարզվեց, որ ոստիկանները թյուրիմացաբար որպես կոմունիստ ձերբակալել էին հեշակյանների, ռամկավարների, ինչպես նաև կուսակցական գործերի հետ ոչ մի կապ չունեցող մարդկանց... Իրականում ձերբակալված արաբ կոմունիստները զգալի թվով ավելի էին, քան հայերը... (Ճեփրատ», 6 սեպտեմբերի 1930):

¹¹⁷ «Լ'Օրիանի» այդ առաջնորդող հողվածի ամբողջական թարգմանությունը տվել է Հալեպի «Ճեփրատը» (8 հոկտեմբերի 1930), որից և բերում ենք վերոհիշյալ տողերը:

վարիանտը: Համոզվելով, որ մանդատը անգամ բարեփոխելով հնարավոր չէ արժանացնել ժողովրդի հավանությունը, ֆրանսիական իմպերիալիստները խոստում տվեցին այն ֆրանսա-սիրիական պայմանագրով փոխարինելու մասին:

1931 թ. վերջերին Պոնսոն հրահանգեց պառլամենտական ընտրություններ անցկացնել Սիրիայում: Նա լրջորեն հավատում էր այն բանին, որ այդ ընտրություններով իշխանության գլուխ կբերի այնպիսի կառավարություն, որը կստորագրի Ֆրանսիայի համար ձեռնտու պայմանագիր: Բայց նրա լավատեսությունը հիմնավորված չէր: Ալ-Կուֆլա ալ-Վաթանիյա կուսակցությանը հաջողվեց կազմել բավական ուժեղ օպոզիցիոն ճակատ, որին աջակցում էին նաև հայ դեմոկրատները: Նոյեմբերի 7-ին Դամասկոսում և Հալեպում օպոզիցիայի նախընտրական պայքարը նշանավորվեց հակաիմպերիալիստական վիթխարի ցույցերով: Արաբ և հայ ցուցարարները գոչում էին. «Ֆրանսիացիներ, կորեք մեր երկրից, անկցի իմպերիալիզմը, կեցցե ազգային անկախությունը»¹¹⁸: Դեկտեմբերի 20-ին, ընտրությունները սկսվելուց մի քանի ժամ հետո, երբ արդեն բացահայտ էր օպոզիցիայի հաղթանակը, ֆրանսիական զորքը միջամտեց... իբր ապահովելու համար ընտրողների ազատությունը: Դամասկոսում, Համայում և ուրիշ վայրերում զորքը կրակ բացեց ժողովրդի վրա և ընտրությունները կովի վերածվեցին: Նղան սպանվածներ և վիրավորներ: Արյունահեղությունը պատրվակ ծառայեց Պոնսոյին՝ ընտրությունները առկախելու համար:

Այնուամենայնիվ, այդպես առկախված ընտրությունները տեղի ունեցան 1932 թ. ապրիլին և պսակվեցին օպոզիցիայի հաղթանակով: Պառլամենտում ճնշող մեծամասնություն ձեռք բերելով, ալ-Կուֆլա ալ-Վաթանիյա կուսակցությունը ընտրեց հանրապետության նախագահ, կազմեց կառավարություն, որը և ընդառաջելով Պոնսոյի հրավերին բա-

¹¹⁸ الفباء ، ١٢ نسين ١٩٣١

նակցություններ սկսեց ֆրանսա-սիրիական պայմանագիր կնքելու համար:

Ֆրանսիական իմպերիալիստները գործադրում էին բոլոր հնարավոր միջոցները՝ կաշառք, սպառնալիք և այլն, հասնելու համար այն բանին, որ մանդատը փոխարինող պայմանագրով օրինական ձև տրվի իրենց տիրապետութայնը: Կառավարութայնը զորավիգ էին հանդիսանում աշխատավորական զանգվածները, ցույցերով և գործադուլներով բողոքելով իմպերիալիստների նկրտումների դեմ, պահանջելով իրավահավասար պայմանագիր: Այդ պայքարում խիզախությամբ աչքի ընկան նաև հայ աշխատավորները: Խոսելով դրանցից Հակոբ Տեր-Պետրոսյանի մասին, ֆրանսիական «Լա Դեֆանս» թերթը գրել է, որ ոստիկանությունը նրան բանտարկել է «կորչի իմպերիալիզմը, կեցցե Սիրիայի անկախությունը և միասնականությունը» մակագրությամբ կարմիր պաստառ պարզելու մեղադրանքով¹¹⁹:

Աշխատավորները հակաիմպերիալիստական ելույթներով հանդես էին գալիս նաև Լիբանանում: 1932 թ. օգոստոսին, պաշտպանելով Սիրիայի ազգային պահանջները, գործադուլ հայտարարեցին Բեյրութի էլեկտրաքարշի արաբ և հայ բանվորները, ցույց կատարեցին Տրիպոլիի նավթագտման կայանի բանվորներն ու ծառայողները: Տրիպոլիի ցույցը անձամբ առաջնորդում էր այդ քաղաքի հայ կոմունիստներից Դալլաքյանը¹²⁰:

1933 թ. ապրիլի 10-ին սիրիական կառավարությունը, բողոքելով Պոնտոյի ճնշման քաղաքականութայն դեմ, խզեց պայմանագրի բանակցությունները: Այն բանից հետո, երբ Պոնտոյին չհաջողվեց բանակցությունները վերսկսել, ֆրանսիական կառավարությունը նրա տեղ Սիրիայի և Լիբանանի գերագույն կոմիսար նշանակեց դե Մարտելին:

¹¹⁹ „La Défense“, Paris, 30 Décembre 1930.

¹²⁰ W. Z. Laqueur, Communism and Nationalism in the Middle East, London, 1957, p. 327.

Դե Մարտիլը սիրիական կառավարութեանը հանձնեց Ֆրանսա-սիրիական պայմանագրի մի նոր վարիանտ: 1933 թ. նոյեմբերի 21-ին այն քննարկման դրվեց պառլամենտում, սակայն չբավարարելով ժողովրդի պահանջներին, մերժվեց: Երկիրը նորից ակեկոծվեց: Դե Մարտիլը ձեռք առավ մի շարք միջոցներ «իր կամքը սիրիական նացիոնալիզմին պարտադրելու համար»¹²¹: Դրանցից մի քանիսը վերաբերում էին հայերին: Նրա կարգադրությամբ արգելվեցին հայկական հրապարակային հավաքույթները և այլն¹²²: Իսկ դեկտեմբերի 28-ին: Սիրիայի և Լիբանանի հայութեան ներկայացուցիչներին գերագույն կոմիսարիատ հրավիրելով, դե Մարտիլը ազդարարեց. «Հայ ժողովուրդը պետք չէ քաղաքականութեամբ զբաղվի այս երկրին մեջ»¹²³: Սակայն նրան չհաջողվեց պառակտել արաբ և հայ աշխատավորների միասնությունը:

1934 թ. դե Մարտիլը, ցրելով պառլամենտը, սրեց Ֆրանսա-սիրիական հակասությունները: Սիրիայի համարյա բոլոր քաղաքներում բարձրացավ ազգային-ազատագրական շարժման հզոր ալիք, տեղի ունեցան արյունահեղ ցույցեր, սրոնց ընթացքում աշխատավորները բազմիցս բախվեցին ոստիկանության հետ, եղան սպանվածներ ու վիրավորներ: Կալանքի վերցվեցին հարյուրավոր աշխատավորներ, որոնց թվում կային 19 հայեր: Դրանցից կոմունիստներ Տիգրան Ալթունյանը և Սիսակ Թեյլալյանը դատապարտվեցին 6, ուրիշներ էլ 3 կամ 2 ամիս արգելափակման¹²⁴: Այդ առթիվ «Հումանիտե» թերթը գրել է. «Չնայած մոլեգնող տեռորին Սիրիայի քաջարի կոմկուսը կանգնած է աշխատավորության պայքարի ավանգարդում»¹²⁵:

¹²¹ Catroux, Deux Missions en Moyen-Orient, p. 142.

¹²² «Հասկ», Անթիլիաս, 1933 թ., էջ 67:

¹²³ Նույն տեղում:

¹²⁴ «L'Humanité», Paris, 22 Juillet 1934.

¹²⁵ Նույն տեղում:

1935 թ. փետրվար-մարտ ամիսներին ժողովրդական ղանգվածների պայքարը ստացավ դե Մարտելի վերականգնած ծխախոտի ֆրանսիական մենաշնորհի (Ռեժի) դեմ ուղղված բողոքի ձև: Ժողովուրդը բոյկոտի ենթարկեց ֆրանսիական կապիտալին պատկանող տրանսպորտի, էլեկտրականության և, մասնավորապես, ծխախոտագործական ձեռնարկությունները: «Ալ-Նիդա» թերթը գրել է. «Հայերն էլ մասնակցեցին ծխախոտագործական Ռեժիի դեմ ուղղված բոյկոտին...: Երեկ Բեյրութի փողոցներում նրանք ցուցադրական ձևով այրեցին ծխախոտի պաշարներ»¹²⁶:

1936 թ. սկզբներին ազգային-ազատագրական պայքարը հասավ իր բարձրակետին: Հունվարի 11-ին Դամասկոսում Սիրիայի ազգային հերոս Իբրահիմ Հանանոյի հիշատակին կազմակերպված սգերթը վերածվեց հակաիմպերիալիստական վիթխարի ցույցի: Ոստիկանությունը կալանքի վերցրեց ալ-Կուֆլա ալ-Վաթանիյա կուսակցության ղեկավարներից շատերին և փակեց նրա ակումբները: Հունվարի 19-ին ժողովուրդը, հավաքվելով Ումմայանների մզկիթում, ուղղվեց դեպի ալ-Կուֆլա ալ-Վաթանիյա կուսակցության ակումբները և դրանք բռնի բանալու փորձ կատարեց: Ոստիկանությունը կրակ բացեց, եղան սպանվածներ և վիրավորներ: Հունվարի 20-ին սկսվեց ընդհանուր գործադուլ, որը տևեց 42 օր, զիջումների մղելով իմպերիալիստներին:

Հունվարի 27-ին օպոզիցիայի ղեկավարները հատուկ հուշագրով դե Մարտելից պահանջեցին՝ վերաբանալ ալ-Կուֆլա ալ-Վաթանիյա կուսակցության ակումբները, աքսորավայրից վերադարձնել Ֆախրի Բարուդիին և Սեյֆ էդդին ալ-Մամունին, ազատ արձակել կալանքի վերցված քաղաքացիներին, գործադրել Սահմանադիր ժողովի կազմած սահմանադրությունը, մանդատը վերացնել և հայտարարել Սիրիայի անկախությունը:

¹²⁶ النداء، بيروت، ٥ مارس ١٩٣٥

Մինչև փետրվարի վերջերը բոլոր գլխավոր քաղաքներում շարունակվեցին հակաիմպերիալիստական արյունահեղ յուլյեերը: Փետրվարի 26-ին դե Մարտեիը համաձայնվեց գոհացում տալ օպոզիցիայի պահանջներին, առկախ թողնելով միայն մանդատի վերացման և Սիրիայի անկախության վերաբերյալ պահանջը: Ալ-Կուֆլա ալ-Վաթանիյա կուսակցությունը մերժեց դե Մարտեիի պատասխանը և փետրվարի 28-ին Դամասկոսում գումարեց բողոքի ժողովրդական միտինգ, որի ճնշման ներքո ֆրանսիական իմպերիալիստները խոստում տվեցին օպոզիցիայի բոլոր պահանջները կենսագործելու մասին: Այդ բանից հետո ալ-Կուֆլա ալ-Վաթանիյա կուսակցության լիդերներից Հաշեմ ալ-Աթասին և դե Մարտեիը համաձայնագիր ստորագրեցին Սիրիայի ժողովրդի ազգային պահանջների համապատասխան պայմանագիր կնքելու մասին:

1936 թ. սեպտեմբերի 9-ին Փարիզում կնքվեց ֆրանսասիրիական պայմանագիրը, որով մանդատը վերացվում էր, գերագույն կոմիսարը փոխարինվում էր ֆրանսիական դեսպանով, Սիրիան հռչակվում էր միասնական, անկախ և սուվերեն պետություն, որի կազմի մեջ մտնում էին Ալավիտը, Ջեբել Դրուզը և Ալեքսանդրետի ավտոնոմ սանջակը: Սիրիան Ֆրանսիայի հետ կապվում էր նաև ռազմական դաշինքով, որով Ֆրանսիային իրավունք էր տրվում ռազմա-օդային ուժեր պահելու Սիրիայի տերիտորիայում և այլն: Ֆրանսասիրիական պայմանագիրը ուժի մեջ էր մտնելու ֆրանսիական պառլամենտի վավերացումից հետո միայն, ոչ ավելի ուշ քան 1939 թվականը, Համանման պայմանագիր կնքվեց նաև Լիբանանի հետ: Այդ պայմանագիրը Սիրիայի ժողովրդին ամբողջովին շաղատագրեց Ֆրանսիայի կախվածությունից, սակայն այն առաջընթաց խոշոր քայլ էր դեպի Սիրիայի լիիրավ անկախությունը:

1928—1936 թթ. հայերի մասնակցությունը Սիրիայի ազգային անկախության պայքարին պայմանավորված էր իմպերիալիստների հարուցած ազգամիջյան թշնամանքի

բազմատեսակ խոչընդոտների հաղթահարումով: Հայ աշխատավորներին հաջողվեց, շնորհիվ արար աշխատավորության հետ ստեղծված ինտերնացիոնալ եղբայրական կապերի, մեծ մասամբ փարատել փոխադարձ անվստահության մթնոլորտը և պատվավոր դեր կատարել Սիրիայի ժողովրդի հակաիմպերիալիստական պայքարում:

Հաղթանակից հետո պատշաճը հատուցելով հայերին, ալ-Կուֆլա ալ-Վաթանիյա կուսակցության ղեկավարներից դոկտ. ալ-Ջաբրին «ալ-Իթթիհատ» թերթում գրել է. «Մենք, սուրիացիներս հայերը կհարգենք, անոնց առավելությունները՝ աշխատասիրությունը և ուղղամտությունը կգնահատենք... Շատ կփափաքինք որ հայ տարրը ինքզինքը հյուր կամ օտար չկարծե, այլ իր հարազատ երկրին մեջ զգա»¹²⁷: Բացի այդ, օպոզիցիայի ուրիշ ականավոր ներկայացուցիչներ, այցելելով Դամասկոսի և Հալեպի ազգային առաջնորդարանները, գոհունակություն են հայտնել ազգային անկախության պայքարում հայերի ցույց տված լրջության և հասունության համար»¹²⁸:

ՍԻՐԻԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԾԱԿԱՏԸ: ԱԼԵՔՍԱՆԴՐԻՆՏԻ ՍԱՆՋԱԿԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅՆՐԸ

Գերմանիայում ֆաշիզմի իշխանության գլուխ բարձրանալը թևավորեց տարբեր երկրների ռեակցիոններներին:

Ֆաշիստական խմբեր հանդես եկան նաև արաբական երկրներում: Սիրիական ազգային կուսակցությունը (Հիդրալ-Ղովմի), որի ծրագիրը համարյա ամբողջապես արտագրված էր գերմանական ֆաշիզմի ծրագրից, ճյուղավորվել էր Սիրիայում և կիրանանում: Գերմանա-իտալական ֆաշիստներն ակումբներ էին հաստատել Բեյրութում, Դամաս-

127 Մեջբերումն ըստ «Նոր լուրի», Պուխ, 4 հուլիսի 1936:

128 Նույնը, 26 սեպտեմբերի 1936:

կոստւմ և իրենց կառքին լծել բուրժուական ռեակցիոն կազմակերպութիւններին:

1935 թ. Մոսկվայում գումարվեց Կոմիտեերնի 7-րդ հերթական կոնգրեսը, որը, քննարկելով Ֆաշիզմի դեմ պայքարի հարցը, կոչ արեց բոլոր հակաֆաշիստական ուժերին՝ հանուն դեմոկրատիայի, խաղաղութեան և աշխատավորների դրութեան բարելավման պայքարի դուրս գալ ֆաշիզմի դեմ: Գաղութային և կախյալ երկրներում կոմկուսները պետք է ձգտեն միավորել բանվոր դասակարգի, գյուղացիութեան, արհեստավորների և ազգային բուրժուազիայի ազատագրական շարժումները, հասնել միասնական հակաֆաշիստական-հակաֆաշիստական ճակատի ստեղծմանը: Արձագանքելով Կոմիտեերնի կոչին, Սիրիայի և Լիբանանի կոմունիստական կուսակցութիւնը կազմեց Սիրիայի հակաֆաշիստական ճակատը, որի օրգանական մի օղակը հանդիսանում էր նաև Սիրիահայ ժողովրդական ճակատը:

Սիրիահայ ժողովրդական ճակատը կյանքի կոչվեց 1936 թ. հուլիսի 4-ին Հալեպում, «հակադաշնակցական, շեղոք ու խորհրդային Հայաստանի համակիր» տարրերի նախաձեռնութեամբ: Հայ աշխատավորական միութիւնը, Հընչակյան և Ռամկավար կուսակցութիւնները, ընդունելով «լայն ժողովրդական ճակատի մը անհրաժեշտութիւնը, մասնակցեցան անոր պաշտոնապես»¹²⁹: Հուլիսի 19-ին հրապարակվեց Սիրիահայ ժողովրդի ճակատի՝ «Հայ ժողովրդին, խորհրդային Հայաստանի համակիր բոլոր կազմակերպութիւններուն և անհատներուն» ուղղված կոչ-հայտարարութիւնը, որտեղ ասված էր. «Սուրիահայութեան ցավալի ու դժնդակ ապրելակերպը տարիներէ ի վեր վատթարացման ուղիով կընթանար: Տնտեսապէս հյուծման ենթակա, քաղաքական ու մշակութային մարզերու մեջ բրտորեն ճնշված Սուրիո մեջ, հայութիւնը չէր կրնար արդեն ունենալ լուսավոր ապագայի ոչ մեկ հեռանկար: ...Սակայն, այս տարվան

129 ԳԱ ԱՍ արխիվ, ֆ. 5, բ. 1, վ. 5:

առաջին ամիսներուն քաղաքական դեպքերը գահավեժ արագութեամբ հիմնական փոփոխութեան ենթարկեցին կացութեան տվյալները: Սուրիո մեջ ընդհանուր գործադուլը ու սպառնացող ապստամբութիւնը վերջ դրավ բռնակալութեան շրջանին... տալով մեզի ազատութիւններու շրջանի մը անմիջական հեռանկարը և ազատ աշխատանքի կարելիութիւնները»¹³⁰,

Սիրիահայ ժողովրդական ճակատի պայքարը ուղղված էր Սիրիայի ֆաշիստական գործակալների դեմ: Նշելով, որ Դաշնակցութիւնը «ամենակատաղի հակախորհրդային իմպերիալիզմի գործիք» ծառայելուց հետո, հասել է այնտեղ, որ զբաղվում է «Հիտլերի ու ճապոնական արյունարբու ֆաշիստներու լորձնաշուրթն գովաբանութեամբ», կոչը շեշտում է. «...գաղութահայ ամենահետադիմական տարրերու ներկայացուցիչ այս կազմակերպութիւնը, ստանձնելով Սուրիո մեջ օտար տերերու հլու գործակատարի դերը, վտանգեց այս երկրի հայութեան նույնիսկ ֆիզիկական գոյութիւնը»¹³¹: Իրացի այդ, «խորհրդային Հայաստանի և սուրիահայ ժողովրդի միջև կապերու սերտացումը» պայմանավորելով «զանգվածներու մոտ Դաշնակցութեան տարիներու ընթացքին ձևավորած տրամադրութիւններու ու հոգեբանութեան հեղաշրջումով», կոչը առաջարկում էր «լուսաբանական ու կազմակերպչական» աշխատանք կատարել զանգվածների մեջ, «ոգի ի բռին լծվիլ վերաշինացներու, Հայաստանի օգնութեան կոմիտեի ու բարեգործականի մասնաճյուղերու խիտ ցանցով մը բովանդակ Սուրիո շրջանները կապել գործին»¹³²: Այդ տեսակետից կարևոր միջոցառում էր համարվում նաև Սիրիայի հայերի շրջանում Սովետական Հայաստանի մամուլի ծավալումը, դրականութեան և արվեստի նվաճումների պրոպագանդումը:

130 Նույն տեղում:

131 Նույն տեղում:

132 Նույն տեղում:

Սիրիահայ ժողովրդական ճակատը խոշոր նշանակու-
թյուն էր տալիս հայ-արաբական բարեկամության խորաց-
մանը: Արաբ ժողովրդի հետ ընդ ապրելակերպ մը ստեղ-
ծելու» և Սիրիայի հայության «բարօրությունը ապահովելու»
համար, կոչը անհրաժեշտ էր համարում բոլոր միջոցներով
ցույց տալ, որ «Սուրիո կատարյալ ազատագրումն ու առաջա-
դիմական ձգտումները միմիայն հրձվանք կներշնչեն հայ
ժողովուրդի գիտակից զանգվածներուն»¹³³: Ի նկատի ունե-
նալով այն, որ Ֆրանսիական իմպերիալիզմի հետ դաշնակ-
ների գործակցության հետևանքով արաբ հասարակայնու-
թյան որոշ խավեր անբարյացակամ վերաբերմունք էին
ցուցաբերում հայերի նկատմամբ, Սիրիահայ ժողովրդական
ճակատը կոչ վեր անում գործնականապես փաստել «...մեր
տեղացի եղբայրներուն, թե հայ ժողովուրդը այս երկրի ան-
կախության դեմ ոչ մեկ ձգտում ունի պաշտպանելիք, թե
պատրաստ է հայ մշակույթի կողքին զորացնելու արաբ լեզ-
վի ու մշակույթի ուսուցումը մեր կրթական հաստատություն-
ներեն ներս, թե հայ բանվորն ու աշխատավորը միմիայն
երկրի ընդհանուր շահերուն նվիրված, իրենց արաբ եղբայր-
ներու հետ ձեռք-ձեռքի, հավաքաբար երկրի առաջադիմու-
թյան ու աշխատավորության շահերու պաշտպանության հա-
մար գործակցելու պատրաստ են»¹³⁴: Բարձր գնահատելով
աշխատավորական զանգվածների համատեղ տնտեսական
պայքարի նշանակությունը՝ երկու ժողովուրդների բարեկա-
մական փոխադարձ կապերի ընդլայնման գործում, Սիրիա-
հայ ժողովրդական ճակատը պահանջում էր, որ «արհես-
տակցական միություններու մեջ իրեն արժանի տեղը գրավե-
հայ աշխատավորությունը և արաբներուն ցույց տա տնտե-
սական մարզի մեջ ևս այն շահերու համերաշխությունը, որ
կկապի հայն ու արաբը»¹³⁵:

133 Նույն տեղում:

134 Նույն տեղում:

135 Նույն տեղում:

Սիրիահայ ժողովրդական ճակատն երկար կյանք չունեցավ, փաստորեն տեեց մինչև 1937 թ. հունիս ամիսը, Ֆրանսիայում ժողովրդական ճակատի կառավարութայն հրաժարվելը: Ֆրանսիական նոր կառավարութայն ներկայացուցիչները, «կարմիր վտանգի» դեմ պայքարելու լողունգի ներքո, Սիրիայի դռները լայն բացեցին ֆաշիզմի առաջ... և հալածանք ծավալեցին դեմոկրատական կազմակերպությունների դեմ: Այդ պայմաններում Սիրիահայ ժողովրդական ճակատը համարյա չկարողացավ գործել և քայքայվեց:

* * *

Ֆրանսիական նոր կառավարությունը, հրաժարվելով մանդատը վերացնելու պարտավորությունից, խոչընդոտում էր ֆրանսա-սիրիական պայմանագրի վավերացումը: Այդ հանգամանքից օգտվելով, թուրքական կառավարությունը Ազգերի լիգայում ձայն բարձրացրեց, թե Ֆրանսիան իրավունք չունի սիրիական մանդատը պայմանագրով փոխարինելու, քանի տակավին չէ լուծված Ալեքսանդրետի սանջակի հարցը:

Նտմյունխենյան միջազգային իրադրութայն պայմաններում ֆրանսիական իմպերիալիստները նախ հռչակեցին երկրամասի անկախությունը, իսկ հետագայում համաձայնվեցին որ այն կցվի Թուրքիային, խախտելով մի շարք միջազգային պայմանագրեր: Առաջին հերթին խախտվեցին 1921 թ. հոկտեմբերի 20-ի ֆրանսա-թուրքական համաձայնագրի 8-րդ և Լոզանի պայմանագրի 3, 16 և 27-րդ հոդվածները, որոնցով Ալեքսանդրետի սանջակը համարվում էր Սիրիայի բաղկացուցիչ մասը: Մանդատի 4-րդ հոդվածի համաձայն Ֆրանսիան պարտավորվել էր հոգալ այն մասին, որ Սիրիայի և Լիբանանի տերիտորիայից ոչ մի մաս չգրվեր ուրիշ պետության վերահսկողութայն ներքո ռալու, վարձելու կամ որևէ ուրիշ ձևով»¹³⁶, Սանջակի Թուրքիային հանձնումը հակասում

¹³⁶ „The Middle East Journal“, N. Y., 1956, № 4, p. 380.

էր դե Ժուլեանի ֆրանսիական կառավարութեան անունից 1926 թ. կատարած հայտարարութեանը, ինչպես նաև 1938 թ. հուլիսի ֆրանսա-թուրքական պայմանագրին, որտեղ պարզ ասված էր, որ Սանջակը տերիտորիալ խնդիր չէ Թուրքիայի համար: Իրավացիորեն, ականավոր իրավագետ Սելը նշել է. «Ֆրանսիան գործեց ապօրինի մի արարք...»¹³⁷: Ազգերի լիգան հավանութուն չտվեց Սիրիայի հողային ամբողջականութեան դեմ գործված այդ ոտնձգութեանը:

Թուրքական կառավարությունը Ալեքսանդրետի ավտոնոմ սանջակը զավթելու որպես հիմնական փաստարկ առաջ էր քաշում երկրամասի ազգաբնակչության իբր «ճնշող մեծամասնությունը» կազմող թուրքերի անվտանգությունը: Իհարկե այդ փաստարկը կեղծ էր: Ըստ թուրքական խարդախված տվյալների երկրամասի 300.000 բնակիչներից 240.000-ը թուրքեր էին, 25.000-ը հայեր, 20.000-ը սուննի արաբներ և 15.000-ը տարբեր քրիստոնյաներ: Իրականությունից այնքան հեռու էին այդ տվյալները, որ դրանց հետ համաձայնվել չէին կարող մինչև անգամ ֆրանսիական իմպերիալիստները, որոնք պակաս միջոցներ չէին գործադրել ի հաշիվ արաբների և մյուս փոքրամասնությունների մեծացնելու համար «թուրք ցեղին պատկանող բնակիչների» թիվը: Ըստ նրանց 1936 թ. կատարած մարդահամարի երկրամասում ապրում էին շուրջ 225.000 բնակիչներ, այդ թվում 85.242

137 Նույն տեղում:

Իրականության չի համապատասխանում առանձնապես հայերի թվի վերաբերյալ տվյալը: Երկրամասում ապրում էին ավելի քան 40.000 հայեր: 1937 թ. Ալեքսանդրետում կային 8227, Կըրըկ խանում՝ 4.388, Հալկաշեն, Վաիդնշեն և Սուր Սու գյուղերում՝ 3.000, Բեյլանում և շրջակայքում՝ 4.000, Քեսալում և շրջակայքում՝ 7.000, Ջեբել Մուսայում և շրջակայքում՝ 10.000, Անտիոքում՝ 1.000 հայեր: Դրանցից բացի կային նաև 5-6.000 կաթողիկե և բողոքական հայեր: Այսպիսով կարելի է բնշույնել, համարել Ալեքսանդրետի հայոց առաջնորդ խոզ Աջապահյանի պնդումը, այն մասին, որ 1937 թ. երկրամասում ապրում էին շուրջ 43.000 հայեր (Ա. Բայրամյան, Ալեքսանդրետի սանջակի իրավական ստատուսը, տե՛ս ՀՍՍՀ ԳԱ Տեղեկագիր, 1964 թ. № 12, էջ 29):

Թուրքեր (39%), 62.026 ալավի-արաբներ (28%), 22.461 սուննի-արաբներ (10%), 24.911 հայեր (11.36%), 18.051 քրիստոնեական տարբեր աղանդներ (8.16%), 4.831 քրդեր, 1.084 հրեաներ, շիրքեզներ¹³⁸: Թուրքերը կազմում էին Ալեքսանդրիտի սանջակի ամենաբազմամարդ փոքրամասնությունը, բայց երբեք ճնշող մեծամասնությունը:

Սանջակը Թուրքերին հանձնվեց հակառակ երկրամասի լրնակչության ճնշող մեծամասնության կամքին: Բացի քեմալական «Հալք էվի»-ների խմբակցությունից, մյուս բոլոր քաղաքական կազմակերպությունները՝ Ազգային համագործակցության լիգան (ալ-Ասբաթ ալ-Ամալ քառվմի), ալ-Կուֆլա ալ-Վաթանիյա կուսակցության Սանջակի կազմակերպությունը, Սանջակցիների միությունը, Սիրիայի և Լիբանանի կոմունիստական կուսակցության Սանջակի կազմակերպությունը, ինչպես նաև Հնչակյան, Ռամկավար և Դաշնակցություն կուսակցությունների տեղական մարմինները, արտահայտելով երկրամասի ոչ-թուրք ազգաբնակչության քաղաքական ձգտումները, հակադրվում էին Սանջակը թուրքերին հանձնելու պլաններին¹³⁹, Հայկական կազմակերպությունները, ներքին տարածայնություններ ունենալով հանդերձ, Սանջակի հարցում միասնական էին, հանդես էին գալիս արաբների կողքին, մասնակցում նրանց՝ երկրամասը թուրքերից պաշտպանելու պայքարին: Լոնդրիզը նշել է.

138 Նույն տեղում:

139 Ազգային համագործակցության լիգան հիմնականում արտահայտում էր ալավի-արաբների, իսկ ալ-Կուֆլա ալ-Վաթանիյա կուսակցությունը՝ սուննի-արաբների քաղաքական ձգտումները՝ Սիրիայի կազմում մնալու կապակցությամբ: Սանջակցիների միությունը, որը կազմվեց 1937 թ. մայիսին, կողմնակից էր Ազգերի լիգայի կողմից հաստատված նոր ստատուսին, պայմանով սակայն, որ Սանջակը մնար Սիրիայի կազմում: Ինչ վերաբերում է կոմունիստներին, ապա նրանք պաշտպանում էին Սիրիայի հողային ամբողջականությունը: Լոնդրիզը գրել է. «Ալեքսանդրիտում կոմունիստական կուսակցությունը հանդես բերեց կուսակազմակերպվածություն և հնարավոր բոլոր միջոցներով պայքար մղեց սիրիա-

«Սանջակում ամուր էր հայ-արաբական միասնականութիւնը»¹⁴⁰,

Ալեքսանդրեոսի սանջակը դավթելու ուղղութեամբ Թուրքիայի նկրտումները որոշակի կերպով դրսևորվեցին 1934 թ. ապրիլի 27-ին, Այնթապի նահանգապետի Անտիոք այցելութեան կապակցութեամբ: Թուրք բնակչութիւնը նրան դիմավորեց «անկցին արաբները, փրկեցեք մեզ» քաջականչութիւններով¹⁴¹: Այդ այցելութիւնը գնահատելով որպէս Սանջակը Թուրքերին հանձնելու նախաքայլ, երկրամասի ոչ Թուրք ազգաբնակչութիւնը լրջորեն անհանգստացավ և խուճապի մատնվեց: Ֆրանսիական իմպերիալիստները, որոնց արտոնութեամբ տեղի էր ունեցել այդ այցը, գնեցաւ շուտովինգերին Սանջակ ուղարկեցին հավանական հակաիմպերիալիստական ելույթների առաջն առնելու համար: Գնեցաւ լրջ, հավաստիք տալով, որ Ալեքսանդրեոսի սանջակը երբեք դուրս չի բերվի Սիրիայի կազմից, արժանացավ երկրամասի արաբ և հայ բնակչութեան խանդավառ ընդունելութեանը¹⁴²:

Ֆրանսա-սիրիական պայմանագրից հետո 1936 թ. դեկտեմբերին հանդես գալով Ազգերի լիգայի խորհրդում, Թուրքիայի արտաքին գործերի մինիստր Ռուշդի Արասը պահանջեց, որ անկախութիւն տրվի Ալեքսանդրեոսի սանջակին: 1937 թ. հունվարին Ֆրանսիայի և Թուրքիայի կառավարութիւնները սկզբունքային համաձայնութիւն կայացրին Սանջակը «առանձին քաղաքական միավորի» վերածելու մասին: Իսկ

կան դատի օգտին» (Syria and Lebanon under... p. 277): Պետք չէ անտեսել նաև այն, որ Սանջակում Թուրք համարված ազգաբնակչութեան զգալի մասը բաղկացած էր սոցիալ-տնտեսական զարգացման տարբերաստիճանի վրա գտնվող բազմաթիվ էթնիկական խմբերից՝ Թուրքմեններից, քրդերից, լեբնոնցիներից, Թուրքախոս արաբներից և այլն, որոնց Թուրքական համայնքի հետ ունեցած միակ կապը լեզուն էր:

¹⁴⁰ H. S. Longrigg, Syria and Lebanon under French Mandate, London, 1958 p. 239,

¹⁴¹ „L'Orient“, 3 Mai 1934.

¹⁴² Նույն տեղում, Գնեցաւ լրջ եղել է նաև Ջերել Մուսայում, որտեղ հայերը նրա պատվին կազմակերպել են «չեք մ» ու «վիթիսարի» ընդունելութիւն: Ներկա են եղել շուրջ 10.000 հայեր (նույն տեղում):

1938 թ. հուլիսի 2-ին երկրամասը դրվեց Ֆրանսիայի և Թուրքիայի համատեղ վերահսկողության ներքո: Այդ քայլը, որով երկրամասը փաստորեն անջատվում էր Սիրիայից, խոր վրդովմունք առաջացրեց ամբողջ երկրով մեկ: Դամասկոսում ստեղծվեց «Ալեքսանդրետի սանջակի պաշտպանության կոմիտե» դեկտ. Սեյֆ-էզդին Մաամունի նախագահությանը: «Ժողովուրդի ձայնը» գրում է, որ Սիրիայի և Լիբանանի կոմունիստական կուսակցության հայկական հատվածի և Հնչակյան կուսակցության ներկայացուցիչները այցելեցին Սանջակի պաշտպանության կոմիտեի նախագահին և նրան հայտնեցին Սանջակի պաշտպանության գործին մասնակցելու՝ հայերի պատրաստակամության մասին¹⁴³: Այդ կոմիտեի աշխատանքներին՝ իբրև Սիրիայի հայության ներկայացուցիչներ մասնակցեցին Հակոբ Բերբերյանը և Հակոբ Խաչմանյանը¹⁴⁴:

1938 թ. հուլիսի 5-ին թուրքական զորքը մուտք գործեց Սանջակի գլխավոր քաղաք Ալեքսանդրետ: Հուլիսի 10-ին Սանջակի պաշտպանության կոմիտեի հովանավորության ներքո տեղի ունեցավ Դամասկոսի հայության բողոքի միտինգը: Ճառախոսները դրվատեցին երկրամասի արաբ և հայ ազգաբնակչության ցուցաբերած տոկոսնությունն ու դիմադրական կորովը, նրանց եղբայրական համագործակցությունը: Սեյֆ-էզդին Մաամունը հայտարարել է. «Մեծա-

143 «Ժողովուրդի ձայն», 3 հուլիսի 1938: 1930—1940-ական թվականներին Սիրիայի և Լիբանանի կոմունիստական կուսակցության ղեկավար օրգանների հայ կոմունիստները քաղաքական որոշակի նկատառումով հաճախ հանդես են եկել «կոմունիստական կուսակցության հայկական հատվածի» անունից: Եփոթության տեղիք շտալու համար նշենք, որ Սիրիայի և Լիբանանի կոմունիստական կուսակցությունը կառուցված է ինտերնացիոնալիզմի սկզբունքով, արաբ, հայ և ուրիշ ազգության պատկանող կոմունիստները գործում են միևնույն կազմակերպությունում:

144 Նույն տեղում: Հակոբ Բերբերյանը Սիրիայի և Լիբանանի կոմունիստական կուսակցության անձնվեր աշխատողներից էր, որոշ ժամանակ խմբագրել է Հայֆայի «Միություն» շաբաթաթերթը: Մահացավ Նրևանում 1948 թ.:

պես կգնահատենք մեր հայ եղբայրներու դիրքը Սանջակի հարցի մեջ: Արդարև, մենք բոլորս ալ այս արաբական երկրի դավականներն ենք...: Անցյալին ձեզ մեր դեմ, մեզ ալ ձեր դեմ գրգռեցին: Անոնք մեր երկու ժողովուրդներուն ալ թշնամիներն էին: Այժմ մենք բոլորս արաբական հայրենիքի միասնական զավակներն ենք, և այդպես ալ կշարունակենք մեր պայքարը»¹⁴⁵: Միտինգի մասնակիցների անունից Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստրին և գերագույն կոմիսարին ուղարկվեց հետևյալ բանաձևը, — «Մենք, Քասր էլ-Բեկորի մեջ հավաքված դամասկոսահայութունս, հովանավորությամբ Ալեքսանդրետի սանջակի պաշտպան կոմիտեի և նախաձեռնությամբ հնչակ-համայնավար (հնչակյանների և հայ կոմունիստների, Հ. Ք.) համագործակցության, լսելի վերջ միթինկի հարգելի նախագահին և բանախոսներուն ճառերը, բուն կերպով կբողոքենք Սանջակի բռնագրավման, թուրք բանակի մուտքին, դեմոկրատական կաղամակերպություններու լուծման, աշխատավոր գյուղացիության հողերու գրավման և սարսափի մեթոտներու դեմ, որ ի գործ կդրվի ոչ թուրք (հայ, արաբ հույն, ալևի) խաղաղ բնակչության դեմ, Կհրավիրենք սուրիահայ ժողովուրդը... կանգնիլ արաբ ժողովուրդի կողքին, պաշտպանելու համար Սանջակի և Սուրիո ժողովուրդներու խաղաղությունը, եղբայրությունը, հացը և կազմակերպության ազատությունը»¹⁴⁶: Սանջակի պաշտպանության օգտին ելույթներ ունեցան Հալեպի և Լաթակիայի հայերը:

Սանջակի պաշտպանության դիրքերում հանդես եկավ նաև Լիբանանի հայությունը: 1938 թ. հուլիսի 18-ին Բեյրութի Ա. Միկոյանի անվան ակումբում տեղի ունեցավ բազմամարդ միտինգ, ընդունվեց Սանջակի պաշտպանության կոմիտեի նախագահին ուղղված բանաձև, որտեղ ասված էր. «Մենք, ...Միկոյան ակումբի մեջ հավաքված հայերս, ներկա գրով կուզանք մեր խորին երախտագիտությունն ու համերաշխու-

145 Նույնը, 24 հուլիսի 1938:

146 Նույն տեղում:

Թյունը հայտնել Սանջակի պաշտպանության պատվարժան կոմիտեիդ, որ այս դժվար օրերուն, ազգասիրական գեղեցիկ գաղափարն ունեցավ Սանջակի նյութա-բարոյական օգնություն կազմակերպելու և՛ մարդասիրական, և՛ ազգասիրական ազնիվ գործի մը շուրջ համախմբելու Սուրիո բոլոր կազմակերպությունները, որոնց կարգին նաև հայ ժողովուրդի ներկայացուցիչները: Հավասարապես զգացված ենք և կբաժնենք Սուրիացի մեծ ազգին տրված անիրավ հարվածը, որը նույն ատեն ուղղված է մեզի՝ հայերու դեմ»¹⁴⁷:

Արարները և հայերը մինչև վերջն էլ պաշտպանեցին Սանջակը, բայց ֆրանսիական իմպերիալիստները որոշել էին երկրամասը թուրքերին հանձնել՝ շահելու համար նրանց բարեկամությունը: Սկսվեց արաբ և հայ ազգաբնակչության արտագաղթը: Թուրքական կառավարությունը գործադրեց ամեն հնարավոր միջոց հայերի արտագաղթի առաջն առնելու համար: Ակնբերտրեն, Թուրքիայի կառավարող շրջանների ստիպումով, Պոլսի հայոց պատրիարքը Հաթայ ուղարկեց Արսլանյան արք.-ին, որպեսզի հայերին հորդորի մնալ և գործակցել «իրենց թուրք եղբայրուն հետ»¹⁴⁸:

Արարների և հայերի արտագաղթը շարունակվեց ողբերգական պայմաններում: Ըստ ֆրանսա-թուրքական համաձայնագրի՝ մնալ շցանկացողները պարտավոր էին հաշվեհարդարի ենթարկել իրենց անշարժ գույքը և փոխարժեքը մուծել թուրքական կենտրոնական բանկ, այն՝ Թուրքիայում գործող օրենքների համաձայն արտասահման տեղափոխելու համար¹⁴⁹: Բացի այդ, նրանք պարտավոր էին միևնույն ձևով տնօրինել իրենց ունեցած առձեռն գումարների ձևակառուցությունը... Արգելվում էր 25 թուրքական լիրայից ավելի գումար ունենալ սահմանն անցնելիս: Բանկը պետք է մուծված գումարներից զեղչեր մեկնողի պարտքերը, իսկ մնացյալը նրան

147 Նույն տեղում:

148 «Ազգակ», 30 հունիսի 1930:

149 Նույն տեղում:

ուղարկեր ամսական 50 կամ 100 թուրքական լիրա չափով¹⁵⁰։
Վերջին հաշվով, այդ կարգադրությունը հանգում էր մեկնող-
ների ողջ կարողության բռնագրավմանը։

Մինչև 1939 թ. հուլիսը Ալեքսանդրետի սանջակի հա-
մարյա ամբողջ հայությունը տեղափոխվեց Սիրիա և Լի-
բանան։

**ՀԱՅ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԸ ՀԱԿԱՖԱՇԻՍՏԱԿԱՆ ՊԱՅՔԱՐՈՒՄ։
ՍԻՐԻԱՅԻ ԵՎ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ
ԵՎ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆԸ**

Եվրոպայում պատերազմը սկսվելուց հետո, Ֆրանսիայի
լիազոր պատվիրակ Պյուն Սիրիայում և Լիբանանում հայ-
տարարեց պատերազմական դրություն և անցավ բիրտ ու
բացահայտ կամայականության։ Սեպտեմբերի 29-ին օրեն-
քից դուրս հռչակվեց Սիրիայի և Լիբանանի կոմունիստական
կուսակցությունը, կալանքի վերցվեցին Ֆարաժալլա Հելուն,
Մուստաֆա Արիսը, ինչպես նաև բազմաթիվ հայ կոմունիստ-
ներ, այդ թվում Հովհ. Աղբաշյանը, Փանոս Արամայիսյանը,
Սերովբ Սյուկուկյանը, Մովսես Ղազարյանը և ուրիշներ։

Ֆրանսիայի կապիտուլացիայից հետո, Սիրիայում և Լի-
բանանում հաստատվեց վիշիական-ֆաշիստական վերա-
հսկողություն, որը սակայն երկար չտևեց, լիկվիդացվեց
1941 թ. հունիսի 8-ին բրիտանական և ազատ-ֆրանսիական
զորքերի համատեղ գործողությամբ։

Դրանով ազատություն ձեռք բերեցին Միյեմիյեում և
մյուս համակենտրոնացման ճամբարներում արգելափակված
բազմահազար բանվորները, գյուղացիները, ինտելիգեն-
ցիայի առաջավոր ներկայացուցիչները, ընդհատակից դուրս
եկավ Սիրիայի և Լիբանանի կոմունիստական կուսակցու-
թյունը, վերակազմակերպվեցին բացի գլխավոր քաղաքնե-

¹⁵⁰ Նույն տեղում։

րից նաև Զիրեյլի, Ակկարի, Կեսրվանի, Ջահլեի, Քեկաայի, Զեբել Դրուզի և այլ վայրերի կոմունիստական կազմակերպուժյունները, աշխուժացավ Սիրիայի և Լիբանանի հակաֆաշիստական լիգան, ստեղծվեց Հայաստանի պաշտպանության Սիրիայի և Լիբանանի հայկական լիգան և այլն: Վերըստին սկսեցին լույս տեսնել «Սաութ ալ-Շաար» օրաթերթը և նրա հայերեն հրատարակությունը՝ «Ժողովուրդի ձայնը», հիմնադրվեց Հակաֆաշիստական լիգայի օրգան «աթ-Քարիքը», որի շուրջ համախմբված էին Օմար Ֆախուրին, Անտուն Քաբեթը, Ռահիֆ էլ-Խուրին, Հովհ. Աղբաշյանը և մի շարք ուրիշ դեմոկրատ մտավորականներ: Ուժեղ թափ ստացավ հակաֆաշիստական պայքարը:

Արդարև, վիշիական-ֆաշիստական վերահսկողության լիկվիդացումով ամենևին էլ չե՛ր փարատվել ֆաշիստական վտանգը: Հինգերորդ զորասյան վարձկանները ծավալում էին քայքայիչ գործունեություն՝ Աթենքում հաստատված գերմանա-իտալական հետախուզության կենտրոնի հրահանգներով: Սիրիայում հայտնաբերվեց և ոչնչացվեց լրտեսական մի խումբ, որը կազմակերպել էին Շեկիբ Արսլանը և Իրաքի փախստական պրեմյեր Ղայլանին: Հալեպում ձերբակալվեցին հինգ դաշնակ պարաշյուտիստներ, երկուսը Իտալիայից, երեքը՝ Հունաստանից¹⁵¹: Իսկ դաշնակ «մարտականները» ահաբեկում էին առաջադեմ գործիչներին հակաֆաշիստական աշխուժություն ցուցաբերող աշխատավորներին¹⁵²: Բացի այդ, նրանք իրականանման լուրեր էին ծավալում «փախստական

151 Արևիվային մի վավերագրում ասված է, որ դաշնակ պարաշյուտիստները իչել են Սիրիայի Հոմա քաղաքի երկաթուղու կայարանի մերձակայքը: Նախ երեքը և օրեր վերջ երկուսը դնացքով մեկնել են Հալեպ, որտեղ և կապի մեջ են մտել դաշնակցական շեֆերից Հրաչ Փափազյանի հետ: Գործը բացվելով, ֆրանսիական անվտանգության գործակալները ձերբակալել են նրանց, 1942 թ. հունվարին նրանցից չորսին զնդակահարել են, իսկ մյուսը, թոգախտով վարակված լինելով, տեղավորվել է հիվանդանոց և ազատվել մահապատժից (ԳԱ ԱՍ արխիվ, ֆ. 5, բ. 1, վ. 8):

152 «Ժողովուրդի ձայն», 10 հունիսի 1942:

դարձած» սովետական ղեկավարների, արդեն «տապալված կամ տապալվելու վրա եղող» սովետական իրավակարգի, ֆաշիստներին «անձնատուր եղած» Ալեքսանդրիայի, ինչպես նաև Հիտլերի Սիրիա և Լիբանան հավանական այցելության մասին¹⁵³,

Մինչև պատերազմի սկսվելը դաշնակ շեֆերը, պաշտպանելով գերմանա-իտալական իմպերիալիստների գաղութային քաղաքականությունը, նրանց ծրագիրը «աշխարհի նոր բաժանման» մասին, պատրանքներ էին սնուցում այս անգամ էլ ֆաշիստական ինտերվենցիայով Հայաստանի իշխանությունը տիրանալու։ Նրանց ԱՄՆ-ի օրգանը գրել է. «Հայ կուսակցությանց ներկայացուցիչները պարտավոր են խուսափել Ճապոնի, Գերմանիայի և Իտալիայի հանդեպ թշնամական դիրք բռնելի։ Անոնք վայրկյան մ'իսկ պետք չէ մոռնան, որ իրենց այսօրվա անզգույշ, գրգռիչ ընթացքով կրնան վաղը մեծապես վնասել հայ ժողովրդի գոյամարտին և ազատամարտին»¹⁵⁴։ Պատերազմը սկսվելուց հետո, նրանք ուղղակի կոչ ւէին անում՝ «Հիտլերի դեմ պատերազմը դադարեցնել և կնքել Գերմանիայի համար պատվավոր հաշտություն, որովհետև Գերմանիան կոմունիզմի ամենամեծ թըշնամին է։ Բոլոր մեծ պետությունները պետք է օգնեն Հիտլերին, որպեսզի նա հարձակվի Սովետական Միության վրա, փրկի աշխարհը խոշորագույն վտանգից՝ կոմունիզմից...»¹⁵⁵։ 1942 թ. դեկտեմբերի 15-ին Բեռլինում կազմվեց այսպես կոչված «Հայ ազգային խորհուրդը», որի կազմում էին Գրո Կանայանը, Արտաշես Աբեղյանը, Աբրահամ Գյուլխանդանը և ուրիշներ։ 1943 թ. փետրվարի 15-ին այդ խորհուրդը հատուկ հայտարարությամբ համաձայնվում էր «ազատագրված» Հայաստանը դնել Հիտլերի «պաշտպանության» ներքո և նրան հնարավորություն տալ շահագործելու «երկրի բնական հարստությունները»...։ Նրա ծրագրի մեջ մտնում

153 Նույնը, 17 օգոստոսի 1942:

154 «Հայրենիք», 28 մարտի 1939:

155 „The Los Angeles Times“, Los Angeles, 8 January 1940.

էր նաև հայ ժողովուրդը Հիտլերի անոր միտքով և ուղղութեամբ» վերադաստիարակելու և այն «Մերձավոր արևելքի մեջ գերմանական ազդեցութիւնն ամրապնդելու» նպատակին ծառայեցնելու խնդիրը¹⁵⁶,

Սփյուռքահայ աշխատավորները «հայկական ողջմտութեան դեմ» էին համարում ֆաշիստների հետ դաշնակիցների համագործակցութիւնը¹⁵⁷, Նրանք «հայութեան երջանիկ ապագայի մը ապահովման» երաշխիքը տեսնում էին դաշնակիցների հաղթանակի մեջ¹⁵⁸, «Դաշնակիցներու կողքին ենք,—գրում էին նրանք,—որովհետև անոնց դատը մեր ազգին և Սովետ. Հայաստանին ալ դատն է. որովհետև համոզված ենք, թե դաշնակիցներու հաղթանակը Սովետ. Հայաստանին և մեր գաղութահայերու ալ հաղթանակն է»¹⁵⁹: Հա-

156 Ե. Տ ա տ ու Ր յ ա ն, Հայ ժողովուրդի ներքին թշնամիներուն դեմ, Փարիզ, 1945 թ. էջ 29—30: Այդ հայտարարութիւնը հանդիսանում է դաշնակիցների ֆաշիստների հետ սովետական ժողովուրդների դեմ ազդեցիկ մասնակցելու, անցյալում ուրացված այդ իրողութեան հաստատումը: «Մեկնելով Մեծն Գերմանիո և իր պաշտպանութեան տակ գտնվող Հայաստանի միջև պատմական, քաղաքական, տնտեսական և մշակութային սերտ կապերին,—ասված է հայտարարութեան մեջ,—Հայ ազգային խորհուրդը իր բարձր պարտականութիւնը պիտի նկատե հիշյալ կապերը զորացնել և անբեկանելի դարձնել: Այս նպատակին կոչված են ասկե վերջ ալ, այժմ արդեն Գերմանիո կողքին վերջնական հաղթանակին և ազատութեան համար պայքարող գործուն հայկական օգնական ուժերը» (նույն տեղում, էջ 31):

157 «Ժողովուրդի ձայն», 22 մարտի 1942:

158 Նույնը, 30 մարտի 1942:

159 Նույնը, 18 հունիսի 1942 թ.: 1939—1940 թթ. Ֆրանսիայի դեմ գերմանաֆաշիստական ազդեցիկ օրերին սիրիահայ և լիբանանահայ աշխատավորների որոշ խմբեր պատրաստակամութիւն էին հայտնում ֆրանսիական բանակի շարքերում ֆաշիզմի դեմ կռիւլու համար (Ա. Ս. Թեմիրյան, Քեսապ, էջ 235): Սովետական Միութեան դեմ ֆաշիստական ազդեցիկից հետո այդ երևույթը ավելի ընդհանուր բնույթ ստացավ: Ձեն Ի ձեռին ֆաշիստների դեմ կռիւլ հայ աշխատավորները տողորված էին Սովետական Միութեան հաղթանակի անսասան հավատքով: Ազատ ֆրանսիական դրոշի ներքո կիբայում ժարտնչող հայ աշխատավորներից մեկը գրում էր. «Հիտլերի և Մուսոլինիի մահվան օրը մտեսցավ: Հաղթանակը մերն է, քանի որ մեր հետ ունինք Սովետական Միութիւնը» («Ժողովուրդի ձայն», 1 հունիսի 1942):

մանման դիրքերում էին կանգնած նաև արաբ աշխատավոր-
ները: 1942 թ. մայիսի 1-ին Դամասկոսում կայացած արաբ
բանվորների և ինտելիգենցիայի միտինգի բանաձևում աս-
ված է. «Արաբ ժողովուրդների շահը կապված է այն ճակատի
հետ, որը միավորում է Սովետական Միությանը, ազատ
Յրանսիան և ԱՄՆ-ի, մեծ Բրիտանիայի, Չինաստանի դեմոկ-
րատներին: Այդ ճակատի հաղթանակով պայմանավորված
է արաբ ժողովուրդների ազգային պահանջների և ազգային
անկախության իրականացումը»¹⁶⁰: Արաբ և հայ աշխատա-
վորների լավատեսությունը հիմնված էր հակաֆաշիստական
գինակցությունում Սովետական Միության ներկայության
փաստի վրա:

Թերթելով «Ժողովուրդի ձայն» օրգանի 1942—1943 թթ.
հավաքածուն տեսնում ենք հայ աշխատավորների նվիրվա-
ծությունը Սովետական Միության և Սովետական Հայաստա-
նին, նրանց բոցավառ ատելությունը ֆաշիստական վանդալ-
ների դեմ, որոնք հրեշտային պլաններ էին որոճում նաև Հա-
յաստանի և հայ ժողովրդի դեմ: Նրանք խորապես համոզ-
ված էին, որ հանուն դեմոկրատիայի ֆաշիզմի դեմ պայքա-
րելը նշանակում է պաշտպանել Սովետական Հայաստանը,
հայ ժողովրդի բազմադարյան մշակույթի նվաճումները, նրա
ստեղծած խաղաղ ու ազատ կյանքի բարիքները: Թերթը գրում
էր. «Հայաստանի ազատության ու առաջադիմության ճակա-
տագիրը կախված է նացիզմի ոչնչացումեն: Ներկայիս ամեն
հայու համար չկա ազգային ավելի գերագույն, ավելի սրբա-
զան պարտականություն, քան պայքարիլ նացիզմի դեմ... և
այն դավաճաններուն, որոնք կփորձեն հայ ժողովուրդին մեջ
ներմուծել անոր ազդեցությունը»¹⁶¹:

Հայ աշխատավորները Հակաֆաշիստական լիգայի եղ-
բայրական օգնությամբ ստեղծեցին «Հայաստանի պաշտ-

¹⁶⁰ صوت الشعب، ۳ ايار ۱۹۴۲

¹⁶¹ «Ժողովուրդի ձայն», 29 մարտի 1942:

պանութեան Սիրիայի և Լիբանանի հայկական լիգան», որը ծավալեց բավական արդյունավետ գործունեություն, պայքարելով հինգերորդ զորասւյան հայազգի վարձկաններին դեմ, օգնություն կազմակերպելով «Հայաստանի պաշտպան մարտիկներին» օգտին: 1942 թվականի մարտ ամիսը «Հայաստանի պաշտպան մարտիկներին օգնության ամիս» հայտարարելով, Լիգան հանգանակության ձեռնարկեց Սիրիայի և Լիբանանի հայության շրջանում: Նրա կոչում ասված է. «Գաղութահայերս, ի տես հայ զինվորի այս հերոսական կեցվածքին, շենք կրնար անտարբեր մնալ ու մեր բաժինը չբերել հայրենիքի պաշտպանության գործին: Երբ Հայաստանի մեր եղբայրները իրենց արյունով կնվիրագործեն հայրենի հողը, մեր վրա բարոյական ու ազգային պարտականություն կիյնա կարելի բոլոր միջոցները ի գործ դնել, իբրև հայ մեր հայրենասիրական պարտականությունը կատարել հայրենիքին և անոր պաշտպան զինվորին հանդեպ»¹⁶²: Իսկ հետագայում հայ աշխատավորները աշխույժ մասնակցություն ցուցաբերեցին «Սասունցի Դավիթ» տանկային զորասւյան համար միջոցների հանգանակությանը, որը ինչպես հայտնի է պատկերաց մեծ հաջողությամբ:

Հայաստանի պաշտպանության լիգան վայելում էր ժողովրդական լայն զանգվածների համակրանքը: Նրա կազմակերպած միտինգները՝ Հոկտեմբերյան հեղափոխության, Հայաստանում սովետական կարգերի հաստատման, կարմիր բանակի ստեղծման տարեդարձերի առթիվ, վերածվում էին հակաֆաշիստական վիթխարի ելույթի: Հայ աշխատավոր ժողովրդի այդպիսի հայրենասիրական կեցվածքը պաշտպանում էին նաև արարները: 1942 թ. հունիսի 28-ի միտինգում Զարաժալլա Հելուն նշել է. «Սովետական Հայաստանի հանդեպ մեր սրտերուն մեջ կա նույն սերը, ինչ սեր կա Սուրիո և Լիբանանի հանդեպ, որովհետև այս ազատ և անկախ Հա-

162 Նույնը, 2 մարտի 1942:

յաստանի մեջ մենք կտեսնենք բոլոր փոքր ժողովուրդներուն ազատութեան ու անկախութեան խորհուրդը»¹⁶³։

Երբ ֆաշիստական վտանգը հիմնականում փարատվել էր, հայ աշխատավորները հիմնադրեցին Սովետական Հայաստանի բարեկամների ընկերությունը, որի գլխավոր առաջադրանքն էր ամրապնդել Սիրիայի և Լիբանանի հայութեան կապերը հայրենիքի հետ։ Այդ ընկերութեան հավաքույթներին հայ գործիչների կողքին հանդես էին գալիս նաև սրաբ մտավորականներ։ 1943 թ. փետրվարի 14-ի հավաքույթում, հիացմունքով արտահայտվելով հայ ժողովրդի դարավոր ազգային-ազատագրական պայքարի մասին և արևշատություն մաղթելով Սովետական Հայաստանին, արաբ մեծ գրող Օմար Ֆախուրին նշել է. «Մեծ հոկտեմբերի պարգևած բարիքները երբեք պիտի չխլվին անոր (հայ ժողովրդի, Հ. Թ.) ձեռքեն»¹⁶⁴։

* * *

Սիրիայի և Լիբանանի հակաֆաշիստական լիգայի խընդիրն էր՝ ստեղծել հակաֆաշիստական ճակատ աշխատավորության և բուրժուազիայի տարբեր կազմակերպությունների միավորումով։ Այդ խնդիրը շիրականացավ այն պասսիվության հետևանքով, որ բուրժուազիայի հիմնական խավերը ցուցաբերում էին դաշնակիցների պատերազմական ճիգերի նկատմամբ։ Պատերազմը, դժվարացնելով օտարերկրյա ապրանքների ներմուծումը և տեղական հումքի արտահանումը, հսկայական շահույթներ էր տալիս առևտրական և արդյունաբերական կապիտալին։ Նրանք չէին շահագրգռված գերմանա-իտալական ֆաշիստների պարտութեամբ, լսել անգամ չէին ուզում պատերազմի վախճանի մասին։

Դրությունը տարբեր չէր նաև հայկական ներքին կյանքում։ Հնչակյան և ռամկավար ղեկավարների սպասողակա-

163 Նույնը, 9 հուլիսի 1942։

164 Նույնը, 16 փետրվարի 1943։

նությունը¹⁶⁵ պատճառ դարձավ, որ հաջողությամբ չպսակվեն Հայաստանի պաշտպանության լիգայի՝ միավորված հակաֆաշիստական ճակատ կազմելու ջանքերը:

Ստալինգրադի հաղթանակից հետո 1943—1944 թթ. տեղաշարժեր առաջացան հայ հասարակական-քաղաքական կյանքում, նպաստելով Սիրիայի և Լիբանանի հայ ազգային խորհուրդի կազմվելուն:

* * *

*

1945 թ. օգոստոսի 31-ին Բեյրութում «Սովետական Հայաստանի ուղղությունը ընդգրկող զանազան հոսանքներուն ներկայացուցիչները» կազմեցին Սիրիայի և Լիբանանի հայ ազգային խորհուրդը, որին հարեցին Հնչակյան, Ռամկավար կուսակցությունները, կոմունիստական կուսակցության Սիրիայի և Լիբանանի հայկական հատվածները, Լիբանանահայ վերածնունդ միությունը և ուրիշ բազմաթիվ հայրենասիրա-

165 Այդ սպասողականության հետևանք էին Բեյրութի (ռամկավար) «Անդրանիկ» ակումբի և Դամասկոսի (հնչակյան) «Տավորիկ» միության անջատողական շարժումները, 1942 թ. սկզբները բողոքելով իրենց կուսակցության քաղաքականության դեմ, «Անդրանիկ» ակումբի անդամները պարզեցին ըմբոստության դրոշը: Դժգոհները մեծամասնություն ձևաքրելով ընդհանուր անդամական ժողովում, միությունը հռչակեցին անկախ կազմակերպություն («Ժողովուրդի ձայն», 30 մարտի 1942): Նույն թվականի կեսերին «Տավորիկ» միության ներքին խմորումներին վերջ տրվեց զանգվածային վտարումով («Արարատ», 24 մայիսի 1942): Դամասկոսի դժգոհները իրենց հրապարակած բաց-նամակում գրում էին. «Տավորիկի ղեկավարության մեջ բույն դրած կարգ մը մարդիկ մտահոգված են ապագայի հեռանկարներով և կշռան ստեղծել «դիվանագիտական ըմբռնում» մը, ըստ որում, երբ նացիզմը հաղթե «Տավորիկը» բավարար տվյալներ ունենա իր ձեռքը ինքզինքը արդարացնելու և... զնահատումի արժանանալու համար: Մենք Տավորիկին անդամակցեր էինք այն հավատքով, որ ան կպաշտպանե Սովետական Հայաստանը» («Ժողովուրդի ձայն», 19 հունիսի 1942):

կան խմբակցություններ¹⁶⁶։ Հայ ազգային խորհուրդի ստեղծումը շրջադարձային մեկնակետ հանդիսացավ Սիրիայի և Լիբանանի հայ հասարակական կյանքում։ Նրա «գործունեության և ուղղության հիմք» էին ծառայում հետևյալ սկզբունքները.

«ա. Աշխատիլ հայ ժողովուրդի քաղաքական իրավունքներուն պաշտպանության համար, առաջին առթիվ զորավիգ կանգնելով... Ամերիկայի հայ ազգային խորհուրդի Սան-Ֆրանցիսկոյի ժողովին ղրկած հուշագրին, որպեսզի արտասահմանի հայրենագուրկ հայության կարելիություն տրվի վերագառնալու հայրենիք և լծվիլ խաղաղ ու շինարար աշխատանքի։

բ. ...Արտասահմանի հայության ազգային բոլոր ցանկություններուն լավագույն թարգմանը, համադրողն ու իրագործողը կհանդիսանա միայն Հայաստանի Սովետական Սոցիալիստական Հանրապետության կառավարությունը։

գ. Սովետական Հայաստանի հզոր զինակից և պաշտպան, և հայ ժողովուրդը երկու անգամ ֆիզիկական բնաջնջումն ազատող ռուս մեծ ժողովուրդին... հանդես Ազգային խորհուրդը կհայտնե սնվերապահ վստահություն։

դ. Ազգային խորհուրդը պարտականություն կհամարե նյութական և բարոյական բոլոր միջոցներով օգնել Մայրհայրենիքին, մշակութային կապեր հաստատել անոր հետ և պայքարիլ բոլոր անոնց դեմ, որոնք մամուլի միջոցով կամ ալլ արարքներով կջանան նսեմացնել Սովետական Հայաստանի վարկն ու հեղինակությունը։

ե. Ազգային խորհուրդը պիտի աշխատի Սուրիո և Լիբանանի ազգային ներքին կյանքին մեջ ստեղծել ներդաշնակություն և միասնականություն։

166 Դրանց թվում էին Սովետական Հայաստանի բարեկամների ընկերությունը, Սովետական Հայաստանի հետ մշակութային կապի կանանց ընկերակցությունը, զեներալ Բաղրամյանի անվան երիտասարդական միությունը, Դպրոցասեր կանանց ընդհանուր միությունը, Արաբկիրի հայրենակցական միությունը, Մալաթիայի կրթասիրաց ընկերակցությունը, Հայրենաբաղձ հայերու ընդհանուր միությունը և ուրիշներ։

զ. Ազգային խորհուրդը պիտի աջակցի Սուրիո և Լիբանանի ազգային-դեմոկրատական շարժմանը և հայ իրակա-նության մեջ արգիլելու որևէ արարք, որ կրնա վնասել Սու-րիո և Լիբանանի հայության վարկին և հայ և արաբ խաղաղ հարաբերությանց»¹⁶⁷;

Սիրիայի և Լիբանանի հայ ազգային խորհուրդը գործեց մինչև 1947 թվականի վերջերը՝ այդ երկրներում հակադեմոկ-րատական միջոցառումների կիրառվելը, աջակցելով արաբ ժողովրդի ազգային-ազատագրական շարժմանը, կազմակեր-պելով Սիրիայի և Լիբանանի հայության հայրենադարձը, պայքարելով դաշնակիների մենատիրության դեմ¹⁶⁸։ Այդ խըն-դիրների լուծման բնագավառում Հայ ազգային խորհուրդը թեև չկարողացավ լիովին իրագործել ժողովրդական զանգ-վածների բոլոր ցանկությունները, այնուամենայնիվ, ձևոր-բերեց մի շարք նշանակալից հաջողություններ։

Հայրենադարձի պատմական գործի դյուխ կանգնեց Հայ ազգային խորհուրդը։ Նրա կազմած հայրենադարձի կոմի-տեներին օգնում էին բազմաթիվ բարեգործական, մշակու-թային, ուսանողական, հայրենակցական և ուրիշ միություն-ներ։ Դրանցից Հալեպի Տարոն-Տուրուբերան հայրենակցական միության վարչությունը հայրենադարձի կոմիտեի նախա-գահին գրում էր. «Միությունս մեծ խանդավառությամբ և միաձայնությամբ տվավ իր որոշումը արձանագրվելու և ա-ռաջին իսկ առիթով հայրենիք մեկնելու...։ Հաստատ հավատ

167 «Ժողովրդի ձայն», 2 սեպտեմբերի 1945:

168 Մինչև Հայ ազգային խորհրդի կազմվելը դաշնակիները ազգային-թեմական ընտրությունները ձգձգելու միջոցով շարունակում էին իրենց ձեռքում պահել Բեյրութի, Հալեպի և Դամասկոսի թեմերը, 1945 թ. սեպ-տեմբերի 23-ին Հայ ազգային խորհուրդը ժողովրդական միտինգներ գու-մարեց Բեյրութում, Հալեպում, Դամասկոսում և Ջահլեում, պահանջելով ազգային-թեմական իշխանությունների վերակազմությունը («Ժողովրդի ձայն», 25 սեպտեմբերի 1945)։ Այդ ճնշման ներքո դաշնակիները տեղի տվին Հոկտեմբերի 21-ին Լիբանանի ազգային-թեմական ընտրությու-ններում դաշնակիները պարտություն կրեցին։ Ընտրված 24 երեսփոխաններից միայն 3-ը դաշնակիներ էին...։

և վստահութիւնն ունինք Սովետական Հայաստանի գուրգուրոտ պետութեան վրա, որ այսօր արտասահմանի իր թափառական եղբայրները գրկաբաց կհրավիրեն: Միութիւննս՝ իր բոլոր կարելի միջոցներով օժանդակ հանդիսանալու համար ներգաղթի գործին, ձեր տրամադրութեան տակ կդնեն ինքզինքը»¹⁶⁹:

Հայրենադարձի լուրը ոգևորութիւնն առաջացրեց նաև մայրենի լեզուն մոռացած հայերի շրջանում: Սիրիայի Արամո, Յազուրի, Ջըսըր Շղուր և այլ արաբախոս հայկական գյուղերից հետո հայրենադարձի խանդավառութեան ալիքը հասավ մինչև հեռավոր Գամըշլի և նրա շրջակա գյուղերի քրդախոս հայերին: Նրանք ասում էին. «Ի լուր ՍՍՀՄ Գերագույն խորհրդի պատմական մեծ որոշմանը... չենք կրնար զսպել ուրախութեան արցունքները»¹⁷⁰:

Իսկ դաշնակ շեֆերը գրում էին. «Հայաստանի ներկա սահմանները նեղ են ու հնարավոր չէ զանգվածովի ներգաղթը: Մեր գաղութին բաժինը մեկ կամ երկու հազար կրնա ըլլալ»¹⁷¹: Երբ հայրենադարձի կարավանները սկսեցին շարժվել, նրանք ողբում էին՝ «Հայ կյանքն է, որ կբայթայվի, տեղի ունեցածը զարհուրելի սպանդ մըն է՝ ուղղված հայ տնտեսական կյանքին, հայ բարոյականին ու հայ հոգիններուն: Նոր ապրիլ 24 մը, որ կուգա խախտելու հայ ժողովուրդի բարոյական դիմագիծը...»¹⁷², և հայրենաբաղձ հայութեանը ցույց էին տալիս Մադագասկարի ճանապարհը. «Կստիպվինք հետզհետե հոռետես դառնալ... ազգը հիվանդ է: Ազգը կտառապի խենթութեան հիվանդութենե մը...: Մասնակի ներգաղթի մը իրականացումն ենք, դժվար թե կարելի ըլլար անտեսել արտասահմանի հայուն ճակատագիրը: Մեր կարծիքով լավագույն պայմաններ ներկայացնող տեղերը եվրոպական մեծ կառավարութիւններուն գաղթավայրերն են...: Նշանա-

169 «Ժողովուրդի ձայն», 8 փետրվարի 1946:

170 Նույնը, 11 հուլիսի 1946:

171 Նույնը, 8 փետրվարի 1946:

172 «Արևելք», Հալեպ, 24 օգոստոսի 1946:

կալի թվով գաղթավայրեր կան, որոնք միջոցներ կփնտրեն ավելացնելու երկրին բնակչութունը եկամուտ տարբերով: Նյու Ջիլիհնդա և Ավստրալիա հարցը դրած են պաշտոնական սեղաններու վրա: Ասդին, Արևելյան և Արևմտյան Ափրիկեի մեջ կգտնվին գաղթավայրեր: Մատակասկար, աշխատանքի ու հարստության հսկա ամբարանոցը, կտառապի աշխատող ձեռքերու պակասեն»¹⁷³, Դաշնակ շեֆերի այդպիսի զեղումը խոր զայրույթ առաջացրեց մինչև անգամ շարքայինների շրջանում: Նրանք «զզվանքով» էին արտահայտվում «ներգաղթի նման ճշմարտություն մը խեղաթյուրելու նպատակով ասպարեզ իջած դաշնակ պարագլուխներու» և նրանց «մամուլի ցնդարանություններու» դեմ¹⁷⁴:

Մինչև 1946 թվականի վերջերը, դաշնակների «Արևելք» օրգանի խոստովանություններ, արդեն Սիրիայի և Լիբանանի հայկական «գաղութի 90 առհարյուրը արձանագրվեցավ», ոչ թե Մադագասկար գաղթելու, այլ Սովետական Հայաստան ներգաղթելու համար¹⁷⁵:

1946 թ. հունիսի 23-ին Բեյրութի նավահանգստից ճանապարհվեց Սիրիայի և Լիբանանի հայության հայրենադարձի առաջին կարավանը: Մինչև 1948 թվականը Լիբանանից, Սիրիայից, Իրաքից, Պաղեստինից, Եգիպտոսից և Եվրոպայի մի շարք երկրներից մոտավոր թվով հարյուր հազար հայեր վերադարձան հայրենիք:

ՀԱՅԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՍԻՐԻԱՅԻ ԵՎ ԼԻԲԱՆԱՆԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱՆԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՅԺԱՐԻՆ (1943—1946 ԹԹ.)

1941 թ. հունիսի 8-ին, երբ դաշնակից զորքերը մուտք էին գործում Սիրիա և Լիբանան, ֆրանսիական զինված ուժերի ընդհանուր հրամանատար գեներալ Կատրուն հանուն

173 «Հայ դիտակ», Երուսաղեմ, 13 ապրիլի 1946:

174 «Ժողովուրդի ձայն», 16 հուլիսի 1946:

175 Նույնը, 17 սեպտեմբերի 1946:

աղատ Ֆրանսիայի հայտարարեց. «Սիրիացիներ և լիբանանցիներ, գալիս եմ մանդատային կարգին վերջ դնելու և ձեզ աղատ ու անկախ հռչակելու»¹⁷⁶: Միաժամանակ հրապարակվեց Կահիրեի բրիտանական դեսպանի հայտարարությունը, որով Անգլիայի կառավարությունը երաշխավորում էր Կատրուի խոստումը: Հետագայում Կատրուն տարբեր առիթներով բազմիցս հաստատեց Սիրիայի և լիբանանի անկախության սկզբունքը:

1943 թ., երբ Մերձավոր և Միջին արևելքում գերմանա-իտալական ֆաշիստական վտանգը փարատվել էր և այլևս ոչ մի լուրջ պատճառ չկար Սիրիան և լիբանանը գրավման ներքո պահելու, ֆրանսիական իմպերիալիստները հրաժարվեցին իրենց հանդիսավոր խոստումից: Նույն թվականի փետրվարին հրապարակվեց Կատրուի՝ լիբանանի հանրապետության նախագահին ուղղված մի նամակը, որտեղ ասված էր. «Ֆրանսիան դե յուրե պահպանում է լիբանանի մանդատը մինչև Ազգերի լիգան նրան ազատի այդ պատասխանատվությունից»¹⁷⁷: Այդ հայտարարությունը խոր վրդովմունք առաջացրեց Սիրիայում և լիբանանում:

1943 թ. օգոստոսի 29-ին և սեպտեմբերի 4-ին տեղի ունեցան լիբանանի պառլամենտական ընտրությունները: Բեշարա էլ-Խուրին և Ռիադ Սուհր, որոնք գլխավորում էին ազգային անկախության պայքարը, ճնշող մեծամասնություն ձեռք բերեցին պառլամենտում: Սեպտեմբերի 21-ին առաջինը ընտրվեց հանրապետության նախագահ, իսկ երկրորդը՝ պրեմյեր մինիստր: Նրանց ջանքերով, մարոնականները և սուննիները կնքեցին «ազգային պակտը», որով այդ երկու ամենաբազմամարդ համայնքները որոշում էին միասնական պայքար տանել լիբանանի անկախության համար:

Հոկտեմբերի 7-ին, հանդես գալով պառլամենտում, Ռիադ Սուհր իր գլխավորած կառավարության անունից հայտարար-

¹⁷⁶ N. A. Zia de h, Syria and Lebanon, London, 1957, p. 70.

¹⁷⁷ Նույն տեղում:

րեց. «Մենք կուզենք իրական անկախություն և լիակատար ազգային գերիշխանություն, որ մեզ թույլ տա որոշելու մեր ճակատագիրը մեր հասկցած ձևով և միայն մեր ազգային շահերու համապատասխան ձևով: Այս է իմ կազմած և գլխավորած կառավարության նշանաբանը և ասոր համար միայն ծանր պատասխանատվության տակ մտանք»¹⁷⁸: Ապա, նա ընդգծեց Սահմանադրության այն հոդվածների վերանայման անհրաժեշտությունը, որոնք հակասում էին Լիբանանի անկախությանը:

Լիբանանի կառավարության հայտարարությունն արժանացավ ժողովրդի հավանությանը: Ֆարաժալլա Հելուն գրում էր. «Ժողովուրդը երեսփոխաններեն ալ ավելի պատրաստ է իր վստահությունը տալու և թիկունք կանգնելու կառավարության, եթե անիկա հարատևե աշխարհի այն քաղաքական ոգիով, որ ի հայտ բերավ իր հայտարարության մեջ»¹⁷⁹: Կառավարության հայտարարությունը ողջունեցին նաև հայ դեմոկրատները: Նշելով, որ Սահմանադրության այդպիսի վերանայումով Լիբանանում և Լիբանանի հայության կյանքում խոր փոփոխություններ տեղի կունենան, Հար. Մադեյանը գրում էր. «Լիբանանի հայությունը իր սեփական շահերուն դեմ գործած կըլլա, եթե իր զարգացումը Լիբանանի զարգացման բնական հունով չտանի»¹⁸⁰:

Ֆրանսիական իմպերիալիստները հանդես եկան Սահմանադրության վերանայման դեմ: Նոյեմբերի 4-ին Ալժիրից Ֆրանսիայի ազատագրության կոմիտեն Լիբանանի կառավարությանը ազդարարեց՝ չգործել մանդատի դեմ: Այնուամենայնիվ, Սահմանադրությունը վերանայվեց: Առաջին հոդվածից վերացվեցին մանդատի վերաբերյալ բառերը և այն շարադրվեց հետևյալ ձևով. «Լիբանանն անկախ, միասնական և սուվերեն պետություն է»: Փոփոխվեց նաև 52-րդ հոդ-

178 «Ժողովուրդի ձայն», 12 հոկտեմբերի 1943:

179 Նույնը, 14 հոկտեմբերի 1943:

180 Նույնը, 17 հոկտեմբերի 1943:

վածք, ըստ որի Լիբանանը Ֆրանսիայի միջոցով միայն կարող էր միջազգային պայմանագրեր կնքել: այդ իրավունքը տրվեց հանրապետության նախագահին: Արաբներենը հայտարարվեց պաշտոնական լեզու, և այլն: Այդպես փոփոխված Սահմանադրությունը նոյեմբերի 8-ին արժանացավ պառլամենտի հավանությունը: 55 դեպուտատներից ներկա էին 52-ը: Այլուբ Տաբեթը, Ահմեդ ալ-Ղուսեյնը և Մովսես Տեր-Գալուստյանը շմասնակցեցին այդ պատմական անմոռաց նիստին: Էմիլ էդդեն և Ամին ա-Սաադը ի նշան բողոքի հեռացան դահլիճից: Հրաշյա Շամլյանը մյուս հայրենասեր դեպուտատների հետ միասին քվեարկեց Լիբանանը ստրկացնող հողվածների դեմ¹⁸¹:

Ֆրանսիական իմպերիալիստները մերժեցին Սահմանադրության վերանայման օրինավորությունը և, հակադարձաբար, զինվորական հսկողություն հաստատեցին պառլամենտի շենքի վրա: Նոյեմբերի 11-ին դեպուտատները բռնի մտան պառլամենտ և նիստ գումարեցին: Ընդունվեց դատապարտության բանաձև ֆրանսիական իմպերիալիզմի դեմ և հուշագիր ուղարկվեց ՍՍՀՄ-ի, ԱՄՆ-ի, Անգլիայի, Եգիպտոսի, Իրաքի և Սիրիայի կառավարություններին, խնդրելով նրանց աջակցությունը¹⁸²: Լիբանանի պառլամենտի այդ ակտին՝ ֆրանսիական իմպերիալիստները պատասխանեցին բռնություններ: Նույն գիշերը նրանք ձերբակալեցին Լիբանանի նախագահ Բեշարա էլ-Խուրիին, պրեմյեր Ռիադ Սուլհին և միշարք մինիստրների: Ապա, դեկրետով նախագահ նշանակվեց Էմիլ էդդեն, որի կազմած կառավարությունը շարժանացավ ժողովրդի հավանությանը:

Այդ միջոցառումները բողոքի հզոր ակիբ բարձրացրին Սիրիայում և Լիբանանում: «Լիբանանի ազգային համագումարը»¹⁸³ ժողովրդին կոչ արեց բոյկոտի ենթարկել ֆրան-

¹⁸¹ منير تقى الدين، ولادة الاستقلال، بيروت ١٩٥٣

ص. ٢٢١

¹⁸² «Ժողովուրդի ձայն», 4 դեկտեմբերի 1943:

¹⁸³ «Լիբանանի ազգային համագումարը» միավորում էր ազգային անկախության կողմնակից բոլոր կազմակերպություններին, առանց դասա-

սիական իմպերիալիզմի դրածոներին և պաշտպանել ազգային կառավարութունը, որի մի շարք անդամները զինված դիմադրութուն էին պատրաստում Լեռնային Լիբանանի Բշամուն գյուղում: Բեյրութում հայտարարվեց ընդհանուր գործադուլ, որին Դամասկոսն ու Հալեպը արձագանքեցին համերաշխության լայն շարժումով:

Քաջ գիտենալով, որ ընդհանուր գործադուլի ելքն է վճռելու էմիր էդդեի իշխանության բախտը, Ֆրանսիական իմպերիալիստները բոլոր միջոցներով փորձեցին ձախողել այն: Նրանք ապարդյուն փորձեցին Լիբանանի ազգային համագումարի շարքերը պառակտել, քրիստոնյա-մուսուլմանական հակամարտություններ հրահրելով: Նրանց ոչ ոք չհավատաց, երբ նրանք լուրեր էին ծավալում այն մասին, որ իբր Սուհի կառավարութունը ծրագրել էր մուսուլմանների օգտին խախտել կրոնադավանական համայնքային առկա դրութունը: Նրանք մինչև անգամ պնդում էին, որ իբր Սուհի թղթերում հայտնաբերվել է մի ծրագիր, որով հայերը պետք է զրկվեին Լիբանանյան քաղաքացիությունից¹⁸⁴: Իմպերիա-

կարգային, ազգային և կրոնական խտրության: Համագործակցության հիմք էր ծառայում Ֆրանսիական իմպերիալիզմի տիրապետությունն ամեն զնով տապալելու խնդիրը:

184 منير تقى الدين، ولادة الاستقلال ص. ١٩٤

Անդրադառնալով հայ և արաբ աշխատավորներին պառակտելու այդ անհաջող փորձին, «Լիբանանի ազգային համագումարի» օրգանը գրում էր. «Քիչ էր մնում, որ մեր հայ եղբայրները հավատային այդ կեղծիքին, եթե նրանց ղեկավարները շփարատեին այն, չդիմակազերծեին նրա հեղինակներին և չհրավիրեին հայ ժողովրդին եղբայրանալու Լիբանանի ժողովուրդի հետ» (Լիբանանի ազգային համագումարի օրգանը, որի անվան տեղ զրված է հարցական մի նշան, Բեյրութ, 23 հոկտեմբերի 1943 թ.): Այդ օրգանը ակնարկում էր նոյեմբերի 20-ին Անթիլիասի հայոց կաթողիկոսարան ուղարկված արաբական պատվիրակությանը, որը տեղապահ խոջ Աջապահյանին հավաստիացրեց. «Ոչ մի համայնք չի իրավազրկվելու մի ուրիշ համայնքի օգտին»: Իսկ տեղապահ «պատվիրակության ապահովցուց թե հայ և արաբ ժողովուրդներու բարեկամութունը անքակտելի է և այդպես ալ պիտի մնա» («Ժողովուրդի ձայն», 27 նոյեմբերի 1943):

լիստների կամքին հակառակ, ամբողջ գործադուլի ընթացքում հայերով բնակված թաղերի խանութները փակ մնացին և հայ աշխատավորները աշխույժ մասնակցություն ցուցաբերեցին փողոցային ցույցերին:

Ֆրանսիական իմպերիալիզմի տարիներով հրահրած և արհեստականորեն կենդանի պահած ցեղային ու դավանական խտրականության, այդ խավարի ու հետամնացության ժանգոտ զենքը այլևս անզոր էր ազատության և անկախության համար մարտնչող լիբանանի բազմազգ բնակչության դեմ: Իրավացիորեն, Խալեդ Բեկդաշը գրել է. «Լիբանանը փորձով ցույց տվավ, որ կրոնը Աստծո՞ւն է, իսկ հայրենիքը՝ բոլորին: Լիբանանի շարժումը լիբանանյան ազգային շարժում է, զուրկ որևէ կրոնական կամ ցեղային գույնի: Հազարավոր իսլամ, քրիստոնյա, դուրդի և հայ ցուցարարներ կողք կողքի կթայլեին առանց որ մեկը մյուսի դավանանքը իմանար, առանց որ կրոնական բնույթի որևէ բացականչություն լավեր, այս կամ այն համայնքի կեցցեները միայն ու միայն ուղղված էին հայրենիքին, անկախության, սահմանադրության և դրոշակին»¹⁸⁵:

Ֆրանսիական իմպերիալիստները ի վերջո անցան բիրտ ուժի՝ ընդհանուր գործադուլը ճնշելու համար: Բանակը կրակ բացեց ժողովրդի վրա, բողոքի ցույցերը փողոցային մարտերի վերածելով: Այդ իրադարձությունները խոր հուզում առաջացրին նաև մյուս արաբական երկրներում: Ֆրանսիական իմպերիալիզմի դեմ բողոքի ցույցեր տեղի ունեցան Կահիրեում, Բաղդադում, Երուսաղեմում:

Տեղի տալով ժողովրդի համառ դիմադրության առաջ, ֆրանսիական իմպերիալիստները անցան զիջումների: Նոյեմբերի 21-ին, Ալժիրից Բեյրութ ժամանելով, գեներալ Կատրուն ազատ արձակեց արգելափակված գործիչներին և պաշտոնապես ճանաչեց Սահմանադրության մեջ մուծված փոփոխությունները: Իսկ դեկտեմբերի 23-ին ազատ Ֆրանսիայի

185 «Ժողովուրդի ձայն», 4 դեկտեմբերի 1943:

և Սիրիայի ու Լիբանանի ներկայացուցիչների միջև համա-
ձայնութիւն կայացավ այն մասին, որ 1944 թվականի մա-
յիսի 1-ից ազգային կառավարութիւններին փոխանցվեն
մասնդատի ֆունկցիաները:

Պայքարի հաշոյ ելքից հետո ազգային-ազատագրական
շարժման ղեկավարները պատշաճը հատուցեցին հայերին:
Նոյեմբերի 24-ին արաբական մի պատվիրակութիւն նորից
այցելեց Անթիլիասի կաթողիկոսարանը և «շնորհակալու-
թիւն» հայտնեց «այն ազնիւ դիրքի համար, որ հայ հա-
մայնքի զավակները որդեգրեցին Լիբանանի ազգային դատի
հանդեպ»¹⁸⁶: «Աստված պահե մեր հայ եղբայրներին» խո-
րագրի ներքո, «Բելլութ» թերթը գրում էր. «Մենք ուղղակի
հիացած ենք մեր հայ եղբայրների զգացումների վրա»¹⁸⁷:
Իսկ պրեմիեր Ռիադ Սուէը իր նոյեմբերի 30-ի պրեսկոն-
ֆերանսում հայտարարեց. «Ծն հայերու ներկայութիւնը այս
երկրին մեջ կընդունիմ գրկաբաց և առանձին հաճույքով:
Անոնք այս երկրի անկախութիւնը գուցե մեզմե լավ պաշտ-
պանեն, որովհետև անոնք երկար ժամանակ ապրած են բռնու-
թյան տակ, պայքարած և զոհված են անկախութիւն համար,
հետևաբար լավ գիտեն անկախութիւն արժեքը: Իմ կառա-
վարութիւն սիրտը բաց է հայերու համար: Ծն պիտի ընեմ
այն ինչ հարկավոր է, որպէսզի հետ այսու անոնք ավելի լայ-
նորեն մասնակցին կառավարական գործերուն»¹⁸⁸:

Դեկտեմբերի 5-ին, ընդունելով Դամասկոսի հայութիւն
ներկայացուցիչներին, Սիրիայի հանրապետութիւն նախա-
գահ Շյուբրի Քուվաթլին նշել է. «Զափազանց զգացված եմ
հայերու հավատարիմ կեցվածքին: ...Մեր հարգանքը և
վստահութիւնը հայերու հանդեպ համոզումի մը ուժը ունի:
Դուք, որ այս երկրի հպատակներն եք 20—25 տարիներ ի
վեր միայն, կվայելեք և պիտի վայելեք այն բոլոր իրավա-

¹⁸⁶ Լիբանանի ազգային համագումարի նշված օրգանը, 23 նոյեմ-
բերի 1943:

¹⁸⁷ بیروت، ٢٦ تشرين الثاني ١٩٤٣

¹⁸⁸ «Ժողովուրդի ձայն», 1 դեկտեմբերի 1943:

սությունները զորս արաբ ժողովուրդը ունի այս երկրին մեջ...: Հայերու բոլոր իրավունքները... նկատի առնված են արդեն և պիտի առնվին հետ այսու ալ... Իսկ եթե օր մը որևէ մեկը ուզե հարվածել հայերու իրավունքները այս երկրներուն մեջ, ես այդ բանին արգելք պիտի ըլլամ, ի հարկին, իմ արյանս գնով»¹⁸⁹: Իսկ դեկտեմբերի 7-ին Լիբանանի հանրապետութեան նախագահ Բեշարա էլ-Նուրին, որը Բեյրութի հայոց առաջնորդարան էր գնացել պաշտոնական այցով, պատասխանելով իրեն ուղղված ճառերին, դրվատել է հայերի հայրենասիրական դիրքավորումը և հայտարարել՝ «Լիբանանի հայ համայնքը մեկ անբաժան մասն է լիբանանյան ազգութեան»¹⁹⁰:

* * *

Սիրիայի և Լիբանանի ներկայացուցիչները Ֆրանսիական իմպերիալիստների հետ վարում էին ամուլ բանակցություններ: Մաքսատան, նավահանգստի, փոստ-հեռագրական, կրթական և այդ կարգի մի շարք սպասարկություններ փոխանցելուց հետո նրանք ձգձգում էին Ֆրանսիական դրոշի ներքո գործող տեղացիներից կազմված հատուկ զորամասերի հանձնումը: Ինչ վերաբերում է Ֆրանսիական զորքերի դուրս բերմանը, ապա այն մնում էր առկախ, մինչև անգամ չէր դրվել օրակարգի վրա: Ակնհերև էր, որ իմպերիալիստները ուզում էին ժամանակ շահել, սպասում էին պատերազմի վախճանին...: Եվ իրոք, 1945 թ. հունվարին, երբ միջազգային բարենպաստ իրադրություն էր ստեղծվել Ֆրանսիայի համար, նրանք մերժեցին հատուկ զորամասերի փոխանցումը: Այդ բանից հետո Սիրիայի և Լիբանանի կառավարությունները որոշում ընդունեցին ազգային բանակ կազմելու մասին:

Ֆրանսիական իմպերիալիստները փորձեցին քրիստոնյաներին, այդ թվում և հայերին, ներշնչել այն տպավորու-

¹⁸⁹ Նույնը, 11 դեկտեմբերի 1943:

¹⁹⁰ Նույնը, 8 դեկտեմբերի 1943:

թյունը, որ իբր ազգային բանակը միջոց էր դառնալու մուսուլմաններին ձեռքում ճնշելու համար քրիստոնյա փոքրամասնությունները: Սակայն, նրանց լսողներ չգտնվեցին: «Ժողովուրդի ձայնը» գրել է. «Հայի և արաբի, իսլամի և քրիստոնյայի արհեստական թշնամություններ առաջացնել փորձողները դարձյալ ձախողեցան իրենց նպատակներուն մեջ»¹⁹¹: Ժողովրդական զանգվածները առանց ազգության և կրոնի խարուխյան պաշտպանեցին ազգային բանակ կազմելու ծրագիրը:

Մինչ մի կողմից իշխանությունները ազգային բանակի աշխատանքներն էին առաջ տանում, մյուս կողմից ժողովուրդը պահանջում էր ֆրանսիական զորքերի անհապաղ դուրս բերումը: Հունվարի վերջերին Սիրիայում հայտարարվեց ընդհանուր գործադուլ, ավելի քան տասը օր փակ մնացին շուկաները և պետական ու մասնավոր հիմնարկները: Գամասկոսում, Հալեպում, Համայում, Հոմսում և ուրիշ քաղաքներում տեղի ունեցան ժողովրդական բողոքի ցույցեր: Մի շարք վայրերում ցուցարարները բախվեցին ֆրանսիական զորքի հետ: Ամենուրեք, և առանձնապես Հալեպում հայերը աշխույժ մասնակցություն բերեցին այդ ելույթներին: «Ժողովուրդի ձայնի» հաղորդումով, Հալեպի հայաբնակ նոր գյուղում «...ուսանողությունը և ժողովուրդը խաղաղ ցույցերով և հայ-արաբ եղբայրության անհրաժեշտությունը շեշտող ճառերով հրավիրեցին մեր հայրենակիցները տեր կանգնելու իրենց սուրիացիի իրավունքներուն»¹⁹²:

Ֆրանսիական իմպերիալիզմի խարխլած դիրքերը վերջնական փլուզումից փրկելու նպատակով, գեներալ Բեյնեն համաձայնվեց Սիրիայի և Լիբանանի ներկայացուցիչների հետ բանակցություններ սկսել տեղացիներից կազմված հատուկ զորամասերը փոխանցելու հարցի շուրջը: Բացի այդ, ընդառաջելով ազգային կառավարությունների պահանջին,

191 Նույնը, 4 փետրվարի 1945:

192 Նույն տեղում:

նա խոստացավ աստիճանաբար դուրս բերել ֆրանսիական զորքերը:

Ասկայն, այդ խոստումները սոսկ ձևական բնույթ էին կրում: 1945 թ. մայիսին, երբ համայն աշխարհը տոնում էր Ֆաշիզմի դեմ հաղթանակը, ֆրանսիական իմպերիալիստները Սիրիա և Լիբանան ուղարկեցին ցամաքային և ծովային նոր միավորներ: Ավելին, մայիսի 18-ին նրանք ազգային կառավարութունների քննարկմանը հանձնեցին մի պայմանագրի նախագիծ, ընդ որում Ֆրանսիային իրավունք էր վերապահում Սիրիայի և Լիբանանի ստրատեգիական կետերում օդային, ցամաքային և ծովային բազաներ կառուցելու և դրանցում մշտապես զորք պահելու: Մայիսի 19-ին ազգային կառավարութունները հայտարարեցին, որ որոշել են Վերսալի ջանքերն ու գործունեությունը միացնել երկու երկրներու անկախութունը պաշտպանելու համար»¹⁹³:

Սիրիան և Լիբանանը նորից ալեկոծվեցին:

Ազգամիջյան կոիվներ հրահրելու և, այդպիսով, ազգային անկախության պայքարը ջլատելու նպատակով, իմպերիալիզմի գործակալները Սիրիայում և Լիբանանում տարածեցին մի շարք թուղիկներ, հայերին ներկայացնելով այդ երկրների «անկախության հակառակորդ տարր մը»¹⁹⁴: Այդ հերյուրանքը հերքող հրապարակային կոչերով և հայտարարութուններով հանդես եկան Սիրիայի և Լիբանանի կոմունիստական կուսակցութունները և բազմաթիվ պետական գործիչներ¹⁹⁵: Սիրիայի պրեմյեր մինիստրը նշեց, որ հայերը միշտ էլ «եհեցուկ» են հանդիսացել Սիրիայի անկախության պայքարին: Իսկ Լիբանանի կոմունիստական կուսակցութունը հրապարակեց հայ ժողովրդին ուղղված կոչ, որտեղ ասված

193 Նույնը, 22 մայիսի 1945:

194 Նույն տեղում:

195 Նույն տեղում: Կոմիստերնի լուծարքից հետո 1943 թ., Սիրիայի և Լիբանանի կոմունիստական կուսակցության համագումարը, նկատի ունենալով, որ Սիրիայում և Լիբանանում առաջացել են սոցիալ-քաղաքական միանգամայն տարբեր պայմաններ, որոշում ընդունեց այդ երկրներից յուրաքանչյուրի համար ստեղծել առանձին կոմկուս:

էր. «...օտար հետադիմութեան հաշվույն աշխատող տարրեր; որոնք միշտ պղտոր ջուրի մեջ ձուկ որսալը արհեստ ըրած են, կփորձեն մտքեր պղտորել, քրիստոնյան և իսլամը, հայն ու արաբը իրարու դեմ հանել, յուրաքանչյուրին այնպես հավատացնել փորձելով թե այս շարժումը իրեն դեմ ուղղված է: Իրենց խառնակիչ այս հերյուրածո սուտերով ֆաշիստա-իմպերիալիստական շրջանակները կձգտին պառակտել ժողովրդի պայքարի միասնականութունը, փոխադարձ անվստահութեան և անապահովութեան մթնոլորտ ստեղծել երկրին բազկացուցիչ տարրերուն միջև և այսպես կիբանանի ազգային պայքարը շեղել իր նպատակեն:

Հայ ժողովուրդ,

կիբանանի արաբ ժողովուրդը ոչ մեկ թշնամութուն ունի հայ ժողովուրդին հանդեպ: Ընդհակառակը անիկա տոգորված է բարեկամական լավագույն զգացումներով և կհավատա թե հայ ազատասեր ժողովուրդն ալ իրեն պես կխորհի:

Մենք վստահ ենք, թե ինչպես անցյալին, նույնպես ներկայիս, հայ ժողովուրդը ձախողութեան պիտի մատնե ամեն գույնի գրգռիչներու դավադրութիւնները: Հայ ժողովուրդը, գիտակից իր ազգային ապահովութեան շահերուն, գիտակից թե կիբանանի ժողովուրդին հացի և ազատութեան համար մղած պայքարը իր ալ պայքարն է, պիտի շարունակե տեղացի ժողովուրդին հետ հաշտ ու խաղաղ ապրելու իր հեռատես և իմաստուն քաղաքականութիւնը»¹⁹⁶:

Իրոք, իմպերիալիստական դավադրութիւնը ձախողվեց, չպղտորվեց հայ-արաբական բարեկամութիւնը: Մայիսի 19—22-ի հակաիմպերիալիստական բուռն ելույթներին, ինչպես նաև մայիսի 30-ի ընդհանուր գործադուլին հայերը բերեցին գործուն մասնակցութիւն: Կիբանանի ազգային համագումարի ղեկավարների առաջարկով ընդհանուր գործադուլի կազմակերպիչ հանձնաժողովի մեջ մտան նաև Հնչակյան և Ռամկավար կուսակցութիւնների ներկայացուցիչները¹⁹⁷: Իսկ

196 Նույնը, 20 մայիսի 1945:

197 Նույնը, 2 հունիսի 1945:

հայարնակ թաղերում գործում էին հայ աշխատավորներից կազմված գործադուլային հսկիչ-խմբեր:

Սիրիայում ավելի ծանր էր դրուժյունը: Երկիրը գտնվում էր դինարախման նախօրյակին: Մինչ մի կողմից ֆրանսիական նոր զորքեր հասնում էին Սիրիա, մյուս կողմից ազգային կառավարութունը ուժեղացնում էր ազգային բանակի ստեղծման աշխատանքները: Կամավորների հավաքագրման հատուկ գրասենյակներ գործում էին Դամասկոսում, Հալեպում և ուրիշ քաղաքներում: Ազգային բանակում ծառայելու համար դիմում կատարում էին նաև հայ աշխատավորներ: Հալեպում հայերի կամավորագրմանը ուժ էր տալիս ազգային-թեմական իշխանութունը: Արձագանքելով Հալեպի ազգային իշխանության մեկ կոչին, որով «ֆրանսիական բանակի հայ զինվորներին և պաշտոնյաներին թելադրվում էր հրաժարվել և ծառայության մտնել ազգային բանակում», «ան-նասըր» թերթը գրել է. «Հայ համայնքը բազմաթիվ ժողովներ գումարելով որոշեց հանձն առնել նյութական և բարոյական ամեն զոհողություն, մինչև Սիրիան տիրանա իր ազգային իրավունքներին, ամբողջական անկախությանը և սուվերենությանը»¹⁹⁸: Նույնպիսի հայրենասիրական դիրքերում կանգնեց նաև Դամասկոսի հայութունը: Մայիսի 25-ին, ընդառաջելով հայ կոմունիստների, հնչակյանների, ռամկավարների և անկուսակցականների ներկայացուցիչների դիմումին, Դամասկոսի ազգային-թեմականը գումարվեց և միաձայնությամբ ընդունեց հետևյալ բանաձևը. «Սուրիո հայ ժողովուրդը որպես սուրիական քաղաքացի և իր քաղաքացիական պարտականության գիտակից, ներկա տազնապալի օրերուն իրեն համար նվիրական պարտք կհամարե հայտարարել թե հայ ղանգվածը Սուրիո ազգային կառավարության կրեբե իր բովանդակ գործակցութունն ու զոհողութունը, զորս կպահանջե օրվան կացութունը, և իր

¹⁹⁸ النصر، دمشق، ٢٩ حزيران ١٩٤٥

բոլոր մտածումներն ու գործունեությունը կհիմնեն այս սկզբունքին վրա»¹⁹⁹։

Մայիսի 29-ին ֆրանսիական տանկերն ու զրահապատ մեքենաները կրակ բացեցին ժողովրդի վրա։ Հրդեհվեցին ըմբոստ թաղեր, Դամասկոսում ումբակոծվեց պառլամենտի շենքը, գազանաբարո արարքներ գործվեցին Հալեպում, Հոմսում, Համայում, Զեբել Դրուզում և այլ վայրերում։ Այդ բարբարոսությունների դեմ բողոքեց Սիրիայում Սովետական Միության դեսպանը, իսկ Սովետական Միության կառավարությունը մեծ Բրիտանիայի, ԱՄՆ-ի և Զինատանի կառավարություններին առաջարկեց միջոցներ ձեռք առնել Սիրիայի և Լիբանանի հարցը խաղաղ ճանապարհով կարգավորելու համար։

Բայց ֆրանսիական իմպերիալիստները չէին ասել տակավին իրենց վերջին խոսքը։ Նրանք ազգային կառավարություններին հանձնեցին հատուկ զորամասերը, ինչ վերաբերում է ֆրանսիական զորքերի դուրս բերմանը, ապա այն նորից առկախ թողեցին։ Գեներալ դե Գոլը հայտարարում էր, որ Ֆրանսիան որոշել է չհրաժարվել Սիրիայում և Լիբանանում ունեցած շահերից։ Այդ նպատակով էլ նա զիջումներ կատարեց անգլիացիներին։ 1945 թ. դեկտեմբերի 13-ին Լոնդոնում ստորագրվեց անգլո-ֆրանսիական համաձայնագիրը, որով այդ երկրները բաժանվում էին անգլիական և ֆրանսիական ազդեցության գոտիների։ Այդ համաձայնագրի դեմ հանդես եկավ Սիրիայի և Լիբանանի ամբողջ հասարակայնությունը։ «Լիբանանի կուսակցությանց, կազմակերպությանց և սենդիկաներու (արհմիությունների, Հ. Թ.) ներկայացուցիչները միաձայնությունամբ» ընդհանուր գործադուլի ազդանշան տվեցին²⁰⁰։ Իսկ սիրիական և լիբանանյան պառլամենտների դեպուտատները հայտարարելով, որ այդ համաձայնագիրը «ոտնձգությունն» է ոչ միայն Սիրիայի և Լիբա-

199 «Ժողովրդի ձայն», 26 մայիսի 1945։

200 Նույնը, 30 դեկտեմբերի 1945։

նանի անկախության, այլև ՄԱԿ-ի սկզբունքների դեմ, պահանջեցին Անվտանգության խորհրդին հանձնել հարցի քննությունը:

Անվտանգության խորհրդում անգլո-ֆրանսիական իմպերիալիստները մինչև վերջ հակադրվեցին Սիրիայի և Լիբանանի ազգային պահանջներին: Նրանց օգնության փութացին ԱՄՆ-ի իմպերիալիստները: Սովետական Միության պատվիրակը հանդես եկավ անգլո-ֆրանսիական զորքերի անմիջապես և առանց պայմանի դուրս բերման օգտին: 1946 թ. ապրիլի 17-ին Սիրիայից և այդ տարվա վերջում Լիբանանից դուրս բերվեցին օտարերկրյա զորքերը:

Արարները բարձր գնահատեցին Սովետական Միության վերաբերմունքը: 1946 թ. փետրվարի 19-ին, խոսք առնելով Լիբանանի պառլամենտում, դեպուտատ Ժորժ Ակլը հայտարարեց. «(Սովետական Միությունը) մեր դատը պաշտպանեց այնպիսի խիզախությամբ և հստակությամբ, որ մենք իսկ չպիտի կարողանայինք ընել»²⁰¹: Սովետական կառավարության նկատմամբ երախտագիտական զգացումներ արտահայտեցին նաև դեպուտատ Յակուբ Սառաֆը և ուրիշներ:

Սիրիայի պետական գործիչներից և ազգային-ազատագրական պայքարի ղեկավարներից Նազըմ էլ-Կուտսին, ընդգծելով հայերի դերը Սիրիայի ազգային անկախության պայքարում, նշել է. «Մեր հայ եղբայրներուն հետ գործակցաբար կարողացանք վերագտնել մեր անկախությունը»²⁰²:

Ֆրանսիական իմպերիալիզմի տիրապետության տապալումով նոր էջ բացվեց Սիրիայի և Լիբանանի ժողովուրդների պատմության մեջ:

201 Նույնը, 21 փետրվարի 1946:

202 «Արարատ», 6 նոյեմբերի 1946:

Գ Լ ՈՒ Ե Ե Ր Կ Ը Ո Ր Գ

ՀԱՅՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՍԻՐԻԱՅԻ ԵՎ ԼԻԲԱՆԱՆԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊԵՏՄԱՆ ՀԱՄԱՐ ՄՂՎՈՂ
ՊԱՅՔԱՐԻՆ (1946—1958 ԹԹ.)

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո սոցիալիստական սիստեմի ամրապնդման և իմպերիալիզմի դիրքերի թուլացման պայմաններում հզոր թափ ստացան գաղութային ու կախյալ երկրների ազգային-ազատագրական շարժումները: Շատ երկրների ժողովուրդներ թոթափեցին գաղութատիրության շղթաները: Ստեղծվեցին ազգային սուվերեն պետություններ, բայց պայքարը տակավին չի ավարտվել, շարունակվում է տնտեսական ինքնուրույնության և քաղաքական անկախության ամրապնդման համար: ՍՄԿԿ ծրագրում ասված է. «Իմպերիալիզմի և ռեակցիոն պրոիմպերիալիստական ռեժիմների դեմ պայքարի են ելնում այն երկրները, որոնք ձևականորեն ինքնուրույն են, իսկ փաստորեն գտնվում են քաղաքական և տնտեսական կախման մեջ օտարերկրյա մոնոպոլիաներից»¹:

Սիրիայի և Լիբանանի ժողովուրդները, ստեղծելով ազգային պետություն, ձգտում էին հասնել տնտեսական և քաղաքական լիիրավ անկախության: Նրանք պահանջում էին

¹ ՍՄԿԿ ծրագիրը, էջ 52—53:

վերացնել գաղութատիրության հենարանները, դուրս մղել օտարերկրյա մոնոպոլիաները, արմատապես լուծել ագրարային հարցը, իրականացնել խաղաղասիրական արտաքին քաղաքականություն, դեմոկրատացնել հասարակական կյանքը, բարձրացնել կյանքի ու մշակույթի մակարդակը: Իսկ ազգային բուրժուազիան, որը կանգնել էր իշխանության գլուխ, տիրապետող դիրքերը պահպանելու համար փորձում էր կոմպրոմիս կայացնել իմպերիալիզմի և ֆեոդալ-կալվածատիրական «վերնախավի» հետ: ՍՄԿԿ ծրագրում ասված է. «...երկրի ներսում աշխատավորների և ունևոր դասակարգերի միջև եղած հակասությունների աճման և դասակարգային պայքարի սրման համեմատ ազգային բուրժուազիան ավելի ու ավելի է հակում դրսևորում համաձայնության գալու իմպերիալիզմի և ներքին ռեակցիայի հետ»²:

Ազգային բուրժուազիայի դեմոկրատիզմը միակողմանի, մակերեսային և անցողիկ է: Սիրիայում և Լիբանանում այն առանձնապես ցայտուն արտահայտություն գտավ ագրարային հարցում: Չնայած շոսյված խոստումներին, գյուղացիությունը զուրկ մնաց արտադրողական միջոցներից: Սիրիայում մշակելի հողերի $\frac{3}{4}$ -րդը (շուրջ 3.500.000 հեկտար) պատկանում էր 8.600 կալվածատերերի³, իսկ 20 տոկոսը՝ գյուղացիներին, որոնք կազմում էին բնակչության ճնշող մեծամասնությունը⁴: Լիբանանում 270.000 հեկտար ընդհանուր մշակելի տարածության կեսը պատկանում էր խոշոր կալվածատերերին, $\frac{1}{4}$ -րդը՝ եկեղեցական-բարեգործական հաստատություններին, իսկ մնացյալը՝ շուրջ 200.000 գյուղացիներին: Ավելի քան 400.000 գյուղացիներ ոչ մի պատառ հող չունեին⁵: Անգամ բերքատվության լավագույն պայմաններում գյուղացիության մեծագույն մասը չէր ապահովում ապրուստը: Անդրադառնալով գյուղացիության վիճակին, «Ջարթոնքը» գրել է. «Ավատապետը միշտ կջանա մշակին ձգել բա-

² Նույն տեղում, էջ 56:

³ „La Nouvelle Revue Internationale“, Paris, 1961, № 1, p. 105.

⁴ Նույն տեղում:

⁵ Նույնը, № 2, էջ 134:

ժին մը, որ հազիվ բավարար ըլլա (ներա) հոգին ու մարմինը իրար հետ պահելու, որպեսզի շարունակե իր (Ֆեոդալի) հողերը մշակելը⁶։

Ազգային բուրժուազիան ըստ էութան ոչինչ չփոխեց նաև քաղաքի աշխատավորների կյանքում։ Լիբանանի կառավարութան 1943 թ. մայիսի 4-ի դեկրետը, որը ձեռնարկատերերին պարտավորեցնում էր աշխատանքի ժամանակ վնասված և անաշխատունակ դարձած աշխատավորներին հատուցում տալ, միաժամանակ ձեռնարկատերերին իրավունք էր վերապահում դատարանի միջոցով ճշտելու արկածի հանդամանքները և տուժած կողմին հասանելիք զուտարի չափը։ Դրանով իսկ կառավարութունը փաստորեն աջ ձեռքով տրվածը ձախով հտ էր վերցնում։ Իսկ մայիսի 12-ի դեկրետը, որը վերաբերում էր աշխատավարձի մինիմում և աշխատավորական բազմանդամ ընտանիքներին օգնություն սահմանելուն, թեև նյութական որոշ պարտավորություններ էր դնում ձեռնարկատերերի վրա, սակայն, մյուս կողմից էլ նրանց տալիս էր այդ պարտավորություններից խուսափելու միջոցներ։ Գալով 1944 թ. սեպտեմբերի 30-ի օրենքին, որով 12-ից մինչև 30% հավելում էր սահմանվում աշխատավարձերի վրա, ապա այն չգործադրվեց ձեռնարկատերերի բողոքի հետևանքով...

Ապավինելով պետական օրգանների պաշտպանութանը, ձեռնարկատերերը հազար ու մի ձեռքով ճնշում էին աշխատավորներին։ Այդ տեսակետից բնորոշ է այն, որ նրանք բանվորներին և ծառայողներին արհեստականորեն բաժանել էին երկու խմբի՝ մնայուն և ժամանակավոր։ Մնայունները, որոնք առհասարակ կազմում էին տվյալ ձեռնարկության կամ հիմնարկի ընդհանուր աշխատավորների շնչին տոկոսը, աշխատում էին օրական ութ ժամ, իրավունք ունեին տարեկան միամսյա կամ կիսամսյա արձակուրդի, վարձատրվում էին հիվանդության պատճառով բացակայած օրերի համար և

6 «Զարթոնք», 27 ապրիլի 1952,

լստ աշխատանքային ստաժի հատուցում էին ստանում ձեռնարկությունից հեռանալու կամ հեռացվելու դեպքում: Օտարերկրացիները, որոնք բոլորն էլ անբացառ համարվում էին մնալուն աշխատողներ, վայելում էին զգալի շահով ավելի արտոնություններ, քան միեկնույն խմբի լիբանանցիները կամ սիրիացիները: Վերջիններս, իրենց հերթին բաժանված էին Ա. և Բ խմբերի, որոնք իրարից տարբերվում էին վարձատրության շահերով⁷: Աշխատավորներին այդ կարգի դասակարգման ենթարկելու հնարանքը հիմնականում հետապնդում էր մի նպատակ՝ ստեղծել բանվորական արիստոկրատիա աշխատավորների միասնությունը պառակտելու համար:

Ժամանակավոր բանվորներն ու ծառայողներն աշխատում էին վատթարագույն պայմաններում: Նրանք իրավունք չունեին տարեկան արձակուրդի, չէին վարձատրվում հիվանդության պատճառով բացակայած օրերի համար, հատուցում չէին ստանում ձեռնարկությունից հեռանալու կամ հեռացվելու դեպքում, չէին օգտվում ութժամյա աշխատանքային օրվա դրությունից: Արդյունաբերական օբյեկտներում նրանց աշխատանքն առհասարակ սկսվում էր արեգակի ծագման հետ և վերջանում արեգակի մայրամուտի հետ: Դրբբայի մետաքսի գործարանում երկսեռ բանվորներն աշխատում էին 12 ժամ⁸, Երկաթուղու մոնոպոլիայի բանվորները՝ 11—14⁹, իսկ մանր տիպի ձեռնարկություններում գործատերերը ինքնակամ կերպով աշխատանքային օրն երկարաձգում, հասցնում էին մինչև 16 ժամի:

Այդ ուժասպառ աշխատանքի համար աշխատավորներն ստանում էին ողորմելի վարձատրություն, որը, պատերազմի առաջացրած տնտեսական առանձնահատուկ պայմաններում, չէր կարող բավարարել աշխատավորական ընտանիքի կարիքները: Ժիրայր Մովիկյանի գուլպայի գործարանի բան-

7 «Ժողովուրդի ձայն», 23 հունիսի 1945:

8 «Արարատ», 28 ապրիլի 1945:

9 Նույնը, 23 հունիսի 1945:

վորները ստանում էին 120—175 լիբանական դահեկան օրավարձ¹⁰, Դըբբայի մետաքսի գործարանի բանվորները՝ 150—200¹¹, Բեյրութի ջրի հայթաթման մոնոպոլիայի բանվորները՝ 300—400¹², Կառավարության ուղարկված իրենց բողոքագրում, Բեյրութի բանվորներն իրավացիորեն նշում էին. «Ներկա պայմաններու տակ, աշխատավորի մը ամսականը հազիվ թե բավարարե անոր տաս օրվա ծախսերուն»¹³, Որ իրոք աշխատավարձերը անբավարար էին, դա երևում է թեկուզ մթերքների գներից, որոնք օրավուր աճում էին: 1945 թ. երկրորդ կիսամյակում 1 կգ ոսպի գինը 45-ից բարձրացել էր 80 դահեկանի, 1 կգ սպիտակ լոբին՝ 135-ից 175-ի, 1 կգ ալյուրը՝ 65-ից 100-ի, 1 կգ միսը՝ 250-ից 400-ի, 1 կգ յուղը՝ 600-ից 900-ի և այլն¹⁴: Նույնպիսի աճ էին արձանագրել նաև լայն սպառման ուրիշ ապրանքների գները: Տնտեսագետ էլիաս Գաննաթեն ճիշտ է նկատել որ «(աշխատավարձերի) գնողական կարողությունը... գնալով նվազում էր, աշխատանքային եկամուտն այլևս չէր համապատասխանում կյանքի անհրաժեշտ միջինումին, չէր ապահովում աշխատավորի պոյությունը»¹⁵:

1944—1945 թթ. լիբանանում նոր հարկային օրենքն առավել ևս վատթարացրեց ժողովրդական զանգվածների տընտեսական վիճակը: Տիրապետող դասակարգի հարկային քաղաքականության հակաժողովրդական բնույթը ձաղկում էին անգամ առանձին բուրժուական գործիչներ: Դրանցից հրապարակախոս Ժորժ Նակկաշը գրում էր, որ «գործի մարդկանց օլիգարխիան» կիրառում է «հարկային դաժան քաղաքականություն»¹⁶: Բավական է նշել, որ 1945 թ. լիբանանի

¹⁰ «Ժողովուրդի ձայն», 21 հուլիսի 1945:

¹¹ Նույնը, 29 ապրիլի 1945:

¹² Նույնը, 10 ապրիլի 1945:

¹³ Նույնը, 10 ապրիլի 1946:

¹⁴ Նույնը, 18 նոյեմբերի 1945:

¹⁵ E. Gannagé, La Réforme des Impôts directs au Liban et en Syrie, Beyrouth, 1947, p. 16.

¹⁶ „L'Orient“, 23 Novembre 1944.

պետական բյուջեի ընդհանուր մուտքերի (59.194.000 լիբ. լիրա) 54.9 տոկոսը գոյացել էր անուղղակի և 12.5 տոկոսը միայն ուղղակի հարկերից¹⁷: Անուղղակի հարկերի այդպիսի աճը նշանակում էր «գերբեռնավորել միջին խավերը և բեռնաթափ անել հարուստ խավերին, հասարակ ժողովրդի և բուրժուազիայի միջև ստեղծելով այնպիսի խրամատ, որը հեղափոխությունը միայն կկարողանար լցնել»¹⁸: Դրությունը տարբեր չէր նաև Սիրիայում: Սիրիայի կոմունիստական կուսակցության քաղբյուրոն ահազանգում էր. «Կարելի չէ ազատվիլ երկրին սպառնացող տնտեսական փլուզումեն, եթե երբեք կառավարությունը արագ միջոցառումներ չընե պայքարելու համար սղության և անգործության դեմ... եթե երբեք չհրաժարի իր ֆինանսական ներկա քաղաքականութենեն, որ կծրգասի պետության պետք եղած ծախքերուն մեծ մասը ձեռք բերել անուղղակի դանազան տուրքերով, որոնք կհնչեն ժողովուրդին մեծամասնության վրա, զանոնք մատնելով հետին ծայր թշվառության»¹⁹:

Ինքնահոսի թողնելով ժողովրդական կրթության և առողջապահության հրատապ հարցերի լուծումը, Սիրիայի և Լիբանանի կառավարող շրջանները բյուջեի զգալի մասը հատկացնում էին ոստիկանական ջոկատներ կերակրելու և բանտեր կառուցելու վրա: 1950—1951 թթ. Լիբանանի կառավարությունը հինգ միլիոն լիրա ծախսեց 6.000 տեղանոց մի նոր բանտ կառուցելու համար, այն դեպքում, երբ դպրոցական շենքերի պակասի հետևանքով հազարավոր երեխաներ մնում էին փողոցում²⁰: 1952—1953 թթ. Սիրիայում երեխաների 30% դպրոց չէր հաճախում, իսկ տարվա սկզբում դպրոց ընդունվածների 30—40% դպրոցը լքել էին «տնտեսական ճնշման ներքո»²¹:

¹⁷ E. Gannagé, La Réforme des Impôts directs, p. 441.

¹⁸ Նույն տեղում, էջ 627:

¹⁹ «Ժողովուրդի ձայն», 26 մարտի 1946:

²⁰ «Le Mouvement Syndical Mondial», Paris, 1951, № 1, p. 12.

²¹ «The Economic Development of Syria, Report by the IBRD», U. S. A. 1955, p. 150.

Դրությունը անմխիթար էր նաև Սիրիայի և Լիբանանի հայկական դպրոցներում: Իբրև դպրոց օգտագործված որոշ շենքեր «բարեկեցիկ համայնքի մը կողմն իբրև ախոռ իսկ ընդունելի պիտի չնկատվին»²², Այդ դպրոցները տախտակաշեն ու թիթեղածածկ էին և զրկված ամեն կարգի «ներքին ու արտաքին հարմարութուններ»²³: Մի շարք դպրոցներում մինչև անգամ «անշուք գրասեղաններ» չկային և երեխաները սովորում էին «ծնկաշոք» վիճակում²⁴: Հարուստները գերադասում էին օտար դպրոցները, կամ էլ ստեղծում էին առանձնաշնորհյալ կրթական հաստատութուններ: Դրանցից էր Հալեպի Կարեն էպպե ճեմարանը, որը յուրաքանչյուր աշակերտի համար տարեկան միջին հաշվով ծախսում էր 420 սիրիական լիրա, այն դեպքում, երբ նույն քաղաքի Հայկազյան դպրոցը ծախսում էր 98, Գամշլիի հայկական դպրոցը՝ 52, Գերմանիկյան դպրոցը՝ 25 ս. լ.²⁵:

Գլխավորապես աշխատավորներով բնակված թաղամասերը գտնվում էին սանիտարական վատթար պայմաններում: 1951 թ. Մերձավոր արևելքի հայկական գաղթավայրերում կատարած շրջագայութունից Ամերիկա վերադարձին, Լ. Գարակեռոյանը գրել է. «Սոսկումով ու ամոթով կհիշեմ Բեյրութի Մասլախ քեմփը», որի բնակիչները (ճնշող մեծամասնությամբ հայ աշխատավորներ) «կշնչեն մոտակա սպանդանոցեն, կաշիի գործարանեն և աղբանոցեն եկած նեխած օդը: Մղձավանջի պես բան մըն էր տեսնել մեր հայ մանկիկները, որոնք աղբյուս և աղտեղութուն կփորփորեին խոզերուն հետ: Կհիշեմ նաև հավասարապես վատթար վիճակը Թիրոյի քեմփին... և Սանջակ քեմփը, ... նեխած օդը, փոշին և ճանճերը միլիոններով: Տխրությամբ կհիշեմ Հալեպի Դավուդիեի խեղճ գաղթակայանը և Զեյթուն խանի քեմփը»²⁶: Այդ իրողութուն-

22 «Զարթոնք», 12 ապրիլի 1951:

23 Նույնը, 13 օգոստոսի 1952:

24 Նույնը, 27 օգոստոսի 1952:

25 Հաշվումներն ըստ «Հուսարբի» (27 հունվարի 1956 թ.) տվյալների:

26 «Զարթոնք», 23 փետրվարի 1951:

ները հաստատում էին մինչև անգամ տիրապետող դասակարգի ակնառու ներկայացուցիչները: Լիբանանի հանրապետության նախագահ Քամիլ Շամունը հայտարարել է. «Հազարավոր (հայ) ընտանիքներ կապրին անտանելի պայմաններում, առողջսպասական ամեն հարմարութենե զուրկ»²⁷:

Մանր աշխատանքը, թերսնումը, անտանելի սանիտարական-կենցաղային պայմաններն աշխատավոր ընկալելությանը հասցնում էին համաճարակների: 1950 թ. Բուրջ Համուդի մի խումբ հայ աշխատավորներ քաղաքագլխին ուղղված իրենց բողոքագրում նշում էին, որ Նոր Ադանա, Նոր Յողկատ, Նոր Թոմարզա, Հարտ Սադեր, Իտալիան և այլ հայկական թաղերում «աղտոտութենե ծնունդ առած մժեղի ալիքը մալարիայի և տեսակ-տեսակ այլ հիվանդություններու պատճառ դարձած է»²⁸: 1952 թ. Լիբանանի առողջապահության մինիստրությունն անհանգստանում էր, որ մի շարք աշխատավորական թաղերում «մալարիան մտահոգիչ համեմատություններ է ստացած և կսպառնա տարածվիլ մայրաքաղաքին վրա»²⁹: Մալարիան, դիզենտերիան, տրահոման և ուրիշ վարակիչ հիվանդություններ ավեր վին գործում մանավանդ Սիրիայում: Մահացության տոկոսով Սիրիան ետ չէր մնում կատինական Ամերիկայի, Աֆրիկայի և Ասիայի երկրներից: 1951—1953 թթ. Սիրիայում գրանցված մահերի 36% կազմում էին 1—5 տարեկան երեխաները³⁰: Հուսահատության մատնված շատ աշխատավորներ գերադասում էին «վերջ տալ իրենց կյանքին», քան թե ապրել թշվառության մեջ³¹: 1952 թ. Լիբանանում ինքնասպանություն էին գործել 190 աշխատավորներ...³²:

27 «Հուսարբեր», 2 սեպտեմբերի, 1954:

28 «Ջարթոնք», 29 ապրիլի 1950:

29 Նույնը, 11 ապրիլի 1952:

30 «The Economic Development of Syria», p. 158.

31 «Ջարթոնք», 21 հոկտեմբերի 1950:

32 Նույնը, 2 ապրիլի 1953:

Փակուղուց ելք որոնելով, աշխատավորները համախմբվում էին արհմիությունների շուրջը: Մինչև առաջին համաշխարհային պատերազմի տարիները Սիրիայում և Լիբանանում գործում էին 8—10 արհմիություններ մի քանի հազար անդամներով: 1945—1946 թթ. ըստ Մուստաֆա Արիսի հաղորդման Լիբանանի արհմիությունների ֆեդերացիան հաշվում էր 30.000, իսկ Սիրիայի արհմիությունների ֆեդերացիան՝ 18.000 անդամներ³³:

Լիբանանում 75 արհմիություններից 60 ամենակարևորները գործում էին Արհմիությունների ֆեդերացիայի ղեկավարության ներքո, իսկ մնացյալ 15-ը կազմում էին կաթոլիկական («Կաթոլիկ աշխատավոր երիտասարդություն») և այսպես կոչված «ազատ» կամ կառավարական արհմիությունները³⁴, որոնք աշխատավորների շահերը պաշտպանելու փոխարեն սպասարկում էին տիրապետող դասակարգին: Պատկերը տարբեր չէր նաև Սիրիայում:

Վիճակագրական տվյալներ չկան տարբեր արհմիություններում գործող հայ աշխատավորների թվի վերաբերյալ, սակայն, հնարավոր է որոշ հետևություններ անել հարակից փաստերի հիման վրա:

Հայտնի է, որ Լիբանանի հայերի (այն ժամանակ շուրջ 100.000) համարյա 70% ապրում էին Բուրջ Համուզում և նրա մերձակա թաղերում, որտեղ տեղադրված էին ազգային, ինչպես նաև օտարերկրյա կապիտալին պատկանող զգալի թվով արդյունաբերական ձեռնարկություններ: Մար Մխայիլում գործում էին Բեյրութի էլեկտրականության և էլեկտրաքարշի մոնոպոլիաների գլխավոր ատելյանները, Խանամիրյան-Դեղեյան կոշկի գործարանը. Աշրաֆիեյում՝ ծխախոտագործական Ռեժի մոնոպոլիայի գործարանները. Խալիլ Բեդևիում՝ Զեյբրի եղ-

³³ W. Z. Laqueur, The Communism and Nationalism, p. 149.

³⁴ «Новое время», 1 июля 1946, стр. 8.

բայրների հրուշակեղենի և Թաշչյանի գորգագործական գործարանները. Բուրջ Համուդում՝ նավթային Շել, Սոկոնի, Շամմաս և Նասիոնալ մոնոպոլիաների նավթագտման կայանները, ինչպես նաև Պոլիկարպոսի և Նաջարյանի սարքաշինական, Չաթալբաշյանի կաշեգործական, Ապրոյանի տեքստիլ, Մովիկյանի գուլպայի գործարանները և հայերին պատկանող կոշիկեղենի, ղգեստեղենի, ստվարաթղթի պատրաստութայամբ ըզբաղվող բազմաթիվ ուրիշ ձեռնարկություններ:

Դեպի այդ թաղերը հայ կապիտալիստների շահագրգռվածությունը հետևանք էր այն բանի, որ դրանց բնակիչների հիմնական զանգվածը կազմում էին հայ աշխատավորները: Սփյուռքահայ կապիտալիստը միշտ էլ գերադասել է գործ ունենալ ոչ թե օտարազգի, այլ հայ աշխատավորների հետ: Դա բացատրվում է նրանով, որ հայ կապիտալիստի համար անհամեմատ ավելի հեշտ է հայ աշխատավորներին շահագործելը: Նրանց հնազանդութայան մեջ պահելու նպատակով, հայ կապիտալիստը կարող է շարաշահել նրանց ազգային պատկանելիության ղգացումը և, անհրաժեշտութայան դեպքում, նրանց բարոյական ճնշման ենթարկել այն քաղաքական, ազգային, մշակութային բազմապիսի կազմակերպությունների միջոցով, որոնց ծնողն ու սնուցողը ինքն է:

Ակնբախ իրողություն է, որ հայ աշխատավորները առաջավոր դիրքեր ունեին մի շարք արհմիությունների վարչական օրգաններում: Նավթային ընկերությունների արհմիութայան վարչութայան անդամ էին Վոսա Պոզյանը, Հարություն Սեոկյունյանը³⁵, Մեխանիկ բանվորների՝ Բյուզանդ Բանշարչյանը, Պարգև Էոջյուրյանը, Կարապետ Մարգարյանը³⁶, գրաշարների՝ Հովսեփ Գրըրգյանը³⁷, կաշեգործների՝ Փանոս Թըրթըրյանը, Հակոբ Շիրինյանը, Պողոս Ավանյանը³⁸, կոշկակար-

35 «Ժողովուրդի ձայն», 13 մարտի 1946:

36 Նույնը, 1 մայիսի 1946:

37 Նույնը, 19 մայիսի 1945:

38 Նույնը, 16 հունիսի 1945:

ների՝ Գրիգոր Չաղըրջյանը, Պարույր Բաղդասարյանը, Սիմոն Գրիգորյանը, Սողոմոն Քեչիշյանը, Արմենակ Բուրսայանը³⁹, դերձակների՝ Սեֆոնիկ Ժամկոչյանը, Անդրանիկ էմոյանը, Անդրանիկ Դեմիրջյանը, Սահակ Պապիկյանը⁴⁰, ատաղձագործների՝ Ասատուր Ասապը, Արիս Աշապահյանը, Եզնիկ Տոնապետյանը, Հայզավակ Մամըրջյանը⁴¹: Հայ աշխատավորները պատասխանատու դիրքեր ունեին նաև ուրիշ արհմիություններում:

Վերահիշյալ արհմիություններում հայերը զբաղեցնում էին վարչական աթոռների $\frac{1}{4}$ -ից մինչև $\frac{1}{3}$ -ըրը և նրանց էր հատկացված նախագահի, քարտուղարի ու զանձապահի տեղակալի պաշտոնները: Այդ փաստը խոսում է այն մասին, որ արհմիություններում արաբներից հետո հայերը կազմում էին հիմնական զանգվածը, հավանաբար $\frac{1}{4}$ -ից մինչև $\frac{1}{3}$ տոկոսային հարաբերակցությամբ: Այսպես, քանի որ մեխանիկների արհմիության 11 վարչական աթոռներից 3-ը գրավել էին հայերը⁴², մի փոքր վերապահությամբ պետք է հետևենք, որ այդ արհմիության 1500 անդամներից⁴³ շուրջ 300—350-ը հայեր էին:

Զպետք է անտեսել նաև այն, որ առանձին հայ գործիչներ կարևոր դեր էին կատարում Արհմիությունների ֆեդերացիայի ղեկավար օրգաններում: Դրանցից կարապետ Ըզնավորյանը Արհմիությունների համաշխարհային ֆեդերացիայի Փարիզի կոնգրեսի (1945 թ.) լիբանանյան պատվիրակության անդամ ընտրվեց Մուստաֆա Արիսի, Ժորժ Յրեյհայի, Ժորժ Մուկարզելի և Այսար Զիադեի հետ միասին:

39 Նույնը, 15 հունվարի 1946:

40 Նույնը. 26 մարտի 1946:

41 Նույնը, 8 փետրվարի 1946:

42 Նույնը, 1 մայիսի 1946:

43 «Новое время», 1 июля 1946, стр. 8.

ԱՐԱՐ ԵՎ ՀԱՅ ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՂ ՊԱՅՔԱՐԸ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿՈՌԵՔՍԻ ՀԱՄԱՐ

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին ըզ-
գալի վերելք ապրեց Սիրիայի և Լիբանանի արդյունաբերու-
թյունը, նպաստելով բանվոր դասակարգի թվական աճին: Օբ-
յեկտիվորեն, արդյունաբերական բնակչության աճը պրոգրե-
սիվ երևույթ է. «Նա պոկում է բնակչությունը հեռավոր, հե-
տամնաց, պատմության կողմից մոռացված խուլ անկյուննե-
րից և ներգրավում է նրան արդի հասարակական կյանքի հոր-
ձանուտի մեջ: Նա բարձրացնում է բնակչության գրագիտու-
թյունն ու նրա գիտակցականությունը, պատվաստում է նրան
կուլտուրական սովորություններ ու պահանջմունքներ»⁴⁴,

Ղեկավարվելով Սիրիայի և Լիբանանի կոմունիստական
կուսակցությունների Աղգային խարտիայի սկզբունքներով և
արտահայտելով աշխատավորական զանգվածների կամքը,
Սիրիայի և Լիբանանի արհմիությունների ֆեդերացիաները
միաժամանակ առաջ քաշեցին աշխատանքային կողեքս ստեղ-
ծելու խնդիրը, կողեքս, որը պաշտպաներ աշխատավորների
«իրավունքները, կարգավորվելով նրանց և ձեռնարկատերերի
փոխհարաբերությունները՝ արդարության և ազգային շահերի
հիման վրա»⁴⁵:

Լիբանանում աշխատանքային կողեքսի համար պայքարի
ազդանշանը տվեց 16 արհմիությունների ներկայացուցիչնե-
րի խորհրդակցությունը: 1945 թ. փետրվարի 2-ին նրանք ըն-
դունեցին մի շարք որոշումներ բանվորների և ծառայողների
աշխատանքի պայմանները բարելավելու ուղղությամբ: Այդ
որոշումների հիման վրա, Արհմիությունների ֆեդերացիայի
նախագահը հրապարակեց հայտարարություն, որով կառա-
վարությունից պահանջվում էր՝ անհապաղ կազմել և պառլա-
մենտի քննարկմանը հանձնել աշխատանքային կողեքսի նա-

⁴⁴ Վ. Ի. Լեհին, Երկեր, հ. 3, էջ 746—747:

⁴⁵ Kh. Bakdache, La Charte Nationale du Partle Commu-
niste en Syrie et au Liban, Beyrouth, 1944, p. 47.

խագիծը, բանվորների և ծառայողների աշխատավարձի հավելում կատարել 1944 թ. հունվարի 1-ից հաշվելով, աշխատավորների օգտին բարեփոխել եկամտահարկի օրենքը, մերժել կալվածատերերի պահանջը բնակարանային վարձքի օրենքը փոփոխելու մասին, զեղչված գներով զգեստեղենի և մթերքների վաճառք կազմակերպել աշխատավորների շրջանում և այլն⁴⁶։

Այդ հայտարարությունը խոր ոգևորություն առաջացրեց աշխատավորության մեջ։ Բեյրութի և մյուս քաղաքների աշխատավորները հանդես եկան ֆեդերացիայի պահանջներին հավանություն հայտնող ցույցերով և գործադուլներով։ Առանձնապես ուշագրավ էր Ռեժի ծխախոտագործական մոնոպոլիայի ավելի քան 2.000 բանվորների և ծառայողների գործադուլը։ Նշելով որ օտարերկրյա կապիտալիստներն անմարդկային ձևով են շահագործում լիբանանցի աշխատավորներին, գործադուլի ղեկավարները հավանություն հայտնեցին ֆեդերացիայի առաջարկներին և իրենք էլ իրենց կողմից ձևակերպեցին մի շարք նոր պահանջներ. աշխատանքային ութժամյա օր հաստատել Ռեժի ծխախոտագործական մոնոպոլիայի բոլոր տեղամասերում, աշխատավարձի հավելում կատարել ըստ 1944 թ. օրենքի, վերջ տալ ժամանակավոր աշխատավորի դրուժյանը, և բոլոր բանվորներին ու ծառայողներին դիտել որպես մնայուն աշխատողներ, պաշտոնապես իրավունք տալ ձեռնարկության աշխատողներին արհմիություն կազմելու, ստեղծել աշխատավորների և մոնոպոլիայի ներկայացուցիչներից քննիչ հանձնաժողով, որը պետք է զբաղվեր երկու կողմերի վիճելի հարցերի կարգավորումով⁴⁷։

Ռեժիի կապիտալիստները, որոնք սկզբում պատրանքներ էին սնուցում գործադուլը պառակտելու և այն ընկճելու մասին, ի վերջո, հասան այնտեղ, որ հաշիվները կեղծեցին, ցույց տալու համար որ չեն շահում և, հետևաբար, աշխատավորների

⁴⁶ صوت الشعب، ٢٤ آذار ١٩٤٥

⁴⁷ Նույն տեղում։

պահանջները բավարարելու դեպքում մոնոպոլիան կարող է լուրջ ազնաժամ ապրել: Այդ կեղծիքը, սակայն, որևէ դեր չկատարեց: Գործադուլը շարունակվեց մինչև որ կառավարությունը հավաստիացրեց, թե պառլամենտը՝ Արհմիությունների ֆեդերացիայի պահանջները քննարկելիս նկատի կունենա նաև Ռեժիի աշխատավորների վիճակը⁴⁸:

1945 թ. մարտի 23-ին Լիբանանի պառլամենտը որոշում ընդունեց ֆեդերացիայի պահանջները բավարարելու մասին: Ստեղծվեց աշխատանքային կոդեքսի նախագծի հանձնաժողով, որը, սակայն, ինչպես ցույց տվեց նրա աշխատանքների ընթացքը, ամենևին էլ չէր կամենում գործը տեղից շարժել: Որոշվեց բոլոր բանվորներին և ծառայողներին 1944 թ. մայիսի 1-ից հաշվելով աշխատավարձի հավելում տալ հետևյալ ձևով՝ ամսական 25 Լ. լիրա աշխատավարձ ստացողներին 30%, 26—50 Լ.՝ 25%, 51—75 Լ.՝ 22%, 76—100 Լ.՝ 20%, 101—150 Լ.՝ 15%, 151-ից բարձր՝ 12%⁴⁹: Սակայն, կապիտալիստները մերժեցին այդ որոշումը գործադրել, իսկ կառավարությունը... չկարողացավ այն պարտադրել նրանց: Բարեփոխվեցին եկամտահարկի օրենքի որոշ հոդվածները, սակայն, այդ բարեփոխումն այնքան աննշան էր, որ վերջին հաշվով հավասարվեց ոչինչ չփոխելու հետ: Վարձքերի օրենքը փոփոխվեց կալվածատերերին ձեռնտու ձևով, իսկ ինչ վերաբերում է զեղչված գներով զգեստ և մթերք վաճառելուն, գործը ձախողվեց հենց վաճառքի պրոցեսում չարաշահողների կողմից:

48 Նույն տեղում, Ըստ այդ թերթի տվյալների, 1944 թ. ընթացքում Ռեժիին շահել է 15.000.000 լիբանանյան լիրա, իսկ այդ մի տարում ձեռնարկության բոլոր բանվորների և ծառայողների աշխատավարձն եղել էր 1.440.000 Լ.: Աշխատավարձերի 25 տոկոս հավելում կատարելու դեպքում, այդ գումարը կհասներ 1.800.000-ի, իսկ աշխատավորների բոլոր տնտեսական պահանջները բավարարելու դեպքում 1.920.000-ի, այսինքն աշխատավորներին կհասներ 520.000 ավելի, որը մի շնչին գումար էր մոնոպոլիայի ստացած շահույթների համեմատությամբ:

49 «Զարթոնք», 17 մարտի 1945:

Արհմիությունների ֆեդերացիայի պահանջների այդպիսի տապալումը խոր վրդովմունք պատճառեց աշխատավորներին, նրանց մղելով բողոքի ելույթների: Ապրիլի 6-ին Բեյրութի ջրի հայթայթման մոնոպոլիայի բանվորները գործադուլ հայտարարեցին, պահանջելով աշխատավարձի հավելում ըստ պառլամենտի որոշմանը և պետական պաշտոնյաների ստատուսի կիրառումը նաև իրենց նկատմամբ⁵⁰: Ապրիլի կեսերին գործադուլի դիմեցին Դըբբայի մետաքսի գործարանի աշխատավորները, պահանջելով աշխատավարձի հավելում, ութ-ժամյա աշխատանքային օրվա սահմանում և «մարդկային վերաբերմունք» աշխատավորների նկատմամբ: Կառավարության ղեկավարին ուղղված նրանց բողոքում նշված էր. «Օրական աշխատում ենք 12 ժամ: Աշխատավորների ճնշող մեծամասնությունը ստանում է 150—200 և մի քանիսն էլ 350 լիբ. դահեկան օրավարձ: Չնայած, որ դա շատ շնչին վարձատրություն է, սակայն ձեռնարկատերերը մեզ ստիպում են վճարել մեքենաների թերութայան հետևանքով առաջացած վնասները: Նրանք ծեծում են բանվորներին...»⁵¹: -Տակավին ոչ միայն Դըբբայի աշխատավորները միամիտ ակնկալություններ էին կապում կառավարության միջամտությանը: Սակայն, այդ պատրանքը խորտակվեց հենց նույն Դըբբայի գործադուլավոր բանվորների խոշտանգումով: Ձեռնարկատերերի պահանջով, ոստիկանությունը գործարանից բռնի ուժով դուրս բերեց գործադուլավոր կանանց և կալանքի վերցրեց մի շարք համարձակ բանվորների...⁵²:

Աշխատավորական ելույթները նպաստեցին կողքօքի նախագծման աշխատանքների զգալի արագացմանը: Մայիսի կեսերին արդեն պատրաստ էր նախագիծը: Սակայն, կառավարությունը այն փոխանակ ուղղակի պառլամենտ հղելու, ներքին կարգով հանձնեց խոշոր արդյունաբերողների և օտարերկրյա մոնոպոլիաների քննարկմանը, անհրաժեշտ ուղղում-

50 «Ժողովուրդի ձայն», 10 ապրիլի 1945:

51 صوت الشعب، ٨ نيسان ١٩٤٥

52 صوت الشعب، ١٢ نيسان ١٩٤٥

ներ մտցնելու համար Ամբողջ մի ամիս դռնից դուռ, ձեռքից ձեռք անցնելուց և մանավանդ նավթային Շել մոնոպոլիայի կապիտալիստների մտքած «ուղղումներից» հետո, նախագիծը զրկվեց աշխատավորների և ձեռնարկատերերի միջև արդար իրավարարի դերից, այլանդակվեց և դարձավ ամամարդկային շահագործումն օրինականացնող մի գործիք: Վերանայված վարիանտում, որոշ հոգվածներ վերաշարադրված էին այնպիսի ճարպիկ ձևով, որ դրանց օգտագործումով ձեռնարկատերերը կարող էին աշխատանքային ժամերն երկարաձգել, անցանկալի բանվորներին առանց ստաժային հատուցման աշխատանքից հեռացնել, անշափահասների և կանանց թունավոր ցեխերում աշխատեցնել և այլն: Բացի այդ, աշխատավորներին արգելվում էր քաղաքական գործունեություն ցուցաբերել, գործադու կազմակերպել, ցույցերի մասնակցել...: Հրապարակախոս Նսուլին դիպուկ ձևով նշել է. «Այդ նախագծից օսմանյան տիրապետության հոտ է բուրում...»⁵³:

Այնուամենայնիվ կառավարությունն աշխատանքային կողմից նախագիծն այդ վիճակում ուղարկեց պառլամենտ, որը սակայն, վախենալով աշխատավորական շարժումներից, խոհեմություն համարեց վերադարձնել այն, նորից վերանայելու հանձնարարությամբ: Այդ բանից հետո Արհմիությունների ֆեդերացիայի, խոշոր արդյունաբերողների և մոնոպոլիաների ներկայացուցիչներից կազմվեց նախագծի վերանայման հատուկ հանձնաժողով, որը գործել սկսեց հունիսի վերջերին: Ամենևին էլ հարթ չէին ընթանում հանձնաժողովի աշխատանքները: Կապիտալիստներն անտեղի կերպով ձգձգում էին նիստերը, ճնշում գործադրում ֆեդերացիայի ներկայացուցիչների վրա: Դեմոկրատական մամուլը, արձագանքելով վերանայման աշխատանքներին, հասարակայնության դատաստանին էր հանձնում աշխատավորության կենսական շահերի դեմ նյութվող դավերը: Առանձնապես «Սաութ ալ-Շաաբը» խստորեն քննադատում էր կառավարությանը, մերկաց-

նում օտարերկրյա մոնոպոլիաների օգտին նրա մեքենայությունները⁵⁴,

Այդ բոլորը լրջորեն անհանգստացնում էին աշխատավորներին, նրանց մղում բողոքի ելույթների: Առաջինն ասպարեզիջան երկաթուղու և նավահանգստի բանվորները: Նրանց գործադուլը, որը տեկց շուրջ երկու շաբաթ, պսակվեց հաջողությամբ: Համառ սակարկելուց հետո, այդ մոնոպոլիստական ընկերությունները ստիպվեցին, ի վերջո, գոհացում տալ բանվորների պահանջներին: Երկաթուղու և նավահանգստի բոլոր օբյեկտներում հաստատվեց ութժամյա աշխատանքային օր: Ընտանիքով ծանրաբեռնված լինելու համար տրվող օգնությունը հասցվեց պետական պաշտոնյաների ստացած օգնության չափին: Իրավունք ձեռք բերվեց հատուցում ստանալու աշխատանքից հեռանալու կամ հեռացվելու դեպքում: Մինչև նոր կարգադրություն դադարեցվեց 1944 թ. բանվորներին փոխ տրված մեկ ամսական աշխատավարձի մաս առ մաս ետ գանձելը: Վճարվեց գործադուլի պատճառով շաշխատած օրերի աշխատավարձը և այլն⁵⁵:

Հաջողությամբ ավարտվեց նաև Գորայի (Բուրջ Համուդ) գուլպայի գործարանի բանվորուհիների գործադուլը: Նրանք, թվով 150 հոգի, աշխատավարձի հավելում էին պահանջում ըստ պառլամենտի մարտի 23-ի որոշման: Երկշաբաթյա գործադուլի ընթացքում, նրանք սովորականի նման ներկայանում էին գործարան, գրավում իրենց տեղերը մեքենաների առաջ, բայց չէին աշխատում, սպասելով ձեռնարկատիրոջ պատասխանին: Նրանք դիմադրեցին ոստիկանների՝ գործարանից դուրս գալու հրահանգին, որի պատճառով նրանցից շատերը «հրացանի կոթով» խոշտանգվեցին...⁵⁶: Գործադուլը վերջացավ (հուլիսի 12-ին) բանվորուհիների հաղթանակով: Նրանք

⁵⁴ صوت الشعب، ٦ حزيران ١٩٤٥

⁵⁵ «Ժողովուրդի ձայն», 30 հունիսի 1945:

⁵⁶ Նույնը, 1 հուլիսի 1945:

ստացան աշխատավարձի հավելում, դրամական պարգև մեկ ամսվա աշխատավարձի չափով և գործադուլի օրերի աշխատավարձը⁵⁷։

Առավել խոշոր ելույթ էր Հազմիեի հյուսվածեղենի ակցիոներական ընկերության գործարանի գործադուլը։ Աշխատավորները պահանջում էին՝ աշխատավարձի հավելում պատվամենտի որոշման համաձայն, տարեկան երկշաբաթյա վճարովի արձակուրդ և իրավունք արհեստակցական միություն կազմելու։ Ձեռնարկության գլխավոր կապիտալիստները, որոնք բարձր դիրք ու ազդեցություն ունեին պետական օրգաններում, մերժեցին այդ պահանջները և, ավելին, գործադուլ հրահրելու մեղադրանքով մի շարք առաջավոր բանվորների հեռացրին աշխատանքից։ Երբ հակառակ այդ միջոցառման գործադուլը շարունակվեց, նրանք ոստիկաններ կանչեցին ձեռնարկությունը պաշտպանելու համար «խափանարարություններ» դեմ։ Գործադուլավորները բախվեցին ոստիկանության հետ։ Երեք բանվորներ ձերբակալվեցին։ Սակայն, ի վերջո, Հազմիեի կապիտալիստները տեղի տվեցին աշխատավորների անկում կամքի առաջ, ստիպվեցին գոհացում տալ վերոհիշյալ պահանջներին, չեղյալ համարել վտարման որոշումը և բանտից ազատել արգելափակվածներին⁵⁸։

Դորայում և Հազմիեում ոստիկանության գործադրած վայրագությունները լայն արձագանք գտան մամուլում։ «Լ'Օրիան» թերթը գրում էր, որ աշխատավոր մարդկանց հետ «այդպես վարվելը վարկաբեկում է Լիբանանը և նրա անկախությունը»⁵⁹։ Մի շարք թերթեր հրատարակեցին Բեյրութի արհմիությունների ներկայացուցիչների հայտարարությունը, որտեղ ասված էր. «Բողոքում ենք Դորայի և Հազմիեի բան-

57 Նույնը, 14 հուլիսի 1945։

58 Նույնը, 26 հուլիսի 1945։

59 „L'Orient“, 24 Juillet 1945.

վորներին ծեծելու, անարգելու և բանտարկելու դեմ: Այլևս հնարավոր չէ դիմանալ»⁶⁰:

Աշխատավորական այդ ելույթները արագացրին աշխատանքային կողմնադիմադրության աշխատանքները: Վերջապես օգոստոս ամսին նախագիծը հանձնվեց կառավարությանը: Նոր վարիանտը համարյա ահաբեկեց կապիտալիստներին: Նրանց ամենից ավելի վախեցնում էին այն հոգվածները, որոնցով ստաժային հատուցում վեր նախատեսվում աշխատանքից հեռացող կամ հեռացվող բանվորների և ծառայողների համար: Մինչև նախագծի պառլամենտ հասնելը, այդ կարգի պարտավորություններից ազատվելու նպատակով, նրանք սկսեցին շինծու պատրվակներով աշխատանքից հեռացնել երկարամյա ստաժ ունեցող աշխատավորներին: Այդ դրժեկակերպը, որն առաջին անգամ կիրառեցին Դամուրի լուցկու գործարանը և Բեյրութի էլեկտրականության մոնոպոլիան, գնալով «ընդհանուր երևույթ դարձավ»⁶¹:

Այդ վարձույթը բողոքի նոր ալիք բարձրացրեց համարյա բոլոր ձեռնարկություններում: Արաբ և հայ կապիտալիստների դեմ միասնականորեն հանդես էին գալիս արաբ և հայ աշխատավորները: Ապրոյան, Չաթալբաշյան, Չելեբի, Թաշշյան, Նաշարյան, Մինասյան, Ծովիկյան, Խանամիրյան-Դեղեյան գործարանների տարեգրությունը հարուստ է արաբ և հայ աշխատավորների դասակարգային համատեղ պայքարի դրվագներով: Դա ցայտուն վկայություն է կիբանանի հայ աշխատավորների դասակարգային շահերի գիտակցություն բարձր մակարդակի մասին:

Այդ տեսակետից նշանակալից է Ժիրայր Ծովիկյանի գուպայի գործարանի աշխատավորների (ճնշող մեծամասնությունամբ հայ կանայք) տասնօրյա գործադուլը: Ապարդյուն անցան հայ կապիտալիստի աղեկտուր ճառերը «հանուն ազգային վարկի անվթար պահպանման», աշխատավարձի հավելման հարցն առանց Արհմիությունների ֆեդերացիայի միջամտու-

⁶⁰ صوت الشعب، ۲۳ تموز ۱۹۴۵

⁶¹ «Արարատ», 13 սեպտեմբերի 1945:

թյան լուծելու մասին: Ապարդյուն անցան նաև նրա փորձերն աշխատավորների շարքերում «ազգային երկպառակության» որոմ սերմանալու: Ընդառաջելով հայ աշխատավորների դիմումին, ֆեդերացիայի նախագահ Մուստաֆա Արիսը անձամբ դրադվեց հայ կանանց գործադուլով, և հայ կապիտալիստը ստիպվեց 100 դրուշ հավելում կատարել ձեռնարկության յուրաքանչյուր աշխատավորի օրավարձի վրա⁶²:

Սեպտեմբերի 9-ին Դորայում կայացավ արաբ և հայ աշխատավորների բազմահազարանոց միտինգը: Նախագահության սեղանի շուրջ էին Արհմիությունների համաշխարհային ֆեդերացիայի Փարիզի կոնգրեսի լիբանանյան պատվիրակության անդամները, այդ թվում Մուստաֆա Արիսը, Կարապետ Ճղնավորյանը և ուրիշներ: Խոսելով Լիբանանի աշխատավորության հիմնական պահանջների մասին, Արիսը նշեց, որ ամենակենսական աշխատանքային դեմոկրատական կոդեքսի պահանջն է: Միտինգի վերջում քվեարկվեց կառավարության և պառլամենտի անդամներին ուղղված բանաձև, որով պահանջվում էր՝ փութացնել կոդեքսի քննարկումը⁶³:

Վերջապես աշխատանքային կոդեքսի նախագիծը հղվեց պառլամենտ, որտեղ սակայն, կապիտալիստներն անդրկուլիսային մեծ աշխատանք ծավալեցին: Նրանց հաջողվեց, իհարկե, ոչ բոլոր դեպուտատներին համոզել, որ իբր այդ նախագիծը միակողմանի է, պաշտպանում է միայն աշխատավորների շահերը: Նրանց ձայնակցում էին ռեակցիոն թերթերը, նախագծի «անիրավացիության» մասին առասպելներ հյուսելով: «Լը Ժուռ», «ան-Նահր» «Լը Կոմերս դյու Լըվան» թեր-

62 «Ժողովուրդի ձայն», 26 հուլիսի 1945: Աշխատավարձի հավելում կատարելուց հետո, «ազգասեր» կապիտալիստը գործարանում հաստատեց «տուգանքի դրություն մը. ամեն արտառոց բանի կամ պատրվակի համար 25 լ. դ. տուգանքի կենթարկե աղջիկներուն: Մովիկյանը այս և այս կարգի ուրիշ բռնի միջոցներով բանվորուհիներուն կյանքը անտանելի կդարձնե գործարանեն ներս, որպեսզի անոնք զզվին և գործերին ձգեն երթան առանց հատուցումի» (Նույնը, 4 հոկտեմբերի 1945):

63 صوت الشعب، ۱۰ ايلول ۱۹۴۵

Թերն առաջարկում էին նորից վերանայել նախագիծը, իսկ «նաթիր» թերթուկը, այն «ազգային արդյունաբերութեանը ըսպառնացող վտանգ» համարելով, թելադրում էր պարզապես հանել պառլամենտի օրակարգից: Կապիտալիստների այդ զինարշավը ծառայեց միայն նախագծի քննարկման միառժամանակ ևս ձգձգվելուն:

1946 թ. մարտի կեսերին Արհմիությունների ֆեդերացիան պաշտոնապես բողոքեց հանրապետութեան նախագահին, աշխատանքային կողմից նախագծի այլևս ոչնչով չարդարացող ձգձգման դեմ: Խոստումներ շոսյլելով հանդերձ, Բեշարա էլ-Խուրին դրական ոչինչ չարեց, ընդհակառակը, ֆեդերացիայի բողոքն ընդհանուր գործադուլի սպառնալիք ընդունելով, հրահանգեց ոստիկանութեանը նախազգուշական միջոցներ ձեռք առնել արդյունաբերական օբյեկտները հավանական ելույթների դեմ պաշտպանելու համար: Այդ վերաբերմունքը խոր պայրույթ առաջացրեց Լիբանանի աշխատավորութեան լայն խավերում:

Մարտի 24-ին Բեյրութում կայացավ արաբ և հայ աշխատավորների միտինգը: Բացահայտելով աշխատավորների անմխիթար վիճակը, ճառախոսները քննադատեցին կառավարութեան անտարբերութիւնը, նրա՝ կապիտալիստներին ձեռնուտու ներքին քաղաքականութիւնը: Մուստաֆա Արիսը նշեց. «Բայց կարելի չէ այս անիշխան դրութիւնը այսպես շարունակել: Հարյուրներով և հազարներով աշխատավորներ գործն կհանվին առանց իրենց հատուցումները ստանալու»: Միտինգի վերջում քվեարկվեց հատուկ բանաձև, որով պահանջվում էր աշխատանքային կողմից անհապաղ վավերացումը⁶⁴:

Աշխատավորական միտինգներ գումարվեցին նաև Լիբանանի մի շարք ուրիշ քաղաքներում: Ապրիլի 7-ին Բեկաայի աշխատավորների Զահլեի միտինգում, ճառախոսներ Մուստաֆա Արիսը, Միշել Ազարը, Ժորժ Ֆրեյհան, Արսեն Նաջարյանը և ուրիշներ պահանջեցին «աշխատանքի օրենսդրութիւն»

64 «Ժողովուրդի ձայն», 26 մարտի 1946:

ներ վավերացնել, նկատի առնելե ետք միջսենտիկայական մարմնի (Արհմիությունների ֆեդերացիայի, Ն. Թ.) առաջարկները»⁶⁵; Իսկ Արհմիությունների ֆեդերացիան որոշեց մայիսի 1-ին ընդհանուր գործադուլ հայտարարել առ ի բողոք աշխատանքային կողքերսի քննարկման ձգձգման դեմ⁶⁶:

Ի պատասխան այդ որոշման, կառավարութունը հրապարակեց հատուկ հայտարարություն, ազդարարելով՝

«1. Օրենքը խստորեն պիտի դործադրվի գործադուլը հրահրողներուն դեմ.

«2. Ան որ երեք օր հաջորդաբար կբացակայի գործեն, հրաժարված պիտի նկատվի և իր տեղը ուրիշ մը պիտի դրվի.

«3. Ամեն բանվոր, որուն կհաղորդվի պարտավորիչ ծառայության (Réquisition) հրահանգը, պետք է ենթարկվի»⁶⁷: Այդ ազդարարությունից հետո նպատակահարմար դատվեց հետաձգել ընդհանուր գործադուլը:

Մայիսի 1-ին Բեյրութի աշխատավորների միտինգում խալեդ Բեկդաշը, Ֆարաժալլա Հելուն և ուրիշներ քննադատեցին կառավարության՝ օտարերկրյա մոնոպոլիաներին ձեռնտու քաղաքականությունը, դրվատեցին արաբ և հայ աշխատավորության պայքարը դեմոկրատիայի և ժողովրդական զանգվածների կենսամակարդակի բարձրացման համար: Աշխատավորության օրվա առթիվ տեղի ունեցան նաև խաղաղ ցույցեր. ցուցարարները կրում էին պաստառներ հետևյալ լոզունգներով. «Պաշտպանել աշխատավորներին՝ պայքարելով անգործության դեմ». «Պահանջում ենք ութժամյա աշխատանքային օր». «Պահանջում ենք աշխատանքային դեմոկրատական օրենսդրություն» և այլն:

Մայիսի 20-ին Արհմիությունների ֆեդերացիան ընդհանուր գործադուլի ազդանշան տվեց: Գործադուլի կոչում ասված էր. «Աշխատավորները կպահանջեն իրենց արդար ու օրի-

65 Նույնը, 11 ապրիլի 1946:

66 Նույնը, 17 ապրիլի 1946:

67 Նույնը, 11 ապրիլի 1946:

նական իրավունքները պաշտպանող դեմոկրատական օրենսդրութիւն մը որ ղիրենք պաշտպանն հիվանդութիւն, արկածի և գործարանատերերու քմահաճույքներուն դեմ»⁶⁸: Արձագանքելով Ֆեդերացիայի կոչին, քաղաքների և գյուղերի աշխատավորները դադարեցրին աշխատանքը: Կյանքը դադարեց ամբողջ երկրով մեկ: Կառավարութիւնը ղինված հսկողութիւն հաստատեց արդշունարեբրական օբյեկտներում: Ճընշող մեծամասնութիւնը հայերով բնակված Բուրջ Համուդում ուստիկանութիւնը կրակեց ցուցարարների վրա...: Այդ արշունալի դեպքերից հետո նույն օրը երեկոյան կառավարութիւնը հավաստիք տվեց նախագծի քննարկումն անհապաղ ըսկըսելու մասին⁶⁹:

Իրոք, մայիսի 27-ին պառլամենտը սկսեց կողքքսի նախագծի քննարկումը: Սակայն, մի շարք դեպուտատներ դեկավարվում էին խոշոր արդշունարեբրողների և մոնոպոլիաների շահերը պաշտպանելու սկզբունքով: Այդ բանը երևում էր թեկուզ նախագծի տարբեր հոգվածներում առաջարկված այսպես կոչված ուղղումներից: Նրանք առաջարկում էին իրավունք տալ ներքին գործերի մինիստրին «վատ գործող» արհմիութիւնները ցրելու⁷⁰: Բուտն վեճերի առիթ տվեցին նաև ստատային հատուցման վերաբերող հոգվածները: Դեպուտատներից ոմանք փորձում էին այնպես ռուղել» այդ հոգվածները, որ հնարավոր շափով սահմանափակվեր կամ ի շիք դառնար աշխատավորների ստատային հատուցման իրավունքը: Մոնոպոլիաների գործակալները անգամ մանր ձեռնարկատերերին բողոքի ելույթի մղեցին...: Իրավացիորեն, Ֆաշաժալլա Հելուն նշում էր. «Մանր գործատերերը սխալ գործեցին գործադու հայտարարելով առ ի բողոք աշխատանքային օրենսդրութիւնն դեմ, քանի որ այս գործադուը կրնա միայն օգտակար ըլլալ մոնոպոլիստական ընկերութիւնց»⁷¹:

68 Նույնը, 19 մայիսի 1946:

69 Նույնը, 21 մայիսի 1946:

70 صوت الشعب، ۲۹ ايار ۱۹۴۵

71 «Ժողովուրդի ձայն», 2 հունիսի 1946:

Ստաժային հատուցման վերաբերող հոդվածների քննարկման ընթացքն առավել ևս խորացրեց արդյունաբերողների խումհապը, նրանց մղեց սաստկացնելու երկարամյա ստաժ ունեցող աշխատավորների դեմ սկսված հալածանքը: Միջոցների մեջ խտրություն չդնելով, ոմանք սարքում էին գողության, անբարոյականության կեղծ պատրվակներ, ուրիշներ էլ կա՛մ առաջ էին քաշում շուկայում պահանջարկի պակասելու շինծու պատճառը, կա՛մ անշնչելի մթնոլորտ էին ստեղծում գործարաններում՝ երկարամյա ստաժ ունեցողներին առանց համապատասխան հատուցման փողոց նետելու համար⁷²: Բացի այդ, ստաժային հատուցման հարցում աշխատավորներին «չափավորության» հրավիրելու նպատակով, կապիտալիստները առաջ քաշեցին 1945 թ. մարտի հավելման օրենքի «անարդարացիությունը» և մերժեցին այն գործադրել, չնայած որ նրանք արդեն մի անգամ հավանություն էին տվել դրան:

Հունիսի 11-ին, բողոքելով կապիտալիստների այդ կուրսի դեմ, Ռեժիի բանվորներն ու ծառայողները գործադուլ հայտարարեցին: Այդ գործադուլը, որը տեեց ավելի քան երկու շաբաթ, նշանավորվեց արյունալի իրադարձություններով: Հունիսի 27-ին ժանդարմերիան կրակ բացեց Ռեժիի աշխատավորների վրա, սպանելով 1 և վիրավորելով բազմաթիվ կանայք, այդ թվում և մի հայուհի⁷³: Այդ դեպքերը հակակառա-

72 Այդ կարգի սխրագործությամբ աչքի ընկան նաև մի շարք հայ ձեռնարկատերեր: Դրանցից Խանամիրյան-Դեղեյանները, շուկայում պահանջարկի պակասելու պատրվակով, իբր «ժամանակավոր կերպով» աշխատանքից ազատում էին երկարամյա ստաժ ունեցող բանվորներին...: Կռահելով նրանց հետին միտքը, բանվորները դատարան դիմեցին և ստաժային հատուցում պահանջեցին: Ամիսներ անհոգի քաջըջուքից հետո, երբ բացահայտ դարձավ, որ դատարանը վճռելու է իրավազրկված բանվորների (ճնշող մեծամասնությամբ հայ) օգտին, նրանք հանդես եկան «ազգասերի» դիմակով, և կոչ արեցին բանվորների «ազգային նախանձախնդրությանը» ասելով՝ «ամոթ է որ հայ մը հայու դեմ դատ բանա» և այլն: Սակայն, այդ քարոզը, որի նպատակն էր բանվորների համաձայնությամբ դատը կարճել, մնաց ապարդյուն («Ժողովուրդի ձայն», 18 հունիսի 1946):

73 مذكره الاتعاد العام لنقابات العمال ص 10

վարական զանգվածային գործադուլների և փողոցային ցույցերի հզոր ալիք բարձրացրին, հիմքից ցնցելով տիրապետող դասակարգի դիրքերը:

Տարբեր ուղիով շրջափառված նաև Սիրիայի աշխատավորության պայքարը աշխատանքային կողմից համար:

Աշխատանքային կողմից նախագիծը պառլամենտում քննարկման դրվելուց հետո, ռեակցիան շտեմարկված աղմուկ բարձրացրեց: Նշելով որ Սիրիայի «Ֆելլահին ընկերային մակարդակը շատ ավելի բարձր է, քան... արևելյան Նվրուպայի կարգ մը երկրներու գյուղացիներու կյանքի մակարդակը» և «աշխատավորներու օրավարձերուն մակարդակը ներկայիս շատ ավելի բարձր է, քան Անգլիայի աշխատավորներունը», «Ղաբաս» թերթը հայտարարում էր. «Սիրիայի աղքատները աշխարհի ամենեն բարեկեցիկներն են»⁷⁴: Սիրիայի աշխատավորության «անիրական» պահանջների դեմ հանդես էր գալիս նաև «Բերդի» թերթը: Իսկ Դամասկոսի հոգևոր ճեմարանի մեծավորը մինչև անգամ ուսանողական «ցույց» կազմակերպեց աշխատավորական ելույթներին հակադրելու համար: Շուրջ 200 ուսանողներ հակակոմունիստական բացականչություններ արձակելով շրջեցին փողոցներում...⁷⁵: Բացի այդ, ոստիկանությունն անհանգստացնում էր այն մտավորականներին, որոնք պաշտպանում էին աշխատավորության տնտեսական պայքարը⁷⁶: Ոստիկանական հալածանք ծավալվեց Դամասկոսի համալսարանի առաջավոր դասախոսներից Կամիլ Ալյադի, Ջեմիլ Սալիբայի և ուրիշների դեմ:

Սիրիայի աշխատանքային կողմից նախագիծը, որը կազմել էր Ազգային տնտեսությունից մինիստրությունը, հիմնականում պաշտպանում էր շահագործող դասակարգի շահերը: Աշխատանքային օրվա տևողությունը սահմանվում էր 8—13 ժամ (114-րդ հոդված), աշխատավորներն աշխատավարձ պետք

74 «Ժողովուրդի ձայն», 27 հունվարի 1946:

75 Նույն տեղում:

76 Նույնը, 1 փետրվարի 1946:

է ստանային ըստ իրենց սոցիալական դիրքին՝ ընտանիքի հիմնական կարիքները բավարարելու շափով (130-րդ հոդված): Դա նշանակում էր աշխատավորներին բռնադատել, որ նրանք մինչև կյանքի վերջը մնան թշվառության մեջ: Մի շարք հողավածներ ճառում էին արհմիությունները կառավարական ուղղակի հակակռին ենթարկելու և գործադուլները ոճրի համարժեք հանցագործություն նկատելու մասին: Հանդես գալով պառլամենտում, բուրժուական գործիչ Նազըմ էլ-Կուտսին իրավացիորեն աղղարարեց. «Մեր օրենքները փոխ շառնենք ֆաշիստական վարչաձևեր: Դեմոկրատական պետության մը օրենքն է, որ կպատրաստենք»⁷⁷:

Կողքսի նախագծի քննարկման ընթացքի վրա ազդելու նպատակով, ձեռնարկատերերը որոշում ընդունեցին աշխատավարձերն իջեցնելու մասին: Բողոքելով այդ որոշման դեմ, ջուհակ, կռչակար և մեխանիկ բանվորները գործադուլ հայտարարեցին: Գործադուլ հրահրելու մեղադրանքով ոստիկանությունը դատարան հանձնեց 38 կաշեգործ բանվորներ, որոնցից 18-ը, այդ թվում և հայեր, դատապարտվեցին 1—2 շաբաթ արգելափակման: Այնուամենայնիվ բանվորները շարունակեցին գործադուլը. նրանք խոշոր խմբերով շրջում էին Հալեպի և Դամասկոսի փողոցներում, կրելով պաստառներ հետևյալ լոզունգով՝ «Կեցցե բանվորների միասնականությունը հանուն արդար պահանջների իրականացման», «Պահանջում ենք աշխատանքային դեմոկրատական օրենսդրություն» և այլն: Իսկ հունիսի 1-ին, բողոքելով աշխատանքային կողքսի քննարկումը ձգձգելու և աշխատավարձերն իջեցնելու դեմ, Սիրիայի արհմիությունների ֆեդերացիան հայտարարեց ընդհանուր գործադուլ, որին միայն Հալեպում մասնակցում էին 26.000 բանվորներ և ծառայողներ⁷⁸: Դրություն առավել բարդացումը վտանգավոր համարելով, կառավարությունը հավաստիք տվեց նախագծի քննարկումը արագացնելու և աշխատավարձերը պաշտպանելու մասին:

77 Նույնը, 26 մայիսի 1946:

78 Նույնը, 2 հունիսի 1946:

Իր խարխուլող իշխանութւյան հենարաններ որոնելով, թե՛ Սիրիայում և թե՛ Լիբանանում ազգային բուրժուազիան աստիճանաբար սահում էր դեպի բրիտանական իմպերիալիզմի որոգայթը: Անգլիական գործակալները օգնում էին տեղական իշխանութւյուններին աշխատավորական շարժումները խափանելու գործում: Դրանցից պետք է հատկապես հիշել միստրը Օդզին, որն իբրև բրիտանական «արհմիութւյունների» ներկայացուցիչ Կահիրեում իր «տաղանդը» փորձարկելուց հետո, փոխադրվել էր Բեյրութ: Միստրը Օդզը նախ և առաջ փորձեց «Լիբանանի ֆեդերացիայի հիմքերը քանդել...», սակայն հաջողութւյուն չունեցավ⁷⁹: Նրա կազմած այդպես կոչված «ազատ» կամ կառավարական արհմիութւյունները չկարողացան որևէ դեր կատարել... Բացի այդ, համարյա ամեն օր սպանված կամ վիրավորված քաղաքացիներ ընկնում էին փողոցում, նոնակներ էին պայթում շուկաներում, հրապարակներում, պառլամենտի շենքում, ամբրիկյան և բրիտանական դեսպանատներում⁸⁰: Իսկ հայկական կյանքում, մամուլի սընանկ պայքարին առընթեր, դաշնակ շեֆերն ասպարեզ էին մղում իրենց մարտական խմբերը: Դրանք զինված հարձակում էին գործում աշխատավորների վրա⁸¹: Առավել ցնցող ոճիր էր «աթ-Քարիք» դեմոկրատական ամսագրի խմբագիրներից Շարտունու սպանութւյունը: Ոստիկանութւյունն անգամ ձեռնորեն չէր անհանգստացնում այդ քայքայիչ արարքների հեղինակներին: Իսկ ոեակցիոն թերթերը փորձում էին ժողովրդին ներշնչել այն գաղափարը, որ դրանք աշխատավորների դասակարգային պայքարի շարունակութւյունն են... և առանց լուծարքի ենթարկելու կոմունիստական կուսակցութւյունները⁸² և Արհմիութւյունների ֆեդերացիաները հնարավոր չէ ներքին կարգ ու կանոն հաստատել այդ երկրներում:

⁷⁹ „Moyen-Orient“, Paris, 1949, № 5, p. 3.

⁸⁰ «Զարթոնք», 21 օգոստոսի 1946:

⁸¹ «Ժողովուրդի ձայն», 23 օգոստոսի 1946:

⁸² Միառժամանակ Սիրիայի կոմունիստական կուսակցութւյան դեմ իբրև «ոչ-արտոնյալ» կազմակերպութւյան խաչակրութւյուն հրահրելուց հետո,

Սակայն այդ մեքենայութիւնները արդյունք չտվին: Թե՛ Սիրիայում և թե՛ Լիբանանում աշխատավորական շարժումների հուժկու թափի ներքո աշխատանքային կողքերի համար պայքարի ելքը վճռվեց աշխատավորութեան օգտին: 1946 թ. այդ երկրներից յուրաքանչյուրի աշխատավորները ձեռք բե-րեցին իրենց աշխատանքային կողքերը:

Դա պատմական խոշոր իրադարձութիւնն էր այդ երկրներում, որտեղ գոյութիւն չունէր աշխատանքային ոչ մի օրենք, գրավոր ոչ մի կանոն և աշխատավորական զանգվածների շահագործումը թողնված էր մի բուռ կապիտալիստների ազատ կամքին:

* *
*

Լիբանանի աշխատանքային կողքերը, Մերձավոր արևելքի մյուս երկրների համապատասխան օրենքների համեմատութեամբ, իրավացիորեն համարվում է ամենադեմոկրատականը: Սակայն չպետք է գերազնահատել նրա դերն ու նշանակութիւնը աշխատավորական զանգվածների սոցիալ-տնտեսական կյանքում: Այն դեմոկրատիայի սաղմեր պարունակելով հանդերձ, բուրժուական է: Ուրիշ կերպ էլ չէր կարող լինել...

Այնուամենայնիւ դրանով անցյալի հետ բաղդատմամբ մի շարք կարևոր փոփոխութիւններ տեղի ունեցան Լիբանանի աշխատավորութեան կյանքում:

Սիրիայի ներքին գործերի մինիստրութիւնը «առ ի գործադրութիւն» 1925 թ. հոկտեմբերի 10-ի Ձ 412 հրամանագրի՝ լուծարքի ենթարկեց բուրժուաքաղաքական կազմակերպութիւնները, շնայած որ Սահմանադրութիւնը քաղաքացիներին իրավունք էր տալիս կուսակցութիւններ կազմելու: Սակայն այդ միջոցառման զավեշտական կողմն այն էր, որ տիրապետող դասակարգը փորձում էր ժողովրդի դեմոկրատական իրավունքները կաշկանդել Ֆրանսիական իմպերիալիզմի փոշիթաթախ դիվաններից ղուրս հանված հրամանագրով: Հայտնի է, որ այդ հրամանագիրը վավերացված էր Ֆրանսիական գերագույն կոմիսարութեան կնիքով և նպատակ ունէր խափանել Սիրիայի ժողովրդի ազգային-ազատագրական զարթոնքը Զեբել Դրուզի գյուղացիական ապստամբութեան ժամանակաշրջանում:

1. Նշանակալից փոփոխութիւնն էր ութժամյա աշխատանքային օրվա հաստատումը: Դրանով աշխատավորներն ազատագրվում էին նախկին, միջնադարից ժառանգ մնացած արեւվածագից մինչև մայրամուտ աշխատելու տաժանելի պարտավորութիւնից: Անհրաժեշտութեան դեպքում, ձեռնարկատերերին իրավունք էր տրվում արտաժամյա աշխատանք կազմակերպել, պայմանով սակայն, որ նրանք հանձն առնեին այդ ժամերի աշխատանքը սովորական աշխատատեղերի 50 տոկոսի չափով ավելի վարձատրելու⁸³:

2. Ուշագրավ նորութիւնն էին բերում նաև աշխատավարձի միևնույն չափի և դրա վճարման ձևերի վերաբերող հոդվածները: Դրանցում ասված է. «Միևնույն աշխատավարձը բավարար պետք է լինի աշխատավորի և նրա ընտանիքի անհրաժեշտ կարիքները հոգալու համար: Աշխատավարձը չի կարող ավելի ցածր լինել, քան պաշտոնական միևնույն աշխատավարձը», որը «սահմանվում է Ազգային տնտեսութեան միևնույնութեան, ձեռնարկատերերի և աշխատավորների ներկայացուցիչներից կազմված հանձնաժողովի կողմից»⁸⁴: Գալով աշխատավարձը վճարելու ձևերին, պարզ նշված է, որ ձեռնարկատերերը պարտավոր են ծառայողների ամսական աշխատավարձը վճարել մի նվազով, իսկ բանվորներինը՝ երկու նվազով, պայմանագրային աշխատանքի դեպքում, առ հաշիվ վճարում կատարել երկու շաբաթը մի անգամ⁸⁵: Այդ հոդվածները կարևոր էին նրանով, որ դրանք ձեռնարկատերերին զբերկում էին աշխատավարձը պարբերաբար նվազեցնելու կամ դրա վճարումը ձգձգելու միջոցով աշխատավորներին ճնշելու հնարավորութիւնից, միջոց, որը Արևելքի շատ երկրների նման լայն ժամալ էր ընդունել նաև Լիբանանում:

3. Վերացվեց ժամանակավոր աշխատավորի դրութիւնը: Երեք ամիս անընդմեջ միևնույն ձեռնարկութիւնում աշ-

⁸³ „Code du Travail“, traduit par J. Donato, 2ème édition, Beyrouth, 1954, pp. 14, 15 et 16.

⁸⁴ Նույն տեղում, էջ 17:

⁸⁵ Նույն տեղում, էջ 18:

խատելուց հետո, աշխատավորը իրավունք էր ձեռք բերում մնայուն նկատվելու և աշխատանքից հեռացվելու կամ հեռանալու դեպքում նրան հասնում էր հատուցում՝ մեկ ամսվա աշխատավարձի շափով: Հատուցման այդ շափը կրկնապատկվում էր առնվազն երեք տարվա ստաժ ունենալու դեպքում: Փոխադարձաբար, ձեռնարկովթյունից հեռանալ ցանկացող աշխատավորը պարտավոր էր այդ մասին մի ամիս առաջ գրավոր հայտ ներկայացնել ձեռնարկատիրոջը՝ հատուցման իրավունքից շղրկվելու համար⁸⁶:

4. Պակաս ուշագրավ չէր նաև այն, որ բոլոր աշխատավորներն անխտիր ձեռք բերեցին տարեկան երկշաբաթյա վրձարուլի արձակուրդի իրավունք: Բացի այդ, բուժվելու կարիք ունենալու դեպքում, աշխատավորներին հասնում էր մեկից մինչև երկուս ու կես ամիս արձակուրդ աշխատավարձի պահպանմամբ: Հղիության շրջանում կանայք իրավունք ունեին 40 օրվա արձակուրդի, նույնպես աշխատավարձի պահպանմամբ: Ձեռնարկատերերին արգելվում էր արձակուրդում եղող աշխատավորներին աշխատանքից ազատելու հրաման տալ⁸⁷:

5. Սահմանափակվեց երեխաների և կանանց շահագործումը, որոշակի կարգ հաստատվեց նրանց աշխատանքի տեսակների և աշխատանքային ժամերի համար: Կողեքսի հարակից փաստաթղթերից մեկում թվարկված են արդյունաբերության այն ճյուղերը, որոնցում արգելվում է երեխաների և կանանց աշխատանքը և այն ճյուղերը, որոնցում նրանց աշխատանքը արտոնվում է բժշկական հատուկ թույլտվությունամբ⁸⁸: Բացարձակապես արգելվեց 8 տարին չլրացած երեխաներին շահագործելը, իսկ մինչև 16 տարեկան պատանիներին չէր արտոնվում 7 ժամից ավելի աշխատել: Գիշերային աշխատանք չէր թույլատրվում ո՛չ երեխաներին, ո՛չ պատանիներին և ոչ էլ կանանց⁸⁹:

86 Նույն տեղում, էջ 10—11:

87 Նույն տեղում, էջ 15—16:

88 Նույն տեղում, էջ 12—18:

89 Նույն տեղում:

6. Աշխատանքային կողքեսի մի շարք հողվածներով, առաջին անգամ, թեև տարտամ և անհամարձակ, կենսաթոշակի իրավունքը մուտք գործեց Լիբանանի աշխատավորության կենցաղի մեջ: Կենսաթոշակի անցնելու իրավունք ձեռք բերեցին վաթսուն տարիքը ամբողջացրած կամ միլենույն ձեռնարկությունում քսանհինգ տարի աշխատած բանվորներն ու ծառայողները⁹⁰: Սակայն, պետք է նկատի ունենալ, որ դա բառի սոցիալիստական առումով կենսաթոշակ չէր: Թոշակի անցնող կամ հանգստյան կոչվող աշխատավորը պարզապես ձեռնարկատերից ստանում էր միանվագ կամ մասնավճարի ձևով մի գումար, որի ընդհանուր քանակը չէր կարող ավելի բարձր լինել նրա տասներկու ամսվա աշխատավարձից: Այնուամենայնիվ, կենսաթոշակի այդ կապիտալիստական վարիանտը նախկին դրության հետ համեմատելով զգալի առաջադիմություն էր:

7. Աշխատանքային կողքեսում բազմաթիվ հողվածներ կան արհմիությունների մասին: Դրանք հետապնդում են մի հիմնական նպատակ՝ արհմիությունները վերածել ապաքաղաքական խմբակցությունների, և խստորեն ենթարկել պետական օրգանների վերահսկողությունը: Աշխատավորներին և ձեռնարկատերերին հավասարապես արտոնվում էր իրենց համապատասխան արհմիությունները կազմելու, սայլամանով որ նախօրոք իրավունք ստացվեր Ազգային տնտեսության մինիստրից: Այդ մինիստրության հավանությանը արժանանալուց հետո միայն կարող էր ուժի մեջ մտնել տվյալ արհմիության ներքին կանոնադրությունը⁹¹: Բացի այդ, առանց Ազգային տնտեսության մինիստրի հավանությանը, արհմիությունները իրավունք չունեին փոխադարձ կապեր ըստեղծելու կամ միավորվելու՝ արհմիությունների ֆեդերացիա կազմելու նպատակով⁹²: Իսկ 84-րդ հողվածում բացորոշ աս-

90 Նույն տեղում, էջ 19—20:

91 Նույն տեղում, էջ 28—29:

92 Նույն տեղում, էջ 33:

ված էր. «Արհմիություններին արգելվում է ամեն կարգի քաղաքական գործունեություն, ինչպես նաև նրանց մասնակցությունը քաղաքական բնույթ ունեցող հավաքույթների կամ ելույթների»։ Իսկ վերջում կառավարությանը իրավունք էր վերապահվում «իրենց պարտավորությունները անտեսող» արհմիությունները «լուծարքի ենթարկելու» և մինչև անգամ նրանց վարչության «անդամների դեմ դատական գործ հարուցելու» և այլն⁹³։

Աշխատանքային կողքսի հիմնական տրամադրությունների շարադրանքից երևում է, որ տիրապետող դասակարգը զգալի զիջումներ կատարեց աշխատանքային ժամերի, աշխատավարձի և այլ հարցերում, բայց միաժամանակ փորձեց կաշկանդել աշխատավորների քաղաքական ազատությունը։ Վերջին հաշվով, սլաքի սուր ծայրը ուղղված էր լիբանանի կոմունիստական կուսակցության և Արհմիությունների ֆեդերացիայի դեմ։ Եվ իրոք, շուրջ մի տարի անց, հենվելով կողքսի հողվածների վրա, տիրապետող դասակարգը լուծարքի ենթարկեց ֆեդերացիան և ավելի ուշ կալանքի վերցրեց նրա աչքի ընկնող անդամներին։ Այդ բանից հետո 1947—1952 թթ. կապիտալիստները բազմիցս հարձակվեցին կողքսով ձեռք բերված իրավունքների վրա, բայց ապարդյուն։ Նրանց փորձերը հանդիպեցին արաբ և հայ աշխատավորության կորովի դիմադրությանը և ձախողվեցին։

Սիրիայի և լիբանանի աշխատանքային կողքսները, որոշակի խոցելի կողմեր ունենալով հանդերձ, զգալի շափով բարելավեցին կյանքի բարիքներ կերտող մարդկանց աշխատանքային պայմանները։ Այդ երկրներում աշխատանքային կողքսի ստեղծումը բանվոր դասակարգի խոշոր հաղթանակն էր տիրապետող դասակարգի դեմ։

93 Նույն տեղում, էջ 28 և 33։

ԱՐԱՔՆԵՐԻ ԵՎ ՀԱՅԵՐԻ ՀԱՄԱՏԵՂ ՊԱՅՔԱՐԸ
ԱՆԳՂՈ-ԱՄԵՐԻԿՅԱՆ ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԻ ԳԱՂՈՒԹԱՅՄԱՆ
ՊԼԱՆՆԵՐԻ ԴԵՄ (1946—1952 ԹԹ.)

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին և գրանից հետո, ընդհուպ մինչև 1950-ական թվականները գնալով ուժեղացավ ԱՄՆ-ի տնտեսական և ռազմական հզորությունը: ԱՄՆ-ը արտադրում էր կապիտալիստական աշխարհի արդյունաբերական արտադրանքի կեսից ավելին: Ամերիկյան մոնոպոլիաները, տիրելով համաշխարհային լայնածավալ շուկաներին, ստանում էին վիթխարի շահույթներ: Մասնավոր և պետական կապիտալների արտահանումը, որը նախապատերազմյան տարիների համեմատությամբ ավելացել էր գրեթե երեք անգամ, հանդիսանում էր ԱՄՆ-ի գաղութային քաղաքականության կարևորագույն գործիքը: Համաշխարհային ժանդարմի դեր ստանձնելով, ԱՄՆ-ը պաշտպանում էր դիկտատորական և միապետական ռեժիմները, հանդես գալիս ազգային-ազատագրական շարժումների, խաղաղության և դեմոկրատիայի դեմ:

ԱՄՆ-ի «օգնության» ծրագիրը իրականում կոչ էր պատերազմ նախապատրաստելու սոցիալիստական երկրների դեմ: 1950—1957 թթ. տրված «օգնության» 83%-ը եղել է ռազմական, 7%-ը ֆինանսական, 6%-ը տեխնիկական և 4%-ը հատուկ նպատակների համար⁹⁴: Ռազմական «օգնությունը» հատկացվում էր Սովետական Միության սահմանամերձ շրջաններում արդիական զենքերով սպառազինված բազաների հաստատմանը: Ֆինանսական «օգնությունը» կոչված էր տվյալ երկրի տնտեսությանը տալ այնպիսի ուղղություն, որը հնարավոր դարձներ ամերիկյան մասնավոր կապիտալների արդյունավետ շահագործումը: Տեխնիկական «օգնությունը», թույլ զարգացած երկրներում կյանքի ու մշակույթի մակարդակը բարձրացնելու դրոշի ներքո, իրականում ծառա-

⁹⁴ „La Nouvelle Revue Internationale“, 1961, № 2, p. 68.

յում էր ԱՄՆ-ի քաղաքական նպատակներին, հակաժողովրդական ուժերի պահպանմանը: Մասնավոր կամ հատուկ օգնության ֆոնդերը գտնվում էին ԱՄՆ-ի պրեզիդենտի ուղղակի վերահսկողության ներքո և օգտագործվում էին ազգային-ազատագրական շարժումների դեմ: Այդ ֆոնդերից օգնություն տրվեց Գվադեմալայի կառավարությանը Արբենզի դեմոկրատական ուժերի տապալումից հետո, Իրանի շահին՝ նավթի ազգայնացման համար ծավալված ժողովրդական շարժումների լիկվիդացումից հետո, Քամիլ Շամունին՝ Լիբանանի քաղաքացիական կռիվներից հետո, որպեսզի նրանք ամրապնդեն իրենց իշխանությունը:

Անգլիան պատերազմից դուրս եկավ թուլացած, իսկ հետագա տարիներին վայրէջք ապրեց նրա արդյունաբերությունը, կրճատվեց նրա բաժինը համաշխարհային առևտրում, վատթարացնելով անգլիական կապիտալիզմի տնտեսական դրությունը: Սակայն, բրիտանական իմպերիալիզմը պահպանեց իր գաղութային բնույթը, մնաց որպես գաղութատիրության գլխավոր ամրոցներից մեկը: Զկարողանալով գործարել գաղութային շահագործման և ճնշման հին ձևերը, սպառված մեթոդները, անգլիական բուրժուազիան հարմարվեց նոր պայմաններին, նախ դարձավ ամերիկյան բուրժուազիայի մրցակիցը, ապա դաշնակիցը, իսկ վերջում ենթարկվեց նրա կամքին:

Պատերազմի ավարտին անգլո-ամերիկյան իմպերիալիստների գաղութատիրական պլանների թիրախ դարձան Մերձավոր և Միջին արևելքի երկրները: Իր 1946 թ. ապրիլի 6-ի ճառում Տրումենը նշել է. «Այս շրջանը պարունակում է բնական անսպառ ուսուրաններ: Այն գտնվում է ցամաքային, օդային և ջրային ամենանպատակահարմար ճանապարհների խաչմերուկում: Հետևաբար տնտեսական և ստրատեգիական խոշոր կարևորություն ներկայացնող մի շրջան է, որտեղ բեռնակվող ազգերը սակայն առանձին-առանձին կամ հավաքաբար վերցրած բավականաչափ զորավոր չեն ուժեղ ագրեսիայի դիմադրելու համար: Ուստի, դժվար չէ տեսնել, թե ինչպես

Մերձավոր և Միջին արևելքը կարող է դրսի ուժերի մրցակցության շրջան դառնալ և թե ինչպես այդ կարգի մրցակցությունը կարող է հանկարծ վերածվել կոնֆլիկտի»։ Այդ քաղաքականության առաջին քայլերից եղավ Թուրքիայի և Հունաստանի կառավարություններին տրված 400 միլիոն դոլլարի օգնությունը։ Նրա հաջորդ քայլը ուղղված էր դեպի Իրան և արաբական երկրները։

Ամերիկյան իմպերիալիստների գրոհի թիրախ դարձան նաև Սիրիան և Լիբանանը։ Նրանք որոշել էին... լցնել Ֆրանսիական իմպերիալիզմի տիրապետության տապալումով այդ երկրներում ստեղծված այսպես կոչված «վակուումը»։ Նրանք գործադրում էին բոլոր հնարավոր միջոցները գաղութային լծից նոր ազատագրված այդ երկրների ժողովուրդներին նորից ստրկացնելու համար։ ՍՄԿԿ ծրագրում ասված է. «Իմպերիալիստները օգտագործում են բոլոր միջոցները (գաղութային պատերազմներ, ռազմական բռնկներ, դավադրություններ, տեռոր, քայքայիչ գործունեություն, տնտեսական ճնշում, կաշառում), որպեսզի իրենց իշխանության տակ պահեն ազատագրված երկրները, նրանց նվաճած անկախությունը դարձնեն ձևական կամ այդ երկրները զրկեն անկախությունից»⁹⁵։

Անգլիական իմպերիալիստները, հաշտ աչքով չդիտելով ԱՄՆ-ի գաղութատիրական նկրտումները Սիրիայում և Լիբանանում, առաջ քաշեցին «մեծ Սիրիայի» ծրագիրը, որի նախաձեռնությունը ստանձնեց Անդրհորդանանի Աբդալլահ թագավորը։ Նրանց երազն էր Սիրիայի, Անդրհորդանանի, Պաղեստինի և Լիբանանի միավորումով ստեղծել մի դաշնակցային պետություն, որը «ամուր կերպով կապված ըլլար Իրաքի հետ»⁹⁶։ Դրանով նրանք կկարողանային, նախ և առաջ, ամբապնդել իրենց դիրքերը արաբական երկրներում, երկրորդ, այդ երկրները ապահովագրել ամերիկյան իմպերիալիզմի ներթափանցման դեմ և, երրորդ, չլատել արաբ ժողովուրդներին ազգային-ազատագրական պայքարը։

95 ՍՄԿԿ ծրագիրը, էջ 54։

96 «Ժողովուրդի ձայն», 26 նոյեմբերի 1945։

«Մեծ Սիրիայի» ծրագրի դեմ առաջինը հանդես եկան Սիրիայի և Լիբանանի կոմունիստական կուսակցությունները: 1946 թ. հունիսի 27-ին նրանք հայտարարեցին, որ «մեծ Սիրիայի» ծրագրի ջատագովների «նպատակն է կործանել Սուրիո անկախությունը ու անոր հանրապետական իրավակարգը և զայն դնել իմպերիալիստական գրավման տակ: Մեծ Սուրիո ծրագիրը կվտանգե նաև Լիբանանի գոյությունը, անկախությունը և ապագան»⁹⁷: Քննարկելով «մեծ Սիրիայի» հարցը Լիբանանի պառլամենտն ընդունեց հատուկ որոշում, որտեղ ասված է. «Լիբանանի պառլամենտը կղաղապարտե մեծ Սուրիո ստեղծման ծրագիրը և կառավարութենեն կպահանջե պաշտոնական բողոք դրկել Անդրհորդանանի կառավարության»⁹⁸: Այդ ծրագրի դեմ դիրք գրավեցին Սիրիայի պառլամենտն ու կառավարությունը, ինչպես և Արաբական լիգայի քաղաքական կոմիտեն: «Մեծ Սիրիայի» դեմ արտահայտվեց նաև հայ հասարակայնությունը: Հայ դեմոկրատական մամուլը սիստեմատիկաբար մերկացնում էր այդ իմպերիալիստական ծրագիրը:

1946 թ. վերջերից կոնկրետ քայլերի անցնելով, ԱՄՆ-ի իմպերիալիստները «բանակցություններ» սկսեցին Սիրիայի և Լիբանանի կառավարությունների հետ, այդ երկրների տերիտորիայում նավթամուղ կառուցելու իրավունք ստանալու համար, նավթամուղ, որով պետք է Պարսից ծոցի նավթը հասցվեր Միջերկրական:

Ընդառաջելով ԱՄՆ-ի պահանջին, Լիբանանի կառավարությունը սրեց ներքին իրադրությունը: Ժողովրդական ելույթներից վախենալով, պառլամենտը հավանություն չտվեց Լիբանան-ամերիկյան համաձայնագրին: Այդ բանից հետո, Բեշարա էլ-Նուրին ցրեց պառլամենտը և հրահանգեց նոր ընտրություններ, որոնք պետք է տեղի ունենային նույն տարվա մայիսի 25-ին: Նրա հետին միտքն էր՝ նոր պառլա-

97 Նույնը, 30 հունիսի 1946:
98 Նույնը, 28 նոյեմբերի 1946:

մենտը կազմել այնպիսի տարրերից, որոնք թեր արտահայտվելին ԱՄՆ-ի հետ գործարքի մտնելու քաղաքականությանը:

Օգտագործելով «կարմիր վտանգի» ուրվականը, Բեշարա էլ-Խուրիին հաջողվեց Բեյրութի, հարավային Լիբանանի և Բեկաայի կալվածատերերից կազմել ընտրական բլոկ, որի հաջողութանը նպաստելու համար հավաքագրվեցին ֆալանժիստները, ղուլմի սուրիները, դաշնակաները և ուրիշ ուսակցիոն տարրեր:

Հետադիմական ուժերի այդ համախմբման դեմ դուրս եկավ Ազգային բլոկը, որին ղորավիզ էին հանդիսանում Լիբանանի կոմունիստական կուսակցությունը, Արհմիությունների ֆեդերացիան և ուրիշ կաղմակերպություններ: Ազգային բլոկի հետ էր նաև Լիբանանահայ դեմոկրատական ճակատը, որի կազմում էին հայ կոմունիստները, հնչակյանները, ռամկավարները և Վերածնունդ միությունը:

Ապրիլի 29-ին հրատարակվեց այդ ճակատի հայտարարությունը, որտեղ ասված էր. «Հայ դեմոկրատական ճակատը... իր վերջին նիստին մեջ քննելով Լիբանանի ընտրական կացությունը և նկատի ունենալով հայ և եղբայրական արաբ ժողովուրդներու հասարակաց շահերը, որոշեց՝ ա. Առաջիկա Լիբանանի խորհրդարանական ընտրությունը մասնակցիլ միացյալ և միակամ դեմոկրատական ճակատով, բ. Մմբողջ հայ ժողովուրդը հրավիրել իր ձայները կեդրոնացնել դեմոկրատական ճակատի նշանակած երկու անկուսակցական հարգված ազգայիններու վրա... գ. Մասնակցիլ այն ցանկին, որ կբաղկանա դեմոկրատ Լիբանանի ուժեղացման և անոր ժողովրդի շահերուն ծառայող անձնավորություններե»⁹⁹:

Բեշարա էլ-Խուրիին, հաշվի առնելով հայկական գաղութի նշանակությունը, փորձեց խանգարել Լիբանանահայ դեմոկրատական ճակատի աշխատանքները: Նրա հավաքագրած տեղորիստները ոճրաբույր միջնորոտ ստեղծեցին առանձնապես Մեղավարում, Կարանտինայում և Բուրջ Համուդում,

99 Նույնը, 1 մայիսի 1947:

որտեղ հայկական քվեները որոշիչ դեր են կատարում ոչ միայն հայ, այլև արաբ դեպուտատական թեկնածուների հաջողութւյան գործում: Մայիսի 12-ին սպանվեց կոմունիստ Պողոս Նաթրրյանը, որը Բուրջ Համուդի Նոր Սիս թաղի ընտրական տեղամասի եռանդուն աշխատողներից էր¹⁰⁰: Մայիսի 18-ին դաշունահարվեց Լիբանանի հայրենադարձութւյան կոմիտեի նախագահ Հրանդ Տեքչյանը¹⁰¹: Տեռորիստներն անգամ ձեռնարկներ են հետապնդման շենթարկվեցին: «Ժողովուրդի ձայն», «Զարթոնք», «Արարատ», «Տելեգրաֆ», «Սաութ ալ-Ահրար», «ալ-Հադաֆ», «Սաութ ալ-Շաբաբ» և ուրիշ թերթեր ղալբույթով անդրադարձան այդ ոճիրներին: Նշելով, որ Նաթրրյանը սպանվեց օտարների կողմից զինված հայ ոճրագործի գնդակով», «Սաութ ալ-Շաբաբը» գրում էր. «Մենք, արարներս, երգվում ենք..., որ հայ դեմոկրատների կողքին պիտի պայքարենք մաքրելու համար Լիբանանի հողից այն կեղտը, որ Դաշնակցութւյուն է կոչվում...»¹⁰²:

Մայիսի 25-ի պառլամենտական «ընտրութւյուններն» ամենևին չհանդիսացան ժողովրդական կամքի արտահայտութւյունը: Սարսափի, ճնշման և խարդախութւյան միջոցով ռեակցիան «հաղթանակ» տարավ...: Բանակը, ժանդարմերիան, ոստիկանութւյունը, մինիստրութւյունների ծառայողները, ինչպես նաև ռեակցիոն կազմակերպութւյունների զինված ուժերը կոպիտ կերպով միջամտեցին «կառավարական ցանկի» օգտին: Բողոքում էին մինչև անգամ նրանք, ովքեր օգնել էին Բեշարա էլ-Խուրիի նախընտրական պայքարին: Ցալանժիստների կազմակերպութւյան օրգան «ալ-Ամալը» նշում էր. «Սարսափի, ճնշումի, բիրտ ուժի, խարդախութւյան միջոցով է, որ կառավարութւյունը հաջողեցավ երկրին տալ խորհրդարան մը»¹⁰³: Իր հերթին, դատապարտելով «ուղղակի միջամտութւյունները... և մասնավորապես խաղաղ ժողովրդի

100 Նույնը, 14 մայիսի 1947:

101 Նույն տեղում:

102 صوت الشعب، ٢٢ ايار ١٩٤٧

103 «Ժողովուրդի ձայն», 3 հունիսի 1947:

վրա բացված կրակոցը», Լիբանանահայ դեմոկրատական ճակատը նշում էր. «Ուտնակոխվեցավ ինչպես արար ժողովուրդի, այնպես ալ հայ ժողովուրդի ջախջախիչ մեծամասնութեան կամքը»¹⁰⁴: Այդ «ընտրութիւններէ» հակաժողովրդականութիւնը բացահայտելու տեսակետից բնորոշ է նաև այն, որ Բեշարա էլ-Խուրիի եղբայրը՝ Սելիմ էլ-Խուրին բողոքելով հրաժարվեց իր դեպուտատական աթոռից¹⁰⁵:

Այդ «ընտրութիւններով» Լիբանանում իշխանութեան գլուխ կանգնեցին «իմպերիալիզմի ծառաներն ու գործակալները, օտարներու առանձնաշնորհումներ տալու կողմնակիցները»¹⁰⁶: «Ընտրութիւններէց» անմիջապես հետո պառլամենտը հաստատեց լիբանան-ամերիկյան համաձայնագիրը, որով ամերիկացիներին իրավունք էր տրվում Լիբանանի տերիտորիայում նավթամուղ կառուցելու, առանց մաքսի ներմուծումներ և արտահանումներ կատարելու, հաղորդակցութեան ճանապարհներ, երկաթուղիներ, օդանավակայաններ, նավահանգիստներ վերահսկելու¹⁰⁷:

Ամերիկացիները հսկա գումարներ էին ծախսում լիբանան-ամերիկյան համաձայնագիրը ժողովուրդին ընդունելի դարձնելու համար: Նրանց կաշառած թերթերը «նախախնամական բարիք» էին համարում ամերիկյան նավթամուղը, առասպելներ հյուսում անգործութեան վերացման և ժողովրդական զանգվածների կենսամակարդակի բարձրացման մասին: Իր հերթին, այդ համաձայնագրին «փրկարար դեր» վերագրելով, Բեյրութի դաշնակիցների օրգանը գրում էր. «Ամերիկյան Անգլիայի հետ այն տերութիւնն է, որոնք հետամուտ են իրենց մենաշնորհները տեղական բնակչութեանց բարիքին ի սպաս դնելու... Արդար պիտի շրջար անտեսել... ամերիկյան օժանդակութեան ծրագիրներու մարդասիրական կողմը...: Մարդասիրական բարձր առաքելութիւն մը վիճակ-

104 Նույնը, 4 հունիսի 1947:

105 Նույնը, 10 հունիսի 1947:

106 صوت الشعب، ۲ حزيران ۱۹۴۷

107 Նույն տեղում:

ված է Միացյալ Նահանգներում»¹⁰⁸։ Նրանք ուզում էին հասարակ մարդկանց հավատացնել, որ ամերիկյան մոնոպոլիաները նավթամուղով պետք է ոչ թե արաբական նավթը արտահանեն, այլ «աշխատանքի եռուզեռ և նյութական բարօրություն» բերեն Սաուդյան Արաբիայի, Անդրհորդանանի, Սիրիայի և Լիբանանի ժողովուրդներին...

Ի հակակշիռ ամերիկյան մոնոպոլիաների ձեռք բերած արտոնությունների, բրիտանական իմպերիալիստները փորձեցին ուժեղացնել իրենց ազդեցությունը Սիրիայում և Լիբանանում։ Համախալամական բլոկ, թուրքա-անդրհորդանանյան կամ իրաքա-անդրհորդանանյան ֆեդերացիա կազմելու ձախող փորձերից հետո, նրանք առաջ քաշեցին «մեծ Սիրիայի» մի ուրիշ վարիանտը, ընդ որում նախատեսվում էր Անդրհորդանանի և Սիրիայի միավորումով կազմել մի ընդարձակ պետություն, որի կազմի մեջ մտնելու էին նաև Պաղեստինի և Լիբանանի մուսուլմաններով բնակված մասերը։

Այդ նպատակին էր ուղղված նրանց ներշնչումով կազմված՝ Բեյրութի մարոնականների կրոնապետ Մուբարակի հուշագիրը, որը 1947 թ. սեպտեմբերին հանձնվեց Պաղեստինի միջազգային քննիչ հանձնաժողովին։ Նշելով, որ Լիբանանը և Պաղեստինը «արաբական երկրներ չեն», Մուբարակը պահանջում էր Լիբանանում հիմնել «ազգային քրիստոնյա հայրենիք», իսկ Պաղեստինում՝ «հրեական ազգային հայրենիք»¹⁰⁹։ Հրեաներին և քրիստոնյաներին այդպես մեկուսացնելով, բրիտանական իմպերիալիստները հույս ունեին մուսուլմաններով բնակված տերիտորիաները միավորել Հաշեմական դինաստիայի տիրապետության ներքո և, դրանով իսկ մուսուլմանական աշխարհն ապահովագրել ամերիկյան ներթափանցման դեմ։

Հանդես գալով Մուբարակի հուշագրի դեմ, Լիբանանի Կոմունիստական կուսակցությունը հայտարարեց. «Իմպե-

108 «Ազդակ», 28 սեպտեմբերի 1947:

109 «Ժողովուրդի ձայն», 1 հոկտեմբերի 1947:

րիալիստները և նրանց տեղական գործակալները դավեր են նյութում, ծրագրեր կազմում կիբանանի անկախության վերջ տալու համար: Մուբարակի ծրագրին կողմնակից են կիբանանում՝ Ղովմի սուրի կուսակցությունը, Սիրիայում՝ Մուսուլման եղբայրների կազմակերպությունը և դաշնակները»¹¹⁰: Մուբարակի հուշագրի դեմ արտահայտվեցին նաև հնչակյանները, ռամկավարները և ուրիշ կազմակերպություններ: Կիբանանահայ դեմոկրատական ճակատի «Բոլոր հայերու անունով» հրապարակած կոչում ասված էր. «Կիբանանահայերը, որոնք կիբանանի ժողովուրդին կողքին մասնակցած են կիբանանի անկախության համար մղված պայքարին... կդատապարտեն Մութրան Մուբարակի կողմե Պաղեստինի համար միջազգային քննիչ հանձնախմբին ներկայացված հուշագիրը, զոր կնկատեն վնասաբեր լիբանանցիներու միասնականության և արաբ ժողովուրդներու միջև բարեկամական և եղբայրական կապերուն»¹¹¹:

Սեպտեմբերի 30-ին Բեյրութում հայտարարվեց ընդհանուր գործադուլ բողոքելու համար Մուբարակի հուշագրի դեմ: «Ժողովուրդի ձայնը» հաղորդում էր. «Փակված են բոլոր խանութները, շուկաները և տեղի կունենան ցույցեր»¹¹²: Հայ հասարակայնությունը գործուն մասնակցություն բերեց այդ ելույթներին: Գործադուլի ամբողջ տևողության փակ մնացին հայերով բնակված թաղերի խանութները:

Ներքին դրության առավել սրումը կանխելու նպատակով, կիբանանի կառավարությունը հատուկ հայտարարություն հանդես եկավ Մուբարակի հուշագրի դեմ: Այդ բանից հետո գործադուլը վերջ գտավ:

* * *

Մոնոպոլիաների շահերն ու քաղաքականությունն ավելի ու ավելի էին հակասության մեջ մտնում բանվոր դասակար-

¹¹⁰ صوت الشعب، ٢٩ ايلول ١٩٤٧

¹¹¹ «Ժողովուրդի ձայն», 1 հոկտեմբերի 1947:

¹¹² Նույն տեղում:

գի, գյուղացիութեան, մանր ու միջին բուրժուազիայի շահերի հետ, նպաստելով լիբանանյան օպոզիցիայի աշխուժացմանը:

Լիբանանի օպոզիցիոն ճակատը, որի ձևավորումը սկսվել էր մայիսի 25-ի «ընտրութուններին» նախօրյակին, միավորում էր Ազգային բլոկը, ֆալանժիստների կազմակերպությունը, Լիբանանի Կոմունիստական կուսակցությունը և բազմաթիվ մուսուլմանական, քրիստոնեական և դրուզական խմբակցություններ, ինչպես նաև Լիբանանահայ դեմոկրատական ճակատը: Անընդհատ աճող օպոզիցիոն շարժումը խանդարում էր անգլո-ամերիկյան իմպերիալիստների գաղութացման պլանների իրագործմանը:

1947 թ. վերջերից կառավարող կլիկը բիրտ միջոցներ գործադրեց օպոզիցիայի դեմ: Առաջին հերթին, նրա հարվածի տակ ընկան աշխատավորական կազմակերպությունները: Լուծված հայտարարվեց Լիբանանի Կոմունիստական կուսակցությունը, փակվեցին Արհմիությունների ֆեդերացիայի ակումբները, խափանվեցին «Սաութ ալ-Շաաբ» և «Ժողովուրդի ձայն» թերթերը, և զանգվածային ձերբակալություններ կատարվեցին արաբ և հայ աշխատավորության շրջանում: Մինչև 1948 թ. կեսերը Դըկվենիեի և Բաալբեկի բանտերը լցվեցին բանվոր դասակարգի և ինտելիգենցիայի առաջավոր ներկայացուցիչներով: Թեև ոչ միևնույն վայրագությամբ, այնուամենայնիվ, հալածվում էին նաև ֆալանժիստների, Ազգային բլոկի և այլ օպոզիցիոն կազմակերպությունների ղեկավարները: Կառավարող կլիկը պատժական միջոցներ ձեռք առավ Ալֆրեդ Նակկաշի, Աբդուլ Համիդ Քարամեի և ուրիշների դեմ¹¹³:

Այդ միջոցառումների դեմ բողոքում էին մինչև անգամ բուրժուական գործիչներ: Ռիադ Սուլհին և Բեշարա էլ-Խուրիին ուղարկած իրենց բողոքագրում դրվատելով արգելափակված քաղաքացիների «անկեղծ հայրենասիրությունը» և «քաղաքացիական պարկեշտությունը», Բեյրութի դատա-

¹¹³ „L'Orient“, 2 Novembre 1948.

պաշտպանները պահանջեցին նրանց ազատ արձակումը¹¹⁴։ 1948 թ. դեկտեմբերի 2-ին Բեյրութի աշխատավորները նույն-
իմաստ պահանջով դիմեցին կառավարությանը¹¹⁵։ Բողոքի
ելույթներ տեղի ունեցան նաև Տրիպոլիում, որտեղ ոստիկա-
նությունը կալանքի վերցրեց մի շարք աշխատավորներին¹¹⁶։

Հակառակ մոլեգնող ռեակցիային, աշխատավորներն օգ-
նում էին հարվածից խուսափած կոմունիստ ղեկավարներին՝
ժողովրդական զանգվածների հետ կապ պահպանելու գործում։
Նրանք հերոսական ճիգեր էին գործադրում արաբերեն և հա-
յերեն լեզվով շարադրված թուղցիկներ և «ժողովուրդի պայ-
քար» պարբերականը ծավալելու համար։ Այդ հրատարակու-
թյունները քննադատում էին տիրապետող կլիկի ստրկաբարո
ենթարկվածությունը օտարերկրյա տերերին, դիմակազեր-
ծում անգլո-ամերիկյան իմպերիալիզմի մանյուվրները՝ Սի-
րիան և Լիբանանը հակասովետական պլացդարմի վերածելու։
Հայերեն լեզվով թուղցիկներից մեկում ասված էր. «Սուրիան և
Լիբանանը երբեք մաս չպիտի կազմեն Սովետական Միու-
թյան դեմ մղվող որևէ պատերազմի»¹¹⁷։

Խրախուսվելով կառավարող կլիկի հակադեմոկրատա-
կան վարքագծից, ձեռնարկատերերը հարձակման անցան աշ-
խատավորների իրավունքների դեմ։ Նրանք պահանջում էին՝
«բարեփոխել» Աշխատանքային կողմքսի մի շարք հոգված-
ները։ Ընդառաջելով ձեռնարկատերերի պահանջին, պառլա-
մենտը օրակարգի վրա դրեց աշխատավարձերի իջեցման
հարցը։ Այդ քայլի դեմ բողոքի ելույթներ տեղի ունեցան Աշ-
րաֆիե և Մազրաա թաղերում, ինչպես նաև Մաարատ և
Բուրջ կենտրոնական հրապարակներում։ Այդ ելույթները են-
թարկվեցին ոստիկանության ճնշմանը։ 15 աշխատավորներ
վերցվեցին կալանքի¹¹⁸։ Աշխատանքային կողմքսի վերանայ-
ման դեմ գործադուլով բողոքեցին կահույքագործական,

114 «Արարատ», 21 հունիսի 1948:

115 Նույնը, 4 դեկտեմբերի 1948:

116 Նույն տեղում:

117 Նույնը, 30 մարտի 1949:

118 «Զարթոնք», 9 նոյեմբերի 1949:

տպարանական և այլ ձեռնարկությունների բանվորներն ու ծառայողները¹¹⁹: Այդ գործադուլին մասնակցում էին նաև բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողները:

Նդրալրական միասնության ոգի ցուցաբերելով, Բելյութի 500 աշխատավորներ բողոքագիր ուղարկեցին Իրաքի ընդհանուր դատախազությանը, պահանջելով ազատ արձակել Իրաքի Արհմիությունների ղեկավարներին, որոնք «հայրենիքի գերագույն շահերի դեմ» գործելու մեղադրանքով վերցվել էին կալանքի¹²⁰: Բայց նուրիսայիդյան ռեակցիան պատժի առավելագույնին դատապարտեց նրանց: Բողոքելով այդ անարդար վճռի դեմ, արաբ և հայ աշխատավորներ հանդես եկան Բելյութի իրաքյան դեսպանատան առաջ: Ոստիկանությունը մի շարք արաբ և հայ ցուցարարներ հանձնեց ռեակցիայի դատաստանին¹²¹:

Հակադեմոկրատական ծանր մթնոլորտ էր տիրում նաև հայկական ներքին կյանքում: 1948 թ. նոյեմբերի 4-ին դաշնակ տեղորիստները ներխուժեցին Լիբանանի ազգային առաջնորդարան և զավթեցին այն¹²²: Բուրջ Համուդի Տրադ Թադի հնչակյան թաղական խորհուրդը իբրև «համայնավար» մատնանշելով, նրանք իրավունք ձեռք բերեցին այն ցրելու, իսկ դեկտեմբերի 4-ին «ընտրեցին» դաշնակցական թաղական խորհուրդ¹²³: 1949 թ. հունիսի 19-ին ազգային-թեմական իշխանության լրացուցիչ «ընտրություններ» կատարելով, նրանք Լիբանանի թեմի զավթումը նվիրագործեցին «ժողովրդական» քվեներով: Այդ պայքարի ընթացքում սպանվեցին հայրենասեր երիտասարդներ՝ Հ. Մահսերեջյանը¹²⁴, Ա. Նդիայանը, Տ. Թադեոսյանը և ուրիշներ¹²⁵:

119 Նույնը, 16 նոյեմբերի 1949:

120 «Արարատ», 14 փետրվարի 1949:

121 «Զարթոնք», 16 մարտի 1949:

122 «Արարատ», 13 նոյեմբերի 1948:

123 Նույնը, 25 դեկտեմբերի 1948:

124 Նույնը, 3 հուլիսի 1949:

125 Նույն տեղում:

Անգլիական և ամերիկյան իմպերիալիստները առավել կատաղությամբ մրցում էին Սիրիայի գաղութացման համար: 1947 թ. Սիրիայի պառլամենտական ընտրություններում Ազգային կուսակցությունը կրեց ծանր պարտություն, իշխանության գլուխ կանգնեց Ժողովրդական կուսակցությունը, որի լիդերներից կազմված կառավարությունը մերժեց գոհացում տալ ամերիկյան մոնոպոլիաներին: Սակայն 1948 թ., երբ բրիտանական իմպերիալիստները առաջ քաշեցին Սիրիայի և Հորդանանի միացման խնդիրը, ապա սիրիական կառավարությունը նրանց ճնշման դեմ պաշտպանվելու նպատակով զիջումներ կատարեց ամերիկացիներին: Ամերիկասիրիական բանակցությունների ավարտին՝ 1949 թ. մարտի 30-ին, տեղի ունեցավ Սիրիայի առաջին պետական հեղաշրջումը: Գնդապետ Հյուանի Զաիմը պաշտոնանկ արեց հանրապետության նախագահ Շյուբրի Քուվաթլին, ցրեց պառլամենտը և երկրում հաստատեց զինվորական դիկտատուրա: Արաբ հրապարակախոս Ժ. Օ. Շաթթարը գրել է. «Անգլիան՝ Արամկոյի Սուրիո հողամասն նավթամուղ անցնելու արտոնագիր-համաձայնագրի նախօրյակին առաջացուց Սուրիո առաջին պետական հարվածը»¹²⁶, Գործելով բրիտանական իմպերիալիզմի ցուցումներով, Հյուանի Զաիմը կապերը սերտացրեց Իրաքի, Հորդանանի և Թուրքիայի հետ, ի նախապատրաստություն «մեծ Սիրիայի» ծրագրի իրագործման»¹²⁷:

Սակայն բրիտանական իմպերիալիզմի այդ մարիոնետը հետևողական շեղավ ստանձնած պարտավորությունների մեջ: Ապրիլի վերջերին նա հայտարարեց. «Բաղդադի և Ամմանի վեհապետները կկարծեին, որ ես արժաթե ամսի մը վրա Սուրիո թագը իրենց պիտի նվիրեի, սակայն հուսախաբ եղան.

¹²⁶ Նույնը, 30 ապրիլի 1950:

¹²⁷ „Le Journal d'Egypte“, 22 Avril 1949.

սուրիական հանրապետությունը վեհապետներ չի ճանշնար և շուգեր մեծ Սուրիա: Մենք ամեն կերպ պիտի պայքարինք այդ ծրագրի դեմ»¹²⁸: Ավելին, մայիսի կեսերին նրա նախագահության ներքո գումարվելով, Սիրիայի կառավարությունը հանդիսավոր կերպով հավանություն տվեց ամերիկացիների պահանջին՝ Սիրիայի տերիտորիայում նավթամուղ կառուցելու մասին¹²⁹: Այդ մենաշնորհի դեմ աշխատավորական ելույթների առաջն առնելու համար, Զաիմը կալանքի վերցրեց 40 քաղաքացիներ, որոնց 14-ը հալեպաբնակ հայեր էին¹³⁰:

Բրիտանական իմպերիալիզմը դիմեց մի շարք միջոցառումների՝ խոստմնադրուժ գործակալին պատժելու համար: Նախ և առաջ, հունիսի կեսերին Իրաքը խզեց դիվանագիտական հարաբերությունները Սիրիայի հետ: Հուլիսի 21-ին Լոնդոնում գումարվեց Մերձավոր արևելքի երկրներում հավատարմագրված բրիտանական դիվանագետների խորհրդակցությունը, որը զբաղվեց Սիրիայի նոր իրադրությամբ և մի շարք վճռական որոշումներ ընդունեց...: Օգոստոսի 14-ին տեղի ունեցավ Սիրիայի երկրորդ պետական հեղաշրջումը: Մի ուրիշ գնդապետ՝ Սամի Հինավին ձերբակալեց Հյուանի Զաիմին, նրան... դատեց և գնդակահարեց: Իրաքը և Հորդանանը վերականգնեցին իրենց հարաբերությունները Սիրիայի նոր իշխանության հետ: Սակայն անգլո-ամերիկյան իմպերիալիստները շարունակում էին իրար ձեռքից «կորզել» Սիրիան: 1949 թվականի դեկտեմբերի 19-ին մի ուրիշ գինվորական՝ Ադիբ Զիշեքլին տապալեց Հինավիի իշխանությունը և հաստատեց իր դիկտատուրան, որը տևեց մինչև 1954 թվականը:

* * *

*

1949 թ. ապրիլին «Մարշալի պլանի» մասնակից երկրները ստորագրեցին Հյուսիս-ատլանտյան պակտը (ՆԱՏՈ),

128 «Արարատ», 29 ապրիլի 1949:

129 Նույնը, 20 մայիսի 1949:

130 Նույնը, 26 մայիսի 1949:

որի սուր ծայրը ուղղված էր սոցիալիստական պետութունների դեմ: Այդ ռազմական ագրեսիվ բլոկի ստեղծումով աճեց համաշխարհային նոր պատերազմի վտանգը, ալեկոծելով բարի կամքի տեք միլիոնավոր մարդկանց, որոնք ըմբռնում էին խաղաղության անհրաժեշտությունը:

Անգլո-ամերիկյան իմպերիալիստները փորձեցին ՆԱՏՈ-ի ազդեցության ուղորտը ներգրավել նաև արաբական երկրները: Սիրիայի և Լիբանանի կառավարող շրջանները ջերմեռանդորեն ընդառաջեցին այդ պլանին, դրանում տեսնելով իրենց իշխանության տևականացման երաշխիքը: Սակայն պատերազմի հրձիգների ճանապարհին պատնեշ կանգնեցին ժողովրդական լայն զանգվածները՝ խաղաղության կողմնակիցները:

Խաղաղության շարժման ավանգարդում էր բանվոր դասակարգը: 1949 թ. վերջերին գումարվեց Լիբանանի կոմունիստական կուսակցության ԿԿ-ի համագումարը, որը կոչ արեց ժողովրդական զանգվածներին հակահարված տալ պատերազմի հրձիգներին: Լիբանանի «ազգային իրական անկախության» ամրապնդումը խաղաղության համար մղվող պայքարի հետ առնչելով, համագումարը դատապարտում էր կառավարող կլիկի սպառազինման քաղաքականութունը, այն համարելով «իմպերիալիստներու պատերազմական-հարձակողական նպատակներուն» ենթարկվածության արդյունքը: «Զինումի կառավարական քաղաքականության իրական նպատակն է,—ասված էր կոչում,—ամրացնել ու ընդարձակել հակաժողովրդական ճնշումի, սարսափի մեքենան, ինչ-որ կնշանակե երկիրը ծանրաբեռնել դրամական նոր ծախսերով և ժողովուրդը նոր տուրքերով»¹³¹: Համագումարը կոչ էր անում ժողովրդական զանգվածներին անհաշտ պայքար մղել Լիբանանի տերիտորիայում ռազմական բազաներ կառուցելու իմպերիալիստական պլանների դեմ:

¹³¹ «Ժողովուրդի պայքար», 1950 թ., № 12, էջ 6: Լիբանանի Կոմկուսի ընդհատակի օրգանը, որը լույս է տեսել 1949—1950 թթ.:

Համագումարը հայտարարում էր, որ կոմունիստների գլխավոր առաջադրանքն է ամրապնդել ազգային անկախությունը, վերջ տալով թիմպերիալիզմի գործակալներուն տիրապետության, իմպերիալիզմի զինակից և անոր գլխավոր հենարան ավատապետության մնացորդներուն և, այդպիսով սոցիալիզմի համար ճամբա բանալ: Այդ նպատակը թիրազործելու ընդունակ միակ ուժը կիբանանի բանվոր դասակարգն է, դաշնակցած գյուղացիական մասսաներուն և քաղաքի ու գյուղի բոլոր աշխատավորներու հետ, և այն գլխավոր ուժը, առանց որուն աջակցության կարելի չէ հաղթել, ատիկա համաշխարհային հակաիմպերիալիստական ճակատն է, խաղաղության, դեմոկրատիայի ու սոցիալիզմի ճակատը, գլխավորությամբ Սովետական Միության»¹³²:

Դատապարտելով ախտավարակ այն մտայնությունը, որ իբր «ազգային-ազատագրության իրագործումը միայն ու միայն գլուխ կհանվի միջազգային գործոններու ուժով», առանց ժողովրդի մասնակցության, համագումարը շեշտում էր, որ «յուրաքանչյուր ժողովուրդի ազատագրությունը արդյունք է իր պայքարին»¹³³, և ժողովրդական զանգվածներին կոչ էր անում պայքարի ասպարեզ իջնել թի խնդիր իմպերիալիզմի տիրապետության տակ գտնվող եկամտի աղբյուրներու (քարյուղ, դրամատուն, երկաթուղի, դրամանիշ, էլեկտրականություն, ռեժի, նավահանգիստ) ազգայնացման...»¹³⁴: Բացի այդ, ընդգծելով Սովետական Միության արտաքին քաղաքականության դերը գաղութային և կիսագաղութային ժողովուրդների ազգային-ազատագրության պայքարում, համագումարը ազդարարում էր. «Ոչ մեկ ժողովուրդ, ներկա պատմական պահուն չի կարող իր ազգային գերիշխանությունն ու ազատությունները պահպանել առանց հենվելու Սովետական Միության վրա, առանց անոր աջակցության: ...Այս տեսա-

132 Նույնը, էջ 4:

133 Նույնը, էջ 7:

134 Նույնը, էջ 4:

կետի ամեն ուրացում կառաջնորդե ղեպի ազգային դավաճանություն¹³⁵...

Բարձր գնահատելով յուրաքանչյուր երկրում թեկուզ անջատաբար գործող հակաիմպերիալիստական շարժումների նշանակությունը դեմոկրատիայի ու սոցիալիզմի համար մղվող պայքարում, համագումարը նշում էր. «Ազգային-ազատագրական շարժումներու զարգացումը գաղութային ու կախյալ երկիրները դարձուց իմպերիալիզմը խարխլեցնող... հակաիմպերիալիստական ճակատին աջակցող գործոն մեծ ուժ: ...Մասսայական այս պայքարի կարևորությունը հոն է, որ անիկա կխարխլե համաշխարհային իմպերիալիզմը իր հենարաններեն մեկուն մեջ, իր ճակատներեն մեկուն վրա, և հետևաբար կսատարե իմպերիալիզմի անխուսափելի փլուզման գործին»¹³⁶:

Եզրակացնելով, համագումարը ընդգծում էր, որ ազգային-ազատագրության «մեկ ուղի կա, այն է՝ ժողովրդական ուժերը համախմբել և միայն ապավինած սեփական ուժին, ժողովրդական միության ու համերաշխության, լուրջ պայքարի դուրս գալ ընդդեմ իմպերիալիզմի և ավատապետության»¹³⁷: Այդ պայքարը լավագույն ձևով կազմակերպելու և վարելու համար համագումարը առաջարկում էր՝ կազմել միավորված դեմոկրատական ճակատ, հասարակության լայն խավերի մասնակցությամբ¹³⁸:

Լիբանանի կոմունիստական կուսակցության ԿԿ-ի համագումարի որոշումները նպաստեցին հանուն խաղաղության և ազգային անկախության ամրապնդման պայքարի աշխուժացմանը: Այդ շարժման ոլորտը ներգրավվեցին բացի աշխատավորներից նաև քաղաքների և գյուղերի մանր բուրժուազիայի լայն խավերը: 1951 թ. Լիբանանում Ստոկհոլմի խաղաղության կոչը ստորագրողների թիվը հասել էր

135 Նույնը, էջ 7—8.

136 Նույնը, էջ 8:

137 Նույնը, էջ 11:

138 Նույնը, էջ 12:

200.000-ի, իսկ Սիրիայում՝ 265.000-ի, այդ թվում պետական գործիչներ, առևտրականներ, արդյունաբերողներ, դասախոսներ, իրավաբաններ, բժիշկներ և այլ դբաղմունքի տեր մարդիկ: 1950 թ. չի անցել մի շաբաթ, որ Սիրիայի և Լիբանանի խաղաղության կողմնակիցները հանդես եկած շինեն հրապարակային ելույթով¹³⁹:

Խաղաղության կողմնակիցները բողոքի հսկա ցույցերով հանդես եկան Միջին արևելքի անգլիական ցամաքային ուժերի գլխավոր հրամանատար գեներալ Բրիան Ռոբերտսոնի և մեծ Բրիտանիայի արտաքին գործերի մինիստրության արևելյան բաժնի ղեկավար Ֆերլոնջի Բեյրութ և Դամասկոս այցելության դեմ: Նրանք ուզում էին Սիրիայի և Լիբանանի մասնակցությունն ապահովել «Մերձավոր արևելքի պաշտպանության բլոկին», հասնել այն բանին, որ անհրաժեշտության դեպքում դաշնակից զորքերը կարողանան մուտք գործել այդ երկրները: Կառավարող շրջանները հակված էին հավանություն տալու այդ պահանջին, շնայած որ դա օրինական օկուպացիայի իրավունք ձեռք բերելու փորձ էր: 1951 թ. փետրվարի 5-ին Բեյրութի փողոցներում տողանցելով խաղաղության բազմահազար կողմնակիցներ գոչում էին. «Գեներալ, կորեք Լիբանանից»: Ձերբակալված ցուցարարների թվում կային բազմաթիվ հայեր՝ Ղ. Քեստաքյանը, Ժ. Իշխանյանը, Հ. Լեշկյանը, Գ. Գալուստյանը և ուրիշներ¹⁴⁰: Բրիտա-

139 Պատկերացում կազմելու համար թվենք 1950 թ. հունվարին Լիբանանի երկու քաղաքներում տեղի ունեցած ելույթները: Հունվարի 12-ին Բեյրութում բանվորական ցույցեր Մուստաֆա Արիսի դատավարության դեմ բողոքելու համար, Հունվարի 19-ին Տրիպոլիում Արիսի ազատ արձակումը պահանջող ցուցարարները բախվեցին ոստիկանության հետ, 27 աշխատավորներ վերցվեցին կալանքի: Հունվարի 29-ին Բեյրութում ամերիկյան Չորրորդ կետի կազմակերպության և Լիբանանի կառավարության միջև կնքված համաձայնագրի դեմ բողոքող ցուցարարները ենթարկվեցին ոստիկանության զրոհին, սպանվեց 1, վիրավորվեցին 6 ցուցարարներ: Հունվարի 31-ին Տրիպոլիում բողոքի ցույցեր Բեյրութի ոստիկանության վայրագությունների դեմ, վիրավորվեցին 3, ձերբակալվեցին 40 ցուցարարներ:

140 «Զարթոնք», 7 փետրվարի 1951:

նական առաքյալների դեմ խաղաղության կողմնակիցների
ելույթներ տեղի ունեցան նաև Դամասկոսում և Հալեպում:
Այդ աշխատավորական ելույթների արդյունքն եղավ այն, որ
ներանք մեկնեցին ձեռնուռայն:

Սակայն իմպերիալիստները չհրաժարվեցին Սիրիան և
Լիբանանը ստրկացնելու պլաններին: 1951 թ. հոկտեմբերի
13-ին ԱՄՆ-ը, Անգլիան, Ֆրանսիան և Թուրքիան իբրև նա-
խաձեռնող կողմ, Եգիպտոսի, Սիրիայի, Լիբանանի, Իրաքի,
Սաուդյան Արաբիայի, Եմենի, Հորդանանի և Իսրայելի կա-
ռավարութուններին հրավիրեցին մասնակցելու ագրեսիվ
բլոկի մի նոր վարիանտի՝ «Միջինարևելյան հրամանատա-
րությանը» և դրա միջոցով կապվել Հյուսիս-ատլանտյան
պակտի հետ: «Միջինարևելյան հրամանատարութունը», որի
անհրաժեշտութունը հիմնավորվում էր «սովետական վտան-
գի» առկայությամբ, արաբական երկրներում իրավացիորեն
գնահատվեց որպես գաղութացման նոր փորձ: «Ալ-Հադաֆը»
գրում էր. «Դա իմպերիալիստական խաղ է և հանգելու է ար-
աբական երկրների ստրկացմանը»¹⁴¹:

1952 թ. ապրիլին իմպերիալիստներն Արաբական արևելք
ուղարկեցին ֆաշիստական Իսպանիայի արտաքին գործերի
մինիստր Մարտին Արտախոյին, որը, վկայակոչելով արաբ-
իսպանական «դարավոր բարեկամութունը», փորձեց հերքել
«Միջինարևելյան հրամանատարության» արաբական երկր-
ների անկախության դեմ ուղղված լինելու «առասպելը»...
Բեյրութում խաղաղության կողմնակիցները Մարտին Արտա-
խոյին դիմավորեցին... բողոքի ելույթներով: Ապրիլի 6-ին
ոստիկանութունը բիրտ միջոցներ գործադրեց ցուցարարների
դեմ: Կալանքի վերցվեցին մեծ թվով աշխատավորներ¹⁴²: Ապ-
րիլի 7-ին ցույցերը վերսկսվեցին Բեյրութի հայկական թա-
ղերում: Դաշնակ զինված խմբեր հարձակվեցին Կարանտինա
թաղի ցուցարարների դեմ: Դաշունի հարվածներ ստացան
Գևորգ Տեր-Նիկողոսյանը և ուրիշներ, սպանվեց մի արաբ

141 الحدف، بيروت، ٢٠ تشرين الأول ١٩٥١

142 «Զարթոնք», 9 ապրիլի 1952:

ցուցարար¹⁴³: Այդ դեպքերը լայն արձագանք գտան արաբական մամուլում: «Տելեգրաֆ», «ալ-Բայրա», «ալ-Շարկ», «ալ-Հադաֆ» և ուրիշ թերթեր պահանջում էին լուծարքի ենթարկել Գաշնակցութունը¹⁴⁴:

Խաղաղության կողմնակիցների պայքարը ձախողության մատնեց իմպերիալիստների պլանները: Դրա հետևանքով էլ հիմքից ցնցվեց Սիրիայի և Լիբանանի ռեակցիոն կառավարողների իշխանությունը: «Ազգային միասնության ճակատի» կազմակերպած ընդհանուր գործադուլը հանդիսացավ Բեշարա էլ-Խուրիի իշխանությունը տրված վերջին և վճռական հարվածը: 1952 թ. սեպտեմբերի 22-ին էլ-Խուրին հրաժարվեց Լիբանանի հանրապետության նախագահի պաշտոնից, որը վարում էր 1943 թվականից:

ՀԱԿԱԿՈՄՈՒՆԻՋՄԻ ՀԱՅԱՋԳԻ ՎԱՐՁԿԱՆՆԵՐԸ

Սոցիալիստական լագերի ամրապնդումը լրջորեն մտահոգում էր իմպերիալիստներին: Նրանք, փորձելով ամեն գնով կանգնեցնել մարդկության առաջընթաց զարգացումը, խաչակրություն սկսեցին կոմունիստների, կոմունիստական գաղափարախոսության, ամբողջությամբ վերցրած սոցիալիստական համաշխարհային սիստեմի դեմ: Վերածնվեցին և բազմացան ֆաշիստական կազմակերպությունները, ԱՄՆ-ում՝ ռասիստները, Ֆրանսիայում՝ «ուլտրաները», Արևմտյան Գերմանիայում՝ ռևանշիստները և այլն: Մի շարք երկրներում ստեղծվեցին «ուժեղ ձեռքի» կառավարություններ, սահմանափակվեցին բուրժուա-դեմոկրատական ազատությունները, գործի դրվեցին կառավարման ֆաշիստական մեթոդներ: Այդ բոլորի գլխին կանգնած էր ժամանակակից ռեակցիայի պատվարը՝ ամերիկյան իմպերիալիզմը:

143 Նույնը, 11 ապրիլի 1952:

144 Նույնը, 18 ապրիլի 1952:

1950—1953 թթ. ամերիկյան իմպերիալիստները ստեղծեցին մի շարք հակակոմունիստական կազմակերպություններ՝ «Ազատ Եվրոպայի կոմիտե», «Խաչակրաց արշավանք ազատության», «Հանուն մշակույթի ազատության կոնգրես», «Ռուսաստանի ժողովուրդների ամերիկյան կոմիտե» և բազմաթիվ ուրիշներ, որոնց ցանցը Նյու-Յորքից հասնում էր Եվրոպա և մինչև Հեռավոր արևելք: Այդ կազմակերպություններին ֆինանսավորում էին ռոքֆելերները և մեյոնները, դյուպոնները և ֆորդերը: Բավական է ասել, որ 1951—1960 թթ. Ֆորդի ֆոնդը (ընդհանուր կապիտալ 750 միլիոն դոլ.) 259 միլիոն դոլար է հատկացրել հակակոմունիստական—«հումանիստական» նպատակների համար¹⁴⁵:

Հակակոմունիստական խաչակրություն բանակում իր տեղն ունենր նաև Դաշնակցությունը:

Դաշնակցությունը կապված էր Ռուսաստանի ժողովուրդների ամերիկյան կոմիտեին, որը հիմնադրվեց 1951 թ. ԱՄՆ-ում, Պետական դեպարտամենտի «ուղղակի մասնակցություն»¹⁴⁶: Հետագայում անվանափոխության ենթարկվելով, այդ կոմիտեն նախ կոչվեց «Սովետական Միության ժողովուրդների կոմիտե» և վերջապես՝ «Բուլղարիայից ազատագրվելու ամերիկյան կոմիտե»: 1951—1954 թթ. այդ կոմիտեի գլուխ կանգնած էր ծովակալ Լեսլի Ստիվընսը, իսկ 1954 թ. կեսերից՝ պետական քարտուղարի օգնական Հաուլենտ Սարջընտը, որին սերտորեն գործակցում էին Մոսկվայի նախկին ամերիկյան դեսպան Ալան Կրրկը, Մոսկվայի ամերիկյան դեսպանատան նախկին քարտուղար Կընիհոլմը, ինչպես նաև հայտնի հակասովետական պրոպագանդիստ Դոն Լևինը¹⁴⁷:

1953 թ. «Բուլղարիայից ազատագրվելու ամերիկյան կոմիտեի» կազմում առաջացան մի շարք հակամարտ բլոկներ:

¹⁴⁵ „La Nouvelle Revue Internationale“, 1962, № 2, p. 48.

¹⁴⁶ Նույնը, էջ 39:

¹⁴⁷ Նույն տեղում:

Դրանցից Փարիզյան բլոկը, որին անդամակցում էր նաև Դաշ-
նակցությունը, մեկտեղում էր ադրբեջանցի, բելոռուս, վրացի,
Հյուսիսային կովկասցի, թուրքեստանցի, ուկրաինացի էմի-
գրանտներ¹⁴⁸։ Սակայն դրանք ևս անհամերաշխ էին։ Վ. Նա-
վասարդյանը գրել է. «Դժբախտաբար, ներքնաբար համե-
րաշխ չեն ուկրաինացիները, ինչպես և Հյուսիս-կովկասցի-
ները։ Ռադան իր մեջ ունեւր հինգ խմբակցություններ, (բեն-
դերովցիների հեռանալուց հետո) այս հինգից երկուսը (Մել-
նիկի և Վոստոյիլնիկի խմբակցությունները) կարծես թաքուն-
խաղեր են անում ռուսների հետ մեկ կեդրոնում շինելու հա-
մար. նույնն են տրամադրությունները նաև Հյուսիս-կովկաս-
ցիների մոտ. պարզ չեն ասում սակայն, ինչ որ միջանկյալ
բառերով զգալի են դարձնում»¹⁴⁹։

1953 թ. օգոստոսի 29—30 Մյունխենում տեղի ունեցած
Փարիզյան բլոկի ազգային կենտրոնների նիստը, որին մաս-
նակցում էին՝ Գեգեչկորին, Վահան Նավասարդյանը, Սահակ
Տեր-Թովմասյանը, Աբրամշիկը, Կաբիշը, Լևիցկին, Դոգալը,
Վիսկորիլնիկովը և Շամիլը։ Այդ նիստը «ընդհանուր գործի
համար անհրաժեշտ և օգտակար համարեց Մյունխենի կոն-
տակտային հանձնաժողովի սկզբունքով, այլ երկրներում ևս,
առաջին հերթին Նյու-Յորքում խորհրդակցական օրգանների
կազմակերպումը»¹⁵⁰։ Այդ միջոցառման հետին միտքն էր՝
Փարիզյան բլոկի ջրապտույտի մեջ ներգրավել Ամերիկայի
Միացյալ Նահանգներում ապրող նախկին սովետական ռազ-
մագերիններին, որոնց մեջ կային որոշ թվով հայեր։ Հոկտեմ-
բերի վերջերին կյանքի կոչվեց Նյու-Յորքի խորհրդակցական
օրգանը, որի կազմում տեղ գրավեց նաև Դաշնակցության
ներկայացուցիչը¹⁵¹։

«Բոլշևիկմից ազատագրվելու ամերիկյան կոմիտեն»
ԱՄՆ-ին մատուցում էր դիվերսիոն ծառայություններ։ Այդ

148 «Հուլիս», 22 մարտի 1954։

149 ԳԱ ԱՍ արխիվ, ֆ. 6, բ. 1, վ. 8։

150 Նույնը, վ. 7։

151 Նույնը, վ. 8։

Վոմիտեի վրացական խմբակցության ղեկավար մենշևիկ Մակլակերիձեն հայտարարել է. «Ամերիկացիները մեզի առաջարկեցին կազմել լրտեսական խմբեր Անդրկովկասի մոտակա և սահմանամերձ երկրներուն մեջ, և հավաքել հետախուզական տեղեկություններ կովկասյան երկրներն: 1951 թ. տեսակցություն ունեցա Դրո Կանայանի հետ, որն ինձ հավաստիացուց, թե արդեն Պարսկաստանի և Մերձավոր արևելքի այլ երկրներուն մեջ իրենք կազմած են մի քանի այդպիսի խմբեր, որոնք ակտիվ գործունեություն ցույց կբերեն... և մեզի թելադրեց հետևել իրենց օրինակին: Ուրիշ առիթով, 1952 թ. հանդիպում մը ունեցա Վահան Նավասարդյանի և Դրո Կանայանի հետ: Նավասարդյանը մեզի տեղեկացուց, թե Բեյրութի մեջ Դրոյի կազմած լրտեսական խումբը ուղղակի կապված է Ամերիկայի արտասահմանյան լրտեսական ցանցի ղեկավար Արչիբալդ Ռուզվելթին: Իսկ ուրիշ խմբեր ալ կգործեին Պարսկաստանի, Իրաքի, Սուրիո և Թուրքիո մեջ»¹⁵²:

Ամերիկյան հետախուզությունը դաշնակ լրտեսների և ահաբեկիչների մարզումը կատարում էր Միացյալ Նահանգներում: 1954 թվականից սկսելով, Դաշնակցության բյուրոյի հուսալի շարքայիններ Սիրիայից, Լիբանանից, Իրաքից, Իրանից և ուրիշ երկրներից Ամերիկա էին ուղարկվում «...ռազործության, լրտեսության և խափանարարության մասնագիտություններ սորվելու համար»¹⁵³: Նրանք ներկայումս գործում են Մերձավոր արևելքում, ծառայելով ԱՄՆ-ի դիվերսիոն նպատակներին, իսկ «անխուսափելի» պատերազմի դեպքում կուղարկվեն Կովկաս¹⁵⁴:

Դաշնակ շեֆերը այդ պժգալի դերը արդարացնում են «հայկական հարցի» լուծման նպաստելու քարոզով: Դաշնակցության 16-րդ ընդհանուր ժողովի որոշումներում ասված է. «Հակահամայնավար ճակատը գլխավորող թե Արևմտյան

152 «Սուրիա», Հալեպ, 10 դեկտեմբերի 1954:

153 «Զարթոնք», 18 հունիսի 1954:

154 Խ. Թյուրոնջյան, Բյուրոյական սնանկությունը, էջ 76—77:

աշխարհի և թե մասնավորաբար Ամերիկայի, Անգլիո և Ֆրանսիայի մեջ հայ դատին բարեկամ ուժ մը տեսնելով, սերտացնել մեր կապերը այս ճակատին և անոր վարիչներուն հետ, ապահովելու համար այդ ուժերուն պաշտպանությունը հայ դատին»¹⁵⁵: Վաղուց հրաժարվելով «հայկական հարցից» դաշնակ շեֆերը հիմնովին փոխել են «հայ դատ» արտահայտության իմաստը: Ու Դարբինյանը գրում է. «Հայկական հարցը այլևս առաջին հերթին հողային հարց չէ...: Այսօր հայկական հարցը որևէ բանե ավելի և առաջ հայկական ազատության հարց է»¹⁵⁶, այսինքն սովետական կարգերը տապալելու հարց է...: Սպասելով «բոլշևիզմի խորտակմանը», նրանք կրկնում են իրենց հնամաշ երգն այն մասին, որ իբր բոլշևիկները Հայաստանում իշխանությունը գրաված են «ոչօրինական ճանապարհով» և, ամենից զավեշտականն այն է, որ նրանք այդ անօրինականությունը ուզում են ուղղել... ամերիկյան դատարանի օգնությամբ: Հայաստանի սովետականացման պայմանների «անօրինականության» մասին վկայեցին Դրո Կանայանը, Ռուբեն Դարբինյանը և ուրիշներ¹⁵⁷: Դաշնակ շեֆերը այդպես են վարվում որպեսզի առավել ցցուն դարձնեն իրենց ենթարկվածությունը Սովետական Միության թշնամիներին:

Կուլյր ատելություն սնուցելով սովետական կարգերի դեմ, դաշնակ շեֆերը չեն ուզում տեսնել, որ Հայաստանի անօրինակ նվաճումները և հայ ժողովրդի վերածնունդը առաջին հերթին սովետական կարգերի արդյունքն են: Նրանց պետք է զգաստացնեն թեկուզ այն փաստը, որ հետամնաց գյուղատունտեսական Հայաստանը այսօր դարձել է բարձր զարգացման հասած արդյունաբերական երկիր, որի թողարկած արտադրանքը արտահանվում է շուրջ 70 երկրներ, այդ թվում՝ Անգլիա, Ֆրանսիա, Ավստրիա և Իտալիա: Հայաստանի կոմ-

155 Մեջբերումն ըստ «Արարատի», 4 հունիսի 1957:

156 «Հայրենիք», 18 հոկտեմբերի 1950:

157 «Հուլիս», 12 հոկտեմբերի 1954:

կուսի փետրվարյան (1967 թ.) պլենումում իրավացիորեն նշվեց. «Բուրժուա-նացիոնալիստական դաշնակցություն կուսակցությունը գնալով ավելի բացահայտորեն է ծախվում հակասովետական, օկուպացիոն ուժերին, փորձելով այդ ուժերի օգնությամբ մի կերպ երկարաձգել իր անփառունակ գոյությունը»¹⁵⁸;

Դաշնակ շեֆերի գործունեությունը մերկացվեց 1962 թ., երբ Սիրիայի անվտանգության օրգանները հայտնաբերեցին իմպերիալիստական պետությունների օգտին գործող լրտեսական մի կազմակերպություն, որի մեջ ընդգրկված էին 37 դաշնակցականներ՝ Դաշնակցության բյուրոյի անդամ, կիբանանի պառլամենտի դեպուտատ Մուսես Տեր-Գալուստյանի զլխավորությամբ: Ընդհանուր դատախազության մեղադրականում Դաշնակցությունը գնահատվեց որպես «միջազգային «կուսակցություն» մը, որ հակահամայնավար պայքարի դիմակին տակ արևմտյան պետություններու կողմն կքաջալերվի ու կֆինանսավորվի, այս ձևով ծառայելու համար անոնց շահերուն և ուղեգծին: «Կուսակցության» կարգ մը անդամներ տեղեկություններ կքաղեին բանակին և անոր շարժումներուն, ինչպես նաև զենքերու տեսակին շուրջ և այդ տեղեկությունները կներկայացնեին իրենց պետերուն»¹⁵⁹: Իրավացիորեն, արաբական առաջադիմական մամուլը նշում է, որ այդ կազմակերպությունը կտրել է կապերը հայ ժողովրդի հետ, վերածվել է միջազգային իմպերիալիզմի վարձկանի և դաշնակցած հետադիմական ուժերի հետ դավաճանում է արաբ ժողովուրդների գերագույն շահերի դեմ: «Ալ-Գումհարիե» թերթը գրել է. «Դաշնակները կներկայացնեն քաղաքական շարժում մը, որը ուրիշ ժողովուրդներու դավաճանելի առաջ դավաճանած է իր ժողովուրդին դեմ: Մեր մեջ ապրող հայերը, ըլլա Հալեպի, Դամասկոսի կամ Կահիրեի մեջ, պարկեշտ քաղաքացիներ են և արաբական հողին կապ-

158 «Սովետական Հայաստան», 10 փետրվարի 1967:

159 «Լրաբեր», 22 մարտի 1962:

ված են հավատարմությամբ և սիրով»¹⁶⁰։ Իսկ «ալ-Շաար» թերթը նշել է. «Բոլոր հայերը դաշնակցական շեն. ասոնք փոքր մեկ մասը կկազմեն ազնիվ և պատվավոր հայկական համայնքին, որուն ներկայութունը պատիվ կբերե հյուրընկալ երկրին»¹⁶¹։

Դաշնակցութունը, տեսպես հեռանալով ժողովրդից, հասել է կործանման անդնդի եզրին։ Հայրերի և որդիների պայքարն արդեն փտախտի է վերածվել այդ կազմակերպության մեջ։ Այդ բանը շեն թաքցնում անգամ դաշնակցական գործիչները։ Հաստատելով, որ «ամենուրեք կուսակցութունը ամայացած է», խոսքով Թյուֆունջյանը գրում է. «Առանց նվազագույն շահազանցության պետք է խոստովանիլ այն փաստը, որ ավելի մեծ թիվ կկազմեն ներկայիս շարքերեն դուրս եկած դաշնակցականները, քան շարքերու մեջ մնացածները, այսինքն անոնք, որոնք կազմակերպական վերին մարմնի հետևած ուղեգծին դեմ են, թե կուսակցական ներքին կյանքին, ազգային մարզին և թե արևմտապաշտ քաղաքականության կալվածին մեջ՝ Պարսկաստանեն, Իրաքեն, Սուրիայեն, Լիբանանեն, Եգիպտոսեն մինչև Ֆրանսա և մինչև հեռավոր Ամերիկաները»¹⁶²։ Ծանրակշիռ է նաև Դաշնակցության՝ Փարիզյան բլոկի մնալուն ներկայացուցիչ Սահակ Տեր-Թովմասյանի վկայութունը։ Իր եղբոր ուղղված նամակում, նա գրել է. «Դեպքերուն ողջ ընթացքը կհաստատե, որ մեր կուսակցութունը գտած չէ աջակցութուն հայերու մեծ մասի մոտ։ Ատոր առավել նաև շատերու մոտ ստեղծած է զայրույթ ու ատելութուն մեր հանդեպ։ Երիտասարդ սերունդն ալ մեծ մասամբ... չի աջակցի մեզ»¹⁶³։ Այդ տողերը հաստատում են Հովհ. Քաջազնունու դատավճիռը Դաշնակցության մասին։

160 Մեջբերումն ըստ «Արարատի», 3 օգոստոսի 1961։

161 Մեջբերումն ըստ նույնի, 5 օգոստոսի 1961։

162 Խ. Թյուֆունջյան, Բյուրոյական սնանկութունը, էջ 117 և 119։

163 «Արարատ», 23 սեպտեմբերի 1958։

Ամերիկյան իմպերիալիստները և տեղական ռեակցիան բոլոր միջոցներով աշխատում էին ամրապնդել Դաշնակցության դիրքերը: Խաբվելով դաշնակցական մամուլի զրպարտչական արշավից, թե «բացի Հ. Հ. Դաշնակցութենեն հայկական մյուս խմբակցությունները՝ Ռամկավար ազատականները, Հնչակյանները և նույնիսկ Բարեգործականը և հոգեվորականներու մեկ կարևոր մասը երկար տարիներ սերտորեն գործակցած են ու մինչև այժմ ալ կգործակցին «հառաչ դիմական» կոչեցյալ համայնավարներուն հետ»¹⁶⁴, նրանք ջանք չէին խնայում հայկական գաղութի ղեկավար օրգանները՝ Դաշնակցության ենթարկելու միջոցով ապահովագրելու այդպես կոչված սովետական ներթափանցման դեմ:

Այսպես, 1952 թ. դեկտեմբերի 7-ին կիրանանի քաղաքապետական ընտրություններում Շամունի ոստիկանությունը աջակցեց դաշնակցական թեկնածուների հաջողությունը: Բուրջ Համուդում «գավազաններ ճոճեցան, դաշույններ ոճրագործներու ձեռքին մեջ դրվեցան, ատրճանակներ պարպվեցան և... արյուն հոսեցավ: Քվեատուփերը գրավվեցան կազմակերպված խարդախողներու կողմե...»¹⁶⁵, և դաշնակցականներ բազ-

164 «Հայրենիք» ամսագիր, 1948, № 4, էջ 81: Արսեն Կիտուրը դիպուկ ձևով գրում է. «Մի զարմանաք եթե ըսեմ որ Դաշնակցությունը շահագրգռված է բուլեիզմի քարոզչությամբ: Անոր գործին կուգա եթե բուլեիզմյան փրոփականդան աշխուժանա, անոնք փողոցային ցույցերու ելլեն և գաղտնի ու հայտնի գրականություն մեջտեղ նետեն: Հոգի կակսին իրենց աշխուժացումը, հակահարձակումը, ժուռնալները և որ զլիավորն է դրդումը հակաբուլեիզմի կառավարություններուն, որ դրամ թափեն մեջտեղ՝ պայքարելու համար համայնավարության դեմ» («Արարատ», 6 օգոստոսի 1954):

165 «Զարթոնք», 11 դեկտեմբերի 1952: Քաղաքապետարանի ընտրություններից հետո հայ աշխատավորներին սիրաշահելու նպատակով, Շամունը առաջ քաշեց Չարչափուկ և Տիրո Խոտաժետ գաղթակայանների բնակիչներին՝ առողջավետ բնակարաններով ապահովելու ծրագիրը: Բեյրութի ազգային առաջնորդարանում և Բեյդ էդ Դինի պալատում գումարված ժողովները բավական առատ նյութ մատակարարեցին Շամունի «բա-

մեցին քաղաքապետարանում հայ համայնքին վերապահված ազգայի (դեպուտատի) աթոռներին:

Դաշնակցութունը իմպերիալիստներից օգնութուն ըստացավ նաև կիրանանի 1953 թ. պառլամենտական ընտրություններում: Խոսելով հայարնակ թաղերի ընտրական գործողությունների մասին, մինչև անգամ ռեակցիոն թերթերը չէին կարողանում լուսթյամբ անցնել ոստիկանության և դաշնակցական «ղինված խմբերի» սխրագործությունների կողքով: Բեյրութի «ալ-Հայաթ» թերթը գրում էր. «Դաշնակները ահաբեկեցին, խոշտանգեցին իրենց հակառակորդներին: Հայ ընտրողներից շատեր, չկարողանալով մինչև քվեատուփ հասնել, գերադասեցին ձեռնպահ մնալ...»¹⁶⁶, և դաշնակները զավթեցին կիրանանի պառլամենտում հայերին սահմանված աթոռները...

Դաշնակցության դիրքերի ամրապնդման մասին հոգում էր նաև Սիրիայի տիրապետող դասակարգը: Ադիբ Զիչեքլիի տապալումից հետո Սիրիայի ներքին գործերի մինիստրությունն անտեսեց դեմոկրատական կազմակերպությունների արդար պահանջը՝ Հալեպի ապօրինի ազգային-թեմական իշխանությունը լուծարքի ենթարկելու մասին: Նրանք գրում էին. «Տրված ըլլալով որ մեր Հայրենիքը՝ Սուրիան այժմ վերագրտած է իր արժանավոր պետական առաջնորդները, որոնց շքնորհիվ վերահաստատված են բնականոն վիճակն ու քաղաքական ազատությունները, և տրված ըլլալով մանավանդ, որ պետականորեն արդեն շեղյալ նկատված են բռնակալության օրով տեղի ունեցած բոլոր ընտրությունները, կուգանք... խընդրելու, որ շեղյալ հռչակվեին նաև Զախմի և Զիչեքլիի օրերուն մեր համայնքային... ընտրությունները, և հրահանգվեին ազատ և ամբողջական ընտրություններ»¹⁶⁷: Բայց տիրապետող դա-

րեխնամության» մասին, սակայն ոչ մի բանով չօգնեցին հայ աշխատավորներին: Հիշյալ գաղթականները առաջվա նման մնացին իրենց տեղերում...:

166 الحیاة، بیروت، ۱۲ تموز ۱۹۵۳

167 «Արևելք», 12 հունիսի 1954:

սակարգը չկամեցավ անհանգստացնել... հակակոմունիզմի հայազգի վարձկաններին:

Այդ տեսանկյունից պետք է գնահատել նաև Անթիլիասի կաթողիկոսության զավթումը:

1951 թ. վերարժարժելով «անհայրենիք պետության» ցր-նորքը, դաշնակցական ջոջերից Կարո Սասունին գրում էր. «Գաղութներու մեջ ցրված հայութունը... անհրաժեշտորեն կեդրոնական վարչութուն մը պիտի ունենար, եթե ծրագրը-ված դժվարութուններու չհանդիպեր անցյալ տասնամյակնե-րուն: Այսօր նույնքան անհրաժեշտ է այդ կեդրոնը և գաղու-թահայութունը պետք է իր կեդրոնը ունենա»¹⁶⁸: «Ո՞վ պիտի վարե սփյուռքը» խորագրի ներքո, դաշնակիների Բաղդադի օր-գան «Գոյամարտը» Սասունուն արձագանքում էր. «Սփյուռ-քահայութունը կճանչնանք որպես ամբողջութուն մը՝ կազմը-ված նոր պայմանների և նոր իրականութենե մը...: Մեր բոլոր դժգոհանքներն ու տեսակետները պետք է ուղղվին հասցեի մը, որուն տերը ստանձնած ըլլալու է սփյուռքի ճակատագրին պա-տասխանատվութունը: Այս պատասխանատվութունը որոշ է, որ անհատի մը կամ նորակազմ հավաքականութան մը գործը չէ, այլ կազմակերպության մը, որ նախ ունի անցյալ մը և տարիներու փորձառութուն, երկրորդ, որ ունի վաստակ մը: Նման կազմակերպություն մըն է Դաշնակցութունը, որը միակն է մեր ներկա իրականության մեջ: Արդ, ան պետք է, որ դառնա վարիչ ուժը սփյուռքին, ստանձնելով անոր պատաս-խանատվության ծանր բեռը»¹⁶⁹: Դաշնակցական ջոջերը «ան-հայրենիք պետության» ցնորքը փորձեցին... իրականութուն դարձնել Անթիլիասի կաթողիկոսության զավթումով:

Իմպերիալիզմը և տեղական ռեակցիան իրենց կողմ ու-նենալու նպատակով, դաշնակիներն Անթիլիասի կաթողիկոսի ընտրութունը կապեցին հակակոմունիստական խաչակրու-թյան հետ: Ռուբեն Դարբինյանը գրում էր. «Դժբախտաբար,

168 «Ազգակ շարաթօրյակ», 20 հուլիսի 1951:

169 Մեջբերումն ըստ «Ջարթոնքի», 23 նոյեմբերի 1952:

մենք չենք կրնար ըսել, թե լիովին օգտված ենք հակախորհրդային կամ հակահամայնավար պայքարի համար 1947-են ի վեր հետզհետե ավելի նպաստավոր դարձող պայմաններեն: Ոչ ալ կրնանք ըսել թե կրցած ենք համայնավարներուն կամ անոնց ուղեկիցներուն ձեռքեն խլել այն դեմքերը, զորս անոնք ցարդ գործածած են մեզի դեմ և շափով մըն ալ հաջողած են պաշտասպնել իրենց դիրքերը: ...Եթե Կիլիկիո կաթողիկոսական աթոռի վրա ունենանք... հոգևորական մը, որ ...ընդունակ ըլլա վարելու... ազատ և անկախ քաղաքականութիւն մը, և ստանձնելու ազատ աշխարհի մեջ ցրված բովանդակ... հայութեան... ղեկավարութիւնը... այն ատեն սփյուռքի մեր բոլոր եկեղեցիները ի վիճակի պիտի ըլլան ժամանակավորապես անջատվելու էջմիածինեն և կապվելու Կիլիկիո կաթողիկոսական աթոռի հետ...»¹⁷⁰: Հայտնի է, որ 1956 թ. փետրվարի 20-ին դաշնակներին հաջողվեց այդպիսի «կաթողիկոս ընտրել»՝ հանձին Զարեհ Փայասլյանին:

Այդ «ընտրութիւնը» կատարվեց կիլիկյան թեմերի՝ Բեյրութի, Հալեպի, Դամասկոսի և Կիպրոսի հայերի ճնշող մեծամասնութեան կամքին հակառակ: Այդ թեմերի ժողովուրդը «Ո՛չ» ասաց Զարեհին, մինչև անգամ փորձեց արգելել նրա ընտրութիւնը: Փետրվարի 20-ին, Շամունի ոստիկանների շղթան ճեղքելով, ժողովուրդը Անթիլիասի տաճարից ներս խուժեց և մերժեց անցք տալ դաշնակների պատգամավորներին... «Ընտրութիւնից» հետո, Խալդեի օղանավակայանում, ժողովուրդը խոշտանգեց այն կղերականներին, որոնք գործելով դաշնակների ցուցումներով, նպաստել էին Զարեհի «կաթողիկոսացմանը»: Այդ հակաժողովրդական ընտրութիւնը զայրույթ առաջացրեց նաև մյուս թեմերում: Դամասկոսի հայութեան ներկայացուցիչները Սիրիայի կառավարութիւնից խնդրեցին Զարեհի «ընտրութիւնը չեղյալ» նկատել¹⁷¹: Մարտի 4-ին ուսմ-

170 «Հուսարեք», 14 օգոստոսի 1953:

171 «Այգ», 29 փետրվարի 1956:

կավարները¹⁷², 27-ին հնչակյանները¹⁷³ պաշտոնապես հայտարարեցին, որ Զարեհի ընտրությունը «ապօրինի է» և հետևաբար չեն ճանաչելու նրա իշխանությունը:

Այնուամենայնիվ նույն թվականի սեպտեմբերի 1-ին դաշնակները երկու հայ և մեկ ասորի եպիսկոպոսի ձեռքով (երրորդ հայ եպիսկոպոս չճարելով) կատարեցին նաև օծման կարգը և Զարեհին հռչակեցին Տանն Կիլիկիո կաթողիկոս: Ուշագրավ երևույթ էր այն, որ սեպտեմբերի 5-ին Լիբանանում ԱՄՆ-ի դեսպան Դոնալդ-Հիթը Անթիլիաս գնալով անձամբ շնորհավորեց Զարեհին: Սեպտեմբերի 7-ին նույն ձևով վարվեց նաև Քամիլ Շամունը:

Մեկնարանելով Տանն Կիլիկիո կաթողիկոսի ընտրության շուրջ ծավալված պայքարը, Լոնդոնի «Թայմսը» նշում էր. «Հայկական եկեղեցին, որի հետ Ռուսաստանն ավանդական կապեր ունի, մատնված է բարդ դրության, այն բանի հետևանքով, որ իշխանության պայքար է գնում հակառուսական շարժումների հետ նույնացող Դաշնակցություն կուսակցության... և հայերի մեծամասնության միջև... Միջին արևելքի հայության ճնշող մեծամասնությունը, որը ցանկանում է սերտ կապեր պահպանել էջմիածնի հետ, հակադրվում է եկեղեցին քաղաքական շարժումների միջամուխ դարձնելու դաշնակցական քաղաքականությանը»¹⁷⁴: Ապա, անդրադառնալով հայության լայն խավերում այդ «ընտրության դեմ» առաջացրած դժգոհություններին, նույն օրգանը շեշտում էր. «Հայերը համոզված են, որ Զարեհը իրենց պարտադրվեց ամերիկացիների, կաթոլիկների և Լիբանանի կառավարության կողմից»¹⁷⁵: Իսկ հայկական թերթերը գրում էին. «Ամերիկյան Կենտրալ ինտելիջնս էյջընսիի միջինարևելյան ղեկավարները ձեռքով-ոտքով խառնվեցան Տանն Կիլիկիո կաթողիկոսության հարցին և օրը-օրին օգնություն ու խորհուրդ շռայլեցին դաշնակցական

172 «Զարթոնք», 4 մարտի 1956:

173 «Արարատ», 27 մարտի 1956:

174 «The Times», 15 October 1957.

175 նույն տեղում:

գործիչներուն»¹⁷⁶; Բանը հասավ այնտեղ, որ ԱՄՆ-ի արտաքին գործերի դեպարտամենտը ստիպվեց «պաշտոնական հայտարարութեամբ» հանդես գալ Տանն Կիլիկիո կաթողիկոսական հարցում ձեռները լվանալու համար¹⁷⁷:

Հայրենասիրական կաղմակերպութիւններն ապարդյուն աշխատեցին Տանն Կիլիկիո անկախ կաթողիկոսութիւն հաստատելու ուղղութեամբ: 1956 թ. հոկտեմբերի 12-ին Լիբանանի կառավարութեան ուղղված նրանց դիմումը՝ «Հայ առաքելական անկախ համայնք» ստեղծելու մասին մնաց անհետևանք¹⁷⁸: Սիրիայի կառավարող շրջաններն էլ հավանութիւն չտվին կիլիկյան անկախ կաթողիկոսութիւն հաստատելու ծրագրին: Հովհ. Աղբաշյանը գրել է. «Հակադաշնակ կուսակցութիւնները, իրենց հետ ունենալով հայկական բուրժուազիայի մեկ կարևոր տոկոսը, վերջին ժամանակները քիչ ճիգ չխնայեցին ...իրենց ներկայութիւնը զգալի դարձնելու համար: Անոնք հայ եկեղեցին Դաշնակցութեան տիրապետութենէն փրկելու համար ամեն դուռ զարկին, դիմեցին Լիբանանի իշխանութեանը, գացին նույնիսկ մինչև Դամասկոս, մինչև Կահիրե: Սակայն ամենուրեք, տեղական թե արտաքին մարզի մեջ, ոչ ոք պատրաստակամութիւն հայտնեց Դաշնակցութեանը անհանգստացնելու, կամ հայկական կյանքին ներս անոր դիրքերը խախտելու»¹⁷⁹:

1957 թ. վերջերին Վաշինգտոնում ընդունելով Անթիլիասի կաթողիկոսարանի զավթումը կաղմակերպողներից խորեն եպիսկ. Բարոյանին, ԱՄՆ-ի փոխ-նախագահ Ռիչարդ Նիկսոնը ասել է. «Մութ ուժերու դեմ զինվորական ու տնտեսական ուժերով պայքարը բավական չէ: Անհրաժեշտ է պայքարիլ հոգեկան միջոցներով, ուրախ եմ որ դուք ձեր եկեղեցիներուն մեջ տարած էք այդ աշխատանքը»¹⁸⁰:

176 «Զարթոնք», 23 հունվարի 1958:

177 «Ազդակ», 12 փետրվարի 1957:

178 «Զարթոնք», 9 փետրվարի 1957:

179 «Մ. Ն. Հառաջ», 28 օգոստոսի 1960:

180 «Այգ», 17 նոյեմբերի 1957:

ԱՐԱՐԱՆԵՐԻ ԵՎ ՀԱՅՆԵՐԻ ՀԱՄԱՏՆՆԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ ԲԱՂԴԱԴԻ
ՊԱԿՏԻ ԵՎ ԷՅՋԵՆՀԱՌԻՆԵՐԻ ԴՈԿՏՐԻՆԱՅԻ ԴԵՍ

Իմպերիալիզմը անհուն շարիք է պատճառել մարդկությանը, հետամնացության և աղքատության դատապարտել բազմամիլիոն ժողովուրդների, որոնք այսօր ոտքի են կանգնել և զինված պայքար են մղում օտարերկրյա կեղեքիչների դեմ: Կարո՞ղ է միջազգային բուրժուազիան կանգնեցնել ազգային-ազատագրական շարժումների հաղթարշավը, կործանումից փրկել կապիտալիստական հասարակարգը: Այդ հարցումին դաշնակիները տալիս են դրական պատասխան, կրկնելով հակակոմունիզմի «տեսաբանների» քարոզներն այն մասին, թե իբր առանց իմպերիալիզմի և ռեակցիայի դեմ վճռական պայքար մղելու հնարավոր է ազգային անկախությունը և սոցիալական հարաբերությունների վերափոխումը, իբր կապիտալիստական պետությունը կարող է հաղթահարել արտադրության անարխիան ու տնտեսական ճգնաժամերը, հասնել սոցիալական ներդաշնակության և համընդհանուր բարօրության, ապահովել բոլոր աշխատավորների բարեկեցությունը: Նշելով, որ «...դրամատիրությունը կհաջողի աստիճանաբար ու խաղաղ կերպով իրագործել այն նպատակը՝ բարձր տնտեսական բարօրություն և գոհացուցիչ ապրելակերպ... ընկերվարութենեն և համայնավարութենեն անհամեմատ ավելի արդյունավոր կերպով»¹⁸¹, նրանք եզրակացնում են. «Ապագան, անկասկած, կպատկանի ամերիկյան նոր տեսակի ազատ դրամատիրության...»¹⁸²:

Հնչակյանները պաշտպանում են տրամագծորեն հակադիր տեսակետ: Նրանք ազգային-ազատագրական շարժումները գնահատում են որպես գաղութային ու կախյալ ժողովուրդների զարգացման օրինաչափ արդյունքը, որպես մարդկության առաջադիմության օրենքներով կյանքի կոչված մի երե-

181 «Հայրենիք», 2 ապրիլի 1957:

182 Նույնը, 13 մարտի 1957:

վույթ, որն արգելակել անհնարին է: Պաշտպանելով ժողովուրդների ազատ ինքնորոշման իրավունքը, նրանք խստորեն դատապարտում են իմպերիալիստների ագրեսիվ գործողությունները Հնդկաչինում, Կորեայում, Վիետնամում, Կոնգոյում, Ալժիրում, Եգիպտոսում, Լիբանանում և ուրիշ երկրներում: Նշելով, որ իմպերիալիզմը հիմնված է «խոշոր դրամատիրություն վրա», իսկ այս վերջինիս հիմնական նպատակներից է «սուր ազգերը քամելը», նրանք գրում են. «Կայսերապաշտ պետությունները «օգնություն» կրնժայեն նվազ զարգացած երկիրներուն, որպեսզի զանոնք ստրկացնեն քաղաքական ու տնտեսական գետնի վրա, որպեսզի իրենց մոնոպոլիաներուն դիրքերը զորացնեն և այդ երկրները զինվորական ուխտերու մեջ քաշեն (Սենտո և Օթազ)»¹⁸³: Մերժելով իմպերիալիստական «օգնությունը», նրանք պաշտպանում են Սովետական Միության և մյուս սոցիալիստական պետությունների օգնությունը, որը տրվում է անշահախնդրորեն, որպեսզի իմպերիալիզմի լուծը թոթափած երկրները «ազգային արդյունարերություն ստեղծեն և իրենց բնակչության կենսամակարդակը բարձրացնեն»¹⁸⁴: Հնչակյան տեսարանները ցույց են տալիս, որ մարդկային հասարակության զարգացման օբյեկտիվ շրջանները տանում են դեպի կապիտալիզմի կործանումը: Իրավացիորեն, նրանք նշում են, որ մակկարտիզմը հանդիսանում է ոչ թե պատահականության, այլ ԱՄՆ-ի սոցիալական զարգացման օրինաչափ ծնունդը, նրան ծնող հասարակարգը գնում է դեպի բուրժուա-դեմոկրատական ազատությունների վերացում, ռասայական խտրականության սաստկացում, դեպի անխուսափելի կործանում: «Պատմական անխուսափելի օրենքներու համաձայն, — գրում են նրանք, — կապիտալիզմի օրերը համրված են և ան դատապարտված է անհետանալու մարդկության պատմության ասպարեզին»¹⁸⁵:

183 «Արարատ», 1 հուլիսի 1960:

184 Նույն տեղում:

185 Նույնը, 31 օգոստոսի 1957:

Պատմութեան անիվը անշեղորհն ընթանում է դեպի իմպերիալիզմի կործանումը¹⁸⁶:

Ի տարբերութիւն հնչակյանների, ռամկավարները քննադատում են ոչ թե իմպերիալիզմի էութիւնը, այլ նրա մասնավոր կողմերը: Նրանք ձաղկում են միջազգային իմպերիալիզմի ամբողջում հրեշավոր շափերի հասնող սպանութիւնները, ավազակութիւնը, կաշառակերութիւնը, «սև շապիկավոր» մակկարտիզմը և այլն: Սակայն, անտեսելով պատմական այն պայմանները, որոնք առաջացրել են բարոյական այդ անկումը, նրանք այն համարում են ոչ թե իմպերիալիզմի անլուծելի հակասութիւնների, այլ պետական գործիչների ապիկարութեան հետևանքը: Այնուամենայնիւ, նրանք գտնում են, որ իմպերիալիզմն ի վիճակի չէ «...այլևս լուծի տակ պահել հպատակ երկրներ ու ժողովուրդներ, որոնք արթնցած են ժամանակի ոգիին բերմամբ և վճռած տեր կանգնիլ իրենց ազգային ու մարդկային իրավունքներուն»¹⁸⁷: Սակայն, ռամկավար կուսակցութիւնը, լինելով դասակարգային էութեամբ բուրժուական, հանդես է բերում որոշ վերապահութիւն հակաիմպերիալիստական շարժումներին հայերի գործուն մասնակցութիւն բերելու հարցում: Ռամկավարները գտնում են, որ սփյուռքահայից «պահանջվածը իր բնական երկրին օրինապահ ու կարգապահ քաղաքացիները ըլլալն է և ազգային քաղաքականութեան հետապնդումով գոհանալն է միայն: Մենք պետք չունինք մեծ պետութեանց վեճերուն մասնակից ըլլալու»¹⁸⁸: Այդ քաղաքականութիւնը ռամկավարներին կտաներ ինքնամեկուսացման, նրանց կկտրեր տվյալ երկրի առաջադիմական շարժումներից, եթե նրանք միաժամանակ չընդունեին, որ տարբեր երկրներում գործող իրենց մասնաճյուղերը «կրնան ունենալ իրենց միջազգային թե ազգային քաղաքականութիւնները, պայմանով որ միջազգային քաղա-

186 Նույնը, 30 հոկտեմբերի 1956:

187 «Նոր օր», 29 մարտի 1957:

188 «Զարթոնք», 14 հուլիսի 1957:

քականությունն նույնանա երկրի արտաքին քաղաքականության հետ, իսկ ազգային քաղաքականությունը դառնա անոնց գլխավոր և էական գործունեության դաշտը»¹⁸⁹: Արաբական երկրներում նրանց «միջազգային քաղաքականությունը» (վերաբերմունքը դեպի իմպերիալիզմի լագերը) համապատասխանում է այդ երկրների «արտաքին քաղաքականությանը» (հակաիմպերիալիստական ուղղությանը) և, հետևաբար, ոչնչով չի խանգարում նրանց «ազգային քաղաքականությանը» (հայկական գաղութի անվտանգությանը): Այդ հանգամանքների զուգադրիպությամբ էլ պայմանավորված է հիմնականում նրանց գործուն մասնակցությունը Սիրիայում և Լիբանանում ծավալված հակաիմպերիալիստական պայքարին:

* *
*

Սովետական Միության արտաքին քաղաքականությունը, խոստորեն պահպանելով խաղաղ գոյակցության և մեկը մյուսի ներքին գործերին շմիջամտելու լենինյան սկզբունքը, նախադրյալներ ստեղծեց տարբեր ժողովուրդների հետ մշակութային, տնտեսական և քաղաքական համագործակցության համար: Սովետական կառավարութունն եղբայրական օգնության ձեռք մեկնեց թույլ զարգացած երկրներին, չնայած, որ սովետական ժողովուրդը տակավին ամբողջովին չէր բուժած պատերազմից ստացած վերքերը: Սովետական տրնտեսության զարգացման տեմպերի հետ միասին աճեց նաև սովետական օգնությունը, նպաստելով նոր ազատագրված երկրների սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքի վերափոխմանը:

Բարձր զնահատելով Սովետական Միության անշահախրնդիր օգնության նշանակությունը Եգիպտոսի անկախության պայքարում, Արաբական միացյալ հանրապետության

¹⁸⁹ Նույնը, 11 հուլիսի 1957:

փոխ-նախագահը նշել է. «Նրբ մեր հրկրի թշնամիները գլուխ կցցեին և մենք քիչ թվով անկեղծ բարեկամներ ունեինք, Սովետական Միությունը գլուխն անցավ այդ բարեկամներուն և իր օգնությունը ընձեռնեց: Ան տեսապես հարգեց մեր անկախությունը և ցույց տվավ, որ անշահախնդիր բարեկամ է բոլոր արաբ ժողովուրդներուն: Սովետական Միության հավատարմությունը՝ խաղաղ գոյակցության և ուրիշ երկրներու ներքին գործերուն շմիջամտելու սկզբունքը արաբներուն մոտ առաջ բերավ վստահություն և հարգանք»¹⁹⁰,

Սովետական Միության և արաբական երկրների բարեկամական կապերի զնալով ավելի ու ավելի ամրապնդվելը լրջորեն մտահոգում էր իմպերիալիստներին: Նրանք դիմեցին մի շարք միջոցառումների «անկարգապահ արաբներին» կարգի հրավիրելու համար: ԱՄՆ-ի կառավարությունը հրաժարվեց Ասուանի ամբարտակի կառուցումը ֆինանսավորելու հանձնառությունից և միջոցներ ձեռք առավ Հորդանանը, Արաբիան, Սիրիան և Լիբանանը Սովետական Միության «ազրեսիայից»... պաշտպանելու համար:

1954 թ. ապրիլի 2-ին ԱՄՆ-ի շանքերով Կարաչիում ստորագրվեց Թուրքո-պակիստանյան պակտը, որը ծառայելու էր «հիմք» Թուրքիայի, Իրաքի, Իրանի, Պակիստանի, Աֆղանստանի և այլ երկրների մասնակցությամբ միջինարևելյան ռազմական ընդարձակ բլոկ ստեղծելուն: 1954 թ. հունիսի 12—16-ը Անկարայում, այնուհետև Ստամբուլում գումարվեց Մերձավոր արևելքի երկրներում հավատարմագրված Թուրքական դիվանագետների խորհրդակցությունը, որը հիմնականում քննարկեց Թուրքիայի անելիքներն արաբական երկրները միջինարևելյան բլոկի մեջ ներգրավելու գործում: 1955 թ. հունվարի 12-ին Բաղդադում Թուրքիայի պրեմյեր Ադնան Մենդերեսը և Իրաքի պրեմյեր Նուրի Սայիդը որոշեցին «փոխադարձ անվտանգության» պայմանագիր կնքել Թուրքիայի և Իրաքի միջև: Բաղդադում և Անկարայում միաժամանակ

¹⁹⁰ Մեջբերումն ըստ «Մ. Ն. Հառաչի», 15 հոկտեմբերի 1959:

հրապարակված կոմյունիկեում ասված էր, որ նրանք առաջին հերթին «անհրաժեշտ են համարում» արաբական երկրների մասնակցությունը կյանքի կոչվող ռազմական բլոկում:

Այնուհետև Մենդերեսը այցելեց Դամասկոս, Բեյրութ և Կահիրե: Հունվարի 14-ին մինչ Մենդերեսը Դամասկոսում առաջին շփումները կունենար սիրիական կառավարության հետ, անհանգիստ վիճակ ստեղծվեց երկրում: Հունվարի 15-ին Հալեպում տեղի ունեցան բանվորների և ուսանողների բողոքի ելույթներ Մենդերեսի Դամասկոս այցելության դեմ: Յուցարարներին ցրելու նպատակով ոստիկանությունը ձերբակալություններ կատարեց ուսանողության շրջանում: Հունվարի 16-ին Դամասկոսի պետական համալսարանի ուսանողները հանդես եկան ցույցերով, պահանջելով արգելափակված ուսանողների ազատ արձակումը և Մենդերեսի անհապաղ մեկնումը Սիրիայից: Ի միասնություն ուսանողների պահանջին, Դամասկոսում և մի շարք ուրիշ քաղաքներում շուկաները փակվեցին: Խռովահույզ Սիրիայում տասնօրյա ապարդյուն բանակցություններ վարելուց հետո, հունվարի 24-ին Թուրքիայի պրեմյերն անցավ Բեյրութ: Լիբանանի ժողովուրդը Մենդերեսին ընդունեց... ցույցերով և գործադուներով: Բանվորների հետ ասպարեզ իջան նաև Բեյրութի ամերիկյան համալսարանի և երկրորդական վարժարանների ուսանողներն ու աշակերտները: Հենց ցույցի առաջին օրը, ամերիկյան համալսարանի դիրեկցիան որոշում ընդունեց 17 առաջավոր ուսանողների արտաքսման մասին¹⁹¹: Սակայն, դրանով հարցը չլուծվեց: Հունվարի 25-ին նույն համալսարանում ավելի քան երկու հազար ուսանողներ դասադու հրշակեցին, բողոքելով դիրեկցիայի այդ միջոցառման դեմ¹⁹²: Մենդերեսը հաջողություն չունեցավ նաև Կահիրեում: Այնուամենայնիվ 1955 թ. փետրվարի 24-ին Բաղդադում ստորագրվեց Իրաք-Թուրքական ազդեցիվ համաձայնագիրը, որը հետագայում կոչվեց Բաղդադի պակտ:

¹⁹¹ „The Middle East Journal“, 1955, № 1, pp. 170—171.

¹⁹² Նույն տեղում:

Բաղդադի պակտը ուղղված էր Մերձավոր արևելքի ազգային-ազատագրական շարժումների և Սովետական Միության դեմ: Այդ իսկական նպատակները քողարկելու համար, պակտի առաջին հոդվածում ասված էր, որ պայմանագիր կողմերը «Միավորված ազգերի կազմակերպության 51-րդ հոդվածի համաձայն կհամագործակցեն իրենց անվտանգության և պաշտպանության գործում»: Ուշագրավ էր նաև նրա 5-րդ հոդվածը, որտեղ ասված էր. «Այս պակտը բաց կլինի արաբական լիգայի յուրաքանչյուր անդամի և յուրաքանչյուր այլ պետության առաջ, ...»: Այդ հոդվածի նպատակն էր արաբական երկրները պառակտել, նրանց Արաբական լիգայից կտրելու միջոցով:

Արաբ ժողովուրդները հանդես եկան իմպերիալիստների հետ ռազմական դաշինք կնքելու դեմ: 1954 թ. ապրիլի 1-ին Բեյրութում կայացավ Լիբանանի ազգային համագումարի, Սոցիալիստական պրոգրեսիվ կուսակցության, Երիտասարդական կազմակերպության, խաղաղության կողմնակիցների և մի շարք ուրիշ խմբակցությունների ներկայացուցիչների խորհրդակցությունը, որը հատուկ բանաձևով դատապարտեց այն փորձերը, որ կատարվում էին արաբական երկրներն ագրեսիվ պակտերի մեջ ներգրավելու համար¹⁹³: Նոյեմբերի 14-ին Բեյրութում ժխախտագործական մոնոպոլիա Ռեժիմի արաբ և հայ բանվորները գործադուլ հայտարարեցին, պահանջելով՝ վերջ տալ «կրակի հետ խաղալու» քաղաքականությանը:

Ավելի հստակ դիրքավորվեց Սիրիայի ժողովուրդը: Ադիբ Չիչեքլիի տապալումից հետո 1954 թ. սեպտեմբերի 24-ին տեղի ունեցան Սիրիայի պառլամենտական ընտրությունները, որոնք նշանավորվեցին մի շարք հանգամանքներով: Ագրեսիվ պակտերի և բլոկների կողմնակիցները կրեցին պարտություն, իշխանության գլուխ կանգնեցին Շաաբ (Ժողովրդական) և ԲԱԱՍ կուսակցությունները: Խալեդ Բեկդաշը պառլամենտի

193 «Սովետական Հայաստան», 16 ապրիլի 1954:

անդամ ընտրվեց, ստանալով 1947 թ. 9886-ի փոխարեն ա-
վելի քան 17.000 քվե¹⁹⁴: Սիրիայի պառլամենտի անդամ ըն-
տրվեց նաև հայրենասեր գործիչ Տիգրան Չրաշյանը, պար-
տության մատնելով դաշնակ Հրաշ Փափազյանին:

Այդ պայմաններում Սիրիայի կոմունիստական կուսակ-
ցությունը կոչ արեց «...բանվոր ու գյուղացի զանգվածներուն
և իմպերիալիզմի հակառակորդ բոլոր հայրենասերներուն,
մտավորականներեն սկսած մինչև արդյունաբերողներն ու
վաճառականները, հողագործները, կրոնավորները և այլ...
որպեսզի իմպերիալիզմի և անոր ծրագրերուն դեմ հանուն
դեմոկրատիայի հանդես գան ազգային լայն ճակատով»¹⁹⁵:

Իր հերթին, Արաբական լիգան 1954 թ. ապրիլի 1-ի հայ-
տարարությամբ հակադրվեց արևմտյան պետությունների՝
արաբական երկրներն ագրեսիվ պակտերի և բլոկների մեջ
ներգրավելու փորձերին, նշելով՝ «արաբական երկրները հրա-
ժարվում են միանալ Թուրք-պակիստանյան պակտին»¹⁹⁶: Իսկ
1955 թ. հունվարի 22-ին լիգայի անդամ պետությունների
պրեմյեր-մինիստրների Կահիրեի խորհրդակցությունը դա-
տապարտեց Իրաքի ներգրավումն այդ պակտում¹⁹⁷:

¹⁹⁴ W. Z. Laqueur, The Communism and Nationalism, p. 331

¹⁹⁵ «Հուսարեր», 9 փետրվարի 1955:

¹⁹⁶ „Новое время“, 29 мая 1954, стр. 5.

¹⁹⁷ Ի նախապատրաստություն Իրաքը Թուրքո-պակիստանյան պակտի
մեջ ներգրավելու, Նուրի Սաիդը ձեռք առավ մի շարք ռեպրեսիվ միջոցա-
ռումներ: 1954 թ. սեպտեմբերի 19-ին կալանքի վերցվեցին 800 քաղա-
քացիներ կոմունիստական կուսակցության պատկանելու մեղադրանքով:
Սեպտեմբերի 22-ին լուծարքի ենթարկվեցին ավելի քան 470 կազմակեր-
պություններ: Նոյեմբերի 16-ին խափանվեցին շուրջ 300 թերթեր և պար-
բերականներ: Լուծված կազմակերպություններին և խափանված թերթերին
ձեռնադրեց իրավունք էր տրվում նորից ներքին գործերի մինիստրության
գիմելու իրենց գոյությունը վերականգնելու համար: Սակայն, ըստ դաշ-
նակցական «Հուսարերի» (3 հունվարի 1955 թ.) դրանց «հազվիվ կեսը կյանքի
կոչվեցավ, ոմանք ալ մերժվեցան...»: Գործելու իրավունք տրվեց դաշնակ-
ցական կազմակերպություններին և արտոնվեց նրանց օրգան «Գոյամարտ»
շարաթաթերթի վերահրատարակությունը:

Հայկական մամուլի առաջադեմ օրգանները սխտեմատիկաբար քննադատում էին անգլո-ամերիկյան իմպերիալիստների ագրեսիվ պակտերի և բլոկների քաղաքականութունը, ցույց տալով, որ դրա նպատակն է՝ գաղութային լուծ հաստատել արաբական երկրներում: «Արարատը» գրում էր, որ միջազգային իմպերիալիզմի շանքերը «...ի դերն պիտի ելլեն շնորհիվ արաբ ժողովուրդի հաստատուն կեցվածքին»¹⁹⁸ և կոչ անում հայերին «անսասան» պահպանել հայ և արաբ ժողովուրդների «եղբայրական միասնականութունը», սատարել «միասնական շահերու պաշտպանության գործին, թույլ չտալով, որ Լիբանանը իյնա ռազմամուլ հրձիգներու թակարդին մեջ»¹⁹⁹: Մերկացնելով Բաղդադի պակտի նպատակները, «Զարթոնքը» ընդգծում էր, որ իմպերիալիստները «վհուկային ապուր» են եփում Մերձավոր արևելքում, ձգտում են մնալ Սուեզի ջրանցքում, Իսրայելի սահմանները հասցնել մինչև Սուեզ և Աքաբա, փշրել Սաուդյան Արաբիայի ուժը, ընդարձակել Իրաքը և Հորդանանը, ուժերի հավասարակշռություն ստեղծել արաբական թերակղզում²⁰⁰:

Դաշնակցական մամուլը արդարացնում էր իմպերիալիստների ռազմա-քաղաքական բլոկների ստեղծման քաղաքականութունը, այն կեղծ պատճառաբանությամբ, որ իրը Սովետական Միությունը և մյուս սոցիալիստական պետութունները սպառնում են թույլ զարգացած երկրների անկախությանը: Դաշնակ շեֆերը գովաբանեցին Մարշալի պլանը, Հյուսիս-ատլանտյան պակտը և մյուս զինակցութունները, դրանք համարելով իմպերիալիզմի անպարտելիության «գրավականը»: Զտեսնելով որ իմպերիալիզմը կործանող ուժերը գտնվում են ոչ թե Մոսկվայում, այլ կապիտալիստական աշխարհում, նրանք հոխորտում էին. «Հիմա որ զինակցութուններու ցանցը կազմված է, կարելի է այլևս խոսիլ Մոսկվայի

198 «Արարատ», 2 սեպտեմբերի 1954:

199 Նույնը, 19 հունիսի 1955:

200 «Զարթոնք», 21 փետրվարի 1956:

հետ»²⁰¹։ Նրանք երկարորեն պրոպագանդում էին այն օգուտները, որ արաբները պետք է ստանային Բաղդադի պակտին հարելով։

1955 թ. մարտին իմպերիալիստներին հաջողվեց Իրանն ընդգրկել Բաղդադի պակտի մեջ։ Այդ հաջողութունը նրանց մղեց մի անգամ ևս անդրադառնալու այդ պակտին արաբական երկրների մասնակցության հարցին։ 1955 թ. ապրիլի 1-ին Քամիլ Շամունը մեկնեց Անկարա՝ թուրքական կառավարության հետ բանակցելու Լիբանանի անդամակցության հարցի շուրջը։ Ապրիլի 2-ին «Լիբանանի Ազգային համագումարը» դեմ արտահայտվեց այդ պակտին, իսկ ապրիլի 3-ին Բաստայում կայացավ բողոքի ժողովրդական միտինգ, որին մասնակցեցին բազմահազար արաբներ և հայեր։ Ոստիկանութունը ցրեց միտինգը և ձերբակալեց 16 ցուցարարներ, այդ թվում և հայեր²⁰²։

Խրախուսվելով Քամիլ Շամունի ընդառայումից, այս անգամ էլ Թուրքիայի պրեզիդենտ Զեյալ Բայարը «բարեկամական» այցով ժամանեց Բեյրութ։ Հակաժողովրդական կլիկը ձեռք առավ բոլոր միջոցները Բայարին փառահեղ ընդունելութուն կազմակերպելու համար։ Բեյրութ քաղաքի գլխավոր պողոտաներում կառուցվեցին հաղթանակի շքեղ կամարներ։ Սակայն Բայարն ընդունվեց այնպես, ինչպես ընդունվել էր Մենդերեսը։ Բավական է նշել, որ թուրքական թերթերը գրեցին «Մայրաքաղաքի կեդրոնը... և Բաստայի մեջ երկու ուժանակներ պայթեցան... Հայոց թաղի մեջ կառուցված կամարը այրելու փորձ մը եղավ, սակայն ոստիկանութունը վրա հասավ...» և այլն²⁰³։

1956 թ. սկզբից իմպերիալիստները սկսեցին Իսրայելը դիմել, սպառնալով Սիրիայի և Եգիպտոսի անկախությանը։ Արաբական հասարակայնութունը լրջորեն պատրաստվում էր իմպերիալիստական ագրեսիան դիմագրավելու համար։ Հան-

201 «Հայրենիք», 30 հոկտեմբերի 1955։

202 «Արարատ», 6 ապրիլի 1955։

203 «Հուսարիք», 4 հուլիսի 1955։

դես դալով արաբ ժողովուրդներին կողքին, բողոքի ձայն բարձրացրին նաև հայկական կազմակերպությունները: Հնչակյան կուսակցությունը հայտարարում էր. «Արաբական աշխարհի մեջ հայ ժողովուրդը արաբ ժողովուրդներու հետ կողք-կողքի իր հայրենասիրական պարտականությունը պիտի կատարե ընդդեմ բոլոր ձևի տիրապետողներուն»²⁰⁴: Նույն թվականի օգոստոսի 15-ին, երբ գաղութացման վտանգ էր սպառնում Եգիպտոսին, Բեյրութի Սահակյան մարզադաշտում տեղի ունեցավ արաբ և հայ աշխատավորության միտինգը, ի պաշտպանություն եգիպտական ժողովրդի հերոսական պայքարի և Սուեզի ազգայնացման²⁰⁵: Երբ անգլո-ֆրանսա-իսրայելյան ղորքերը հարձակվեցին Եգիպտոսի վրա, Սիրիայի և Լիբանանի հայ հասարակայնությունը նորից բողոքեց «Արաբական արևելքը վերստին իրենց գաղութարարական լուծին ենթարկելու ձգտող արևմտյան իմպերիալիստներու սարքած դավերուն դեմ»²⁰⁶:

Սակայն եգիպտական ժողովուրդը մենակ չէր իմպերիալիզմի դեմ մղվող գոտեմարտում: Նրան պաշտպանում էին Սովետական Միությունը, սոցիալիստական և դեմոկրատական երկրները, ամբողջ աշխարհի առաջադիմական ուժերը: Եգիպտական ժողովրդի հերոսական պայքարը պսակվեց հաղթանակով, իմպերիալիստները ստիպվեցին Սուեզից դուրս բերել իրենց զորքերը:

* * *

*

Բաղդադի պակտի «անժողովրդականությունը» իմպերիալիստներին մղեց առաջ քաշելու գաղութացման մի նոր գործիք՝ «էյզենհաուերի դոկտրինան»:

1957 թ. հունվարի 5-ին պրեզիդենտ էյզենհաուերն ամերիկյան կոնգրեսին դիմեց մի ուղերձով, որտեղ շարադրված

204 «Արաբատ», 27 մարտի 1956:

205 Նույնը, 19 օգոստոսի 1956:

206 Նույնը, 12 հունվարի 1957:

էին ԱՄՆ-ի քաղաքականութեան նպատակները Մերձավոր արևելքում: Մարտի 9-ին այդ ուղերձի հիման վրա կոնգրեսն ընդունեց բանաձև՝ «Մերձավոր արևելքի դրութեան մասին», որը և հանդիսացավ «էյզենհաուերի դոկտրինան»: Դրանով պրեզիդենտին իրավունք էր տրվում ըստ իր հայեցողութեան ԱՄՆ-ի ռազմական ուժերը օգտագործելու Մերձավոր և Միջին արևելքը «միջազգային կոմունիզմի դեմ պաշտպանելու» համար...: Դա հին գինին էր նոր տիկի մեջ:

Այդ դոկտրինան արաբական երկրներին խոստանում էր անսահմանափակ տնտեսական և ռազմական օգնություն, ոչ թե Բաղդադի կամ մի ուրիշ պակտի հարելու պայմանով, այլ երկկողմանի պայմանագրով, որը ԱՄՆ-ին իրավունք տար տվչալ երկիրը «պաշտպանելու» արտաքին, այսինքն Սովետական Միության ենթադրյալ հարձակման, և ներքին, այսինքն «կոմունիստական վտանգի» դեմ: Իրականում այդ դոկտրինայի խնդիրն էր՝ ճզմել Մերձավոր և Միջին արևելքի ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումները:

1957 թ. հունվարի 10-ին Սովետական Միության և ժողովրդական Չինաստանի կառավարությունները պաշտոնապես հայտարարեցին, որ պատրաստ են օգնություն ցուցաբերելու այն ժողովուրդներին, որոնք կենթարկվեն էյզենհաուերի դոկտրինայի ճնշմանը:

Առաջին հերթին Սիրիան ենթարկվեց այդ դոկտրինայի ճնշմանը: Երբ սիրիական կառավարությունը մերժեց ԱՄՆ-ի իմպերիալիստներին... պաշտպանութեանը ապավինել, ապա նրանք նախապատրաստեցին թուրքական հարձակում Սիրիայի վրա: Ազրեսորի դեմ կռվելու վճռականութեամբ Սիրիայի կոմունիստական կուսակցությունը մորիլիզացրեց բանվորական և գյուղացիական զանգվածներին: Հայերին կոչանելով՝ «մինչև վերջ Սուրիո կողքին» կանգնելու մասին²⁰⁷, «Մ. Ն. Հառաջը» գրում էր. «...յուրաքանչյուր պարկեշտ հայու ազգային պարտականությունն է պայքարիլ արաբ ժողովրդի

207 «Մ. Ն. Հառաջ», 24 սեպտեմբերի 1957.

կողքին..., եթե խելակորույս իմպերիալիստները համարձակին իրենց նախահարձակումը շղթայաղերծել Սուրիո դեմ»²⁰⁸; Ժողովրդական զինված ջոկատներում կամավորագրվեցին նաև մեծ թվով հայ երիտասարդներ: Դամասկոսի «ալ-Շարկ» թերթը նշում էր. «Հայերն իրենց եղբայրական ազնիվ զգացումներն են արտահայտում, երբ զինավարժություն են կատարում Սիրիան պաշտպանելու համար»²⁰⁹:

Դաշնակ շեֆերը ուղղակի մեղադրում էին Սիրիայի ղեկավարներին, որ նրանք, մերժելով «էյզենհաուերի դոկտրինան» իբր գործում էին իրենց հայրենիքի անկախության դեմ, չէին կամենում այն պաշտպանել կարմիր վտանգից²¹⁰: Բացի այդ, նրանք արագորեն զինում էին իրենց կողմնակիցներին՝ Սիրիայի դեմ իմպերիալիստների հետագա գործողություններին մասնակցելու համար: Այնպիսի ծավալ էր ընդունել նրանց հակահեղափոխական գործունեությունը, որ արաբական առաջադեմ մամուլը կառավարությունից պահանջեց՝ վերացնել «պետությունը, որ դաշնակները ստեղծել են Սիրիայում»²¹¹:

Նախապատրաստվող թուրքական ագրեսիայի օրերին սովետական կառավարությունը պաշտոնապես ազդարարեց. «Եթե Թուրքիան ռազմական գործողություններ սկսի Սիրիայի դեմ, ապա դա կարող է հասցնել շատ լուրջ հետևանքների, այդ թվում և հենց իրեն՝ Թուրքիայի համար: Այդ կայծից կարող է պատերազմի հրդեհ առաջ գալ: ...Մենք ցանկանում ենք թուրքական կառավարությանը նախազգուշացնել շմտածված ավանտուրիստական քայլերից, որոնք կարող են նրան զցել պատերազմի անդունդը և որից Թուրքիան դժվարություններ կկարողանա դուրս գալ»²¹²: Իսկ հոկտեմբերի 20-ին ՄԱԿ-ում

208 Նույն տեղում:

209 الشرق، دمشق، ٢ تشرين الاول ١٩٥٧

210 «Հայրենիք», 17 հոկտեմբերի 1957:

211 الحدى، ٢٣ كانون الاول ١٩٥٧

212 «Правда», 11 октября 1957.

Միրիայի գանգատը քննարկելիս, Սովետական Միության պատվիրակության ղեկավար Գրոմիկոն Միացյալ Նահանգներին մեղադրեց այն բանում, որ նրանք հրահրում էին Քուրբիային «ճակատագրական քայլ» կատարելու, ընթանալու «վտանգավոր ճանապարհով»²¹³։ Միրիայի ժողովրդի վճռականությունը և սոցիալիստական պետությունների ջանքերը կանխեցին Թուրքական ագրեսիան։

Իմպերիալիստական ճնշումը խոր անդրադարձ ունեցավ Միրիայի պետական կյանքի վրա։ Տիրապետող դասակարգը իր իշխանության սպառնացող վտանգ տեսնելով ագրեսիան դիմագրավելու վճռականությամբ ասպարեզ իջած բանվորական և գյուղացիական ղանգվածների աշխուժացման մեջ, հակվեց Եգիպտոսի հետ միանալու ծրագրին։ Արաբական միացյալ հանրապետության կազմությունը (1957—1958 թթ.) գնահատվեց որպես երաշխիք ոչ միայն արտաքին, այլև ներքին վտանգի դեմ։

Էյզենհաուերի դոկտրինան առավել ծանր հետևանքներ ունեցավ Լիբանանի համար։ 1957 թ. հունվարին Լիբանանի արտաքին գործերի մինիստր Շաու Մալիկը հայտարարեց. «Լիբանանը համաձայն է Էյզենհաուերի ծրագրին։ Մենք պատրաստ ենք գործակցելու Միացյալ Նահանգներուն հետ»²¹⁴։ Նույնիմաստ հայտարարությամբ հանդես եկան նախագահ Քամիլ Շամունը և պրեմյեր Սամի Սուհրը։ Էյզենհաուերի դոկտրինան պաշտպանեցին նաև ֆալանժիստները, Ղուլմի սուրիները, դաշնակները և ուրիշ պրոիմպերիալիստական ուժեր։

Էյզենհաուերի դոկտրինայի դեմ արտահայտվեցին աշխատավորական ղանգվածները, խաղաղության կողմնակիցները, առաջադեմ գործիչները։ Հունվարի 29-ին Մեղավարի արար և հայ աշխատավորները կառավարությունից պահանջեցին՝ «վճռականորեն դիրքորոշվիլ Լիբանանի ազգային գե-

213 «Սովետական Հայաստան», 31 հոկտեմբերի 1957:

214 «Արաբատ», 13 հունվարի 1957:

րիշխանությունը բռնաբարող այս ծրագրի դեմ»²¹⁵։ Փետրվարի 9-ին Բեյրութի 80 հանրահայտնի դատապաշտպաններ, այդ թվում Ն. Շամլյանը, Ն. Թուրսարգիսյանը և ուրիշներ բողոքեցին էյզենհաուերի դոկտրինայի դեմ²¹⁶։

Այնուամենայնիվ մարտի 16-ին ստորագրվեց ամերիկա-լիբանանյան համաձայնագիրը, որով Լիբանանը պարտավորվում էր պայքար մղել կոմունիզմի դեմ, ԱՄՆ-ի հետ միասին «լուծել» լարվածությունն ստեղծող հարցերը և այլն²¹⁷։ Այդ բանից հետո, օպոզիցիոն ուժերը կազմեցին Ազգային ճակատը, որը ժողովրդին կոչ արեց. «Բոլոր միջոցներով պաշտպանել Լիբանանի անկախությունն ու գերիշխանությունը, հավատարիմ մնալ 1943 թվականի Ազգային ուխտին, վարել չեզոք քաղաքականություն և ոչ մի պետության չտալ առանձնաշնորհյալ դիրք, սերտորեն համագործակցիլ արաբական երկրներու հետ, շընդունիլ որևէ օտար օգնություն, որը կարող է սահմանափակել Լիբանանի ազատությունը և վտանգել անոր անկախությունն ու գերիշխանությունը»²¹⁸։

Մայիսի 12-ին Բեյրութում տեղի ունեցավ Ազգային ճակատի ժողովրդական միտինգը։ Մասնակիցները, թվով շուրջ 75.000 մարդ, կրում էին՝ «Կեցցե ազգային միասնականությունը լիբանանցիներու միջև», «Կեցցե միջազգային եղբայրակցությունը», «Կեցցե դրական չեզոքությունը», «Կորչի Այլընհաուերի դոկտրինան», «Կորչեն ռազմական պակտերը», «Կեցցեն մեր հայ եղբայրները» լողունգները²¹⁹։ Անդրադառնալով այդ միտինգին հայերի մասնակցությանը, «Մ. Ն. Հառաջը» գրել է. «Ավելի քան 3000 բեյրութահայերու փառահեղ մուտքը որոտընդոստ ծափահարություններով ողջունվեցավ...։ Հայկական պատվիրակությունը բարձրացուցած էր

215 «Մ. Ն. Հառաջ», 3 փետրվարի 1957։

216 Նույնը, 10 փետրվարի 1957։

217 Նույնը, 24 մարտի 1957։

218 Նույնը, 7 ապրիլի 1957։

219 Նույնը, 19 մայիսի 1957։

լայն պատահա մը, որուն վրա գրված էր՝ կեցցե հայ և արաբ եղբայրակցութունը»²²⁰։

Այդպիսին էր երկրի ներքին դրութիւնը, երբ հունիսին տեղի ունեցան պատլամենտական ընտրութիւնները։ Ընտրական ցուցակներից շնչված էին այն քաղաքացիների անունները, որոնք համարվում էին Ազգային ճակատի կողմնակիցներ։ Ըստ «Ալ-Սիյասա» թերթի՝ «ընդդիմադիր հայ քվեարկողներու 70 առ հարյուրին անունները շնչված էին նախապես։ Հայ քվեները չքացնելու կառավարական ծրագիրը չբավականացավ անուններու շնչումով և գործի լծեց դաշնակ խմբակը՝ ստեղծելու համար սարսափի մթնոլորտ։ Դաշնակ տեռորիստներու խմբակ մը ինքնաշարժով անցավ հայ ընդդիմադիրներու ընտրական գրասենյակի առջևն և ուղղակի կրակեց ընտրողներու վրա»²²¹։ Պատլամենտում մեծամասնութիւն ձեռք բերեցին էյդինհաուների ղոկտրինայի կողմնակիցները...։

Դրութիւնն առավել ևս սրվեց, երբ հայտնի դարձավ, որ Քամիլ Շամունն երկրորդ անգամ վերընտրվելու նպատակով պատրաստվում է փոփոխութեան ենթարկել Սահմանադրութիւնը։ 1958 թ. մարտի 21-ին Բեյրութում տեղի ունեցան բողոքի զանգվածային ելույթներ. ցուցարարները բացականչում էին՝ թույլ չենք տա Սահմանադրութեան վերանայումը և Շամունի վերընտրութիւնը²²²։ Սահմանադրութիւնը փոփոխելու դեմ արտահայտվեցին նաև Լիբանանի մարոնական և մուսուլմանական համայնքների պետերը՝ պատրիարք Մեուշին և շեյխ Մոհամմեդ Ալայան։ Իսկ մարտի 27-ին Ազգային ճակատի կազմակերպութիւնները հրապարակեցին հայտարարութիւն, որտեղ ասված էր. «Ստորագրողներս կորոշենք միացնել մեր ճիգերը ու մեկտեղել մեր ուժերը ընդդիմանալու համար նախագահական մանդատի վերանորոգման, որ կհակասե ժողովրդի կամքին և կվտանգե հայրենիքի ապագան»²²³։

220 Նույն տեղում։

221 Մեջբերումն ըստ Նույնի, 16 հուլիսի 1957։

222 Նույնը, 23 մարտի 1958։

223 Նույն տեղում։

Սամի Սուլհի կառավարութիւնը միջոցներ ձեռք առաւ Շամունի երազն... Իրականացնելու համար: Էյզենհաուերի ղոկատրինայի կողմնակիցները սկսեցին զինվել բանակի զինապահեստից երեք հազար հրացան և ատրճանակ ստանալով: Մայիսի 7-ին Շամուն-Սուլհ կլիկի տեղորիստների ձեռքով ըսպանվեց Բեյրութի «Տելեգրաֆ» թերթի գլխավոր խմբագիր Նասիր Մեթնին: Այդ ոճիրը կայծ դարձավ Շամունի հակաժողովրդական ուժերի դեմ ապստամբութեան հրդեհ բռնկեցնելու համար:

Արձագանքելով Ազգային ճակատի կոչին, մայիսի 9-ին՝ Մեթնիի թաղման օրը, ժողովուրդն ընդհանուր գործադուլ հայտարարեց և հանդես եկավ բողոքի ելույթներով: Ցուցարարները կրում էին՝ «Կորչի Էյզենհաուերի ղոկատրինան», «Կորչի Բաղդադի պակտը», «Կորչի Շամունը», «Կորչեն ժողովրդի դավաճանները» լոզունգները: Մայիսի 9—12-ը ցուցարարները հրկիզեցին Բեյրութի և Տրիպոլիի ԱՄՆ-ի ինֆորմացիոն ծառայութեան շենքերը, պայթեցրին Իրաք պետրոլիում նավթային ընկերութեան նավթամուղը և ուլն: Ապստամբութեան հրդեհը բացի հարավային և հյուսիսային իրաքականից ծավալվեց նաև Լեռնային իրաքականի և Բեկաայի տարբեր շրջաններում: Ապստամբութեան կարևոր կենտրոններն էին Տրիպոլին, Շուֆը և Բեյրութը: Այդ կենտրոններում ապստամբների կողքին կռիվներին մասնակցում էին նաև հայ աշխատավորներից կազմված ջոկատներ:

Հայկական ջոկատներն ամենից ավելի աշխուժութիւն ցուցաբերեցին Բեյրութում: Մայրաքաղաքի թաղերը տարբեր ազգեցութեան գոտիների բաժանված լինելու հետևանքով հրեանարավոր շի եղել մի և ընդհանուր հրամանատարութեան ենթարկել հայ կոմունիստների, հնչակյանների և ռամկավարների մարտնչող ուժերը: Այդ կազմակերպութիւններից յուրաքանչյուրի թաղային կոմիտեները ղեկավարում էին իրենց զինված ջոկատները²²⁴, Իսկ Լեռնային իրաքանում և Տրիպոլիում կըռ-

224 Նույնը, 9 հոկտեմբերի 1960:

վող հայկական ուժերը գործում էին ուղղակի Ազգային ճակատի լիազոր ներկայացուցչի ղեկավարութան ներքո:

Հակաժողովրդական կլիկը ապստամբների դեմ օգտագործում էր բացի ներքին անվտանգութան ուժերից նաև ֆալսն-ժիսանների, Ղովմի սուրիների և դաշնակիների զինված խմբերը: Մինչև անգամ Քամիլ Շամունին առաջարկվեց՝ «Անթիլիասեն և Բուրջ Համուդեն հեռացնել ժանդարմերի ուժերը և զանոնք օգտագործել տարբեր վայրերու մեջ... քանի որ դաշնակ ահաբեկիչները կարող են այդ երկու շրջաններու ապահովությունը երաշխավորել»²²⁵: Այդպես գործելու ազատություն ձեռք բերելով, դաշնակ «ահաբեկիչներ ատրճանակներով զինված» շրջագայում էին Բուրջ Համուդի փողոցներում, խանութպաններին ստիպում «բանալ իրենց կրպակները», կրակում անաստողների վրա...²²⁶: Մայիսի 20-ին նրանք փորձեցին «բռնությամբ բանալ տալ» Հաճըն թաղի խանութները: Տեսնելով որ իրենց փորձը դատապարտված է ձախողության, նրանք կրակ բացեցին, սպանեցին Վ. Խաչատուրյանին և վիրավորեցին երկու կանանց²²⁷: Հունիսի 22-ին Կարմ էլ-Ջեյթուն թաղամասում «զնդացիներով զինված դաշնակիներ» սպանեցին կոմունիստ Մեսրոպյանին²²⁸: Հունիսի 27-ին Դորայում նրանք սպանեցին բանվոր Թորոս Դեմիրջյանին²²⁹:

Սակայն այդ եղբայրասպան ոճիրները անզոր էին հայ աշխատավորներին ընկճելու, նրանց մեկուսացնելու արաբ աշխատավոր ժողովրդի պայքարից: Բեյրութի տարբեր թաղերում գործում էին արաբ և հայ աշխատավորներից կազմված հատուկ մարմիններ, որոնք ղեկավարում էին թաղեցիների հակահառավարական պայքարը: Նրանց մշտական ուշադրության առարկա էին արաբ և հայ թաղեցիների «եղբայրական կապերը»: Այդ տեսակետից ուշագրավ փաստաթուղթ է Բեյրութի

225 «Սուրիա», 22 մայիսի 1958:

226 Նույն տեղում:

227 «Մ. Ն. Հառաջ», 25 մայիսի 1958:

228 «Զարթոնք», 24 հունիսի 1958:

229 Նույնը, 29 հունիսի 1958:

Մասլախ և Նոր Հաճըն թաղերի արար և հայ բնակչության ներկայացուցիչների ժողովի հրապարակած հայտարարությունը, որտեղ ասված էր. «Այսօր, երբ իրանյան կղիմագրավե պատմական ծանր փորձություն մը, մեր պարտականությունն է ավելի քան երբեք ամրապնդել արար և հայ եղբայրական կապերը՝ արգելք հանդիսանալու համար շարակամ մարդոց այն ճիգերուն, որոնք կմիտին թշնամություն սերմանել այս զույգ հարանվանություններու միջև: Կոչ կընենք մեր թաղեցիներու գիտակցության, զանոնք հրավիրելով միության և եղբայրության՝ պաշտպանելու համար իրանյան անկախությունն ու ազգային գերիշխանությունը՝ մեր ներքին գործերեն ներս կատարվելիք ամեն օտար միջամտության դեմ: Կեցցե իրանանը: Կեցցե հայ և արար եղբայրությունը»²³⁰:

Առաջին երեք շաբաթվա համառ մարտերից հետո, Ազգային ճակատի շոկատները իրանյան տերիտորիայի կեսից ավելին մաքրեցին կառավարական ուժերից: Տրիպոլիում ապրստամբ բնակչությունը վերահսկում էր գրեթե ամբողջ քաղաքը, իսկ արվարձաններում ուժեղացել էին փողոցային մարտերը: Լեռնալիբանանում գործող ապստամբները գրավեցին Բեյդ էդ-Դին քաղաքը և հրկիզեցին Շամունի ամառային ուղիղենցիան: Այդ մարտերում «զեն ի ձեռին պատվո տեղ գրավեցին» նաև հայ աշխատավորներ²³¹: Լեռնալիբանանի ապրստամբական շարժման ղեկավար Կամալ Զումրլադը հայտարարել է. «Իմ շարքերուն մեջ ունեի Բեյրութեն եկած հայ երիտասարդներ, որոնք կուլի առաջին գծին վրա քաջաբար մարտընչեցան պաշտպանելու համար իրանյան անկախությունը և գերիշխանությունը, անոնք նույնքան լավ լիբանանցիներ են, որքան դյուրզի, շիա, սյուննի կամ մարոնի լիբանանցիները»²³²:

Քամիլ Շամունը ստանում էր զգալի արտաքին օգնություն: Ազգային ճակատի ղեկավարները գններալ Շեհարին

230 «Մ. Ն. Հառաջ», 7 հուլիսի 1958:

231 Նույնը, 9 հոկտեմբերի 1960:

232 «Զարթոնք», 21 սեպտեմբերի 1958.

դրում էին. «Ամերիկյան, իրաքյան և հորդանանյան օդանավեր անընդհատ ղենք կփոխադրեն Լիբանանի ապահովության և բանակին օգնելու պատրվակին տակ...: Սակայն այս ղենքերը բանակին չեն հանձնվիր, այլ ժանդարմըրի հրամանատարության, որը իր կարգին զանոնք կբաշխե կառավարության կողմնակից խռովարարներուն, երկրին մեջ գրգռություններն անեցնելու համար»²³³, Բացի այդ, Իրաքից և Հորդանանից Շամունին օգնության էին հասնում նաև քաղաքացիական զգեստով բանակայիններ²³⁴, Այդ օգնությունը աշխուժացրեց կառավարական ուժերին, սակայն չփրկեց Շամունին:

Հունիսի սկզբին Շամունը ՄԱԿ-ի անվտանգության խորհրդում գանգատ հարուցեց ԱՄՆ-ի կառավարության դեմ, այն մեղադրելով Լիբանանի ներքին գործերին միջամտելու և ապստամբություն հրահրելու մեջ: Այդ ուղղությամբ միջազգային կարծիք պատրաստելու նպատակով Շամունը ցուցադրական կերպով Լիբանանից վտարեց ԱՄՆ-ի մի քանի հարյուր քաղաքացիների, իսկ մի քանիսին էլ ձերբակալեց: Այնուամենայնիվ Անվտանգության խորհրդի դիտորդները Լիբանանում չգտան Շամունի գանգատն արդարացնող և ոչ մի փաստ:

Հուլիսի 15-ին ամերիկյան 6-րդ ռազմա-ծովային նավատորմը զորք ափ հանեց Լիբանանի տերիտորիայում: Իսկ բրիտանական իմպերիալիստները զորք ուղարկեցին Հորդանան: Նույն օրը Սպիտակ տունը պրեզիդենտի անունից պաշտոնապես հայտարարեց. «Ի պատասխան Լիբանանի կառավարության դիմումի, Միացյալ Նահանգները Լիբանան ուղարկեցին ամերիկյան զորքերի կոնտինգենտ՝ ամերիկյան քաղաքացիների կյանքը պաշտպանելու և այն բանի համար, որ քաղաքներն Լիբանանի կառավարությունը Լիբանանի սովերենությունը և ամբողջականությունը պաշտպանելու գործում»²³⁵:

233 «Սուրիա», 28 մայիսի 1958:

234 F. Qubain, Crisis in Lebanon, Washington, 1961, p. 76.

235 «Սովետական Հայաստան», 17 հուլիսի 1958:

Իրականում նրանց հիմնական նպատակն էր ազդեսիա նախապատրաստել հեղափոխական Իրաքի դեմ, որտեղ հուլիսի 14-ին տապալվել էր նուրիսաիդյան վարչաձևը:

Բողոքելով ամերիկյան զորքերի կիբանան ներխուժման դեմ, Ազգային ճակատի ղեկավարները հայտարարեցին. «Եթե ամերիկացիները չհեռանան, ապա մենք կկռվենք նրանց դեմ»: Իսկ կիբանանի կոմունիստական կուսակցությունը արաբներն և հայերեն լեզվով կոչ արեց ժողովրդին՝ «Ամերիկացի վայրագ ներխուժողները իրենց հորդանները իջեցուցին այս խաղաղասեր երկրի վրա, փշրելու համար մեր ժողովուրդի սրբազան ըմբոստությունը... Միանանք բոլորս առանց դադափարական, հարանվանական և դասակարգային խտրության: Միանանք և ամրապնդենք մեր ազգային շահերուն միասնությունը...: Ի զեն և դեպի կռիվ... Կռվեցեք ներխուժողներու դեմ բոլոր զենքերով»²³⁶:

Հուլիսի 16-ին Սովետական կառավարությունը հրապարակեց հատուկ հայտարարություն, որտեղ ասված էր. «Լիբանանում ԱՄՆ-ի զինված ինտերվենցիան լուրջ սպառնալիք է ստեղծում խաղաղության համար, հղի է հեռուն գնացող հետևանքներով: ...Սովետական կառավարությունը հայտարարում է, որ Սովետական Միությունը չի կարող անտարբեր մնալ իր սահմաններին հարող շրջանում լուրջ սպառնալիք ստեղծող իրադարձությունների նկատմամբ և իրեն իրավունք է վերապահում ձեռնարկելու անհրաժեշտ միջոցներ, որոնք թելադրվում են խաղաղության և անվտանգության պահպանման շահերով»²³⁷: Սովետական կառավարության հայտարարությունը խոշոր նշանակություն ունեցավ ամերիկյան ռազմամոլներին զսպելու գործում:

ԱՄՆ-ի իմպերիալիստների ինտերվենցիան ձախողվեց և նրանք ստիպվեցին կիբանանից դուրս բերել իրենց զորքերը: Սակայն հոկտեմբերի վերջերին, օգտագործելով ամերիկյան

236 ԳԱ ԱՍ արխիվ, ֆ. 7, բ. 1, վ. 9:

237 «Սովետական Հայաստան», 10 հուլիսի 1958:

մեկնող զորքերից ստացված ռազմամթերքի առատ պաշարները, Շամունն անցավ հակահեղափոխական գործողությունների՝ Ազգային ճակատը ճզմելու և իր պրեզիդենտական աթոռը փրկելու համար: Կռիվները վերսկսվեցին: Հայ աշխատավորները նորից զենի ձեռին կանգնեցին Լիբանանի անկախության ու սուվերենության պաշտպանների կողքին: «Մ. Ն. Հառաջը» գրում էր. «Հպարտությամբ պետք է նշել, որ հակահեղափոխական դեպքերու ժամանակ Խալիլ Բեդվիի, Հաճըն և Չարշափուկ թաղերու քաղաքական և մարտական կեցվածքը զգալիորեն հարվածեց հակահեղափոխական դավադրության դիրքերը և իսլամ-քրիստոնյա կրոնական պառակտումներ առաջացնել ձգտող դավերը»²³⁸:

Զիրականացավ Շամունի երազը: Նա ստիպվեց տեղը դիջել բանակի գլխավոր հրամանատար զենեբալ Ֆուադ Շեհարին: Դա ազգային անկախության և դեմոկրատիայի կողմնակիցների հաղթանակն էր:

Արաբական մամուլը և պետական գործիչները բարձր գնահատեցին հայերի մասնակցությունը Լիբանանի ժողովրդի պայքարին: «Ալ-Ախբար» թերթը գրում էր. «Հայ հայրենասերները՝ կոմունիստներ, հնչակյաններ, ռամկավարներ և անկուսակցականների հոծ զանգվածներ վճռականությամբ կանգնեցին իրենց արաբ եղբայրների կողքին...: Հայերը ճնշող մեծամասնությամբ միացան համաժողովրդական դիմադրական շարժմանը, արհամարհելով դաշնակներին, որոնք փորձում էին նրանց տանել իմպերիալիստների հետևից»²³⁹: Հայերի մասին դրվատանքով են խոսել նաև «Տելեգրաֆ», «ալ-Հադաֆ» և բազմաթիվ ուրիշ թերթեր:

Դիմելով հայ ժողովրդին, Տրիպոլիի ապստամբական շարժման ղեկավար Ռաշիդ Քարամեն հայտարարել է: «Մենք և դուք եղբայրներ ենք, կովեցանք պատենեշներու ետին, միասնաբար արյուն թափեցինք մեր հայրենիքի անկախու-

238 «Մ. Ն. Հառաջ», 26 հոկտեմբերի 1958:

239 الاخبار، ٢٦ تشرين الأول ١٩٥٧

թյան համար: Պիտի շարունակենք մնալ եղբայրներ ու պայ-
 քարիլ կիբանանի անկախության զորացումին ու վերելքին
 համար»²⁴⁰: Իսկ կիբանանի նախկին վարչապետ Սաեբ Սալա-
 մը նշում էր. «Մենք պիտի շնորհակցենք մեր հայ եղբայրները,
 ...որոնք անվերապահորեն իբրև հայրենասեր լիբանանցիներ
 դիմադրեցին մեր երկրի անկախության թշնամիներուն»²⁴¹:
 Ուշագրավ է նաև հայտնի հասարակական գործիչ, դոկտոր
 Ալի Սաադի գնահատականը: «Արաբ և հայ... բարեկամու-
 թյունն ու եղբայրությունը ամրապնդվեցան ճակատամարտի
 ընթացքին, արյան կապերով,—գրել է նա: Այն արյունը,
 զոր հայ հերոսները թափեցին... ի պաշտպանություն կիբա-
 նանի ազատության, գերիշխանության, Սահմանադրության
 և ազգային արժանապատվության, փրկեց ոչ միայն հայ և
 արաբ բարեկամությունը, այլև ազգային միասնությունը»²⁴²:
 Քաղաքացիական կռիվների հետևանքով կիբանանում և
 ԱՄՂ-ի կազմությամբ Սիրիայում նոր պայմաններ ստեղծ-
 վեցին ազգային անկախության ամրապնդման, դեմոկրա-
 տիայի և խաղաղության պայքարի զարգացման համար:

240 «Արարատ», 18 նոյեմբերի 1958:

241 Նույնը, 25 մարտի 1959:

242 Մեջբերումն ըստ «Մ. Ն. Հառաչի», 4 հունվարի 1959:

Վ Ե Ր Զ Ա Ր Ա Ն

Սիրիայի և Լիբանանի ժողովուրդները անցել են ազգային-ազատագրական պայքարի բարդ և դժվարին ուղի: Այդ պայքարում նրանց անդավաճան ուղեկից է եղել այդ երկրորների հայութունը: Ֆրանսիական իմպերիալիստները սխալվեցին հայերին արաբ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման դեմ «պահեստի ուժ մը» համարելով: Հայերը, բացառությամբ սակավաթիվ բախտախնդիրների, արաբների կողքին էին Զեբել Դրուզի և հետագա տարիների ազգային անկախության պայքարում: Ոչ գերմանա-իտալական ֆաշիստներին, ոչ էլ անգլիական և ամերիկյան իմպերիալիստներին չհաջողվեց հայերին օգտագործել Սիրիայի և Լիբանանի նկատմամբ իրենց սնուցած գաղութատիրական պլանների իրականացման համար:

Այսօր, Սիրիայի և Լիբանանի ժողովուրդները, ձեռք բերելով իրենց ազգային անկախությունն ու սովերենությունը, ձգտում են հասնել տնտեսական ինքնուրույնության և քաղաքական անկախության ամրապնդման: Բայց իմպերիալիստները գործադրում են բոլոր միջոցները՝ դավադրություններ, տեռոր, քայքայիչ գործունեություն, կաշառում, տնտեսական «օգնություն», ընդհուպ զինված ագրեսիա այդ երկրների ան-

1 «Ժողովուրդի ձայն», 7 հունվարի 1944:

կախությունը ձևական դարձնելու կամ իսպառ վերացնելու համար: Բացի այդ, տակավին չեն լուծված բուրժուա-դեմոկրատական հեղափոխության առաջադրած խնդիրները, չեն բարելավված ժողովրդական զանգվածների կյանքի ու մշակույթի պայմանները, ֆեոդալական մնացուկներից չեմ մաքրված սոցիալական և տնտեսական հարաբերությունները: Մի խոսքով առկա են օբյեկտիվ պայմաններ ժողովրդական զանգվածների հակաիմպերիալիստական-հակաֆեոդալական պայքարի զարգացման համար:

Ազգային-ազատագրական պայքարի սկզբնական էտապում, երբ հիմնական խնդիրն էր ազգային անկախության նվաճումը, բանվոր դասակարգը, ազգային բուրժուազիան և քաղաքների ու գյուղերի մանրբուրժուական տարբեր խավերը հանդես էին գալիս միասնական ազգային ճակատով: Ժամանակակից էտապում, երբ առաջին պլան են անցել սոցիալ-տնտեսական վերափոխման խնդիրները, ազգային բուրժուազիան վարում է բացահայտ նեղ դասակարգային քաղաքականություն, թշնամանքով դիմավորում աշխատավոր մարդկանց ամենատարրական պահանջները և, նրանց ելույթները ներկայացնելով որպես «կոմունիստական դավադրություն», ճնշում դաժան միջոցներով: Բուրժուազիայի «հայրենասիրությունը» բխում էր օտարերկրյա շահագործողների հետ ունեցած մրցակցությունից, ներքին շուկային տիրանալուց հետո նա դադարեց «հայրենասեր» լինելուց և տիրապետող դիրքերն ամրապնդելու համար սկսեց մերձեցման ուղիներ որոնել իմպերիալիզմի և ֆեոդալ-կալվածատերերի հետ: Բախման մեջ մտնելով հանուն իմպերիալիստական և ֆեոդալական ճնշումից լիովին ազատագրության ժողովրդական զանգվածների պայքարի հետ, այդ տենդենցը ծառայեց ազգային միասնական ճակատի երկփեղկմանը, հակաիմպերիալիստական և պրոիմպերիալիստական ճակատների ստեղծմանը:

Հակաիմպերիալիստական ճակատը արտահայտում է աշխատավորական լայն զանգվածների, ինչպես նաև ազգային բուրժուազիայի այն մասի շահերը, որը շահագրգռված

հակահիմպերիալիստական-հակաֆեոդալական հեղափոխու-
թյան հիմնական խնդիրների լուծմամբ, ընթանում է ազգային
ախուժության ամրապնդման և սոցիալ-տնտեսական վերա-
րոխումների ուղիով: Այդ ճակատի հետ են կոմունիստները,
հնչակյանները, ռամկավարները և նրանց հետևող բազմա-
թիվ միություններ: Իսկ Դաշնակցությունն իր արբանյակնե-
րով սպասարկում է պրոհիմպերիալիստական ճակատին, որը,
թեև շաղակրատում է հեղափոխության մասին, «բաղաճական
և սոցիալական դեմոկրատիայի» մասին, բայց իրականում
հեղափոխությունը համարում է ավարտված իմպերիալիստնե-
րի արտաքսումով, մի քանի կիսատ-պռատ ռեֆորմներով: Դա-
լութային սիստեմն այն աստիճան վարկաբեկված է, որ իմ-
պերիալիզմի բոլոր գործակալների նման Դաշնակցությունն էլ
չի համարձակվում բացահայտորեն պաշտպանել այն և ճշգ-
նում է իր հակահեղափոխական արարքները քողարկել հա-
մապատասխան երկրի «օրինական իշխանության հետ» լի-
նելու քարոզով:

Բարբարոսական սպանդից ազատված արևմտահայ աշ-
խատավորները, լավ հասկանալով ազգային անկախության
նշանակությունը, եղբայրական մասնակցություն են բերում
արար աշխատավորության հակահիմպերիալիստական-հակա-
ֆեոդալական պայքարին: Գործելով բաժանիլ որ տիրես
սկզբունքով, իմպերիալիստները երկպառակության որոմ են
սերմանում աշխատավորների շարքերում, բայց նրանց կամ-
քին հակառակ դասակարգային շահերը իրար են մոտեցնում
արար և հայ աշխատավորներին, ամրապնդում նրանց փոխա-
դարձ կապերը, ստեղծում հեղափոխական միասնություն ազ-
գային անկախության, դեմոկրատիայի և խաղաղության դրո-
շի շուրջը: Հայ աշխատավորների մասնակցությունը արար
աշխատավորության պայքարին երաշխիք է հանդիսանում
արար և հայ ժողովուրդների խաղաղ ու բարեկամական հա-
մակեցությանը, նպաստում նրանց լավագույն ապագայի երա-
զանքների իրականացմանը:

РЕЗЮМЕ

В Сирии и Ливане проживает свыше 250 тыс. армян. Они играют значительную роль в развитии ремесел, промышленности и торговли. Армянским предпринимателям в национальном производстве Ливана принадлежит 43 проц. мелкого, 18 проц. среднего и 10 проц. крупного капитала. Солидные суммы составляют также капиталовложения армянских буржуа в различные отрасли сирийской промышленности и торговли.

Политические организации, действующие в армянской среде, имеют свои определенные национальные особенности, преследуют свои конкретные задачи и цели, но при всем этом в основном дышат арабской атмосферой. В национально-освободительном и демократическом движении этих стран, помимо армянских трудящихся, стоящих в рядах местных коммунистических партий, играют определенную роль также гнчакисты, рамкавары и дашнаки.

Коммунисты Сирии и Ливана, выражая стремления рабочего класса и трудового народа, ведут антиимпериалистическую политику, борются за полную национальную независимость, широкую демократию, за окончательную победу антиимпериалистической-антифео-

дальной революции. Под знаменами коммунистической партии передовые слои трудящихся армян прошли путь героической борьбы, вписав волнующие страницы в историю развернувшегося в Сирии и Ливане национально-освободительного движения.

В политической ориентации национальных партий решительным фактором является национальный вопрос. Видя в Советском Союзе оплот свободы народов, мирного и творческого труда, где процветает и благоденствует также и армянский народ, партии гнчакян и рамкавар считают залогом разрешения «армянского вопроса» победу лагеря социализма и демократии. Эта политика объективно вовлекла их в лагерь антиимпериалистических сил. Они расценивают национально-освободительные движения как закономерный результат развития колониальных и зависимых народов, как призванное к жизни законами прогресса человечества явление, которое невозможно остановить. Защищая право народов на самоопределение, они осуждают агрессивные действия империалистов в Индокитае, Корее, Вьетнаме, Египте и других странах.

Дашнакцутюн, питающий надежду на возвращение с помощью штыков империалистов своих утерянных позиций, перешел в лагерь империализма, врагов мира и мирного сосуществования народов. Дашнаки оправдывают политику создания военно-политических блоков под тем лживым предлогом, что Советский Союз и другие социалистические государства якобы угрожают независимости слаборазвитых стран.

Таким образом, в армянских общинах Сирии и Ливана существуют два фронта: антиимпериалистический и проимпериалистический. Первый, объединяющий армянских коммунистов, гнчакистов и рамкаваров, выступает в рядах национально-освободительных сил этих

стран, а второй — находится на службе у империалистов. Эти два фронта действуют с 1920 года, когда Сирия и Ливан, под ярлыком мандата Лиги Наций, фактически превратились во французские колонии.

Восстание Джебел Друза в южной Сирии в 1925—1927 гг. явилось первым большим вооруженным выступлением Сирии и Ливана за национальную независимость. Трудящиеся армяне, подавляющее большинство которых составляли беженцы 1915 года, не имели возможности с оружием в руках участвовать в восстании. Однако они организовали «Революционный комитет помощи восстанию», который оказал ценные услуги восставшим, способствуя забастовочной борьбе арабских трудящихся, участвуя в обеспечении восставших крестьян оружием и медикаментами. На основе выявленных им новых материалов автор опровергает нашедшие широкое распространение в буржуазной историографии положения о том, что якобы армяне под французским знаменем выступали против восстания.

В тридцатые годы участие трудящихся армян в антиимпериалистических демонстрациях и забастовках приняло более широкий и организованный характер. По инициативе трудящихся армян был создан народный фронт армян Сирии, который действовал в тесном контакте с народным фронтом Сирии и к которому примкнули партии гнчакян и рамкавар. Автор использовал новые архивные материалы о деятельности народного фронта сирийских армян. Этот фронт, разоблачая проимпериалистическую политику дашнаков, призывал армян всеми средствами помогать борьбе арабского народа за независимость.

В исследовании показано участие армян Сирии и Ливана в защите Александреттского санджака. В 1938 г., когда французские империалисты согласились передать

санджак Турции, вместе с арабами свой протест заявили и армяне. Представители сирийских армян участвовали в арабском комитете защиты Александреттского санджака, а в июле 1938 г., под покровительством председателя этого комитета Сейф ад-Дина, был проведен митинг протеста армян Дамаска. С позиции защиты санджака выступили и армяне Ливана.

В 1943—1946 гг. национально-освободительное движение Сирии и Ливана вступило в стадию мощного подъема. Под сильным нажимом выступлений народных масс французские империалисты вынуждены были уйти из этих стран. На основе богатого фактического материала, приводя свидетельства Бишара ал-Хури, Шукри Куватли, Рида Солха и других высокопоставленных государственных деятелей, автор показывает участие армян в антиимпериалистических демонстрациях и уличных боях.

К блестящим страницам послевоенной истории народов Сирии и Ливана относится совместная борьба арабских и армянских трудящихся за трудовой кодекс (1946). Эту борьбу возглавляли профсоюзы Сирии и Ливана, основную массу которых, после арабов, составляли трудящиеся армяне. Автор приводит многочисленные данные о совместной забастовочной борьбе арабов и армян против арабских и армянских промышленников. Преодоление национальной разобщенности в борьбе за трудовой кодекс явилось ярким свидетельством высокой классово-сознательности арабских и армянских трудящихся.

После второй мировой войны англо-американские империалисты приложили упорные усилия к тому, чтобы заполнить возникший в Сирии и Ливане так называемый вакуум после ликвидации французского господства. Именно эту мечту они лелеяли, когда пытались во-

влечь Сирию и Ливан в сферу деятельности планов «Великой Сирии», «Блока защиты Ближнего Востока», «Средневосточного командования», «Багдадского пакта» и «Доктрины Эйзенхауэра». В то время как господствующий класс в целях укрепления своих расшатанных позиций искал пути к соглашению с империалистами, народные массы принимали активное участие в демонстрациях и забастовках.

В исследовании приведены многочисленные факты об участии армян в этой борьбе. Особенно примечательно участие армян в восстании, вспыхнувшем в Ливане в 1958 г. Армянские коммунисты, гнчакисты, рамкавары присоединились к национальному фронту, ведущему борьбу против антинародной клики Шамуна, принявшей доктрину Эйзенхауэра. В боях, происходивших в Бейруте, Триполи и горном Ливане, пали сотни армян-трудящихся.

Բ Ո Վ Ա Ն Ի Կ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Առաջաբան	5
Գլուխ առաջին. Հայերի մասնակցությունը Սիրիայի և Լիբանանի ազգային-ազատագրական շարժումներին 1925—1946 թթ.	13
Սիրիայի և Լիբանանի կոմունիստական կուսակցության սկզբնավորումը, Հայ քաղաքական կազմակերպությունները	21
Ջերեզ Գրուզի 1925—1927 թթ. ապստամբությունը և հայերը	47
Սիրիահայ ժողովրդական ճակատը, Ալեքսանդրետի սանջակի պաշտպանությունը և հայերը	68
Հայ աշխատավորները հակաֆաշիստական պայքարում, Սիրիայի և Լիբանանի հայ ազգային խորհուրդը և հայրենադարձությունը	79
Հայերի մասնակցությանը Սիրիայի և Լիբանանի ազգային անկախության պայքարին (1943—1946 թթ.)	99
Գլուխ երկրորդ. Հայերի մասնակցությանը Սիրիայի և Լիբանանի ազգային անկախության ամրապնդման համար մղվող պայքարին (1946—1958 թթ.)	104
Արար և հայ աշխատավորության համատեղ պայքարը աշխատանքային կոդեքսի համար	115
Արարների և հայերի համատեղ պայքարը անգլո-ամերիկյան իմպերիալիզմի գաղութացման պլանների դեմ (1946—1952 թթ.)	136
Հակակոմունիզմի հայազգի վարձկանները	155
Արարների և հայերի համատեղ պայքարը Բաղդադի պակտի և էյզենհաուերի զոկտրինայի դեմ	168
Վերջաբան	191
Резюме	194

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԽԱՉԻԿՅԻ ԲՈՓՈՒՉՑԱՆ
ОГАНЕС ХАЧИКОВИЧ ТОПУЗЯН

ՀԱՅԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՍԻՐԻԱՅԻ ԵՎ ԼԻԲԱՆԱՆԻ
ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ԵՎ ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ
ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻՆ

Հրատարակվում է Հայկական ՍՍՀ ԳԱ արևելագիտության սեկտորի
գիտական խորհրդի որոշմամբ

Պատ. խմբագիր Ն. Հ. Հովհաննիսյան
Հրատ. խմբագիր Ա. Ա. Հովակիմյան
Կազմը՝ Ա. Վ. Գասպարյանի
Տեխ. խմբագիր Է. Ս. Ավետյան
Արրագրիչ Բ. Հ. Քաջախյան

ՎՖ 06432, հրատ. № 2790, ԽՀՆ № 1054, պատվեր 302, տպաքանակ 1500
Հանձնված է արտադրության 24/XII 1966 թ., ստորագրված է տպագրու-
թյան 14/II 1968 թ., տպագր. 12,5 մամուլ, պայմ. 10,2 մամուլ, հրատ. 8,62
մամուլ, թուղթ № 1, 84×108¹/₃₂, Գինը 74 կոպ.

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատ. տպարան,
Երևան, Քարհկամության 24

БИБЛИОТЕКА
ԳՐԱԴԱՐԱՆ

ՆԿԱՏՎԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐ

Էջ	Տող	Տարված է	Պետք է լինի
72	18 վ.	Էամ յունիսենյան	Նախամ յունիսենյան
78	2 ն.	1930	1930
103	13 վ.	Դաշնակույթ յունը	Դաշնակցութ յունը

ՀՈՎԱՆՆԵՍ ԿԱԶՄԻ ՔՈՓՈՒՉՅԱՆ
 ОГАНЕС ХАЧИКОВИЧ ТОПУЗЯН

ՀԱՅԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՍԻՐԻԱՅԻ ԵՎ ԼԻԲԱՆԱՆԻ

ԴՄՆՆԱԹՎՂԻ ՄԱԽԶԱՄԵՂ

Թիվը Է Ընթաց	Է Նախընթաց	Ընթաց	Ընթաց
Թիվը Է Ընթաց	Է Նախընթաց	Ընթաց	Ընթաց
1939	1939	2	2
Թիվը Է Ընթաց	Է Նախընթաց	Ընթաց	Ընթաց

Կազմել է Ա. Վ. Խասաթյանը
 Տեխ. խմբագիր է Ս. Ավետյան
 Սրբագրիչ Բ. Հ. Քաջախյան

ՎՅ 06432, հրատ. № 2790, ԽՀԽ № 1054, պատվեր 302, տպագրանակ 1500
 Հանձնված է արտադրության 24/XII 1966 թ., ստորադրված է տպագրու-
 թյան 14/II 1968 թ., տպագր. 12,5 մամուլ, պայմ. 10,2 մամուլ, հրատ. 8,62
 Մոսկվայի ԲՈՒՄՍՏՈՎՈՎՈՒՄ ԲՈՒՄՍՏՈՎՈՎՈՒՄ № 1, 84X1081/32, Գինը 74 կոպ.

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատ. տպարան,
 Երևան, Բարեկամության 24

БИБЛИОТЕКА
 ԳՐԱԴԱՐԱՆ

